

ՀԱՅԳԵՏՐՈՍՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԻ
ԱՌՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 1999



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ЯЗЫКА

Г. З. ПЕТРОСЯН

**КАТЕГОРИИ ОПРЕДЕЛЕННОСТИ
И НЕОПРЕДЕЛЕННОСТИ, ЛИЦА
И ПРЕДМЕТА В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Է. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՈՐՈՇՅԱԼԻ ՈՒ ԸՆՈՐՈՇԻ,
ԸՆԶԻ ՈՒ ԻՐԻ ԱՌՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1960

Տպագրվում է Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի հմբագրական-
հրատարակչական խորհրդի որոշմամբ

*«Գոյականի առումները հայերենում» ուսումնասիրու-
թյունը նվիրված է հայերենի երկու քերականական կա-
տեգորիաների՝ որոշյալի ու անորոշի և անձի ու իրի առում-
ների պատմական ուսումնասիրության: Աշխատությունը
կառուցված է պատմական քերականության պահանջների
համեմատ, և ցույց են տրված որոշյալի ու անորոշի, անձի
ու իրի քերականական կատեգորիաների կազմավորումը
հայերենում, նրանց առանձնահատուկ դրսևորումները հին
հայերենում (գրաբարում), միջին հայերենում, բարբառ-
ներում, արևմտահայ և արևելահայ գրական լեզուներում:*

*Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել հա-
յագետներին, հայոց լեզվի ուսուցիչներին, ուսանողությանը:*

ԲԱՃԻՆ ԱՌԱՋԻՆ

ԳՐԱԿԱՆԻ ՈՐՈՇՅԱԼ ԵՎ ԱՆՈՐՈՇ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ
ՈՐՈՇՅԱԼԻ ՈՒ ԱՆՈՐՈՇԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ
ՀԱՅՆԵՐԵՆՈՒՄ

Գ Լ Ո Ւ Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

1. ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՅԱԼԻ ՈՒ ԱՆՈՐՈՇԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՑԻ ՄԱՍԻՆ

Հայերենի որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի բնորոշման հարցով հայ քերականագիտական միտքն զբաղվել է դեռևս իր կազմավորման շրջանում: Այս կատեգորիայի (հոդերի) նախնական քննությունը կապված էր Դ. Թրակացու «Քերականության արվեստի»¹ հայերեն թարգմանության առաջ բերած ընդհանուր աշխուժացման հետ:

Հայ մեկնիչ-քերականների մոտ, բացի Թրակացու քերականության զգալի ազդեցությունից, նկատվում է ինքնուրույն մոտեցում, ջանք՝ հայոց լեզվի փաստերի վրա վեր հանելու հոդերի օրինաչափ արտահայտությունները: Ճիշտ է, նրանց վերլուծությունները կաշկանդված էին տվյալ շրջանի լեզվաբանական մտքի սահմանափակությամբ ընդհանրապես, բայց այս հանգամանքը, իհարկե, չի նսեմացնում նրանց դիտողությունների արժեքը:

Մեկնիչ-քերականներից՝ հոդերի գնահատման հարցում առանձնապես աչքի է ընկնում Դավիթ Աճառապետը: Նա որոշյալի ու անորոշի կատեգորիայի իր բացատրությունների մեջ¹ բավական հեռուն է գնում Դ. Թրակացու քերականության հայերեն թարգմանության համեմատությամբ, ուր տրված են հոդի քերականական արտահայտության յուրահատկությունը:

¹ Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 115:

ները հունարենում: Եթե թարգմանություն մեջ հոգերի փոխարեն ցուցական դերանուններ են դրված, ապա Դավիթը շատ լավ նկատել է այդ թյուրիմացությունը և հունարենի հոգերի դիմաց դրել է հայերենի համապատասխան հոգերը: Դավիթը նշում է, որ եթե հունարենում հոգը դրվում է բառակզրին և տարբերակված է թվով և սեռով, ապա հայերենում հոգը դրվում է բառավերջին և չունի սեռի ու թվի հատկանիշները: Նա հոգը չի համարում առանձին, ինքնուրույն բառ, այլ դիտում է որպես մասնիկ: Այնուամենայնիվ Դ. Անհաղթը չի հասնում որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի գիտական ըմբռնմանը, ընդ որում հետեւելով Դիոնիսիոս Թրակացուն¹, նա հոգը համարում է խոսքի մաս:

Հոգի վերաբերյալ համարյա նույն բացատրությունն են տալիս Անանուհ Մեկնիչը և Մովսես Քերդողը²:

Անանուն Մեկնիչը հոգերի իմաստը բացատրում է այս, այդ, այն ցուցական դերանունների իմաստով և ընդգծում է համապատասխան դեմքերի հետ ունեցած նրանց իմաստալին կապը:

Ստեփանոս Սյունեցին մյուսների նման նշում է հոգի գործածությունն անունների հետ, միաժամանակ շեշտելով հոգի գործածությունը բալի հետ, երկու դեպքում էլ՝ համապատասխան դեմքերը ցույց տալու համար: Նա նույնպես հոգին տալիս է «մասն բանի» հորջորջումը³:

Դիոնիսիոս Թրակացու քերականության մեկնիչների զգալի մասի մոտ նկատվում է մի տենդենց՝ հոգերի քերականական այն արտահայտությունները, որ կան հունարենում և նշված

¹ Հատ Դիոնիսիոս Թրակացու հոգը հիշվող խոսքի մաս է, որ դրվում է հիշվող անունից առաջ և հետո: Նրա ակցիդենցիաները երեքն են՝ սեռ, թիվ, հոլով: (Տե՛ս Античные теории языка и стиля, М.—Л., 1936, էջ 132):

² Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, էջ 175:

³ Նույն տեղում, էջ 214—215:

ևն «Քերականության արվեստ» գրքում, դիտել որպես հայերենում ևս դրսևորվող երևույթներ:

Գրիգոր Մագիստրոսը իր մեկնություն մեջ («Գրիգորի Մաթեշտոսի և Կիտանդէ որդւոյ Վասակա Մագիստրոսի Մեկնութիւն քերականի, զոր եղեալ է զալլոց և զիւրոց յաւելուածոց միտս», տե՛ս ՀՄՍՌ Պետ. Զեռագրատան № 3917 ձեռագիրը) նշելով, որ հոգի նախադաս կիրառությունը հատուկ է հունարենին, փորձում է ցույց տալ դրա մասնակի արտահայտությունները հայերենում, թե երբեմն ասում են. «Ո՛վ Դեւորգ, ո՛վ Գրիգոր, ո՛վ Տրդատ» (№ 3917 ձեռագիր, էջ 111): Բացի այդ, նա գտնում է, որ դա արական սեռի համար է, իսկ իգականը՝ «ո՛ մանի, ո՛ նանի... քանզի ո՛վդ արական և երկարացեալ է յաւդ, իսկ ո՛ փաղաքական իմն և մանկական» (նույն տեղում):

Հոգի, հատկապես նրա իմաստային կողմի լուրահատուկ ըմբռնում ունի Համամ Արևելցին: Նա հոգի իմաստաբանական կողմի բնութագրումը հիմնում է իրերի տարածական հարաբերությունների և սեռի ու տեսակի տրամաբանական ըմբռնման վրա¹:

Հոգի տրադիցիոն սահմանումը և նրա կիրառության բնութագրությունը համանման ձևով պահպանված են նաև Հովհաննես Նրզնկացու («Համառոտութիւն քերականին», տե՛ս ՀՄՍՌ Պետ. Զեռագրատան № 2366 ձեռագիրը, էջ 99), Առաքել Սյունեցու (տե՛ս նրա՝ «Յադագս քերականութեան համառոտ լուծմունք, արարեալ ի տէր Առաքելոյ Սիւնեցւոյ եպիսկոպոսէ», ՀՄՍՌ Պետ. Զեռագրատան № 503 ձեռագիրը, էջ 93), Վարդան Մեծի («Յադագս մեկնութեան քերականին, զոր արարեալ է Մեծ վարդապետին Վարդանայ ի խնդրոյ թագաւորին հայոց Հեթմոյ», տե՛ս ՀՄՍՌ Պետ. Զեռագրատան № 2283 ձեռագիրը) մոտ:

Հոգի քերականագիտական ըմբռնումն զգալի չափով տարբեր է 17-րդ դարի հայ քերական Կղեմես Գալանոսի մոտ: Նա հոգին տալիս է «մասնիկ բանին» հորջորջումը,

¹ Տե՛ս Н. Адопц, նույն տեղում, էջ 265—266:

նշելով հողի երկակի բնույթը. «և է երկեակ, մինն՝ նախադաս հողովական. և միւսն ստորադաս անհողով»¹:

Ստորադասական անհողով են ա, դ, և հողերը, որոնք ստորադասվում են ուրիշ խոսքի մասերին: «Սէ ցուցանէ զմերձաւորն և պատկանի առ դէմ առաջին... դա նշանակէ զերկրորդ դէմ և զհեռաւորն... նու նշանակէ զերրորդ դէմ և զհեռաւորն»²: Բերած օրինակներից երևում է, որ նա քիչ մոտենում է հողերի արտահայտած իմաստների տարբերակված ըմբռնմանը: Օրինակ, գիրքս նա բացատրում է՝ «գիրք որ հուպ առ լիս, կամ առ մեզ», «գիրքն, Պետրոսն... այն դորմէ պատմեցաք. կամ առ մեզ է ծանուցումն»³:

Նախադաս հողերը լինում են հողովվող և անհողով: Անհողով հողեր է համարում կուչականի նշանները («նշան կուչականին»), և բերում է օրինակներ՝ ո՛, ո՛վ, յա՛, ծո՛, քա՛: Հողովվող հողեր է համարում ցուցական այս, այդ, այն դերանունները, միաժամանակ նշելով, որ նախադաս հողովվող հողերի հետ դրվում է նաև ստորադասականը, բայց նախադաս անհողովի հետ ստորադասական հող (ա, դ, և) չի դրվում: Հողի գիտական ըմբռնման բացակայութիւնը Կ. Գալանոսի մոտ հասցնում է նրան, որ մասնիկը՝ հողը և բառը՝ ցուցական դերանունը իրար են խառնվում, և անտեսվում է նրանց որակական տարբերութիւնը:

Ս. Զուղայեցիին իր քերականութիւն մեջ պահպանելով հողի տրադիցիոն սահմանումը և ցուցական դերանունները համարելով հողեր, միաժամանակ նշում է. «յօդքս ախոքիկ, ախս, ալդ, ալն, սոլն, դոլն, նոլն ինքն, լորժամ ըստ ինքեանց վարիցեն և ոչ իցեն յօդեցեալք յանուն ինչ, են դերանունք, որդոն, ախս է մարմին իմ, ըստ ախս և զալսն իմա՜»։ Ս. Զուղայեցին հողերին վերագրում է սեռ՝ արական (ծօ),

¹ Կ դ և մ ե ս Գ ա լ ա ն ո ս, Քերական և տրամաբանական ներածութիւն, 1645, էջ (ծԴ) 104:

² Նույն տեղում, էջ (ծԴ) 104 և (ծԵ) 105:

³ Նույն տեղում, էջ (ծԵ) 105:

⁴ Գիրք որ կոչի քերականութիւն, արարեալ և շարադրեցեալ ի Սիմէնէ վարդապետէ Զուղայեցոյ, Կ. Պոլիս, 1725, էջ 124:

իգական (քա), հասարակ (ո, է, ալ, ով), դեմք, թիվ (այս, այսօրիկ), հոլով¹:

Հոգի մասին այս տիպի, բայց մանրամասն, վերլուծութիւն է տալիս Բաղդասար Դպիրը: Հոգերի արժեքը նա գրտնում է նրանում, որ դրանք առադրվելով անդեմ և անորոշ անուններին, «գիմավորելով» (դեմքը յցույց տալով)² նրանց որոշյալ են դարձնում: Եվ բերում է հետեւյալ օրինակը. «անունս այր ոչ ունելոյ յատկութիւն գիմի՝ ոչ իմացեալ լինի թէ առ որ դէմ վեր բերի: Իսկ յորժամ առադրի նմա մի ի յօդիցն, յալնժամ գիմաւորի և յատկանայ ըստ ալլ գիմաւոր մասանցն որդոն՝ ալրս, ալսինքն՝ ես: Այրդ, ալսինքն, դու: Այրն՝ ալսինքն նա, որ է Պետրոսն, Պօղոսն, կամ ալլ»³: Եթե ա, դ, և հոգերը առարկայի անունը որոշյալ են դարձնում դեմքը ցույց տալով, ապա այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն «հոգերը» (դերանունները) առարկայի անունը որոշյալ են դարձնում՝ ցույց տալով առաջին, երկրորդ, երրորդ դեմքի նկատմամբ նրանց (առարկաների) տարածական հարաբերութիւնը:

Բ. Դպիրը առանձնապէս ընդգծում է հոգերի քերականական նշանակութիւնը. «մասնս ալս՝ յօդ՝ թէպէտ քանակութեամբ փոքրիկ ինչ մասն է բանի, բայց մեծ է զօրութեամբ, որ անդէմ մասանց դէմ շնորհէ և որոշէ յալլոց»³:

Հոգերի իմաստային ու կիրառական հատկանիշների ըմբռնումը համեմատաբար պարզորոշ տեսք է ստանում Ավետիքյանի, Չամչյանցի, Բագրատունու մոտ: Ավետիքյանն ալս բնագավառում ևս քերականագիտական ուսումնասիրութիւնը զգալիորեն առաջ է տարել. հոգերի կիրառութիւնների վերաբերյալ նշում է այնպիսի դեպքեր, նշանակութիւններ, որ մենք նախորդ քերականների մոտ չենք նկատում: Հատկա-

¹ Գիրքը որ կոչի քերականութիւն, արարեալ և շարադրեցեալ ի Սիմէնէ վարդապետէ Զուղայեցւոյ, Կ. Պոլիս, 1725, էջ 121—122:

² Բագդասար Դպիր, Գիրք քերականութեան, Կ. Պոլիս, 1736, էջ 132—133:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

պես նշում է, թե երբ է հոգը դրվում գոյականի, ածականի, դերանվան (ինչպես և բայերի) վրա, երբ չի դրվում¹:

Չամչյանցն արել է մի շարք կարևոր դիտողություններ հոգերի դիմային նուրբ արտահայտությունների վերաբերյալ²:

Հալ քերականագիտության պատմության վաղ շրջանի դեմքերի համեմատությամբ առանձին տեղ է գրավում Ա. Բագրատունցին: Գրաբարի ուսումնասիրության մեջ նրա աշխատությունն³ աչքի է ընկնում իր ամբողջականությամբ և փաստական նյութի հարստությամբ: Ինչ մնում է որոշյալի և անորոշի քերականական կատեգորիային, ապա Բագրատունին այն քննում է հոգերի կիրառությունների ընդհանուր սխեմայի վերլուծության հետ կապված: Նրա մոտ որոշիչ հոգը հանդես է գալիս որպես ուրույն կիրառությամբ քերականական երևույթ և որոշակիորեն սահմանափակվում է մնացած հոգերից⁴:

Բագրատունին որոշյալի և անորոշի կատեգորիան շոշափում է նաև զ- նախդրի գործածությունների կապակցությամբ՝ հայցականում:

Բագրատունու, ինչպես նաև նրա նախորդների մոտ, չկա զ-նախդրի յուրահատուկ իմաստային նշանակության գիտական ըմբռնումը: Սակայն Բագրատունու մոտ, ի տարբերություն նախորդ քերականների, մասնակիորեն ընդգծված է, որ մասնավորման բնույթի որոշ տարբերություն կա և հոգի և զ- նախդրի միջև: «Եթե չիցէ լալս կամ լայն միտս և դէմս որոշեալ և սահմանեալ անունն, այլ ընդհանուր անյայտ անորիշ և տարտամ, ոչ դնի լօդ, թէ և ինքնին բաւականապէս որոշեալ իցէ առ ընդունելոյ նախդիր զ»⁵:

¹ Տե՛ս Գ. Ա. Լ. ե տ ի ք ե ա ն, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1819, էջ 185 և այլ տեղեր:

² Տե՛ս Մ. Չամչեանց, Քերականութիւն հայկագեան լեզուի, 1859, Շուշի, էջ 440:

³ Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 374:

⁵ Տե՛ս նույն տեղում:

Հայ քերականագիտության և ընդհանրապես հայ լեզվա-
 քանական մտքի պատմության մեջ ականավոր դեմք է
 Ա. Այտընյանը: Նա հաջողությամբ ընդհանրացնելով անցյա-
 լի հայ քերականագիտության փորձը, նշանակալից ներդրում
 է կատարել հայոց լեզվի ուսումնասիրության պատմության մեջ:
 Նա մեզանում գրեթե առաջինն էր, որ փորձեց լեզվական
 երևույթները դիտել իրենց զարգացման մեջ: Օրինակ, որո-
 շյալի կատեգորիան քննության առնելիս, թեպետ ընդգծում է
 հատկապես նրա ձևական կողմի զարգացումը և տարբեր
 արտահայտությունները հայ հասարակության տարբեր հատ-
 վածների խոսվածքներում, այնուամենայնիվ դիտում է այն իր,
 պատմականության մեջ, խորանալով ընդհուպ մինչև նրա
 մասնակի արտահայտությունները հայոց լեզվի հնագույն
 շրջանում:

Հոգի սահմանման (քնորոշման) հարցում Այտընյանը գը-
 րեթե մնում է քերականագիտության տրադիցիոն ըմբռնման
 մակարդակին, այսինքն այն, որ՝ հայերենում հոգը մասնիկ է,
 դրվում է անունների վրա և անուններին որոշ նշանակու-
 թյուն է տալիս, այն է՝ ընդհանուր միտքը «մասնավորի է
 ամփոփում»: Այտընյանը ինչպես և (ը), այնպես էլ մի (մը)
 հոգերը համարում է մասնավորող իմաստ ունեցող մասնիկ-
 ներ: Նա և (ը) որոշիչ հոգի և մը (մի) անորոշ հոգի տար-
 բերությունն այն է համարում, որ առաջինը մասնավորում է
 առարկայի ընդհանուր անունը՝ դարձնելով որոշյալ և ծանոթ
 առարկայի անուն, իսկ երկրորդը անվան ընդհանուր և անո-
 րոշ միտքը «մասնավորի կամ մեկի է ամփոփում»¹:

Այտընյանի մի քանի դիտողություններից երևում է, որ
 ըստ նրա, ինչպես գրաբարում, այնպես էլ աշխարհաբարում
 բառը կարող է որոշյալ լինել, առանց համապատասխան հո-
 դի, օրինակ, գրաբարի հոգնակիում բառերը որոշյալ լինելու
 դեպքում հոգ չեն առնում: Բացի այդ՝ որոշյալ հոգը ոչ բո-
 լոր հոլովներին է անցնում, իսկ զերանվանականը՝ ամեն հո-

¹ Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար
 կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 22—24:

լովի էլ կարող է անցնել: Այսօրնայնը նշում է հոգերի ձևաբանական ու շարահյուսական մի շարք կարևոր դրուկորումներ, կապված նրանց նշանակությունների հետ¹:

Վ. Չալըխյանը հոգերի ուսումնասիրության մեջ մեթոդական որոշ բարելավում մտցրեց: Նա նախապես կանգ է առնում հոգերի նշանակության ու համաձայնության վրասահմանում է հոգը և վերլուծում անունների ու հարաբերական բառերի հոգառությունը: Ըստ Չալըխյանի հոգերի գըլխավոր պաշտոնն է «գոյականի մը որոշ և անորոշ ըլլալը ցուցընել երեք դէմքի համեմատ...»²:

Չալըխյանը որոշյալի իմաստի քերականական արտահայտությունը գրաբարում կապում է երեք դեմքերի հոգերի հետ. այսպես՝ ա հոգը գրվում է որոշելի բառի վրա, երբ այդ բառն առաջին դեմքի (խոսողի) հետ հարաբերություն ունի, այսինքն՝ առարկան նրա մոտ է, կամ թե նրա արածն է կամ ասածը և այլն: Դ հոգը գրվում է, երբ որոշելի բառը երկրորդ դեմքի (լսողի) հետ նույն հարաբերություններն ունի: Այս տեսանկյունով էլ գնահատված են և հոգի կիրառությունները: Նա ա, դ, և հոգերի կիրառությունը կապում է նաև ժամանակային հարաբերության ըմբռնման հետ, և և դ հոգերը ներկա ժամանակի, և-ն անցյալ և ապառնի ժամանակի հարաբերությամբ:

Չալըխյանը գրաբարում տարբերում է ընդհանուր որոշյալ և մասնավոր որոշյալ բառեր: Ընդհանուր որոշյալ բառերը գրաբարում կարող են հոգ չստանալ և հայցականում ունենալ զ- նախդիրը: Բացի այդ, կանգ է առնում նաև հոգերի կիրառության վրա զանազան քերականական (շարահյուսական) կապակցությունների մեջ (գոյական և ածական, հատկացուցիչ և հատկացյալ, բացահայտիչ և բացահայտյալ և այլն):

Հետագա շրջանի հայ քերականագետներից Պալասանյանը, Մալխասյանցը, Աբեղյանը զբաղվել են որոշյալի և անորոշի

¹ Ա. Այս ր ն ե ա ն, Քննական քերականություն աշխարհաբար կառքի հայերէն լեզուի, էջ 185—193:

² Վ. Չալըխյան, Քերականություն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 283:

քերականական կատեգորիայի հարցով՝ ինչպես գրաբարում, աճյալն էլ աշխարհաբարում, իսկ ոմանք (օրինակ՝ Հ. Թուսմանյանը, Հ. Ղաղբաշյանը)՝ միայն աշխարհաբարում:

Պալասանյանը բնութագրում է հոգերը էական, ցուցական, ստացական դերանունների նշանակություններով¹, կոչելով նրանց որոշյալ կամ դերանվանական: Նա ընդունում է նույնպես երկու տեսակ հոգ². 1) որոշյալ հոգ (ն կամ ը), որ համապատասխանում է ֆրանսերենի le, la, les հոգերին և գործածվում է՝ ա) երբ խոսքը մեզ ժանոթ, հայտնի առարկայի մասին է, բ) երբ անհրաժեշտ է ցույց տալ, որ առարկան մի առանձին դասի ներկայացուցիչ է: 2) Անորոշ հոգ (մի), որ համապատասխան է ֆրանսերենի un, une հոգերին և գործ է ածվում այն ժամանակ, երբ անհրաժեշտ է առարկայի մասին եղած հասկացողությունը «մասնավորի ամփոփել»³: Ընդ որով՝ մի անորոշը ընդհանուր հասկացությունը «մասնավորի է ամփոփում», առանց ցույց տալու, թե որն է այդ անհատ մասնավորը: Պալասանյանը նկատել է նաև մի անորոշ հոգի և ոմն, ոք, իմն, ինչ անորոշ դերանունների կիրառական հարաբերակցությունը գրաբարում: Հայտնի է, որ մի հոգի արտահայտած իմաստը գրաբարում դերազանցապես վերոթերյալ անորոշ դերանուններով էր արտահայտվում, որովհետև մի-ն այդ իմաստով գրաբարում դեռևս լայն կիրառություն և տարածում չէր ստացել:

Պալասանյանի մոտ էլ հոգը երբեմն որպես առաժնորջովում⁴, որը ճիշտ չէ և անցյալի սխալ տեղադրման ազդեցություն է:

¹ Ս. Պալասանյան, Գործնական քերականություն հայերեն լեզուի, Թիֆլիզ, 1868, էջ 41—42:

² Ս. Պալասանյան, Ընդհանուր տեսություն արեկեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիզ, 1870, էջ 39:

³ Այս բաժանումը կատարված է նկատի ունենալով որոշյալի ու անորոշի իմաստով մասնավորող հոգերը:

⁴ Տե՛ս Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 118:

Արեւելյան աշխարհաբարի քերականներ ¹ Հ. Թումանյանը¹ և Հ. Դադրաշյանը² այս կատեգորիայի կապակցութեամբ որեւէ նորութիւն չբերեցին իրենց մասնակի դիտողութիւններով, իսկ ինչ վերաբերում է կատեգորիայի բնորոշմանը, ապա նրանք մնացին տրադիցիոն ըմբռնման սահմաններում:

Հոգերի (առանձնապես որոշիչ և անորոշ) շարահյուսական առանձնահատկութիւններով զբաղվել են հատկապես Ստ. Մալխասյանցը և Մ. Արեղյանը: Ըստ Մալխասյանցի, բուները որոշյալ են կոչվում, եթե հայտնի է նրանց ճորը կամ որինը լինելը³, կամ երբ նրանց մասին առաջ խոսվել է, իսկ անորոշ են կոչվում, երբ նրանց մասին դեռ հիշատակութիւն չի եղել, և երբ հայտնի չէ, թե նրանք ճորն են կամ որինը:

Մալխասյանցի կողմից տրված⁴ որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի նման բնութագրումը³ նույնպես հիմնված է առարկաների՝ խոսքի մեջ հայտնի, հիշատակված լինելու կամ չլինելու վրա: Մալխասյանցը հոգերի շարահյուսական կիրառութեան (և հետեապես որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի շարահյուսական արժեքի) վերաբերյալ ունի ուշագրաւ դիտողութիւններ: Այդ դիտողութիւնները նա անում է ոչ թե շարահյուսական որեւէ կատեգորիա քննութեան առնելու կապակցութեամբ, այլ փորձում է սալ որպես առանձին կատեգորիայի կիրառութիւն, ամբողջութեամբ վերցրած: Այսպիսի մոտեցումը, սակայն, առաջ է բերել իր բացասական հետեանքները: Մալխասյանցի մոտ հոգը հիմնականում շարահյուսական կատեգորիա է, որպիսին է նաև Չալըխյանի ու Բագրատունու մոտ: Այսինքն հոգը համարում է անվան կատեգորիա և շարահյուսութեան մեջ խոսում է միայն նրա շարահյուսական կիրառութիւնների մասին: Մալխասյանցի մոտ հոգերի ձևաբանական և շարա-

¹ Հ. Թումանյան, Համառօտ ոտուգաբանութիւն հայոց աշխարհաբար լեզուի, Թիֆլիս 1904, էջ 17, 21, 31:

² Տե՛ս նրա՝ Արեւելահայ աշխարհաբարի քերականութիւնը, Թիֆլիս, 1913, էջ 31:

³ Տե՛ս Ս. Մալխասյանց, Գրարարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 100-101:

հյուսական նշանակությունները տրված են շարահյուսության մեջ, մինչդեռ հոգը, որոշյալի և անորոշի քերականական կատեգորիան ամենից առաջ անվանական կատեգորիա է, հիմնականում գոյականի կատեգորիա¹, շարահյուսության մեջ պիտի խոսել միայն շարահյուսական արժեքի (կիրառությունների) մասին:

Մ. Աբեղյանը ավելի մանրամասնորեն է քննարկում որոշյալի և անորոշի քերականական կատեգորիան հայերենում. նա ուշադրությամբ քննում է այդ կատեգորիայի քերականական առանձնահատկություններն ինչպես գրաբարում, այնպես էլ աշխարհաբարում: Նշում է, որ գրաբարում հոգերը գործածվում են նաև ցուցական (իբրև այս, այդ, այն), դիմորոշ, ինչպես աշխարհաբարում (ես, դու, մենք, դուք) իմաստներով, ստացական՝ իմ, քո, իւր, մեր, ձեր, իւրեանց, նորա, նոցա բառերի նշանակությամբ: Որոշյալ բառերն ստանում են և հոգը:

Որոշիչ հոգի (ինչպես և գրաբարի «որոշյալ» հայցականի զ-նախդրի) ձևաբանական արժեքը լուրովի լուսաբանում է ստացել Աբեղյանի աշխատություններում: Նա այս բնագավառում ևս ունի մեծարժեք դիտողություններ, բնութագրումներ: Աբեղյանի մոտ համեմատաբար ավելի հաջող և ընդարձակ են տրված հոգերի շարահյուսական կիրառություններն աշխարհաբարում:

Սովետահայ քերականագիտությունը և ընդհանրապես նովետահայ լեզվաբանական միտքն աշխատել է որոշյալի և անորոշի քերականական կատեգորիային մոտենալ գիտական լեզվաբանության դիրքերից: Հոգը հիմնականում դիտվում է որպես որոշյալի և անորոշի կատեգորիայի քերականական արտահայտության միջոց: Ընդունված է, որ հոգը կարող է հանդես գալ կա՛մ որպես ձևական, անկախ բառ, կա՛մ որպես մասնիկ, կցված բառին: Հնդեվրոպական և այլ լեզուներում հոգը հանդես է գալիս նաև որպես ձևական բառ, որոշիչ

¹ Ինչպես գիտենք, վաղ շրջանի հայ քերականները հոգը «մասն քանի» էին համարում:

հողը սկզբում եղել է ցուցական դերանուն և պահել է նրա ձևը¹:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը բնութագրելով որոշիչ Ե(ը) հոգը, գտնում է, որ դա «արտահայտում է առարկայի որոշ կամ ծանոթ լինելը»²: Անդրադառնալով հոգերի ձևաբանական արժեքին կապված հոլովների հոդառության հետ, նա ցույց է տալիս գրաբարի ու աշխարհաբարի ընդհանրություններն ու տարբերությունները³:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը որոշյալի ու անորոշի կատեգորիայի հարցերին անդրադարձել է նաև այլ աշխատություններում, հատկապես «Հայ բարբառագիտություն» գրքում, ուր արել է մի շարք դիտողություններ բարբառների նյութի հիման վրա⁴:

Որոշյալի և անորոշի քերականական կատեգորիային անդրադառնալով և տալով նրա տեսական գնահատումը, պրոֆ. Գ. Սևակը գրում է.

«Որոշյալ առումն այն է, երբ տվյալ բառը ցույց է տալիս կամ տվյալ տեսակի առարկան ընդհանրապես, կամ տրվյալ տեսակի առարկաներից միայն մեկ կոնկրետ առարկա, որը ծանոթ է խոսողին (և լսողին): Այդպիսի դեպքերում բառն ստանում է համապատասխան ձևույթ՝ որոշիչ հոդ (ը կամ և)» և ապա՝

«Անորոշ առումն այն է, երբ տվյալ բառը ցույց է տալիս տվյալ տեսակի առարկան, բայց առանց մասնավորապես նշելու նույն տեսակի այս կամ այն անհատ առարկան: Այդ-

¹ Տե՛ս Ա. Ղ ա ր ի ր յ ա ն, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 194, 199, 200:

² Տե՛ս Ա. Ղ ա ր ի ր յ ա ն, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրություններ Կերածություն, Երևան, 1937, էջ 241—242:

³ Նույն տեղում, էջ 241:

⁴ Որոշյալի և անորոշի հոգերի գործածության մասին հետաքրքիր դիտողություններ կան պրոֆ. Ա. Ղարիբյանի (Գ. Պաբիսի հեղինակակցությամբ) «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց» գրքում (էջ 126—148), Հայպետհրատ, 1957:

պիսի ղեպքերում բառը հոլովվում է աբանց որոշիչ հոդ ստանալով¹:

Պրոֆ. Գ. Սևակը հոգը համարում է ալնպիսի բառափոխական ձևույթ, որը բառի իմաստը մասնավորեցնում է նույն տեսակի անհատ առարկայի շուրջը: Նա առաջարկում է մի-ն ճանաչել իբրև անորոշ հոդ²:

Պրոֆ. Գ. Սևակը որոշյալ հոդի հարցը շոշափում է նաև փոխանունների կապակցությունը³:

Պրոֆ. Էդ. Աղայանը նույնպես նշում է, որ մի քանի չեզոքներում հոդերը ինքնուրույն բառային ձև ունեցող, բայց բառային իմաստից զուրկ բառեր են, ինչպես ֆրանսերեն le, la, գերմաներեն die, der, das և այլն: Նա գրում է. «Ձևական ինքնուրույնության տեսակետից ֆուլնանալով բառերի հետ, իմաստի և ղերի տեսակետից նրանք համընկնում են մասնիկների հետ⁴»:

Այսպիսով՝ հայերենի որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի գիտական ըմբռնումն ունեցել է իր պատմական զարգացումը, ընդ որում որոշյալի ու անորոշի քերականական իմաստների հարցերը կապվել են լեզվի մեջ՝ ընդհանուրի և մասնավորի հարցերի հետ: Սակայն անցյալի հալ քերականագիտությունը չի բացահայտել ընդհանուրի, վերացականի ու մասնավորի, կոնկրետի դիալեկտիկական կապն ու միասնությունը՝ ինչպես լեզվի մեջ առհասարակ, ալնպես էլ այս կատեգորիայի կապակցությամբ առանձնապես: Անցյալի հալ քերականագիտությունը, համարյա մինչև 19-րդ դ. կեսերը, հիմնականում ուշադրություն է դարձրել քերականական ու բառային ձևերի, որպես լեզվի սոսկ ձևական կողմի ուսումնասիրությանը: Բառիմաստների ու քերակա-

¹ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 273—274:

² Նույն տեղում, էջ 281:

³ Այս մասին տե՛ս նաև՝ Ա. Ղաբիրյան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, էջ 250:

⁴ Էդ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952, էջ 200:

Տակա՛ն իմաստների յուրահատկութիւնները, նրանց զարգացումը՝ կապված բառալին ձևերի ու քերականական ձևերի պատմական փոփոխութիւնների հետ՝ քիչ են արժանացել ուշադրութեան: Այս հանգամանքն էլ որոշակի դեր է խաղացել այն տեսակետից, որ հոգը համարվել է մեկ՝ «մասն բանի», որպէս ձևաբանական կատեգորիա, մեկ՝ որպէս շարահյուսական կատեգորիա: Դրանով իսկ անցյալի հալ քերականագիտութիւնը չի հասել այս կատեգորիայի ամբողջական ուսումնասիրութեանը՝ նրա ձևաբանական ու շարահյուսական նշանակութիւններով: Իսկ ինչ վերաբերում է որոշյալի ու անորոշի քերականական իմաստների քերականական արտահայտութեան միջոցներին, ապա անհրաժեշտ է նշել, որ բավարար չափով չեն լուսաբանվել գրաբարի հոգերի (ս, դ, ն) արտահայտած իմաստների տարբերակված դրսևորումները, և հոգի կիրառութեան տարածումն ու ընդհանրացումը կապված որոշյալի քերականական իմաստի ծավալման ու ընդհանրացման հետ, և միայն պրոֆ. Աճառյանի կողմից ցուցադրվեցին այդ միջոցների հետագա փոփոխութիւնները միջին հայերենում, բարբառներում, արևմտահայ գրական լեզվում և ժամանակակից գրական հայերենում, ինչպէս և՛ այդ միջոցների (ձևերի) ստուգաբանական կապերը ցեղակից լեզուների համապատասխան ձևերի հետ¹:

Սովետահայ քերականագիտութիւնը ինչպէս վերոհիշյալ, այնպէս էլ այլ շատ կարևոր քերականագիտական հարցերի ուղղութեամբ ունեցել է նշանակալից հաջողութիւններ: Այնուամենայնիվ որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի պատմութեանը և տեսութեանը վերաբերվող մի քանի կարևոր հարցեր դեռևս չեն պարզաբանված:

¹ Մեր այս աշխատանքը պատրաստ էր (1954 թ.), երբ 1957 թվականին լույս տեսավ մեծափաստակ հայագետ Հր. Աճառյանի «Էկհատար քերականութիւն հայոց լեզվի» աշխատութեան 3-րդ հատորը, ուր զգալի տեղ է հատկացված հոգերի պատմական ուսումնասիրութեանը:

2. ՈՐՈՇՅԱԼԻ ԵՎ ԱՆՈՐՈՇԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՓԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի գիտական ըմբռնումը կարևոր նշանակություն ունի լեզվաբանության համար: Այդ է պատճառը, որ համարյա բոլոր լեզվաբաններն արտահայտել են իրենց կարծիքը այս կատեգորիայի մասին, ընդգծել են նրա ուսումնասիրման գիտական նշանակությունը, թեպետ և լիովին չեն պարզաբանել հարցը:

Սովետական լեզվաբանական գրականության մեջ միշտ ընդգծվել է որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի առանձնահատկությունների լուսաբանման գիտական-մանկավարժական անհրաժեշտությունը:

Լեզվաբանության մեջ որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիան բնութագրելիս սովորաբար շոշափում են առարկայի հայտնի կամ անհայտ լինելու հատկանիշի, վերացականի ու կոնկրետի կամ ընդհանուրի ու մասնավորի հարցերը, ոմանք՝ բառի ղեակ առարկայական նշանակություն ունենալու կամ չունենալու և այլ հարցեր:

Ամերիկյան լեզվաբան Սեպիրը որոշյալի քերականական իմաստը կապում է առարկայի հայտնի լինելու (խոսքի մեջ նախապես նշելու, ինչպես և տեսնելու, լսելու, մտածելու) հետ¹:

Վանդրիեսը նշում է, որ «հոգը ցուցական դերանունն է, թուլացած նշանակությամբ... Նա ցույց է տալիս անունների սեռը և թիվը, էլ ավելի հաճախ նա արտահայտում է որոշյալ լինելը... նրա մոտ առկա են քերականական միջոցի բոլոր գծերը»²:

Ռուս լեզվաբան Պորժեգինսկին որոշյալի քերականական իմաստի ծագումը հանգեցնում է ցուցական դերանունների բառային-իմաստաբանական նշանակություններին և նշում է, որ որոշիչ հոգը բառիմաստի նշանակությունը փո-

¹ Այս մասին մանրամասնորեն տե՛ս Э д. С е п и р, Язык, М. — Л., 1934, էջ 67:

² В а н д р и е с, Язык, М.—Л., 1936, էջ 115:

խում է մասնավորման (անհատականացման) և ընդհանրացման իմաստով¹:

Մի քիչ այլ իմաստով է մոտենում Տոմսոնը: Նա գրտնում է, որ բառն իր նշանակությամբ կապված է կամ առանձին մտապատկերի հետ, կամ ընդհանուր մտապատկերի (հասկացության) հետ: Ընդ որում բառը եթե ունի հասկացության նշանակություն՝ հոգեբանական իմաստով, նա համարում է այդ որպես բառի վերացական նշանակություն («абстрактное значение»). «Рука руку моет» կամ «Низкий стул неудобен»-ի մեջ բոլոր բառերն ունեն արտարկա նշանակություն²: Դրան հակառակ բառի կոնկրետ նշանակությունը ցույց է տալիս ռեալ գոյություն ունեցողը ժամանակի և տարածության սահմաններում. սա արդեն անհատական մտապատկերն է: «Этот стул низок»..., «Обратите внимание на этот пример»-ի մեջ բոլոր բառերը ունեն կոնկրետ նշանակություն³:

Տոմսոնը վերացականի և կոնկրետի ըմբռնումը հանգեցնում է տեսակի և անհատի հոգեբանական ընկալմանը:

Տոմսոնը տարբերում է երեք նշանակություն՝ վերացական, որ վերելում տեսանք, «կոնկրետ անհատապես անորոշ», որ է, օրինակ, «մարդ» բառը «Ես հանդիպեցի (մի) մարդու» նախադասության մեջ: Սրանից հետո առարկան (մարդ) խոսքի մեջ ստանում է հայտնիության հատկանիշ, մի հատկանիշ, որով խոսակիցն արդեն կարող է նրան առանձնացնել մնացած բոլոր նույնատեսակ առարկաների՝ մարդկանց միջից: Այնպես որ խոսքի շարունակության մեջ կարող է ասել. «Ես ասացի նրան (կամ՝ այդ մարդուն)»:

Այսպիսի դեպքում բառի («մարդ» — այդ մարդուն) նշանակությունը «կոնկրետ անհատապես որոշյալ» է, թեկուզ այս անգամ էլ տվյալ մարդու մտապատկերի բովանդակությանը ոչինչ չի ավելացվել խոսակցի համար, բացի արտա-

¹ Տե՛ս В. Поржезинский, Введение в языковедение, Москва, 1913, էջ 117:

² А. Томсон, Общее языковедение, Одесса, 1906, էջ 277:

³ Նույն տեղում:

քին ալն հատկանիշից, որ խոսողը հանդիպել է նրան: Այս տարբերակման մեջ է համարում Տոմսոնը որոշյալի քերականական իմաստի էությունը:

Հոգի մասին խոսվել է նաև ժամանակակից բուրժուական լեզվաբանական գրականության մեջ: Նույնացնելով լեզուն՝ և մտածողությունը սեմանտիկական¹ իդեալիզմի ջատագովները ցանկանում են լեզվական երևույթներով, լեզվի կառուցվածքային առանձնահատկություններով բացատրել տեսական մտածողության զարգացման բնույթը տարբեր ժողովուրդների մոտ:

Բուրժուական որոշ լեզվաբաններ էլ լեզվի զարգացած լինելը բացատրում են քերականական այս կամ այն կատեգորիայի առկայությամբ:

Սովետական լեզվաբանությունը², ընդհակառակը, ուսումնասիրելով, ինչպես որոշյալի ու անորոշի, այնպես էլ քերա-

¹ Այս մասին տե՛ս Օ. Ի. Մոսկալսկայա-յի «Категория арти-
кля в трактовке современного буржуазного языкознания» հոդվածը
«Иностр. языки в школе» ժուռնալում, 1948, № 4: Հենվելով անգլե-
րենի, ֆրանսերենի, գերմաներենի փաստերի վրա, որոշ բուրժուական
լեզվաբաններ ճշնում են ապացուցել, թե հոգի առկայությունը լեզվի
շատ զարգացած լինելու արտահայտություն է, և որպեսզի «ցույց տան»
թե ուսուներեն իբր մի քանի հարյուրամյակ ետ է մնացել, ուսուներե-
նում որոնո՞ւմ են հոգի գործածության նախնական դեպքեր, հոգի կազ-
մավորման պրոցես և կանգ են առնում ո՞ր ցոռական դերանվան հո-
դանման կիրառության վրա: Մինչդեռ լեզվաբանությանը վաղուց հայտ-
նի է, որ այդ դերանունը նման կիրառությամբ գործածվել է նաև հին
սլավոներենում, ուր և նշանակել է կամ արտահայտել է «ինչի մասին
արդեն խոսվել է, ինչի մասին արդեն հայտնի է» (А. Баһан, Руко-
водство по старославянскому языку, Москва, 1952, էջ 169): Ժամա-
նակակից ուսու գրական լեզուն ի տարբերություն մի քանի սլավո-
նական բարբառների, շրջանցել է այդ կիրառությունը, լեզվական այլ
միջոցների հաշվին:

² Ն. Մառը մի շարք ճիշտ գիտողությունների հետ միասին ունի
նաև չհիմնավորված պնդումներ որոշյալի ու անորոշի քերականական
կատեգորիայի (հոգերի) վերաբերյալ: Նա նույնացրեց քերականական
ու տրամաբանական կատեգորիաները, դրանով իսկ շփոթություն մըտ-
ցրեց լեզվական երևույթների ուսու պատմական զարգացման ըմբռ-
նման մեջ: Այսպես, օրինակ, նա գրում է. «Վերապրուկ արխաիզմ է,

կանական մնացած կատեգորիաները, նպատակ չի դնում ինչ-որ առավելություններ, արժանիքներ գտնել այս կամ այն լեզվի մեջ և այն հակադրել մյուս լեզուներին: Սովետական լեզվաբանությունը խորթ է ռասայական, նացիոնալիստական ամեն տեսակի գաղափարախոսություն: Սովետական լեզվաբանությունը եղում է այն բանից, որ յուրաքանչյուր քերականական կատեգորիա կապված է տվյալ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունների հետ և հիմնականում դրան է պարտական իր կազմավորմամբ ու զարգացմամբ, որ քերականական կատեգորիայի առկայությունը կամ բացակայությունը կախում չունի տվյալ լեզվով խոսող հասարակության մտավոր զարգացման բնույթից, ավելին՝ չի բնորոշում տվյալ հասարակության մտավոր զարգացումը: Եթե լատիներենում և ռուսերենում, օրինակ, չկա որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիան, ապա այդ չի նշանակում, թե այդ լեզուները պակաս զարգացած են, կամ թե զուրկ են ընդհանրացմանը, տեսական մտածողության զարգացմանը նպաստող միջոցներից, հնարավորություններից:

Որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի պրոբլեմը վերջին տարիներս աշխուժորեն քննարկվեց սովետական ռուս լեզվաբանական գրականության մեջ: Ուսումնասիրվել է հատկապես հոգը գերմաներենում, ֆրանսերենում, անգլերենում, ընդ որում փորձեր են եղել տալ այդ կատեգորիայի քերականական հիմնական առանձնահատկություն-

երբ հայոց հին գրական լեզվի մեջ հատուկ անունները իրենք չեն ընդունում որոշիչ հոգ, քանի որ որոշիչ հոգը, վաղեմի գերանունը, երբեք եղել է տոսեմ, ինչպես և անձի անունը» (H. Я. Марр, Избранные работы, т. III, М.—Л., 1934, էջ 100):

Ժխտելով լեզվի համաժողովրդական բնույթը և առաջ քաշելով լեզվի դասակարգայնության ֆորմուլան, Մառը քերականական կատեգորիաները համարում էր ոչ թե լեզվի մեջ գործող օբյեկտիվ օբեկտների՝ օրինաչափությունների արտահայտություն, այլ հասարակության դասակարգային տարբերակման լեզվական արտահայտություն: Ըստ նրա՝ սեռերը, արական և իգական, հավասարապես նաև որոշիչ և անորոշ հոգերը, բնութագրել են «հասարակական կատեգորիաները... հասարակության տարբեր դասերը» (տե՛ս նույն տեղում):

ներն ընդհանրապես: Ոմանք նշում են հոգի հետեյալ ֆունկցիաները. ա) ցույց է տալիս՝ ա) գոյականի սեռը, թիվը (և հոլովը), բ) ոչ գոյական բառերի առարկայական իմաստ ստանալը (փոխանունություն), գ) բառի արտահայտած առարկայի կամ երևույթի հայտնի կամ անհայտ լինելու առտիճանը¹: Սա վերաբերում է որոշիչ հոգին: Իսկ անորոշ հոգը կիրառվում է՝ ա) վերացական անունների կոնկրետացման համար, բ) նոր առարկաների, երևույթների առաջին անվանումների ժամանակ, գ) այնպիսի դեպքերում, երբ բնութագրվում է առարկան²: Այս դնահատումը, սակայն, ամբողջական չէ: Որոշյալի ու անորոշի քերականական իմաստները ունեն միաժամանակ ցեղակից լեզուներում դրսևորող ընդհանրություններ և տարբերություններ, բայց յուրաքանչյուր լեզվի մեջ այդ կատեգորիան հանդես է բերում այնպիսի առանձնահատկություններ, որոնք բացատրվում են տվյալ լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով: Ուստի նա, ով ուզում է ընդհանրապես տալ այս կատեգորիայի քերականական առանձնահատկությունների ընդհանուր պատկերը, պետք է հենվի որոշյալի ու անորոշի քերականական իմաստների ձևաբանական ու շարահյուսական նշանակությունների վրա ինչպես ցեղակից, այնպես էլ ոչ ցեղակից լեզուներում, ավելին՝ միևնույն լեզվի տարբեր բարբառներում:

Ե. Բ. Ջերկասկայան, խոսելով հոգի մի քանի կիրառությունների մասին (հատուկ անունների, թվարկվող և չթվարկվող առարկաների անունների, վերացական անունների, հարադրական կապակցությունների վերաբերյալ), փորձում է որոշալի ու անորոշի քերականական իմաստները բացատրել անունների (կատեգորիաների) տեսակային և անհատական նշանակություններով: «Հատուկ գոյականները, — գրում է Ջերկասկայան, — հանդիսանում են անհատ անձերի, տեղերի, հասկացությունների անվանումներ և պատկանում են միայն այդ ան-

¹ См. В. Н. Андреева, Употребление артикля в современном французском языке, «Иностранные языки в школе», 1951, № 6, էջ 56:

² См. նույն հոդվածը:

ձերին, տեղերին և հասկացություններին, և ոչ թե հանդիսանում են հասարակ գոյականների նման անձերի, առարկաների և հասկացությունների ամբողջ կատեգորիաների կամ դասերի անվանումներ: Այդ պատճառով հատուկ գոյականները կարիք չեն զգում առանձնացվելու կատեգորիաներից կամ հատկացնելու կատեգորիաներին, այսինքն կարիք չեն զգում իրենցից առաջ օգտագործելու հոգ»¹:

Ինչպես երևում է, հոգառությունն ուղղակի հանգեցնում է անհատ առարկայի և տեսակի տրամաբանական նշանակություններին, մինչդեռ ինչպես տվյալ դեպքում, այնպես էլ ընդհանրապես յուրաքանչյուր քերականական իմաստի իմաստաբանական էությունը միշտ չի կարելի հանգեցնել նրա տրամաբանական իրացմանը, այսինքն անմիջական կամուրջ դրել քերականական իմաստի և իրականություն տրամաբանական գնահատման բնույթների միջև: Այլապես վերևում առաջարկված սխեմայով չենք կարող բացատրել, օրինակ, ժամանակակից հայերենում հատուկ անունների հոգ ստանալը: Լեզվական (քերականական) դեպքեր կան, որոնք չունեն ուղղակի տրամաբանական «արդարացում», դրանք անպայման պետք է դիտել իբրև տվյալ լեզվի ուրույն պատմական զարգացման արդյունք:

Ոմանք ընդգծում են, որ հոգն ունի ամենից ավելի ընդհանրացնող և անհատականացնող նշանակություններ: Ընդհանրացնող և անհատականացնող նշանակությունները վերադրվում են և՛ որոշիչ, և՛ անորոշ հոգերին: Վ. Մ. Կիրզները և Ն. Պ. Ստրախովան, ելնելով գերմաներենի փաստերից, գտնում են. «Երկու հոգերն էլ ունեն ինչպես անհատականացնող, այնպես էլ ընդհանրացնող նշանակություն: Սակայն անորոշ հոգի անհատականացնող և ընդհանրացնող նշանակությունները տարբերվում են որոշիչ հոգի նույն նշանակություններից նրանով, որ անորոշի դեպքում գործ ունենք անորոշ անհատականացման և անորոշ ընդհանրացման հետ,

¹ Е. Б. Черкасская, О преподавании употребления английского артикля, „Иностранные языки в школе“, 1948. №, 4, էջ 71:

խիստ որոշիչ հոգի դեպքում, ընդհակառակը, որոշյալ անհատականացման և որոշյալ ընդհանրացման հետ»¹:

Զնայած հարցին որոշակի մոտենալուն, անուամենայնիվ նրանք այստեղ շփոթում են որոշյալի և անորոշի քերականական իմաստները բառիմաստի առարկայական վերաբերության յուրահատկությունների հետ:

Որոշ լեզվաբաններ հոգը և նրա արտահայտած իմաստը կապում են բառի նշանակության ակտուալության հետ, բառի ռեալ (իրական) առարկա նշանակելու հետ: „Article indefini“, որպես հոգ (артикле), գրում է Օ. Ի. Բոգոմոլովան, — ակտուալ է դարձնում (актуализирует) գոյականը, այսինքն, նրան ի վիճակի է դարձնում նշանակելու ռեալ առարկան, այն դեպքում, երբ առանց հոգի գոյականը այդ ունակությունը չունի»²: Այնուհետև՝ «Ժամանակակից ֆրանսերենում՝ առանց հոգի գոյականը, ի տարբերություն հոգով գոյականի, ցույց չի տալիս ռեալ առարկա»³, այլ «իրենից ներկայացնում է պարզապես առարկայի սոսկ անվանում, առանց որևէ կերպ ցույց տալու նրա ռեալությունը»⁴:

Պարզ է, նման մոտեցումը իր հիմքում չունի ոչ մի փաստական արդարացում: Հոգը արտահայտում է քերականական հարաբերություն և որպես այդպիսին ռեալ առարկայական հարաբերություն: Բայց այս դեռ բոլորը չէ: Չկան առարկայական նշանակություն չունեցող, այսինքն ռեալ առարկացույց չտվող գոյականներ. միայն այն գոյականները, որոնք արտահայտում են կեղծ հասկացություններ (աստված, հրեշտակ և այլն), չեն արտահայտում ռեալ (տրամաբանական իմաստով) առարկայական նշանակություն, թեպետ որպես բառիմաստ նրանք հանդես են գալիս «առարկայական» նշա-

¹ В. М. Кирзнер и Н. Б. Страхова, Об употреблении артикля в современном немецком языке, „Иностранные языки в школе“, 1949, № 5, էջ 11—12:

² О. И. Богомоллова, Современный французский язык, Москва, 1948, էջ 318:

³ Նույն տեղում, էջ 309:

⁴ Նույն տեղում, էջ 323:

Նախությամբ: Հողը չէ, որ բառի արտահայտած առարկայական նշանակութիւնը դարձնում է ռեալ: Հողը չունի այդպիսի ֆունկցիա և հողին վերագրվող այդ ֆունկցիան կարծեցյալ է, իսկ այդպիսի մոտեցումը ոչ մի ընդհանուր բան չունի բառ-իմաստի ու նրա առարկայական նշանակության, ինչպես և քերականական իմաստի ու քերականական նշանակության գիտական ըմբռնման հետ ընդհանրապես և հողի արտահայտած քերականական նշանակության ըմբռնման հետ առանձնապես: Ոմանք գտնում են, թե անորոշ հողը գործածվում է այն ժամանակ, երբ խոսքի մեջ նշվում է այնպիսի առարկայի անուն, որի մասին առաջ ոչինչ չի ասվել: Այս տեսակետն ընդունում է նաև Բոգոմոլովան¹: Մինչդեռ շատերի կողմից այս կարծիքն իրավացիորեն ենթարկվել է խիստ քննադատության, որովհետև ոչ բոլոր դեպքերն են մտնում առաջարկվող կանոնի տակ:

Գիտակցութիւնը առարկան կամ առարկաների խումբը տարբերակում է առարկաների մնացած խմբերի մեջ: Եթե ուզում ենք մի որևէ առարկայի մասին մի բան հաստատել կամ բացասել, ապա ամենից առաջ մենք պետք է մասնավորենք տվյալ առարկան, ինչպես իր տեսակի մնացած առարկաների շարքում, այնպես էլ ալլատեսակ առարկաների հարաբերությամբ: Մասնավորման համար լեզուն ունի շատ միջոցներ: Խնձոր առարկան կարելի է վերցնել բազմաթիվ հարաբերութիւններով, ընդգծելով նրա որևէ աչքի զարնող հատկանիշ՝ որակական (կարմիր, հասած, համեղ), քանակական (երկու, երեք, մեկ), տեսակային և այլն: Այս տեսակետից առարկաները տարբերակելու համար չափազանց կարևոր է երեք դեմքերի նկատմամբ ունեցած՝ առարկաների տարածական հարաբերության հատկանիշը, թե առարկան ի՞նչ դիրք ունի 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերի հարաբերությամբ: Առարկան կարող է տարածությամբ և ժամանակով մոտ լինել 1-ին, 2-րդ, կամ 3-րդ դեմքին: Այս դեպքերում մեծ մասամբ առարկան անվանվում է՝ ցուցական դերանունների

¹ О. И. Богомолова, Современный французский язык, էջ 318:

քնութագրմամբ (այս խնձորը, այդ նամակը), ավելի ճիշտ՝ առարկան անվանվում է մատնացույց անելով նրա՝ որևէ դեմքի նկատմամբ ունեցած տարածական, դիրքային (և ժամանակային) հարաբերության հատկանիշը:

Նման պայմաններում ստեղծվում է խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ առարկայական ինչ-որ տեղագրություն (սիտուացիա), որը հոգեբանորեն ընկալվում է խոսողի և խոսակցի կողմից:

Խոսելու ժամանակ խոսողը և խոսակիցը նկատի ունեն ոչ թե ընդհանրապես ամեն կարգի առարկա, այլ այն առարկաները, որոնք ինչ-որ չափով կապված են խոսքի տվյալ մոմենտի հետ. խոսողը և խոսակիցը առարկաների բազմաբանգությունից ընտրում են մտքի այնպիսի առարկաներ, որոնք պետք են առկա մոմենտի համար: Եվ նրանք առանց դժվարության հասկանում են միմյանց, որովհետև խոսքի ամեն առարկա խոսողության պրոցեսի տվյալ մոմենտի նըկատմամբ գտնվում է միշտ որոշակի հարաբերության մեջ երեք (1-ին, 2-րդ, 3-րդ) դեմքերի սահմաններում:

Եթե խոսողին և խոսակցին մոտենա մի երրորդ անձ այն ժամանակ, երբ սա դեռևս չի խմանում, թե խոսակցությունը ինչ առարկայական ոլորտ ունի, ապա խոսքի մեջ արտահայտվող մտքի առարկաները նրա համար չեն ունենա կոնկրետ նպատակաուղղվածություն, անունները չեն ունենա որոշակի առարկայական վերաբերություն: Նման դեպքում եթե խոսքը, ասենք, խոսողին և խոսակցին հայտնի ինստիտուտի, դիրեկտորի, Արամի մասին է, ապա երրորդ անձը ստիպված է հարցնելու՝ ո՞ր ինստիտուտի, ո՞ր դիրեկտորի, կամ ո՞ր Արամի մասին է խոսքը¹:

¹ Ահա թե ինչ է գրում այդ մասին հայտնի լեզվաբան Ա. Տոմսոնը. «Բայց ինչո՞վ բացատրել, որ խոսակիցը բառի տակ հասկանում է հենց այն մտապատկերը, որ նկատի ունի խոսողը: Դրա համար անհրաժեշտ են լեզվից գուրս գտնվող այլ պայմաններ, որոնց ազդեցությամբ խոսակիցը հոգեբանորեն դիրքորոշվում է այնպես, որ նրա մոտ արթնանում է գերազանցապես՝ այդ բառով նշվելու հնարավորություն ունեցող բոլոր այլ մտապատկերներից առաջ՝ հենց այն մտապատկերը, որպիսի նշանակություն էլ նկատի ունի խոսողը» (А. Томсон, Общее языковедение, էջ 286):

Ահա թե ինչու խոսքի ոլորտի մեջ գիտակցված մտքի յուրաքանչյուր առարկա խոսքի տվյալ մոմենտի համար կոնկրետ է: Սույն նշանակության հետ խիստ կապված են ցուցական դերանունների կիրառությունները:

Այս, այդ, այն ցուցական դերանունները մեծ մասամբ գործածվում են այն անունների հետ, որոնք խոսքի մեջ բերվում են իրենց բառիմաստի ոչ ամբողջ ծավալով և որոնք չեն գործածվում միայն նվազագույն տեսակալին ծավալով: Ցուցական դերանունները հիմնականում դրվում են այն անունների վրա, որոնց ցույց տված առարկաները դիտվում են 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերի նկատմամբ տարածությունում և ժամանակով կապված հարաբերության մեջ:

Հայոց լեզուն իր զարգացման հնագույն շրջանում օգտագործում էր ցուցական դերանունները նման ֆունկցիայով, երբ դեռևս չկալին համապատասխան ֆունկցիալի հետ կապված դերանվանական մասնիկներ: Սակայն երբ ցուցական դերանունների վերջադաս անշեշտ կիրառությունը թուլացրել է նրանց բառային-իմաստարանակալ նշանակությունը, հասցնելով մասնիկների աստիճանին, ապա առաջ են եկել դերանվանական մասնիկների և ցուցական դերանունների տարբերակված, առանձնահատուկ իմաստային (ֆունկցիոնալ) կիրառություններ:

Տրամաբանական տեսակետից առարկայի անունը (հասկացությունը) կոնկրետ (մասնավորված) է այն դեպքում, երբ այդ անվան ցույց տված առարկայի վերաբերյալ կարելի է մի որևէ հատկանիշ հաստատել կամ բացասել, ժխտել: Սակայն այստեղ՝ մեզ հետաքրքրող հարցում, խոսքն առարկայի կաշուն գիտակցվող որակային, ինչպես և քանակային, տեսակային հատկանիշների մասին չէ. այստեղ հիմնականը այն հատկանիշն է, որով առարկան մտնում է խոսողության ոլորտը, այսինքն երբ առարկան 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերի սահմաններում կապվում է խոսքի տվյալ մոմենտի հետ, ասենք, այն առարկան, որի մասին խոսվում է, և որը դրված է սեղանին, այն առարկան, որի հետ երեկ ծանոթացել ենք, այն մարդը, որը հենց նոր երևաց փողոցի մյուս կողմից, այն

ձերգիչը, որին երեկ հաճույքով լսեցինք, այն գրիչը, որ նվեր են ուղարկել ինձ, այն գիրքը, որ ինձ և քեզ (խոսողին և խոսակցին) շատ է դուր եկել, և այլն, և այլն:

Այս «սիրտուացիոն», տարածական-դիրքային հարաբերուչ թվան հատկանիշը սովորաբար մատնացույց անող հատկանիշ է, սա բառային անվանման մեջ կապվում է ցուցական դերանունների իմաստային բնույթի հետ, որոնց ձևական ու իմաստային, բառա-իմաստային զարգացման արդյունքը՝ քերականական լուրահատուկ կապակցությունների շնորհիվ՝ հոգերն են իրենց ուրույն (հիմնականում՝ որոշյալի) քերականական իմաստներով: Որոշյալի իմաստն էլ բառիմաստը դարձնում է քերականորեն մասնավորված, ավելի ճիշտ՝ քերականորեն կոնկրետ:

Բառը կարող է քերականորեն որոշյալ լինել, երբ առարկայական վերաբերություն¹ հատկանիշով՝

ա) բառիմաստը վերցված է իր ամբողջ ծավալով, ընդգրկում է տվյալ տեսակն ամբողջությամբ (Ոչխարը չորքուտանի կենդանի է):

բ) բառիմաստը ենթարկված է ծավալային սահմանափակման, բայց չի հասցված մինչև տվյալ տեսակի նվազագույն ծավալը՝ անհատ առարկան (Հասոն ոչխարը քշեց սար)²:

գ) բառիմաստն ընդգրկում է միայն տվյալ տեսակի անհատ առարկան (Ոչխարը, չնայած անասնաբույժի ձեռք առած միջոցներին, սատկեց):

դ) բառիմաստը նշանակում է տվյալ տեսակի միշտ միևնույն անհատ առարկան (հատուկ անուններ):

ե) բառիմաստը ցույց է տալիս բնության մեջ եզակի, անհատ առարկա, ավելի ճիշտ՝ ցույց է տալիս առարկա, որ բնության մեջ մի հատ է (Լուսինը երկրի արբանյակն է):

զ) բառիմաստն ունի վերացական հասկացության նշանակություն (Քո արածը լավուրյուն չէ):

¹ Առարկայական վերաբերության բնույթի մասին տե՛ս Է. Գ. Աղաջան, Լեզվաբանության ներածություն, 1952, էջ 203:

² Այս օրինակում հնարավոր է ոչխարը հասկանալ նաև իբրև մեկ ոչխար: Սա արդեն այդ բառի քերականական տարբերակում չէ:

Բառիմաստը նշված դեպքերում կարող է կոնկրետանալ։ Սակայն որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիան ունեցող ոչ բոլոր լեզուներում են բոլոր այդ կոնկրետացումները քերականորեն, որոշիչ հոդով արտահայտվում. ավելին՝ ժիենուլն լեզվի զարգացման ոչ բոլոր էտապներում են զբաղեցնում քերականորեն, որոշիչ հոդով դրսևորվում։ Հայերենի, ինչպես և այլ հնդեվրոպական՝ այս կատեգորիան ունեցող լեզուների, պատմութունը ցույց է տալիս, որ որոշյալի քերականական իմաստը նախապես ընդգրկել է վերոբերյալ երկրորդ (բ) և երրորդ (գ) դեպքերը, և միայն հետագայում ծավալվել ու տարածվել մնացած դեպքերի վրա։ Այս հաստատվում է նաև նրանով, որ հայերենում ցուցական այս, այդ, այն դերանունները, որոնց բառա-իմաստային ուրույն պատմական զարգացման բազայի վրա կազմավորվել են ս, դ, և հոդերը՝ իրենց տարրերակված քերականական իմաստներով, հիմնականում կիրառվում են նշված երկու դեպքերում։ Այս, այդ, այն ցուցական դերանունները դրվում են առարկայի անվան վրա այն դեպքում, երբ տվյալ առարկան խոսողի և խոսակցի նկատմամբ տարածութլամբ ու ժամանակով ունի որոշակի դիրք, մի դիրք, որը հնարավորութլուն է տալիս այդ առարկան բնութագրել մատնացույց արվող (կամ հայտնիութլան) հատկանիշով։

Մոսոդական ակտում առարկան կարող է լինել մի անհատ, առարկաների մի խումբ, կամ այդ առարկաների ամբողջ տեսակը։ Բայց ցուցական այս, այդ, այն դերանունները չեն կապվում տեսակային բնութլի անվանումների հետ, այսինքն բառի հետ այն դեպքում, երբ այն վերցված է բառ-իմաստի ամբողջ ծավալով։ Այդ դերանունները գրեթե չեն կապվում նաև այն անունների հետ, որոնք հանդես են գալիս միշտ որպես անհատի, անհատ առարկաների անուններ (հատուկ անուններ)։ ինչպես և այն դեպքում, երբ բառը ցույց է տալիս բնութլան մեջ մի հատ առարկա։ Իսկ եթե այդ այդպես է, ապա ցուցական դերանունների հիմքի վրա առաջացած մասնիկները՝ հոդերը ևս պետք է ունենալին նույն, կամ գրեթե նույն կիրառութլունները։ Եվ իսկապես գրաբարում հատուկ

անունները, ամբողջ տեսակի ծավալով հանդես եկած անունները, բնության մեջ մի հատ առարկաների անունները որոշիչ հոգ չէին ստանում:

Եվ քանի որ այս, այդ, այն ցուցականների՝ առարկաների անունների հետ կիրառելու հիմքում ընկած է խոսողի և խոսակցի նկատմամբ այդ առարկաների տարածական-գիրքային հարաբերություն հատկանիշը, ապա այդ դերանունների բաղալի վրա առաջացած մասնիկների՝ հոդերի հիմքում ևս ընկած է խոսողի և խոսակցի նկատմամբ առարկաների տարածական-գիրքային հարաբերության հատկանիշը, իսկ հետագայում որոշիչ հոդի հիմքում՝ արդեն ընդհանրապես խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ առարկաների ունեցած հարաբերության հատկանիշը:

Այժմ, կարելի է ասել, թե խոսողի և խոսակցի նկատմամբ առարկաների տարածական-գիրքային հարաբերության հատկանիշի հիմքի վրա գոյացած այն հատկանիշը, որը ցույց է տալիս ընդհանրապես խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ առարկաների ունեցած հարաբերությունը, էապես հայանիության հատկանիշ է:

Ծանոթ լինելով հայերենի որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի պատմությանը և տեսությանը, կարելի է ասել՝ այո՛, եթե նկատի ունենանք լեզվի զարգացման որոշակի էտապ, ասենք, ժամանակակից գրական հայերենը, ուր՝ վերևում՝ մեր կողմից նշված վեց դեպքերում էլ բառը կարող է քերականորեն որոշյալ լինել և ստանալ որոշիչ հոգ, ո՛չ, եթե նկատի ունենանք, ասենք, գրաբարը, ուր այդ վեց դեպքերից (իսկ դրանք բառիմաստի կոնկրետ լինելու դեպքեր են) հիմնականում երկուսի (բ, գ) ժամանակ է բառը լինում քերականորեն որոշյալ և ստանում որոշիչ հոգ: Եվ քանի որ հնդեվրոպական որոշ լեզուներում, ինչպես և գրաբարում, հաճախ բառիմաստն իր նշանակությամբ կոնկրետ է, այժմ արդեն կարող ենք ասել, ցույց է տալիս խոսողին և խոսակցին հայտնի առարկա (ամբողջ տեսակի ծավալով անուններ, հատուկ անուններ), քայց բառը որոշիչ հոգ չի ստանում, ապա չի արդարացվում այն պնդումը, թե

երբ առարկան խոսողին և խոսակցին հայտնի է, բառն ստանում է որոշիչ հոգ:

Խառնաշփոթութիւնն ակնհայտ է, եթե անտեսւում է տվյալ լեզվի, ավելին՝ տվյալ լեզվի որոշակի էտապի որոշյալի ու անորոշի կատեգորիայի քերականական առանձնահատկութիւնների բնույթը:

Ահա թե ինչու անհաջողութիւն են մատնւում բոլոր նրանք, ովքեր ցանկանում են դնել որոշյալի իմաստի միօրինակ, ընդհանրական (ունիվերսալ) նշանակութիւն՝ այդ կատեգորիան ունեցող բոլոր լեզուներում: Ձեռն արդարացւում նաև այն քերականների ջանքերը, ովքեր փորձում են որոշյալի իմաստը բնութագրել հայտնիութիւն հատկանիշով, որովհետև հայտնիութիւն հատկանիշով, օրինակ, ժամանակակից գրական հայերենի հատուկ անունների հոդառութիւնն արդարացւում է (հատուկ անունները որոշյալի հոգ են ստանում), իսկ արևմտահայերենում՝ ո՛չ (հատուկ անունները որոշյալի հոգ համարյա չեն ստանում):

Որոշ լեզվաբաններ, ինչպես նշել ենք շարադրանքի ընթացքում, ընդգծում են որոշիչ հոգի ընդհանրացնող (տեսակի անունների որոշյալ հոգ ստանալը) և անհատականացնող (տեսակից անհատ առարկայի առանձնացումը) նշանակութիւնները¹:

Հարցին կարող է լույս սփռել միայն պատմական մոտեցումը: Նախապես որոշիչ հոգ ստացել են ոչ թե այն անունները, որոնք ընդհանրապես (գրեթե միշտ) կոնկրետ (բայց ոչ անպայման մասնավոր) նշանակութիւն ունեն, ասենք, հատուկ անունները, բնութիւն մեջ մի հատ առարկայի անու-

¹ Որոշյալ հոգը առարկաների ամբողջ տեսակը նշանակող բառը կոնկրետացնում է այդ առարկաների ամբողջութիւն՝ խոսքի տվյալ մոմէնտի նկատմամբ ունեցած հարաբերութիւն հատկանիշով: Սա որոշիչ հոգի այսպես կոչված ընդհանրացնող նշանակութիւնն է: Որոշիչ հոգը կարող է նաև առարկաների տեսակի առանձին ներկայացուցիչը (կամ առարկաների խումբը) նշանակող բառը կոնկրետացնել այդ առարկայի խոսքի տվյալ մոմէնտի նկատմամբ ունեցած հարաբերութիւն (կամ հայտնիութիւն) հատկանիշով: Սա որոշիչ հոգի այսպես կոչված մասնավորող նշանակութիւնն է:

ներ, տեսակի նշանակութեամբ բառերը, ընդհակառակը, այդպիսի բառերը նախապես որոշիչ հոդ չէին ստանում, այլ այն անունները (բառերը), որոնք կարիք էին զգում կոնկրետ նշանակութեամբ գործածվելու (հակառակ նրանց ոչ կոնկրետ, անորոշ նշանակութեամբ կիրառութիւններին), և որոնք հաճախ այդ ֆունկցիայի համար օգտագործում էին ցուցական այս, այդ, այն դերանունները: Հետևապես հոդերի կիրառութեան հիմքում ընկած է եղել ոչ թե ընդհանրապես կոնկրետութեան կամ հայտնիութեան հատկանիշը, այլ ցուցական դերանունների իմաստային ու կիրառական նշանակութիւններին հարաբերակից՝ տարածական-դիրքային հարաբերութեամբ կոնկրետացնելու հատկանիշը:

Այդ հիմքի վրա, և միայն հետագայում, որոշյալի քերականական իմաստը հանգել է՝ բառիմաստի կոնկրետ նշանակութեան հետ կապված՝ ընդհանրապես հայտնիութեան հատկանիշին, անկախ նրանից բառը հատուկ անուն է, անհատ առարկայի, թե տեսակի անուն է, որը և տեսնում ենք ժամանակակից գրական հայերենում:

Կարեւորն այն է, որ որոշյալի իմաստը կապված է բառիմաստը կոնկրետացնող հատկանիշի հետ, որը էապես առարկայի՝ խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ ունեցած հարաբերութեան հատկանիշ է և, որպես այդպիսին, հայտնիութեան հատկանիշ: Եթե բառիմաստի կոնկրետացումն այդ հատկանիշով՝ արտահայտվում է քերականորեն, համապատասխան ձևաբանական միջոցներով՝ հոդերով, ապա լեզվի մեջ ունենք որոշյալի քերականական կատեգորիա, եթե չի արտահայտվում քերականորեն, ասենք, անցնում է բառիմաստին, բառակապակցութեանը, կամ մասնակի դեպքերում՝ շեշտին, ապա չունենք որոշյալի քերականական կատեգորիա, որպես քերականական առանձին որակ:

Այսպիսով, պարզ է դառնում, թե ինչպես առարկայի՝ խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ ունեցած հարաբերության հատկանիշը կամ հայտնիության քերականական իմաստը կոնկրետացնում է բառիմաստը, և որոշիչ հոդը քերականորեն որոշյալ է դարձնում բառը:

Հետևապէս որոշյալի քերականական կատեգորիան բառը առանձնահատուկ հարաբերութեամբ կոնկրետացնող իմաստի և նրա քերականական արտահայտութեան միջոցի՝ հոգի միասնութիւնն է։ Բայց քանի որ որոշյալի քերականական կատեգորիան անխզելի քերականական կապի մեջ է անորոշի¹ քերականական արտահայտութեան հետ, այդ պատճառով կոչում ենք՝ որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիա։

¹ Անորոշ հոգի բառը կոնկրետացնում է ոչ թե առարկայի՝ խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ ունեցած հարաբերութեան հատկանիշով, այլ առարկայի թուլացած, մթազնած քանակային հատկանիշով։ Այս մասին մանրամասն հետո։

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇՅԱԼԻ ՈՒ ԱՆՈՐՈՇԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՈՐՈՇՅԱԼԻ ՈՒ ԱՆՈՐՈՇԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՑԻ
ՋԵՎԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Կատեգորիաներն իրականությունն ամենից ավելի ընդհանուր, էական կապերի ու հարաբերությունների արտացոլումն են հանդիսանում: Այս տեսակետից նրանք խիստ կարևոր նշանակություն են ստանում գիտական մտածողության համար: Յուրաքանչյուր գիտություն օգտվում է համապատասխան կատեգորիաներից: Այսպես, օրինակ, փիլիսոփայությունն օգտվում է պատմառականություն, անհրաժեշտություն, ձև և բովանդակություն, օրենք, եություն և երևույթ, հնարավորություն և իրականություն, վերնաշենք, բազիս և այլ կատեգորիաներից: Լեզվաբանությունը, որպես գիտություն, ունի իր ուսումնասիրության օբյեկտի (լեզվի) հիմնական կապերն ու հարաբերություններն արտացոլող կատեգորիաներ, ընդ որում, քերականագիտությունը օգտվում է լեզվի քերականական կառուցվածքի հիմնական օրինաչափությունները, կապերն ու հարաբերություններն արտացոլող կատեգորիաներից:

Քերականագիտությունը քերականական կատեգորիաներ տեղադրելու գործ է ածում իր լաճն և նեղ առումներով: Լաճն իմաստով՝ քերականական կատեգորիաների տակ մտնում են

ձեաքանական ու շարահյուսական այնպիսի հասկացութիւններ, ինչպիսիք են՝ գոյական, ածական, բայ, դեմք, քիվ, եղանակ, ժամանակ, սեռ, նախադասութիւն, եմբակա, ստորոգյալ, որոշիչ, հատկացուցիչ և այլն: Սակայն լեզվաբանական գրականութեան մեջ հաճախ քերականական կատեգորիաներ անվանում են լեզվի ձեաքանութեան դեմքը (ֆիզիոնոմիան)՝ բնորոշող քերականական իմաստների ու նրանց արտահայտութեան միջոցների միասնութիւնը: Այդպիսի քերականական կատեգորիաների թիվը հասնում է 10—11-ի:

Յուրաքանչյուր քերականական կատեգորիա ունի երկու կողմ՝ քերականական իմաստ և քերականական արտահայտութեան միջոցներ: Որոշյալի ու անորոշի կատեգորիան էլ, որպէս այդպիսին, ունի իր քերականական իմաստը և համապատասխան քերականական արտահայտութեան միջոցներ:

Որոշյալի ու անորոշի իմաստներն ու նրանց քերականական արտահայտութեան միջոցները յուրաքանչյուր լեզվի մեջ ունեն առանձնահատուկ դրսևորումներ, որպէս արդիւնք տվլալ լեզվի կոնկրետ պատմական զարգացման: Օրինակ, որոշյալի քերականական իմաստները հայերենում, գերմաներենում, ֆրանսերենում, անգլերենում և այլ՝ այդ կատեգորիան ունեցող լեզուներում (հնդեվրոպական) իրար չեն ծածկում և ունեն զգալի տարբերութիւններ, նույն ձևով էլ՝ նրանց արտահայտութեան միջոցները:

Որոշյալի և անորոշի կատեգորիաների քերականական արտահայտութեան միջոցները հոգերն են: Սակայն հոգերը, որպէս մասնիկներ կամ օժանդակ բառեր, միայն որոշյալի կամ անորոշի իմաստներ չեն արտահայտում, նրանք ունեն նաև այլ քերականական ֆունկցիաներ: Գերմաներենում *der, die, das, ein, eine* հոգերը համապատասխանաբար, բացի որոշյալի ու անորոշի քերականական իմաստներ արտահայտելուց, ունեն թվի, սեռի արտահայտման և հոլովական վերջավորութիւնների ֆունկցիաներ: Բացի այդ, հոգերը որոշ լեզուներում վերածվել են բառին կցվող մասնիկների (օր. հայերենում) կամ հանդես են գալիս որպէս օժանդակ բառ: Վերջին դեպքում նրանք իրենց անկախ գործածությամբ

կապվում են բառերի հետ, իսկ իրենց արտահայտած իմաստով՝ մասնիկների հետ: Հոգերը կարող են բառին կցվել վերջից կամ հանդես գալ նախադասվելով բառին (the rose, բայց՝ վարդը): Գերմաներենում անգլերենում, ֆրանսերենում, իսպաներենում, հունարենում հոգը դրվում է նախադասվելով բառին. հայերենում, որպես մասնիկ, կցվում է բառին՝ վերջից (ինչպես և մի քանի սլավոնական լեզուներում, ալբաներենում, ռումիներենում, մորդովիներենում, թուրքերենում և այլն):

1. Որոշիչ հոգերը իրենց ստուգաբանությունից կապվում են ցուցական դերանունների հետ:

Հնդեվրոպական լեզուների զարգացման նախնական էտապում հոգեր չեն եղել, այլ եղել են ցուցական դերանուններ, որոնք ունեցել են տարբերակված կիրառություններ: Սոսքի մեջ նախապես հիշատակված, անվանված, կամ խոսողին և խոսակցին հայտնի առարկաները (անձ, իր) մատնացույց առող ցուցական դերանունների մասին հատուկ հիշատակություն ունի Մեյեն¹:

Այս ցուցական դերանունների իմաստային նշանակությունը բավականաչափ թույլ է եղել: Հունարենում ցուցականի ադպիսի ձևերը վեր են ածվել հոգերի: Հունարենը, ինչպես ցույց են տալիս փաստերը², Հոմերոսի շրջանում դեռևս չունեն հոգեր, իսկ ատտիկյան շրջանում, նրանք արդեն լիովին ձևավորվել էին:

Հնդեվրոպականում խոսողին (1-ին դեմք) մոտիկ առարկաների համար եղել է *k₁ տարրը, որից հին սլ. сь, сего, հայ. այ-ս (լատ. hic), և սա (լատ. is), իսկ հեռավոր առարկան ցույց տվող ցուցականը հին սլ. онъ, հայ. այն (լատ. ille) և նա (լատ. is)³:

Սլավոնական հիմք-լեզվի ցուցականների հիմքի վրա ա-

¹ Տե՛ս А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, Москва, 1938, էջ 332:

² Տե՛ս նույն տեղում, էջ 437:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 338:

առաջացել են սլավոնական որոշ բարբառներում (լեզուներում) հոդերի երեք շարք՝ ա) s, v, ք) t, գ) n¹:

Հայերենի եռաշարք՝ ա, դ, և, հոդերը իրենց հերթին առաջացել են հայերենի ցուցական դերանունների բազայի վրա:

Մեյեն հայերենի ա, դ, և արմատական բաղաձայնները համարում է 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերի նկատմամբ տարածական հաբաբերություններ արտահայտող մասնիկներից առաջացած, ըստ որում ա-ն՝ խոսող մարդուն մոտիկ առարկայի համար, դ-ն խոսակցին մոտիկ առարկայի, իսկ և-ն՝ հեռու գտնվող առարկայի համար:

Ըստ Մեյի ալդ մասնիկներից են առաջացել աա (*so-ay), դա (*do-ay), ևա (*no-ay)՝ ay մասնիկի հավելումով վերջից, այ-ա, այ-դ, այ-և ցուցական դերանունները՝ ay (ai) մասնիկի հավելումով առաջից²:

Հ. Պեդերսընը, վիճարկելով Մեյի այս տեսակետը, գրառում է, որ չկան հնդեվրոպական ալիպիսի մասնիկներ, որ մեկնեին ա, դ, և հոդերը, և դրանց աղբյուրը համարում է այս, այդ, այն դերանունները, որոնք իրենց ալդ ձևից վերածվել են -ըս, -ըդ, -ըն ձևերի³:

Ա. Տոմսոնը ևս, անդրադառնալով հայերենի որոշիչ հոդին, գրում է, որ ալն առաջացել է ցուցական դերանունից, չունի սեռի, հոլովի, թվի քերականական իմաստներն արտահայտող ֆունկցիա, ինչպես անգլերենի the հոդը⁴:

Հ. Աճառյանը ստուգաբանելով և մասնիկ-հոդը, գտնում է, որ նա առաջացել է հնիս. πο «ալն» դերանունից, այսինքն պաշտպանում է Մեյի տեսակետը:

¹ Ն. Պեդերսըն, Հին հայերենի ցուցական դերանունները, Վիեննա, 1907, էջ 55:

² A. Meillet, Esquisse d'une grammaire comparee de l'armenien classique, Vienne, 1903, էջ 82:

³ Ն. Պեդերսըն, Հին հայերենի ցուցական դերանունները, էջ 57:

⁴ St. A. Томсон, Историческая грамматика современного армянского языка г. Тифлиса, 1890, էջ 165:

Գրաբարում արդեն ա, դ, և հոգերը ունեին որոշակի տարբերակված նշանակություններ, որոնց մեջ իշխում էին ստացականության, ցուցականության և դիմորոշ իմաստները: Ուստի՝ հայրս կարող է նշանակել՝ «ես հայրս», «այս հայրը», «իմ հայրը», հայրդ կարող է նշանակել՝ «դու հայրդ», «այդ հայրը», «քո հայրը», հայրն կարող է նշանակել «նա հայրը», «այն հայրը», «նրա հայրը»: Գրաբարում չնայած և հոգի ցուցական, ստացական և դիմորոշ իմաստները բավականին թուլացել էին, և ակնհայտորեն ծավալվում էր որոշյալի քերականական իմաստի նշանակությունը, այնուամենայնիվ դեռևս և հոգի արտահայտած քերականական իմաստները առանձին դեպքերում, շատ չէին հեռանում ա, դ հոգերի արտահայտած իմաստներից (ցուցական, ստացական), այնպես որ աշխարհաբարի որոշյալի իմաստով և և(ը) հոգով կապակցությունները գրաբարով արտահայտելիս հաճախ դիմում ենք ա, դ հոգերին: Այս հանգամանքը հիմք է տվել Ջալըխյանին որոշյալի քերականական իմաստ վերագրելու նաև ա, դ հոգերին՝ գրաբարում: Ն հոգը գրաբարում (ինչպես և ընդհանրապես հայերենում) կցվում է բառին վերջից, գրաբարը բառավերջին ք հնչյունը չի ընդունում, գրաբարում չկար նաև ք հոգը: Ն հոգը բաղաձայնահանդ բառերի հետ արտասանվում էր քն. օր. «Աստ իմն ակնակառույց լեալ ալրասիրտ-քն այն և կաթոտ-քն Շամիրամ» (Խ, ՊԶ, 56), «Գեղեցիկ-քն ի կանայս և խոհեմ, քոյր նորա Տիգրանուհի» (ն. տ., 79):

Ն մասնիկի-ալգալիսի արտասանությունը, որը էապես անշեշտ գաղտնավանկի արտասանություն է, հայոց լեզվի զարգացման հետագա շրջանում դուրս է մղել և հնչյունը, այն պահպանելով առանձին կապակցություններում, և փոխարինել է ք հնչյունով¹: Նույն ձևով դուրս է մղվել և մասնիկը գրաբարյան մի շարք բառերից՝ եղն, մուկն, ոտն, գառն և ումն մասնիկի և հնչյունը, որոնք արտասանվելիս են ե-

¹ Տե՛ս նաև Հ. Աճ ա ռ ե ա ն, Հայ բարբառագիտութիւն (Վեմինեան ազգադրական ժողովածու), հ. Ը, Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911, էջ 21):

դիւ՝ բաղաձայնահանգ բառերի վրա դրված և հոգի նման՝
-ըն: Սրանք Ղարաբաղի բարբառում ալ ձևով են դրսևորվել.
ծովնը (ծուկ), մօկնը (մուկ), կ'առնը (գառ). ըստ որում հա-
ջորդ՝ ձայնավորով սկսվող բառից առաջ սրանց վրա ավե-
լանում է և հնչյունը (եթե որոշյալ է բառը), իսկ բաղաձայ-
նով սկսվող բառից առաջ որոշյալ լինելիս՝ նույն ըն կա-
պակցությունը: Եթե բառը որոշյալ չէ, բայց նախորդում է
ձայնավորով սկսվող բառին, ապա ը հնչյունը վերանում է:
Օրինակներ՝

«էս ծովնը լնվը չի», «էս ծովնըն էլ չի լնվ» (Այս
ծուկը լավը չէ», «Այս ձուկն էլ չի լավ»), «Արամը մին լնվ
ծովն ա փռնալ (Արամը մեկ լավ ձուկ է որսացել):

Այսօրյանը կարծում է, որ այդ ը հոգը շատ ավելի վաղ
է գործածվել կենդանի լեզվի մեջ, քան հիշատակվում է գը-
րական հիշատակարաններում, իսկ ը-ի առաջին արտահայ-
տությունը 13-րդ դ. վիմաքանդակ մի արձանագրության
մեջ է գտնվել: Միջին հայերենում դեռևս բաղաձայնահանգ
բառերում և հոգն ավելի շատ է գործածվում, քան ը-ն: Ը
հոգի կիրառությունը ծավալվում, լայն չափեր է ընդունում,
և խիստ օրինաչափ դրսևորվում է բարբառներում, արեմտա-
հայ գրականում և ժամանակակից հայոց լեզվում:

Արևմտահայ գրականում բաղաձայնահանգ բառերն ստա-
նում են ը հոգը², «Սահակ աղա հրավիրեց զնա ընթրիքը
միասին ընելու» (ԱԱ, ԸԵ, 92). «Նա արդեն Վոսիորի Հո-
վերը կը վայելե» (ն. տ., 144): Ձայնավորահանգ բառերն
ստանում են և հոգը. «այդ կիրակին» (133), «Կարուպետ է-
ֆենդին» (ԱԱ, ԸԵ, 99), բաղաձայնահանգ բառերը և հոգն
ստանում են և այն դեպքում, երբ հաջորդ բառը ձայնավո-
րով է սկսվում. «...Ցավերն ալ հոն էին» (ԳԶ, Ն, 5): Ն
հոգը ստանում են նաև ձայնավոր հոլովական վերջավորու-
թյամբ բառերը. «յուր սրտին ձայնը» (ԱԱ, ԸԵ, 15). «երի-
տասարդին հետ» (ԳԶ, Ն, 15):

¹ Ա. Այ տ ը ն ե ա ն, Քնն. քեր., 168:

² Լինում են նաև բացառություններ:

Բարբառներում սովորաբար բաղաձայնահանգ բառերի հետ գրվում է ք հոդը. «Օրը ճաշ ա դառել» (Աբ.), «Շօնը կհաչի» (Ղրբ.), «Վուր քու աչկը նրանց վրա քաղցր ըլի» (Թբ.), «Ադ վախտը սարէն էրգու գ'ալ գ'ուքան ու լուսահօքի իշուն կուտէն» (Կարնո): Մեղրու բարբառում բաղաձայնահանգ բառերն ստանում են ք կամ ի: Ի՝ ստանում են այն բառերը, որոնց վերջավանկի ձայնավորը թեթե է, կամ որոնք վերջանում են գ', կ', ք' քմայնացած հնչյուններով և կամ ծ, շ, ջ, և, չ չչականներով: Բացի այդ՝ ի՝ հոդն ստանում են հար (հայր), մար (մայր), տար (տեղ) բառերը (հար-ի՝, մար-ի՝, տար-ի՝), և նրանցով բարդվածները, իսկ բաղաձայնով վերջացող մնացած բառերն ստանում են ք հոդը¹:

Բաղաձայնահանգների վերջում ք հոդն է գործածվում Պուխի (ջուրը, շունը), Համշենի (օնունը, թվօնգը), Նոր-Ջուղայի (բայց նաև՝ և. «խառգդի միսն լէվ ա»), Ատրիալի (գէդինը, մայրագանը) և ուրիշ բարբառներում: Վանի բարբառում բաղաձայնահանգ բառերը և հոդը չեն ստանում, իսկ ք հոդը ընդհանրապես չի գործածվում: Բաղաձայնահանգ բառը ձայնավոր հոլովական վերջավորությունից հետո ստանում է և հոդը (խացին ծեռ մի՛ տա): Ը հոդի բացակայությունը Վանի բարբառում նրանով է բացատրվում, որ այդ բարբառով խոսողները չեն կարող բառի վերջում (ինչպես և սկզբում) ք հնչյունն արտասանել²: Ընդ որում այդ բարբառում հոգ չստացող բառերը որոշյալի քերականական իմաստը արտահայտում են այլ միջոցներով: Ինչպես վկայում է Աճառյանը, այդպիսի միջոց է համարվում շեշտը՝ մա'րթ եկավ (անորոշ), մարթ եկա'վ (որոշյալ)³:

Ն հոդը բարբառներում գրվում է ձայնավորահանգ բառերի վրա, ինչպես և՛ այն ղեպքում, երբ հաջորդ բառն ըս-

¹ Է. Դ. Աղ ա յ ա ն, Մեղրու. բարբառը, Երևան, 1954, էջ 172 — 173:

² Տե՛ս Է. Աճ ա ո յ ա ն, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953, էջ 143:

³ Շեշտը ազբբեջաներենում ևս ունի այսպիսի ֆունկցիա ada'm g'əidi (անորոշ), adam g'əidi (որոշյալ):

Կըսվում է ձայնավորով, հետևապես և՛ էլ¹, ալ, ու շաղ-
 կապներից և էական բալից առաջ ընկած բառերի վրա: Բացի
 ալք, ձայնավոր հոլովական վերջավորությամբ բաղաձայնա-
 հանգ բառերի վրա նույնպես դրվում է ն հոդը: «Հիմիկ էր
 իմանում՝ թե ժամ գնալն ի՞նչ ա, ադթքն ընչի՞ համար,
 պատարագի զորությունն ի՞նչ» (Աբ.), «Մեր աչքն ա»
 (ԽԱ, ԵԼԺ, 3, 47). «Երկնքին, գետնին, աշխարքին էնպես
 քաղցր աչքով չէր մտիկ տված» (Ն. տ., 47), «Շատ անգամ
 խալին էլ ա առաջները դուս գալիս» (Ն. տ., 79): Ղարաբաղի
 բարբառում՝ «Մինան եկու» (Մինան եկավ), «Տանան ըմ
 կամ», «Շունն էլ կպիրիս», «Ըրախան լաց ա ընում» (երե-
 խան լաց է լինում), «Արամը էլ կալ չի ըստեղ» (Արամը
 էլ չի գա այստեղ): Թբիլիսիի բարբառում՝ «Ասիլն էլ ցաւ է
 չասիլն էլ» (ԳԱ, ԹՄԿ, 70). «Էս տունը տաճարինն է» (Ն. տ.,
 14), «Կարքով-կարքով իրեցներուն շարեցին» (Ն. տ., 35).
 բալց նաև՝ «Նրա մատի ղնգներումը ավելի խնժ կա, քան
 քու գլխումը» (Ն. տ., 143): Կարնո բարբառում՝ «Թէզ էրա
 ձիուս քուռգին շալգե», «Ադ վախտը սարէն էրգու գալ գու-
 քան ու լուսահօքի իշուն կուտէն»: Ձայնավորից առաջ ը-ն
 մնում է նույնը և չի փոխվում ն-ի (Գիրքը էնոր տըվի)²,
 բացի էլ, ալ բառերից (նույնպես, նաև, ևս նշանակությամբ)
 և էական բալից առաջ. մարթն էլ (ալ) գուքա: Երբ էլ, ալ
 բառերը գործածվում են այլևս նշանակությամբ, ը-ն մնում
 է. մարթը էլ, (ալ) չի գա³: Մեղրու բարբառում՝ կատուն,
 բախէն, գինին, ալ շաղկապից և էական բալից առաջ դրվում
 է ն: Նը հանգն ունեցող բառերը որոշիչ հոդ չեն ստանում,
 իսկ նը հանգն ունեցող բառը, երբ նախորդում է ձայնավո-
 րով սկսվող բառի կամ էադան բալի, նույնպես և ալ շաղ-
 կապին (ենույնպես», «էս» նշ.), ն է ստանում:

Ձայնավորահանգների վրա ն հոդը դրվում է նաև Պոլսի
 (գինին, հօքին), Համշենի, Նոր-Ջուղալի (փեսեն, տղեն, ա-

¹ Էլ-ը, երբ ունի այլևս նշանակությունը, նախորդ բառը ն-ի փո-
 խարեն ստանում է ը հոդը:

² Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Երևան, 1952, էջ 63:

³ Նույն տեղում, էջ 63:

դեն), Ագուլիսի (հա՛ջուն) բարբառներում: Ագուլիսի բարբառում օ հանգն ունեցող բառերը հոգ ստանալու ժամանակ կարող են իրենց նախկին ա ձայնավորը վերականգնել. աղօ՛-աղան, ըրխօ՛-ըրխան¹:

Վանի բարբառում և հոգը գրվում է ձայնավորով վերջացող բառերի վրա: Բաղաձայնահանգ բառերը եթե ձայնավոր հոլովական վերջավորություններ են և որոշյալ, ստանում են և հոգք, ինչպես և հաջորդ ձայնավորով սկսվող բառից առաջ ընկնելիս՝ ինոր խէր, մէր մեռան, բայց՝ ինոր խէրն էլ, մերն էլ, ախպէրն էլ, քլո՛րն էլ մեռան կնացին²:

Ժամանակակից հայոց լեզվում բաղաձայնահանգ որոշյալ բառերն ստանում են թ հոգը: «Կլանքը քաղաքում իր սովորական հունի մեջ էր մտնում ծուլորեն» («Թեհրան»), «Հրճվում էր՝ անզուսպ ամբոխը գյուղի» (Թ, ԸԵ, 193): Ձայնավորահանգ բառերը ստանում են և հոգը. «Սուրիան նստել էր եղբոր մոտ» (Թեհրան), «Ես իմ հոգին» (Թ, ԸԵ, 260), «գիշին» (ն. ա., 261):

Ն հոգն են ստանում բաղաձայնահանգ բառերը ձայնավոր հոլովական վերջավորություն ունենալիս, կամ երբ նրանց հաջորդում է ձայնավորով սկսվող բառ:

«Հընչում էր փրփրուն վրտակն արծաթի» (Թ, ԸԵ, 178):

«Եկավ գիշերը: Իմ հոգնած հոգուն,

Իջավ տանջալի մի խաղաղություն» (ն. ա.):

Բաղաձայնահանգ բառը հակում ունի Ը-ի փոխարեն և ստանալու նաև այն դեպքում, երբ հաջորդ բառն ունի ըսկրգրում սկ, սպ, ստ, սփ, սք, զգ, զր, շկ, շպ, շտ կապակցություններ:

«Երկունքի ցավերն սկսվեցին ուշ երեկոյան» («Թեհրան»), նաև՝ «Ժողովն սկսել», «վշտի ամբողջ խորությունն զգալ» և այլն:

Ը կամ և հոգի գործածությունը միշտ կախված է լուրս-քանջլուր տվյալ կապակցության արտասանական բնութից,

¹ Հ. Աճ ա յ ա ն, Քննություն Ագուլիսի բարբառի, էջ 222:

² Հ. Աճ ա յ ա ն, Քնն. Վանի բարբառի, էջ 142—143:

և հաճախ խախտվում են վերոհիշյալ օրինաչափ կիրառությունները: Կարևորն այստեղ արտասանական բարեհնչունությունն է:

Ն, ք հոգերը ժամանակակից հայերենում իրենց ֆունկցիայով նույնն են, իսկ ձևով տարբեր: Մակայն այլ է և (ք) և ս, դ հոգերի իմաստային ընդհանրությունների ու տարբերությունների վիճակը ժամանակակից հայերենում: Գրաբարում եթե և հոգի ցուցական (ապա և ստացական ու դիմորոշ) իմաստը բավականաչափ զգալի է, ապա այստեղ այն գրեթե անհետացել է: Բացի այդ, ոմանք լեելյայն հաստատում են, թե «իմ գիրքը», «քո գիրքը», «նրա գիրքը» արտահայտություններում ք (և) հոգը ստացական է, մինչդեռ այդ այդպես չէ: Թեև գիրքս նշանակում է «իմ գիրքը», գիրքդ՝ «քո գիրքը», գիրքը՝ «նրա գիրքը», բայց այստեղ ստացականություն իմաստի փոխանցում է կատարվում հոգերից դերանուններին: Ժամանակակից հայերենում ստացական, ցուցական, դիմորոշ իմաստները սահմանափակվել են ս, դ հոգերի կիրառություններում¹: Ն հոգի հետ կապված ցուցական և դիմորոշ իմաստների աննշան երանգի մասին կարելի է խոսել:

Ն հոգը ս, դ հոգերի հանդեպ ունի նաև այլ կարգի տարբերություններ: Ս, դ հոգերը ինչպես ձայնավորահանգ, այնպես էլ բաղաձայնահանգ բառերի վերջից հավասարապես կցվում են, հանդես են գալիս բոլոր հոլովներում: Մինչդեռ այդպես չէ և հոգի կիրառությունը:

2. Անորոշի քերականական իմաստն ունի լուրահատուկ քերականական արտահայտություն միջոցներ ինչպես հայերենում, այնպես էլ այլ հնդեվրոպական և ոչ-հնդեվրոպական լեզուներում: Չնայած անորոշի քերականական իմաստի ընդհանրություններին հնդեվրոպական լեզուներում, այնուամենայնիվ այդ իմաստներն իրար չեն ծածկում և իրենց քերականական արտահայտություն միջոցներով հանդես են գալիս որպես տվյալ

¹ Այս մասին տե՛ս նաև Ս. Գ. Աբրահամյան, Արդի հայերենի ստացական հոգերը (Երևանի համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 42, Ֆիլոլոգիական սերիա, պրակ III, 1954):

լեզվի կոնկրետ պատմական զարգացման արդյունք, կապված արդ լեզվի քերականական կառուցվածքի առանձնահատկությունների հետ:

Սովորաբար անորոշ հոգ համարում են մի բառը՝ հմմ. անգլերենում՝ a (an), ֆրանսերենում՝ un, une, գերմաներենում՝ ein, eine, իսպաներենում՝ un, una և այլն: Այդ հոգերն առաջացել են համապատասխանաբար մեկ (մի) թվականից, նրա բառա-իմաստային նշանակության թուլացման հետևանքով: Օրինակ, an «մեկ» թվականը հին անգլերենում դեռևս հոգ չէր, բայց իր իմաստով բավականին թուլացել էր, նրա հետագա էվոլյուցիան հասցրել է այժմյան a (an) հոգին¹: Նույն երևույթը տեղի է ունեցել ֆրանսերենում, իսպաներենում, գերմաներենում, պարսկերենում և այլն:

Հայերենի մի բառն առաջացել է հնի. Smio ձևից, գրաբարում եղել է մի, միջին հայերենում և աշխարհաբարում մի, մեկ. «Կը» ճյուղի բարբառների մեծ մասում ունի մը (մըն), մեգ, մեկ, մեյ ձևերը, «Ում» ճյուղի բարբառների մեծ մասում՝ մի, մեկ, մին ձևերը²:

Գրաբարում մի թվականը շատ կապակցություններում արդեն գործ էր ածվում քանակային (թվականային) հատկանիշի թուլացած իմաստային նշանակությամբ, գերազանցապես ետադաս վիճակում, հաճախ ենթարկվելով հոլովման, «զի էր այր մի սովեստէս ճարտար ի քաղաքի միոջ» (Փ, ՊՋ, 157), «վասն արդարոցն խնային մեղաւորք առ ժամանակ մի» (ն. տ., 174), «Իրրեւ ճրագ մի» (Եզն., ԵԱ, 11):

7-րդ դարի հեղինակների մոտ մի բառը մի շարք դեպքերում հանդես է գալիս թվական հատկանիշի զգալի թուլացումով, երբեմն՝ չհոլովվելով. «զհետ ճգնավորի մի» (Զ, Պ, 22). «ի տաճար մի» (ՅՄ, Պ, 24), «Եւ երեկեցաւ նոցա ի պատերազմին այր մի ահեղ և լուսաւոր» (ն. տ., 47—48):

Միջին հայերենում թուլացած իմաստային նշանակու-

¹ Տե՛ս Բ. Ա. Ильиш, История английского языка, Ленинград, 1938, էջ 61:

² Այս մասին տե՛ս Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. 7, էջ 1023:

թյամբ մի-ն և մի թվականը զգալիորեն սահմանազատվում են: Եթե մի-ն թվական է, կարող է և՛ հոլովված, և՛ չհոլովված գործածվել, իսկ մի-ն, եթե թվական չէ այլևս, չի հոլովվում, մեծ մասամբ ետադաս է, հաճախ ձայնավորով սկսվող բառից. հետևապես էական բայից առաջ դրվում է մե, բայց երբեմն նաև՝ բաղաձայնով սկսվող բառից առաջ:

«Այրի կին մի ունէր զտղա մի» (ՄՄ, ԸՆ, 321). «Դարպաս մի» (Ֆ, Բ, 199), «Բաղնիք մի» (Ն. տ.), «Բժիշկ մն է» (ԱԱ, ՕԲ, 17), «Իրք մն է» (Ն. տ., 19), «Ելութենէ մն է» (Ն. տ., 42), «Է քիչ մն անկից այլ լիշեմք» (Ն. տ., 75), «Է յորժամ պահ մն թողուս պայծառ լինի» (Ն. տ., 74). «Քիչ մն մեղր» (Ն. տ., 66) և այլն:

Միջին հայերենում և աշխարհաբարի վաղ արտահայտութիւններում նկատվում է մի թվականի նաև մեկ ձևով գործածութիւնը, որի սաղմերը երևան են գալիս 11-րդ դարից: Դեռևս հինգերորդ դարում հաջվադեպ հանդես եկած ետադաս անփոփոխ (չթեքվող) մի-ն իր երկարատև պատմական էվոլուցիայի ընթացքում բարբառներում սկսվել է գործածվել մի (մը), մին և այլ ձևերով:

Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներում գործածվում են մեկ, մի, մե ձևերը. «Երանի էն սհաթին, որ մեկ ազնիվ հալի ծնունդ...» (Աբ., ԵԼԺ, 3, 196), «մեկ տեղ աշխարհ ա կործանվում» (Ն. տ., 109), նաև՝ «մի մութ քըշէր» (ԱԳ, Բ, Ն, 85), «մե դինչ հառավոտ էր» (Ն. տ., 87):

Ղարաբաղի բարբառում հիմնականում գործածվում է մին ձևը. «Մին շօն ա սպանալ» (Մի շուն է սպանել), «Հըղըցավը՝ մին մարթ հընցավ» (Ճանապարհով մի մարդ անցավ):

Թբիլիսիի բարբառում գործածվում է մի (մե) ձևը.

«Յիս մի դարիւր բլբուլի պէս», «մե գօզալ» (Ս.-Ն.), «մէ թիքա» (Սունդ.):

Կարևո բարբառում բաղաձայնով վերջացողները ունեն ըմ, ձայնավորով վերջացողները՝ մ. արտասանվում է բառի հետ միասին, բացի էլ, ալ շաղկապների և էական բայերի մոտ եղած դեպքերից, ուր արտասանվում է ալդ բառերի հետ.

գըրիչ մէլ, գըրիչ մալ, «Մէ գարուրանք բան մէր»¹: Մը դըր-
վում է նաև ածականների, թվականների, մակբայների հետ:

Մին ձևն ունի նաև Մեղրու բարբառը. «մին օր» (ԱՂ,
Թ, Ն, 214), «մին գլումէշ» (ն. տ., 215). Պոլսի բարբառում՝
մը՝ հաց մը, մարթ մը, շուն մը: Զայնավորներից առաջ մը
ձևով էլ մնում է, ը-ն չի կրճատվում: Էական բայից և ալ
շաղկապից առաջ դառնում է մըն. Դուն մը ունիմ, մարթ
մըն է, գնիգ մըն ալ. ալ կիրառություններում՝ ուժով մը,
ուսուլիգ մը, աղվօր մը, աղէգ մը. հոգնակիների հետ՝ բանէր
մը ըսէր էս, մեգ թվականով հանդերձ՝ մէգ գնիգ մըն ալ,
մէգ դուն մը ունէի: Գոյականն առանց մը (մըն) ունենալու
էլ անորոշ կարող է լինել²:

Ագուլիսի բարբառում մի անորոշը հանդես է գալիս
մայն ձևով. մայն մօռդ, մայն նօնը, մայն թօզն և այլն:

Առտիալի բարբառում ունի մը ձևը. բառն անորոշ է
լինում նաև առանց մը-ի, և մը-ն կարող է հանդես գալ թը-
վական լրացում ունեցող բառի հետ. մարդ մը և մեգ
մարդ մը³:

Վաքի բարբառում մի անորոշը ունի մ (ըմ) ձևը. բա-
ղաձայնահանգ բառերի հետ՝ ըմ, ձայնավորահանգ բառերի
հետ՝ մ. խացըմ (մի հաց), ձիմ (մի ձի): Բացի այդ, կարող
է հանդես գալ նաև մեկ կամ մեկ ձևով: Մի անորոշը համա-
նման արտահայտություններ ունի ալ բարբառներում:

Արևմտահայ գրական լեզվում գործածվում է մը
(մըն) ձևը, որը ձայնավորով սկսվող բառից առաջ և ալ
շաղկապից ու էական բայից առաջ միշտ մըն ձևն ունի.
«Ներս մտավ երիտասարդ մը» (ԱԱ, ԸԵ, 19), «Կնոջ
մը սրտին մեջ միշտ մեծ տեղ մը կը գրավի» (ն. տ., 25),
«լուսկյաց երիտասարդ մըն էր» (ն. տ., 259), «շարք մըն էր
այս ամենը» (Զ, Ն, 15), «Թիկնոցի մը մեջ» (Պ, ՄՄ, 3):

¹ Տե՛ս չ. Մ կ ր տ չ յ ա ն, Կարնո բարբառը, էջ 64:

² Այս մասին տե՛ս չ. Ա ճ ա ո յ ա ն, Քնն. պոլսահայ բարբառի,
Երևան, 1941, էջ 102:

³ Տե՛ս Ա ճ ա ո յ ա ն, Քնն. Առտիալի բարբառի, 146—147:

Ժամանակակից հայոց լեզվում մի բառը գործ էածվում և՛ որպես մեկ թվական, և՛ որպես մի անորոշ հոգ: Օրինակ, «Դիրեկտորը միայն մի ուսանողի է կանչել», «Մի մարդու արածը երբեմն երկու մարդ չեն կարող անել» արտահայտությունների մեջ մի բառը գործածված է մեկ թվականի նշանակությամբ, և եթե փոխարինենք մեկ բառով, իմաստը չի փոխվի՝ «Դիրեկտորը միայն մեկ ուսանողի է կանչել» և «Մեկ մարդու արածը երբեմն երկու մարդ չեն կարող անել»: Մի-ն անորոշ հոգ է, չօրինակ, հետևյալ դեպքերում.

«Վաղ ժամանակ մի հայ շենում .

Մի հարգեոր հարսն է լինում...» (Թ, ԸԵ, 98):

«Ու ողջ միասին մի խորունկ թախիծ,

Մի մութ զարգանդ են գիշերին տալի...» (Ն. տ., 158):

«Սահուն քալելով, աննշմար, որպես քնքուշ մութի թե,

Մի ըստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.

Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթե

Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...»

(Տ, ԸԵ, 54):

Մի անորոշ հոգը շեշտ չի կրում, լինում է նախադաս, դրվում է թվարկվող առարկաների անունների հետ, իսկ չթվարկվող առարկաների անունների և ընդհանրապես հոգնակի թվով բառերի հետ չի դրվում: Կարող է հանդես գալ բոլոր հոլովներով բառերի հետ, նա բացարձակապես անհամատեղելի է որոշյալի քերականական իմաստի հետ, ուստի որոշիչ հոգ ունեցող բառի հետ երբեք չի դրվում: Սակայն մի անորոշի կիրառությունը չի ընդգրկում բոլոր անորոշ դեպքերը: Մի անորոշի այս հատկանիշների մի մասը հիմք է տվել որոշ լեզվաբանների այն համարելու անորոշ հոգ, իսկ այլ կարգի հատկանիշներ էլ՝ ընդհակառակը, հիմք են տվել ոմանց՝ մի բառը ոչ թե հոգ, այլ թվական համարելու: Այսպիսի մոտեցումները հավասարապես միակողմանի են, որովհետև չեն բացահայտում մի բառի բառա-իմաստային էությունը: Ճիշտ է եթե մի անորոշը ծածկեր բոլոր անորոշ դեպքերը, այսինքն՝ երբ բոլոր քերականորեն անորոշ դեպ-

քերը արտահայտվեին միշտ մի հոգով, ապա վիճելու հիմք չէր լինի, և իսկապես մի-ն բոլոր դեպքերում կլինեիր հոգ, բառիս իսկական իմաստով: Սակայն հայերենում բառը կարող է անորոշ լինել առանց մի հոգի, ընդհակառակը, մի հոգը սահմանափակում է անորոշի քերականական իմաստի նշանակությունը:

Անվանի հայագետ Մ. Աբեղյանը մերժում է մի հոգի գոյությունը¹, այն համարելով քանակական թվական: Մինչդեռ փաստերի ուշադիր քննությունը այլ բան է հաստատում:

Ամենից առաջ պետք է պարզել մի բառի բառա-իմաստային նշանակությունը, որից հետո գիտականորեն գնահատել նրա քերականական արժեքը, իսկ դրա համար պետք է պարզել մի թվականի և մի հոգի ընդհանրություններն ու տարբերությունները և այդ հոգի վրա բնութագրել մի անորոշի քերականական առանձնահատկությունները:

Հայտնի է, որ առարկան կարելի է բնութագրել որակային, քանակային, տեսակային հատկանիշներով. թվական անունների միջոցով առարկաները բնութագրվում են քանակային հատկանիշով: Ընդ որում այդ հատկանիշով կարելի է բնութագրել մի անհատ առարկան, միևնույն տեսակի առարկաների մի խումբը, և ամբողջ տեսակը: Թվականով բնութագրված հատկանիշը, սակայն, ցույց չի տալիս, թե խոսքի մեջ արտահայտող մտքի առարկաներն ինչ հարաբերություն մեջ են, թե տվյալ առարկան, որը, ասենք, բնութագրվում է մեկ քանակական թվականով, մտքի որոշակի² օբյեկտ է, իսկ նրա անվան բառիմաստը քերականորեն կոնկրետ է, թե՛ ոչ: Եթե ասում ենք, «Մի մարդու արածը երբեմն երկու մարդ չեն կարող անել», ապա այստեղ մի, երկու թվականները չեն արտահայտում, թե իրենց բնութագրած առարկաներն ինչպիսի հարաբերության մեջ են խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ:

Թվականն անվանում է առարկայի քանակային հատկանիշը անկախ այդ առարկայի՝ այլ առարկաների կամ միևնույն

¹ Մ. Աբեղյան, Աշխարհագրի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 191—192, ծան.:

տեսակի մնացած առարկաների նկատմամբ ունեցած տարածական-դիրքային հարաբերությունից: Այդ պատճառով թվականը չի պահանջում անպայման հող՝ անվան վրա և նրա բնութագրած անվան հող ստանալը կամ չստանալն անկախ է քանակական թվական վերադիրից, ավելին՝ միայն քանակական թվականով մասնավորված (բնութագրված) բառերը սովորաբար քիչ են պահանջ զգում, գրեթե բացառում են հողը: Եթե տուրկան հայտնի է քանակային (թվային) հատկանիշով միայն, և որպես մտքի օբյեկտ, չի դիտվում խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ ստեղծված հարաբերության մեջ, ապա խոսքի մեջ նրա անունն առանց հողի է. օրինակ՝ եթե խոսակցին անհայտ հինգ ուսանողի մասին է խոսք բացվում, ապա հետևյալ ղեպքում է այդ ուսանողների բառային անվանումը հող ստանում. խոսողը նախապես հայտնում է ուսանողների մասին՝ նրանց թվային հատկանիշով բնութագրելով. «Հինգ ուսանող են գալու մեզ մոտ»: Այստեղ ուսանող բառը ոչ իր ամբողջ ծավալով է վերցված, ոչ էլ իր տեսակի նվազագույն ծավալով, հատուկ անուն չէ և որոշակի կապ չունի խոսքի տվյալ մոմենտի հետ, հետևապես քերականորեն անորոշ է, առանց հողի: Խոսքի շարունակություն մեջ տալով է. «Այդ հինգ ուսանողները մեզ համար նվեր են բերելու Թումանյանի և Իսահակյանի հատորները»: Մտքի առարկան («հինգ ուսանող») արդեն գտնվում է խոսողական ոլորտում, որոշակի է խոսողի և խոսակցի համար՝ խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ ունեցած հարաբերությանը, հետևապես քերականորեն որոշյալ է, ունի որոշիչ հող: Ուրեմն առարկայի քերականորեն անորոշ անունը քերականորեն որոշյալ դարձավ անկախ նրա թվային հատկանիշից, անկախ քանակային հատկանիշի բնութագրումից: Քերականորեն որոշյալ դարձավ ոչ թե այն պատճառով, որ մենք ինչ-որ նոր բան իմացանք այդ ուսանողների մասին, այլ այն պատճառով, որ նրանք որոշակի դիրք ստացան խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ:

Բնութագրումն այլ է դասական թվականների և մի շարք դերանունների մոտ, որոնք քանակական թվականների նման

«անտարբեր» չեն անվան բառիմաստի առարկայական վերաբերության նկատմամբ, պահանջում են առարկան անվանելիս այն դիտել որոշակի հարաբերության մեջ խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ:

Իսկապես ժամանակակից հայերենում անվան լրացումները (ածական, թվական, դերանուն) բացարձակորեն կամ բացառում են որոշյալի քերականական իմաստը, կամ անհնարին են առանց այդ իմաստի, վերջապես մի կարգի լրացումներ էլ «անտարբեր» են որոշյալի քերականական իմաստի հանդեպ, ինչպես տեսանք քանակական թվականների կապակցությամբ: Առաջին և երկրորդ կարգի լրացումներից են՝ որոշյալի քերականական իմաստը բացառողներ՝ ինչ (ինչ), քանի (քանիք), ամեն, ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, ուրիշ, այլ, որեւէ, որոշ, քերականորեն որոշյալ պահանջող՝ վերջին, այս, այդ, այն, սույն, նույն, միեւնույն, որ (որ), քանիբոլոր, որեբոլոր, բոլոր, համայն, առաջին, երկրորդ և այլն: Երրորդ կարգի լրացումներից են գրեթե բոլոր քանակական թվականները, ածականների մեծ մասը, զգալի թվով դերանուններ: Այս կողմից պիտի մոտենալ նաև, այսպես կոչված, մի հոգի հարցին:

Մի քանակական թվականը բառիմաստը (անվան) մասնաձորում է զուտ քանակային հատկանիշով. ընդ որում մասնաձորում է անկախ այդ բառիմաստի առարկայական վերաբերության տարբեր դրսևորումներից, անկախ որոշյալի քերականական իմաստից: Երբ քանակային հատկանիշով որոշ չափով կոնկրետացվում է անորոշ բառիմաստը, ապա առաջ է գալիս մի տեսակ «հակադրություն»՝ բառիմաստի քերականորեն անորոշ լինելու և քանակային հատկանիշով կոնկրետացման միջև: Այդ հակադրության բնույթն այնպիսին է, որ խոսքի մեջ հաճախակի և տարածված գործածությունը սրում է երկու ակնհայտ տենդենցների պայքարը, որի ընթացքում մի քանակական թվականը միադնում է իր քանակային հատկանիշը և հանդես է գալիս ոչ թե որոշակի (մեկ թվականի) նշանակությամբ, այլ չտարբերակված, ավելի ճիշտ՝ միադնած քանակային հատկանիշի նշանակությամբ:

Մի բառը¹ սակայն անորոշի քերականական իմաստի ունիվերսալ ձև, ընդհանրական ձևաբանական միջոց չէ:

3. Իսկ *մրն* է անորոշի քերականական արտահայտության հիմնական միջոցը հայերենում:

Լեզվաբանության մեջ ընդունվում է, այսպես կոչված, «*վերջավորության*» քերականական արտահայտության միջոցի արժեքը: Այս «վերջավորությունը» հանդես է գալիս տարբեր քերականական կատեգորիաների մեջ: Այսպես, օրինակ, КОМСОМОН և КОМСОМОЛКА գոլգադրության մեջ արական սեռի քերականական արտահայտության միջոցը «*վերջավորությունն*» է, ուսեերենում՝ ИМ. СТОЛ, ВИН. СТОЛ, հայերենում ուղղ. սեղան(ը), հայց. սեղան(ը) ղեպքերի հոլովական արտահայտության միջոցը «*վերջավորությունն*» է, ուսեերենում՝ СТОЛ-СТОЛЫ, հայերենում՝ սեղան-սեղաններ ղեպքերի եզակի թվի քերականական արտահայտության միջոցը «*վերջավորությունն*» է և այլն: «*Օ վերջավորությունը*» հանդես է գալիս նաև անորոշի իմաստի քերականական արտահայտության կապակցությամբ:

Ժամանակակից հայերենում որոշյալ ղեպքերին (որոշիչ ն(ը) հոդով) համապատասխանում են անորոշ ղեպքերը՝ «*վերջավորությամբ*»²: «Քար ընկավ վերեից» և «Քարն ընկավ վերեից»: «Ընկերս գիրքը նվիրեց ինձ» և «Ընկերս գիրք նվիրեց ինձ» և այլն:

Այսպես կոչված որոշյալ հայցականի և Զ-ճախդրի մասին

Հայ քերականագիտության մեջ վաղուց նշվել է, որ գրաբարում հայցական հոլովը, եթե որոշյալ է, առնում է

¹ Մի անորոշը բազմաթիվ գործվածքներում և այլ տիպի կապակցություններում կարող է հանդես գալ զանազան (մակբայական, եղանակավորող) նշանակությամբ. «Մի արի», «Մի գնա տես». որոշ բարբառներում՝ «Մի հատ արի գնանք»:

² Անորոշ հոդի նշանակությանը մոտ իմաստային յուրահատկություններ ու կիրառություններ են ունեցել ոմն, որ, իմն, ինչ բառերը գրաբարում և ինչ-որ, որևէ՝ ժամանակակից հայերենում: Այս մասին բազմիցս նշվել է հայ քերականագիտության մեջ:

զ-նախդիրը, իսկ եթե անորոշ է, չի առնում: Այդպիսի զ-նախդիրով հայցականը կոչվել է «որոշյալ հայցական»:

Հնդեվրոպական լեզուներում որոշյալի քերականական իմաստը կապված է հոգերի հետ, որոնք ցուցական դերանունների ձևա-իմաստային յուրահատուկ զարգացման արդյունք են: Այս տեսակետից զ- նախդրի ստուգաբանությունը չի համապատասխանում հոգերի ստուգաբանությանը, այսինքն դերանվանական մասնիկ չէ, իր հիմքում չունի ցուցականության իմաստ, հետևապես ցուցական դերանվան բառային-իմաստաբանական յուրահատուկ զարգացման արդյունք չէ, որպիսին է հոգը:

Ձ-նախդրի առաջին ստուգաբանությունը տվել է Մելեն (MSL., IX, 54), կապելով սլավոններեն *za* մասնիկի հետ: Հետագայում Հյուբշմանը գտավ (Armenische Grammatik, 456), որ հայերենի զ-ի և սլ. *za*-ի միջև նշանակությունների մեծ տարբերությունը ենթադրել չի տալիս դրանց ստուգաբանական կապը: Պեդերսընը, վիճարկելով նրանց կարծիքները, գտնում է¹, որ զ- նախդիրը իր իմաստային նշանակությամբ ու կիրառություններով կապվում է ըստ նախդրի հետ և առաջացել է նրանից *ա*-ի անկումով, և *ա*-ի ձայնեղացմամբ:

Ուզիդ խնդիր հայցականի (որոշյալ հայցական) զ-ն կապելով ըստ նախդրի հետ, նա գտնում է, որ այն որոշյալի քերականական ֆունկցիային է անցել հետևյալ նախնական կիրառություններից, որպես անցման էտապից՝ «Եւ ետուն նմա դիրս զ-Ծսայեալ մարգարէի, առնուցուք պտուղ զ-գեղեցիկ ծառոց, հաց զ-մեր կերիցուք եւ հանդերձ զ-մեր ըզ-գեցցուք, նաև՝ տաք զ-կայսերն կայսեր և զ-աստուծոյն աստուծոյ»², ըստ որում զ- նախդիրը վերադրից անցել է անվանը:

Զ և ըստ նախդիրների միջև Պեդերսընը գուգահեռներ է անցկացնում նաև պատմական ու պարառական հոլովներում:

¹ Տե՛ս Հ. Պեդերսըն, Հայերէն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 158—162:

² Նույն տեղում:

Աճառյանը նախընտրում է Մելիկի կարծիքը: Եվ որովհետև զ-ով սկսվող հայերեն բառերը հիմնականում կամ չեն ստուգաբանված, կամ փոխառություններ են, ապա ենթադրությունամբ միայն հանգեցնում է հնխ. ց'հ-ին, որը հավանաբար զ-է դարձել բաղաձայններից առաջ, հետո ընդհանրացել¹:

Ս. Մալխասյանցը որոշյալի քերականական իմաստը չի կապում զ-Նախդրի հետ, ուստի զգալով հոգի և զ-նախդրի տարբերությունները, գրում է. «զ նախդիրը ինքը չէ որոշում բառը, այլ երբ սա արդեն որոշված է, այն ժամանակ դրվում է նախդիրը»²:

Բայց միայն ստուգաբանությամբ չէ, որ զ- նախդիրը տարբերվում է հոգից:

Եթե հոգը դրվում է գրաբարում բոլոր հոլովներով, ապա զ-ի քերականական այս նշանակությունը սահմանափակվում է հայցականում, գերազանցապես ուղիղ խնդրի հետ կապված: Բացի այդ՝ եթե որոշիչ և հոգի հիմքում ընկած է խոսքի սովյալ մոմենտի նկատմամբ առարկայի ունեցած հարաբերության հատկանիշը, ապա զ-նախդիրը չի կապվում այդպիսի հատկանիշի հետ: Ուստի անկախ նրանից, անունը նախապես հիշատակված է, ասված, հայտնի, զ- նախդիրը կիրառվում է:

Գրաբարում, երբ բառը հանդես է գալիս իր բառիմաստի ամբողջ ծավալով, ընդգրկում է առարկաների ամբողջ տեսակը, և երբ բառը հանդես է գալիս բառիմաստի միշտ նվազագույն ծավալով (հատուկ անուններ), ապա որոշիչ և հոգը չի դրվում, իսկ զ- նախդիրը դրվում է. «պէտ արարեալ զամենայն ազգաց զմատենանս և զվէպս ի յոյն լեզու փոխարկել» (ՄԽ, ՊՀ, 9), «զՍաթիհիկ» (ն. տ., 175), «զԱրտաշէս» (ն. տ., 179), «զՎրոյր» (ն. տ., 180), «զՏրդատ» (ն. տ., 193), «զՄամգուն» (ն. տ., 222). այսպես նաև՝ բնության մեջ մի հատ առարկաների անունները, որոնք հոգ չեն ստանում:

¹ Հ. Աճառյան, Հայերեն արմ. բառարան, հ. Բ, Երևան, 1928, էջ 882—883:

² Ս. Մալխասյանց, Գրաբարի համաձայնությունը, 111:

«Եթէ ընդէ՞ր մոռացար զտէր» (Փ, Պ, 171), «զարեգա-
կըն», «զլուսին», «զերկիր» (Եզն., 11): Կան բառեր, որոնք
իրենց բառա-իմաստային յուրահատկությամբ բացառում են
որոշյալի քերականական իմաստը, չեն ստանում որոշիչ և
հոգը, թեև զ- նախդիր ստանում են. «Վասն ասելոյն մեր
զնա Յունաց թագաւոր» (ՄԽ, ՊՀ, 10), «Զայս, և որ ալ
այսպիսիք բազումք, երբ...» (Ն. տ., 74), «Պաղեստինացիս
զմեզ վարկանելով» (Ն. տ., 134), «Զոր տեսեալ Շապհոյ,
կշտամբեաց զնա...» (Ն. տ., 274), «զամենայն ինչս» (Խ, 280),
«զքեզ» (Ն. տ., 281), «զայդ» (Խ, 281), «զայն» (Ն. տ., 290),
«զդոյն» (Ն. տ., 287). «զոմն» (Ն. տ., 240), «որ զամենայն
յոչընչէ արար» (Փ, ՊՀ, 171):

Եթե ստացական և ցուցական դերանունների հատկա-
ցյալը հայցականում քիչ դեպքերում է որոշիչ և հոգ առնում,
ապա նման դեպքում զ-ի գործածութունը սովորական է.
«և առեալ զեղբայրս քո» (ՄԽ, ՊՀ, 276), «Ծրդատ զորդի
իւր» (Ն. տ., 280), «զկին նորին» (Ն. տ., 284):

Առանց որոշիչ և հոգի հանդես եկած վերացական անուն-
ները հայցականում կարող են զ- նախդիրն ստանալ. «և ոչ
դարձոյց զյափշտակութիւն ընչից կնոջ միոյ այրւոյ (ՄԽ, ՊՀ,
279), «զոր չէր երբէք տեսեալ զայնպիսի պատրաստու-
թիւն...» (Ն. տ., 283):

Այս վերաբերում է նաև չթվարկվող առարկաների ա-
նուններին. «և ջուրք զհոգ երկրի ողողանեն և ապականեն»
(Եզն., ԵԱ, 9) «զօղս», «զհուր», «զջուրս» (Ն. տ., 12):

Շատ հետաքրքրական երևույթ է, որ արդեն իսկ զ-ով
«որոշյալ հայցականում» հանդես է գալիս որոշիչ և հոգը, այս
թեպետ հազվադեպ, բայց նույնիսկ հատուկ անվան դեպքում
ևս. «զգաստակերտն» (ՄԽ, ՊՀ, 50), «զԱրայն» (Ն. տ., 21),
«Բայց գովմն զքաջահասակն զիմ և զնիգակաւորն (Ն. տ., 83),
«զառնապատկերն» (Ն. տ., 116), «զկենդանութիւնն» (Եզն.,
ԵԱ, 7):

Եվ եթե այս երևույթը գրաբարում օրինաչափ ձևով ար-
տահայտվում է, ապա դա վկայում է, որ զ-ն իր նշանակու-
թյամբ յուրահատուկ երևույթ է, որ որոշյալի քերականական

իմաստը և զ- նախդրի քերականական առանձնահատկություններն ուղիղ խնդրի հայցականում չեն ծածկում իրար: Քերականագիտության մեջ իրավացիորեն ընդգծվում է զ-նախդրի նաև հոլովակազմիչ նշանակությունը¹:

Այս և նման յուրահատկություններով հանդերձ զ- նախդիրը ունի ուկնհայտ շփման կետեր որոշյալի քերականական իմաստի հետ: Ամենակարևորն այն է, որ քերականորեն որոշյալ անունների հայցականը, բացի և հոգից միշտ ունենում է զ- նախդիրը, այսինքն այն դեպքերում, երբ առականների անունները ուղիղ խնդիր հայցականում ունեն և հոգը, անպայմանորեն, գրեթե առանց բացառության ունեն նաև զ-նախդիրը, իսկ այն բոլոր դեպքերում, երբ անունների հայցականը չունի զ- նախդիրը, ապա անպայմանորեն, գրեթե առանց բացառության չունի նաև և հոգը:

Կրկնակի հայցականներում բուն խնդիրը միշտ որոշյալ է², իսկ երկրորդ խնդիրն՝ անորոշ, ըստ որում վերջին դեպքում (չնչին բացառություններով) չի դրվում և՛ և հոգը, և՛ զ- նախդիրը:

«Եւ զնս՝ ամենախնամն Աստուած եցոյց հովիւ և առաջնորդ ժողովրդեանն» (ՄԽ, ԳՀ, 15). «կոչէ զանուն նորա Արայ» (Ն. տ., 66):

Բայց՝ «իսկ զՀերակլայն զառնապատկերն... զՎահագն իւրեանց վարկանելով» (Ն. տ., 116):

«Որոշյալ հայցականը՝ եթե զեղչված է և արտահայտված է փոխանվան միջոցով, զ-նախդիրն անցնում է և հոգով փոխանունին. «Եւ քանզի զարեւելայնն և զհարաւայինն նուաճեալ...» (ՄԽ, ԳՀ, 49):

Բայց նաև՝ «չիք ինչ արած բանաւոր արտաքոյ քան զայս երիս ջոկս զհրեշտակաց, զգիւաց և զմարդկան» (Եղն.):

¹ Հ. Աճառյանը զ-ի ստուգաբանության կապակցությամբ գրում է. «նախդիր, որ կցւում է բառասկիզբը՝ հայցական, պատմական և պարտական հոլովները կազմելու ժամանակ, բայց մասնաւոր գործածւում է իբրև սաստկական և կամ զորացուցիչ» (Արմ. բառ. Բ., 888):

² Բացի որոշյալի քերականական իմաստի անհրաժեշտությունը բացառող դեպքերից:

Սերտ հարադրական կապակցություններում հավասարապես անունները զուրկ են և՛ և-ից, և՛ զ-ից. երկիր պահանել, ածել անձրեկ, հաց ուտել և այլն:

Ուշադրության արժանի են նաև զ- նախդրի արտահայտությունները շարահյուսական մի քանի կապակցություններում՝ որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, բացահայտիչ-բացահայտյալ:

Սովորաբար նախադաս որոշիչն իր վրա է վերցնում իր լրացյալի զ- նախդիրը. երբ բազմակի նախադաս որոշիչներից առաջ կա դերանուն, գերազանցապես զ- նախդիրն անցնում է դերանվանը, ինչպես և ընդհանրապես բազմակի որոշիչներից առաջինը մի տեսակ իրեն է «ձգում» զ- նախդիրը: Ընդ որում զ- նախդիրը կարող է անցնել և՛ որոշիչին, և՛ որոշյալին: Իսկ ետադաս որոշիչը սակավ դեպքերում է զ- նախդիրն ստանում. «զանիմաստասէր բարս» (ՄԽ, ՊՀ, 11), «զքաջս և զիմաստունս և զաշխարհակալս նախնիս» (Ն. տ., 23), «զամենայն իշխանութիւնս և զգանձս» (Ն. տ., 60), «զախտասէր բարս նորա. և զշարասէր» (Ն. տ.), «զամենայն ազգն» (Ն. տ., 216), «զկամակոր իշխանութիւնն» (Եզն., ԵԱ, 30):

Հատկացական կապակցություններում նախադաս հատկացուցիչը գերազանցապես իր վրա է առնում զ- նախդիրը. ետադաս հատկացուցիչը սակավ դեպքերում է զ- նախդիրն ստանում: Երբեմն և՛ նախադաս հատկացուցիչը, և՛ հատկացյալը միաժամանակ ստանում են զ- նախդիրը: Բազմակի նախադաս հատկացուցիչները կարող են բոլորն էլ ստանալ զ- նախդիրը, կարող է և ստանալ նաև միայն մեկը՝ սկզբից: Ինչպես որոշիչը, այնպես էլ հատկացուցիչը, եթե իր լրացյալից բաժանված է նախադասության ալլ անդամով, նույնպես պահպանում է զ- նախդիրը: Օրինակներ. «զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս» (ՄԽ, ՊՀ, 11), «զգորոյ զըպատճառն յետո հատուցուք» (Ն. տ., 18), «Վասն որոյ աղաչեմ զքո տէրութիւնդ» (Ն. տ., 32), «Եւ տեսեալ զգեղեցկութիւն երկրին և զօդոցն մաքրութիւն և զաղբերացն յստակագոյն բղիմունս...» (Ն. տ., 55), «Իսկ Սատուծոյ իրաւունս»

պահեալ զերդման ուխտին» (ն. տ., 27), «հաւատալ նմա արդարեւ զիւր իշխանութիւնն» (ն. տ., 60), «զնախակարգելոց արանց զբանս եւ զգործս» (ն. տ., 67), «զՀերակլայն գառնապատկերն» (ն. տ., 116), «զԹագաւորելն Տրդատայ» (ն. տ., 223), «զկողմամբ Աղուանից» (ն.տ., 228), «զնորա զպատուիրանս» (Փ, ՊՀ, 171), «զպղտորութիւն աշացն» (Եզն., ԵՍ, 5), «զբարերարութեանն հանդէս» (ն. տ., 7):

Բացահայտչական ու բնութագրական կապակցութիւններում բացահայտիչը եւ բացահայտյալը, որոշիչն ու որոշյալը ստանում են զ- նախդիրը, երբ դրանք դիտված են իբրեւ նախադասութեան մի անդամ, հոգն անցնում է գերազանցապէս նախադաս բառին, ընդ որում հետադասին հազվադեպ է անցնում: «Իսկ որդւոյ անուամբ մեծարեաց զնա..., իբր զյայտնի եւ զնշանաւոր եւ զարժանաւոր ժառանգ հայրենականացն ատաքինութեանց»¹ (ՄԽ, ՊՀ, 19), «զսուրբն Գրիգոր» (ն. տ., 141), «զԱրտաշէզ արքա պարսից» (ն. տ., 126):

Ելնելով զ- նախդրի քերականական առանձնահատկութիւններից, որոշիչ հոգի հետ ունեցած նրա քերականական ընդհանրութիւններից եւ տարբերութիւններից, եւ վերջապէս ալն հանգամանքից, որ զ- նախդրի քերականական իմաստի հիմքում չի ընկած խոսքի տվյալ մոմենտի նկատմամբ առարկաների ունեցած հարաբերութեան հատկանիշը, կարելի է հանգել հետևյալ եզրակացութեան. գրաբարում՝ մտքի կոնկրետ եւ գործողութիւնն իր վրա կրող օբյեկտի անունը ստանում է զ- նախդիրը: Իսկ որպէս մտքի որոշակի (կոնկրետ) օբյեկտ կարող է հանդես գալ անհատ առարկան; առարկաների խումբը կամ առարկաների ամբողջ տեսակը: Բացի այդ՝ նման դեպքերում զ- նախդիրը չի բացառվում, երբ անունը հանդես է գալիս միշտ իր բառիմաստի նվազագույն ծավալով, այսինքն երբ բառը հատուկ անուն է, ինչպէս եւ ալն դեպքում, երբ անվան արտահայտած առարկան չթվարկվող է:

«Չ» նախդրի այս ֆունկցիան, որ նա հանդես է բերում հայցական հոլովում տրված ուղիղ խնդրի հետ, նրա հիմնա-

¹ Բացահայտչի նախդիրն անցել է որոշիչներին:

կան քերականական ֆունկցիան է¹, որը և լեզվաբանական գրականություն մեջ համարվում է որոշյալի քերականական ֆունկցիա. դա միաժամանակ հիմք է դարձել «որոշյալ հայցական» հորջորջման:

«Ձ» նախդիրը սկսում է ընկնել որոշյալ հայցականում դեռևս 5-րդ դարից սկսած², իսկ հաճախակի ընկնում է միջին հայերենում: Արևելահայ մի շարք բարբառներում սուկավաթիվ հետքեր միայն ենթադրել են տալիս նրա վաղեմի գործածությունը³: «Ձ» նախդրի ընկնելու ժամանակաշրջանը այս կամ այն բարբառում որոշել շատ դժվար է, մանավանդ այդ բանին քիչ են նպաստում գրավոր հիշատակարանները, որովհետև վերջիններս ունեն գրաբարի զգալի ազդեցությունը:

Միջին հայերենում, մանավանդ վաղ շրջանում, զ-ն դեռևս կենսունակ էր. «Կուզէ վքաղաքն աւիրէ» (ԱԱ, ՕԲ, 18), «Ղնորու խոսքն» (Ն. տ.), «Նա զմարդն չարածաղիկ առնէր» (Ն. տ., 981), «Ղտաքութիւնն պակասեցու» (Ն. տ., 323), «էր կու մորթես զայդ քո եղբայր» (Ֆ, Բ, 200), «Երբ աղաչենք զտերն ընդունի» (Ն. տ., 48):

Արևելյան աշխարհաբարի նախնական գրավոր արտահայտություններում արդեն գրեթե լիովին բացակայում է զ-նախդիրը. այսպես, օրինակ, Զաքարիա Ագուլեցու օրագրություններում (17-րդ դ.): Որոշյալ հայցականն առանց զ-նախդրի է նաև էզովի ժողովածուի մեջ բերված բարբառային գրություններում (17—18-րդ դդ.):

¹ Տե՛ս Հ. Աճ ա ո յ ա ն, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 425:

² Ահա թե ինչ է գրում Այտրնյանը. «Ղ. Փարպեցի նոյն դարուն վերջերը նաև (և յօգով) որոշեալ հայցականն առանց նախդրի ունի թողած. նա մեզ անդէն իւր քաջութեանն գործ ցուցանէր. (փխկ. դիւրոյ քաջութեանն): Առնն փորձ քաջութեան և դու առեր. (փխկ. զառնն): Զարեհ ընդդիմացեալ՝ գունդն դեռ կազմէր. քնտրողութիւն լավագիտութեան իմոյ մոռացեալ փոխանակիցեմ, քան զյարձակելն մեր և հասանելն Փ.: Նորա արիւնն լավեցին շունք. Զ: (Վ. Այտրնեան, Քնն. քեր. նախաշաւիղ, էջ 91:

³ Օրինակ՝ Դարբարդի բարբառում՝ զիրավ ամել, զիրավ տալ:

«Գնացի Երեան, թէ իմ եխալլը Սիմոնի խիզանն բերեմ Ագուլիս» (ՁԱ, 0, 64), «Գիր դուրս եկաւ, թե Իսպանօլի թագաւորին աղջիկն տվին Ֆուանգիսի թագաւորի տղղին» (ն. տ., 53), «Որ իւր որդի Գրիգորն տեսած էէր» (ն. տ., 77), «Իվան Կարապետն ուղարկեցինք» (Յ, C, 357), «Մեր օղուլուշաղն մեր ձեռքէն առել են» (ն. տ., 415):

«Ձ» նախդիրը պահպանվել է մի շարք բարբառներում (Մուշի, Այաշկերտի, Տիգրանակերտի, Սուչավալի և այլն):

Արեւմտահայ գրական լեզվում այն ունի բավական սահմանափակված գործածութիւններ: «Թէ ինքն արդեն հմայած էր զնա (ԱԱ, ԸԵ, 15), «Զիս տուն ձգե» (ն. տ., 16), «Այն զոր այնքան կը սիրեր» (ն. տ., 25), «Խաբեբա ու խարդախ կը կոչէ զայն» (ԳՁ, Ն, 7), «Զմայլած կը դիտենք զիրենք» (ն. տ., 15):

5. Լեզվաբաններից ոմանք ընդգծել են, որ գրաբարում մակբայներից մի քանիսը՝ այսր, այգր, այնր, աստ, անդ, աստի, այտի, անտի հաճախ հանդես են գալիս տարածական հարաբերութեան հատկանիշի արտահայտմամբ և ունեն հոգերի նշանակութիւն¹: Որ դրանց հիմքում ընկած է տարածական հարաբերութեան հատկանիշը, այդ երեւում է հենց դրանց ստուգաբանութիւնից²:

Բ. ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇՅԱԼԻ ՈՒ ԱՆՈՐՈՇԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ
ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի ձևաբանական առանձնահատկութիւնները կապված են այդ կատեգորիայի կոնկրետ պատմական զարգացման հետ, յուրահատուկ դրսևորումներ ունեն գրաբարում, միջին հայերենում, բարբառներում, արեւմտահայ գրական լեզվում և ժամանակակից արեւելահայ գրական լեզվում:

¹ Տե՛ս Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանութիւն, Երեան, 1939, էջ 193:

Ս տ. Մ ա լ ի ս ս յ ա ն ց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, 81, ծան. 2:

² Տե՛ս Մ Է յ Է, Esquisse..., էջ 62—63:

Հնդեվրոպական հիմք-լեզվում այդ կատեգորիան չի եղել, այն առաջացել է հետագայում, կապված հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտնող լեզուների ուրույն պատմական զարգացման հետ, թեև, իհարկե, հիմնովին չի ժխտվում նրա նախադրյալների գոյությունը դեռևս հիմք-լեզվում:

Սակայն շնորհիվ հնդեվրոպական լեզուների հետագա ուրույն պատմական զարգացման, կապված այդ լեզուների հնչյունական, բառային, քերականական առանձնահատկությունների հետ, որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիան ոչ բոլոր հնդեվրոպական լեզուներում է կազմավորվել: Այսպես օրինակ, լատիներենում և ռուսերենում¹ չկա այդ կատեգորիան: Հայոց լեզուն, զարգանալով իր ներքին օրինաչափություններով, իր քերականական կառուցվածքում հիմք է տվել որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի կազմավորմանը և զարգացմանը: Ընդ որում, ինչպես հնդեվրոպական մնացած լեզուներում, այնպես էլ հայերենում այս կատեգորիան կազմավորվել է ցուցական դերանունների բառախմաստային առանձնահատկությունների բազայի վրա: Իսկ քանի որ խոսքի մեջ ցուցական դերանունների կարիք զգում են հատկապես այն անունները, որոնք իրենց բառիմաստի առարկայական վերաբերության մեջ չեն վերցված ամբողջ ծավալով և բառիմաստի միշտ նվազագույն ծավալով հանդես եկող անունները (հատուկ անունները) գրեթե չեն պահանջում ցուցական դերանուններ, — ապա՝ ցուցական դերանուն-

¹ Հավանաբար՝ բառերի ազատ, ճկուն դասավորությունը, տրամաբանական (մտքի) շեշտի ազատ, ճկուն գործածությունը իրենց՝ հզոր գործոնի դերն են կատարել հենց սկզբից կանխելով ռուսերենում (և լատիներենում) որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիայի կազմավորումը, մանավանդ որ զբան նպաստել են ռուսերենի (համեմատաբար ավելի թեքական) կառուցվածքային առանձնահատկությունները: Այս կատեգորիայի կապակցությամբ, ռուսերենի վերաբերյալ լեզվաբանական զբաղանդության մեջ կան մի շարք հետաքրքիր գիտողություններ, տե՛ս, օրինակ, В. Ф. Орлов, Работа над артиклем, „Иностранные языки в школе“, 1945, № 4, էջ 80; А. А. Реформатский, Введение в языковедение, Москва, 1947, էջ 101: Այս մասին տե՛ս նաև „Иностранные языки в школе“, 1949, № 5, էջ 13:

ներից առաջացած մասնիկներն էլ նույն, կամ համարյա նույն, նշանակութեամբ ձևափոխվելով (ու իմաստավորվելով)¹ չէին կարող դրվել հատուկ անունների և այն հասարակ անունների վրա, որոնք խոսքի մեջ իրենց առարկայական վերաբերությամբ վերցված են բառիմաստի ամբողջ ծավալով: Եվ իսկապես գրաբարում, գերմաներենում, ֆրանսերենում, անգլերենում մասնակի դեպքերում են հատուկ անունները հոգ ստանում:

1. Հատուկ և հասարակ ածուցների հոգառությունը

Որոշյալի ու անորոշի քերականական իմաստները գրաբարում դեռևս չէին հասել այնպիսի ընդհանրացման, ինչպիսին մենք տեսնում ենք ժամանակակից հայերենում: Յուցական իմաստը գրաբարում բավական ուժեղ էր արտահայտվում, որը և պարզ երևում է և հոգի կիրառություններից: Որոշիչ և հոգի ձևաբանական գրականությունները խիստ կապված են անունների բնույթի հետ: Այն հասարակ անունները, որոնք խոսքի մեջ վերցված են բառիմաստի ամբողջ ծավալով, որոշիչ և հոգի չեն ստանում, թեպես հայցականում ստանում են զ- նախդիրը: Սա վերաբերում է նաև թվարկվող, չթվարկվող նյութերի անուններին, ինչպես և վերացական անուններին: Օրինակ՝ «Եւ օդ, առանց ցօղոյ խոնաւութեան և ջերմութեան վնասակար և ապականիչ է. և ջուրք զհող երկրի ողողանեն և ապականեն» (Եզն., ԵԱ, 8—9), Եւ յարջառ զոր ասեն՝ եթէ ի բարւոյ արարչէ արարեալ է, գտնի ինչ վնասակարութիւն» (Ն. տ., 47), «Արդ եթե գազանք չարք արարածք էին, (Ն. տ., 46), ապա ե՛ «Բարկութիւն կորուսանէ զիմաստունս» և նման արտահայտություններում:

Եթե բառն անհատ առարկայի անուն է, այսինքն՝ ցույց է տալիս բնության մեջ եզակի, անհատ առարկա, կամ բառանվանման բնույթն այնպիսին է, որ միշտ հանդես է գալիս իր բառիմաստի նվազագույն ծավալով, ապա որոշիչ հոգ չի ստանում: Այսպես են անձի և տեղի հատուկ անունները¹,

¹ Երբ հատուկ անունները ունեն բնութագրող (բացահայտող) վերադիրներ, վերջինները որոշյալի հոգ են ստանում:

լուսին, արեգակն, երկիր, երկին, աշխարհ¹, հիւսիս, հարաւ, նուշնպես և դժոխք, սատանայ, գիր (սուրբ Գիրք), աստուած, ցամաք, տէր (աստուած նշանակութեամբ) և նման մի քանի բառեր: Օրինակներ՝

«Եւ եղև յորժամ լուաւ զայս Մանուէլ» (Փ, ՊՀ, 370), «Եւ զարմացեալ Սուրեն ընդ իրան ընդ այնոսիկ... և ասէ, Մանուէլ ցՍուրեն» (ն. տ., 87), «Այլ անդրէն իսկ ի կենդանութեան իւրում Շամիրամ...» (ՄԽ, ՊՀ, 66), «Որմիզդ և Արհմն յղեցան յարգանդի մօր իւրեանց» (Եզն., ԵԱ, 79), «Երկնէր երկին, երկնէր երկիր (ԺԲ), «Եթէ արդարադատապէս Աստուած զազգսն զայնոսիկ ջնջեաց յերեսաց որդւոցն Իսրայելի» (ՄԽ, ՊՀ, 27), «և յորժամ ընդ հիւսիսի վարդին, չէ ինչ արգել՝ թէ ընդ հարաւ ոչ սուրայցեն» (Եզն., ԵԱ, 14). «Իսկ արդ եթէ ոչ էր անարատ, ասեն, ըստ ձեզ Սատանայ» (ն. տ., 38), «Վկայ են մեզ երկինք և երկիր» (Եղ., Պ, 93), «Արեգակն թէ բարի է... նոյնպէս և լուսին խոնարական բնութիւն...» (Եզն., ԵԱ, 8):

Որոշիչ հոգ չեն ստանում նաև ժողովուրդների հոգնակի անունները, իսկ ընդհանրապես հոգնակի անունների հոգառութիւնը սահմանափակ է. «Յոյնք և Արիք և ամենայն ազգք հեթանոսաց» (Եզն., ԵԱ, 85), «Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց» (ԺԲ), «Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ» (ԺԲ), «Յայնմ ժամանակի իշխանք և գորք և նախարարք առ նա հասանէին վաղվաղակի» (Ագ., ՊՀ), «Այլ իբրև զայս լսեն թշնամիք ճշմարտութեանն» (Եզն., ԵԱ, 51):

Հատուկ անունները և բոլոր այն հասարակ անունները, որոնք որոշիչ և հոգ չեն ստանում, գրաբարի, այսպես կոչված, «որոշյալ հայցականում» միշտ զ- նախդրով են լինում, «շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ» (ԺԲ). «Ի սկզբանէ ա-

¹ Աշխարհ բառը եթէ վերցվում է ընդհանուր նշանակութեամբ, առանց որոշյալի հոգի է, իսկ երբ վերցվում է տվյալ երկրի, գաղառի նշանակութեամբ, հոգով է և ապա զանձինս սրբութեամբ և զգաստութեամբ և պարկեշտութեամբ պահել յաշխարհէ» (Փ, ՊՀ, 130), բայց «անդուստ յաշխարհն զարձան» (ն. տ., 113): Այսպես նաև երկիր բառը՝ «երկիրն» (Փ, 27):

քար աստուած գերկին և գերկիր» (Աստ., 7). «Իսկ եթէ այնու զԱստուած պատճառ չարեաց կամիցին ասել» (Եզն., ԵԱ, 82), «Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն... կամ զլուսին... կամ գերկիր...» (Ն. տ., 11—12), «Նաև զմարգիկ տեսանեմք» (Ն. տ., 19), «Կազմել զամենայն զգոքս իւր» (Փ, ՊՀ, 211), «Երկաց գնդացն զԱնդիկան և զՆազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր» (Ն. տ., 212): «Եւ անդէն արքայն մահ խորհէր, սպանանել զՏիրիթ ևս փոխանակ ընդ մահուն Գնելոյ» (Ն. տ., 189):

Հատուկ անունները, հասարակ անունների հոգնակին, բնության մեջ մի հատ (անհատ) առարկաների անունները, ինչպես և հասարակ անուններից նրանք, որոնք սովորաբար առանց հոդի են, վերջապես՝ նույնիսկ այն անունները, որոնք իրենց բառիմաստի առարկայական վերաբերությամբ ընդգրկում են ամբողջ տեսակը, — ստանում են որոշիչ և հոդը յուրահատուկ քերականական կապակցութուններում, հատկապես՝

ա) Երբ կապված են այնպիսի լրացումների հետ, որոնք անպայմանորեն պահանջում են քերականորեն որոշյալ լրացյալ, այդ լրացումների բնույթն այնպիսին է, որ նեղացնում է բառիմաստի առարկայական վերաբերութունը. «զի ժողովեցան հասին կուտեցան առնուլ զաշխարհն Հայաստան երկրին» (Փ, ՊՀ, 40, 41): «Ամենայն երկրին հայոց» (Ն. տ., 76), «նստէր յաշխարհին Ասորպատական» (Ն. տ.): Բառիմաստն իր առարկայական վերաբերության մեջ նեղանում, և բառը հոդ է ստանում նաև առանց հատուկ լրացումների, այդպես են տէր (աստուած) և տէրն (Քրիստոս) ձևերը, հիշածս աշխարհ, երկիր բառերը, «ի հովութեանն նորա բազում խաղաղութիւն լինէր աշխարհին» (Փ, ՊՀ, 113):

բ) Երբ անունը նոր է հիշատակվել, իսկ անվան արտահայտած առարկան խոսքի հետ կապվում է մատնացույց անող (ցուցականության) հատկանիշով, կամ հենց այդ առարկան է կազմում խոսքի առանցքը, որի շուրջը ծավալվում է խոսակցության նյութը, ընդ որում՝ կարևորը խոսքի մեջ առարկայի անվան հենց նոր հիշատակված (հայտնի) լինելն է.

«Յայնմ ժամանակի թագաւորն Պարսից Շապուհ ժողովեաց զզօրս... ընդ երիս բաժանեալ զզօրսն... (Փ, ՊՀ, 212):

գ) Երբ բառը շեշտակիր է հոդ պահանջող որոշ հարաբերականներից հետո, «որ տկարագոյնքն էին ի նոսա» (ն. տ., 142), «որ Պաղլաւն կոչի» (ՄԽ, ՊՀ, 243):

դ) Երբ բառիմաստի ամբողջ ծավալով հանդես եկած անունը իր բովանդակութեամբ արտահայտում է խիստ առանձնացված տեսակ, ավելի ճիշտ, երբ բառիմաստը մասնավորված է մատնացույց արվող տեսակի շուրջը. «և աստ ասէ՝ թէ ամենայն ինչ որ մտանէ ընդ բերան մարդոյն, որ պղծէ գնա, ալլ որ ինչ ելանէ ի բերանոյ անտի, այն պղծէ քվմարդն» (Եզն., ԵԱ, 194):

Այն բոլոր հասարակ անունները, որոնք չեն մտնում վերոհիշյալ կանոնների տակ, կարող են լինել քերականորեն որոշյալ ու անորոշ, հետևապես կարող են ստանալ որոշիչ հոդ և չստանալ:

«Ընդ տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրինաց խառնէին զգեղն սատակման» (Փ, ՊՀ, 191). «Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ» (ն. տ., 190), «ուր ոչ բոյս ինչ տաղար, և ոչ արմատ ինչ, և ոչ ալլ ինչ ամենեւին... բայց միայն քար և աւազ ապառաժ, և ոչ ճանապարհ ուրեք ընդ այն...» (ն. տ., 141), «և խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն ազգաւ» (ն. տ., 190): Այս կարգի բառերը «որոշյալ հայցականում» կարող են հանդես գալ առանց հոդի, զ-նախդրով. «յորժամ դուստր զմայր անարգիցէ, և նու զկեսուր իւր, և կին զայր, և ծառայ զտէր, և եղբայր զեղբայր» (Եզն., ԵԱ, 42—43). «և հայր զորդի դժնեալ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ» (ն. տ., 43):

Վերևում հիշված կանոնները 5—12-րդ դդ. գրաբար գրականութեան մեջ ենթարկվում են շատ քիչ փոփոխությունների և հիմնականում պահպանվում են. «զոր իննականն կոչեն տեղոյն շնդիկք և պարսիկք» (Զ, Պ, 8). «Ապա եկին սահմանակողք պարսիկք» (Ս, Պ, 31), որոնցում ընդգծված բառերը ժողովուրդների հոգնակի անուններ են՝ առանց հոդի:

«Դիմեալ գայր Անալ» (Զ, Պ, 21), «Իսկ Արտաշիր... անխըտիր կատարէր զցանկականն» (ԹԱ, Պ, 72). «Ժողովուրդ և քահանայ ատեաց Աստուծոյ» (ԱԱ, Պ, 1), բայց՝ «զի Յակոբն ախն» (Զ, Պ, 22) և այլն: «Նոյնպէս կացցէ մինչև գաս ի նորոգել զերկիր» (ՅՄ, Պ, 19), բայց՝ «քանզի միջօրեալ էր լուսինն» (Զ, Պ, 44):

Այդ կանոնները միջին հայերենում և աշխարհաբարի վաղ արտահայտութիւններում ունեն որակական նոր դըրսեկորումներ, բացի հատուկ անուններին վերաբերողներից, քանի որ հատուկ անունները գերազանցապես գործածվում են առանց հոգի. բնութիւն մեջ մի հատ (անհատ) առարկաների անունները գործածվում են և՛ հոգով, և՛ առանց որոշիչ հոգի, ընդ որում ավելի շատ որոշիչ հոգով. այդպես են նաև հոգնակի բառերը, և գրաբարում որոշիչ հոգ չստացող հասարակ անուններ. «որի գարունն մինչ արեւն ցայթէ» (ՂԶ, ՀՀԹՎ, ՊԱ, 29), «զի մեղուաց կեանքն յիստակ ջուրն է» (Ն. տ., 100). «Ծառքն ծաղիկս ի վեր փչեն» (ՄՄ, ԸՆ, 27). «Բուրաստանքն զարդարին» (Ն. տ.), «շունքն» (Ն. տ., 322), «և կոչեսցին զնա քահանայքն և տանուտերքն» (Ն. տ.), կնկաիքն և տղաքն ի յայս եղանակն հիւանդանան» (ԱԱ, ՕԲ, 85). «Հնգիկքն» (Ն. տ., 17), «չերմերն» (Ն. տ., 73), «Ասած է, թէ օգն գողոշիկ մն է» (Ն. տ., 83), «յառաջն հարաւն, բ. հիւսիսն, գ. արևելքն, դ. արևմուտքն, եւ հարաւն ալն է, որ յորժամ երեսդ ի յարևելքն ալնես՝ նա հարաւն ի յաջ ձեռողդ ի վեր գա» (Ն. տ., 83). «եւ արևմուտքն ի դիմացն է արևելիցն» (Ն. տ.). բայց՝ «հրով ալբէր զերկիր ամէն» (ՄՄ, ԸՆ, 91), «Զերկիր ի յիւր լուսոյն հալէ» (Ն. տ., 51). «և ուրախացուցանէր զմարդիք» (Ն. տ., 322). «Հիւսիս» (ԱԱ, ՕԲ, 83):

Արևելահայ աշխարհաբարի վաղ արտահայտութիւններում հատուկ անունները գերազանցապես որոշիչ հոգով են. «Ռէնգըն» (Զ, Ը, 259), «Կարապետքն» (Ն. տ., 357), «Անտօնն» (Ն. տ., 405)¹:

¹ Այս օրինակները վերաբերում են 17-րդ դ. վերջին և 18-րդ դ. սկզբին:

Արեւմտահայ գրականում հատուկ անունները գործածվում են *և՛ հոգով, և՛ առանց հոգի*: Հոգառությունը չի ծավալվել ու ընդհանրացվել այնքան, որ տարածվի բոլոր հատուկ անունների վրա:

«Սաթենիկ կուգեր տրամաբանությամբ խզել չուր սրտին ձայնը» (ԱԱ, ԸԵ, 15), «Պերմուհի թողուց, որ ձեռքը բռնե» (ԳԶ, Ն, 21), «Ջաքետս կամաց-կամաց կխանդավառեր» (Օտ., ԸԵ, 7), «Սահակ ձեռքը բռնել ուզեց» (ԳԶ, Ն, 21), բայց՝ «Արմիկը տուփը բացավ» (ԱԱ, ԸԵ, 293), «— Ո՛ւր է Հակոբոսը» (ԳԶ, Ն, 20), «Սահակ Պերմուհին տեսավ» (ն. տ.):

Այսօրվանը վկայում է, որ ընտանեկան, այսինքն խոսակցական լեզվի մեջ անձի հատուկ անունները սովորաբար հոգով են. Պետրոսը գնաց, Պետրոսին ասի, Պետրոսին տվի. Գրիգորը տեսա, իսկ ժողովուրդների անունները հասարակ գոյականների նման հոգ են ստանում (հալը, պարսիկը, արաբացին)¹: Աստված և տեղ բառերը հոգ չեն ստանում:

Բարբառներում հատուկ անունների հոգ չստանալը սահմանափակված է արեւմտահայ մի քանի բարբառներում: «Ոււմ», «Ս» և «Լ» ճյուղերի բարբառների մեծ մասում հատուկ անունները սովորաբար ստանում են որոշիչ հոգ. «Աղասին հնազանդ որդի էր» (ԱԲ, հ. 4, 10 — Արարատյան բ.), «Տեր Մարկոսը» (ն. տ., 14), «աշխարքի աչք Թագուհին» (ն. տ., 40), «Սըհակը քնաց Բէվան (Ղրբ.)». «Գասպարն ու Փեփեկն» (ԳՍ, ԵԼԺ, III, 22), «Սայաթ-Նովին» (ն. տ., 29) — Թբիլիսիի բարբառ:

Հատուկ անունները հոգ են ստանում նաև Կարնո, Մեղրու, Ագուլիսի, Պոլսի, Նոր-Ջուղայի, Առտիալի, մասամբ Վանի բարբառներում: Ագուլիսի բարբառում անձնանունների հայցական և տրական հոլովները որոշիչ հոգ չեն ստանում². «տվահիք, աս գիրքը Կարապետալ», «իս տահամ Օվանիսայ»: Տեղանունները բարբառներում, հատկապես ուղղական հոլովում, մեծ մասամբ հոգ չեն ստանում. Բաքու

¹ Քնն. քեր., էջ 187:

² Տե՛ս Մ. Ս ա ր գ ա յ ա ն ց, Ագուլեցոց բարբառը, մ. I, Մոսկվա, 1883:

լնով քաղաք ա» (Ղրբ.), «Բեկվան մօծ քաղաք ա»¹ (Մեղրու), Պեքերի պատիլ քաղաք, ի»² (Վան)։

Ժամանակակից գրական հայերենի՝ հատուկ և հասարակ անունների հոգառություն կանոններն ունեն ընդհանրություններ հայոց լեզվի զարգացման տարբեր էտապների, բարբառների և արևմտահայ գրական լեզվի հետ, թեև բնորոշն այն է, որը կապված է ժամանակակից հայ գրական լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների հետ և հանդես է գալիս որպես այդ օրինաչափությունների անմիջական արդյունք։ Եթե անունը խոսքի մեջ բերվում է այնպես, որ բառիմաստը իր առարկայական վերաբերության մեջ տարածվում է ամբողջ տեսակի վրա, թեև նախապես չի հիշատակված, ստանում է որոշիչ հոդ։ Օրինակ՝ «Շարժումը մատերիայի գոյության ձևն է»։ «Մարզը գործիքներ արտադրող գիտակից հասարակական կենդանի է»։ «Քիմիան գիտություն է» և այլն։ Եթե անունը խոսքի մեջ հանդես է գալիս իր բառիմաստի միշտ նվազագույն ժավալով, հատուկ անուն է, ստանում է որոշիչ հոդ. «Հասուն որքան բարի էր դեպի լավը, այնքան էլ անգութ էր դեպի չարը» (ՎՓ, ԸԵ, 223), «Իմացավ հովիվը, որ Զալիսեն էլ սիրում է իրեն» (Ն. տ., 225)։

Հատուկ անունները ժամանակակից գրական հայերենում ո՛չ բոլոր հոլովներում և ո՛չ բոլոր շարահյուսական կապակցություններում են որոշիչ հոդ ստանում։ Մասնակի մի քանի դեպքերում հատուկ անունը հոդ չի ստանում։

Հատուկ անունների՝ որոշիչ հոդ ստանալը տարբեր ձևով է բացատրված հայ քերականագիտության կողմից։ Օրինակ՝ Մ. Աբեղյանը՝ արևելահայ աշխարհաբարի հատուկ գոյականների հոդ ստանալը կապում է այն բանի հետ, որ հատուկ անունները ըրստ ինքեան որոշ են»³, իսկ Զալիսյանը արևմտահայ գրական լեզվում հատուկ անունների հոդ չստանալը կապում է նույնպես այն կողմի հետ, որ «ինքնին որոշալ

¹ Է. Ղ. Աղ ա յ ա ն, Մեղրու բարբառը, էջ 174։

² Հ. Ա ճ ա յ ա ն, Քնն. Վանի բարբառի, էջ 145։

³ Մ. Ա բ ե ղ ա ն, Աշխարհաբարի շարահյուսություն, 1912, էջ

են կամ ծանօթ»¹: Մինչդեռ լուրաքանչյուր դեպքում պետք է մոտենալ դրանց առանձնահատուկ պատմական զարգացման տեսակետից, կապված հալոց լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների տարբեր գրսեորումների հետ:

Եթե հասարակ անունը բնության մեջ մի հատ (անհատ) առարկայի անուն է, և այն հասարակ անունները, որոնք գորարարում առանձնահատուկ դեպքերում են հոգ ստանում, ժամանակակից գրական հայերենում ստանում են որոշիչ հոգ. «Եվ զողեսնում էր ողջ երկինքն անհուն՝ ասողերի շքեղ, անշեջ դաշնակով»², «Դեպի արևը սլացիր անդուլ, և սիրտս տրիր արևի սրտում», «Եվ լուսինն, ինչպես ջեննեթի մատաղ փերիի կուրծքը՝ չքնաղ լուսավառ...», «Աշխարհն էլ, ասես, մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, հրաշք դլութական» (Իսահակյան): «Բացի կողմնացույցից, կան նաև այլ միջոցներ երկրագնդի չորս կողմերը՝ արևելքը, արևմուտքը, հյուսիսը, հարավը որոշելու համար»:

Այսպիսի անունները կարող են լինել նաև անորոշ, առանց որոշիչ հոգի. «Քաղաքներ, իմ հոգին արեգակ է խընդրում...» (ՎՏ, ԸԵ, 97): Կամ, օրինակ, «Մառախլապատ գիշեր է, ոչ ասող է երևում, ոչ լուսին»:

Երբ բառանվանումը խոսքի մեջ հանդես է գալիս իր բառիմաստի նվազագույն ծավալով, և երբ նա ո՛չ հատուկ անուն է, ո՛չ էլ բնության մեջ մի հատ առարկայի անուն, իսկ նրա ցույց տված առարկան խոսքի տվյալ մոմենտի հետ կապվում է հայտնիության հատկանիշով, ապա ստանում է որոշիչ հոգ: Այս վերաբերում է ինչպես թվարկվող առարկաների, նույնպես և չթվարկվող առարկաների անուններին, վերացական ու հավաքական անուններին:

«Լուրջ նույն ժամին տարածվեց ամբողջ քաղաքում» (Շ, ԵԼԺ, IV, 7): «Ասում էին, որ ամեն գիշեր մռայլ ծերունին մեն-մենակ, երկայն թավիշե խալաթը հագին, գիշերային սև թասակը գլխին, ձեռին բռնած մի ճրագ, իջնում է վար...» (ն. տ., 8), «Թաքնված վարագույրի հետևում, աչքը

¹ Վ. Չալբեհան, Քերականութիւն..., էջ 312:

Հասոյից չէր հեռացնում, ոչ էլ ականջը նրա նվագից» (ՎՓ, ԸԵ, 224), «բարկացավ, կատաղեց, ուզեց սպանել հանդուգն հովվին...» (ն. տ.): «Այդ խայտառակությունն արեց չար աղան» (ն. տ., 225):

Այս կանոնի տակ մտնող բառերը քերականորեն անորոշ են և որոշիչ հոդ չեն ստանում, եթե նրանց ցույց տված առարկան խոսքի տվյալ մոմենտի հետ չի կապվում հայտնիության հատկանիշով, այսինքն երբ այդ բառանվանումների մեջ տրված բառիմաստը քերականորեն կոնկրետ չէ. այս դեպքում և միմիայն այս դեպքում է գործածվում մի անորոշ հոդը¹: «Մինչդեռ ահա վարագույրի ծալքերից մեկում երևաց ձարձրված հագուստով մի մարդ» (ԳՄ, Թ, I, 5). «Նա շալակած տանում էր հագիվ տասը տարեկան, եղեգնյա խտրով ծածկված մի աղջկա...» (ն. տ., 6), «Իսկ միջահասակ, հիվանդագին դեմքով, ցանցառ մորուքով մի մարդ նստած տեղը շալակել էր մի շուն» (ն. տ., 6):

Առանց մի անորոշի² վերոհիշյալ կանոնի տակ մտնող բառերը մնում են քանակային հատկանիշով չտարբերակված, այսինքն մնում է անհայտ, թե խոսքը մի անհատ առարկայի, թե՞ միևնույն տեսակի մի քանի առարկաների մասին է. օրինակ.

«Եկած կը լինի, որ խաբար տանի,

Թե խելքը գլխին դեռ քանի գլուղ կա,

Ով յուր դռանը անասուն ունի,

Կամ որի կնկա աչքերում յուղ կա» (Թ, ԸԵ, 156):

Այսպես նաև հետևյալ արտահայտությունների մեջ՝ «Շուկայի մուտքի մոտ նա ձմերուկ էր վաճառում», «Մենք կարող ենք նվեր տանել գիրք, ինչպես և ուրիշ բաներ»:

Ընդգծված բառերը չեն բացառում ինչպես մի առարկա,

¹ Հայերենում մի անորոշը հավաքական, վերացական անունների հետ գործածվում է սահմանափակ դեպքերում, իսկ հոգնակի անունների և չթվարկվող նյութերի անունների հետ գրեթե չի գործածվում:

² Մի անորոշը, ինչպես նշել ենք, դրվում է բոլոր հոլովներով գոյականների վրա:

ախնայես էլ մի քանի առարկա նշանակելը, օրինակ. ամասունք բառը կարող է նշանակել (տվյալ դեպքում) և մեկ առանձին վերցրած անասուն, և մեկից ավելի: Եթե բոլոր ընդգծված բառերին ավելացնենք մի վերադիրը, և խմաստը չփոխվի, ուրեմն դրանք նշանակում են մեկ անհատ առարկա (մի խաբար, մի անասուն, մի ձմերուկ, մի գիրք):

Հաճախ խոսքի մեջ բառիմաստը ծավալով սահմանափակվում է, բայց չի հասցվում մինչև նրա նվազագույն ծավալը, այսինքն չի նշանակում անհատ, եզակի առարկա, այլ մեկից ավելի առարկաներ: Նման դեպքերում, նույն օրինաչափություններ, եթե այդ առարկաները խոսքի տվյալ մոմենտի հետ կապվում են հայտնիության հատկանիշով, ապա բառանվանումը, որպես արդեն քերականորեն կոնկրետ բառիմաստ ունեցող, ստանում է որոշիչ հոդ, և, ընդհակառակը, եթե այդ առարկաները խոսքի տվյալ մոմենտի հետ չեն կապվում հայտնիության հատկանիշով, ապա բառանվանումը, որպես քերականորեն կոնկրետ բառիմաստ չունեցող, չի ստանում որոշիչ հոդ, մնում է քերականորեն անորոշ: Այսպիսի բառերը կարող են լինել եզակի և հոգնակի թվերով, լրացումներով կամ առանց լրացումների:

«Գյուղից սլացան մի խումբ կըտրիճներ» (Թ, ԸԵ, 202), «Բայց բավական էր փոի դռանը որևէ գնորդ երևար, որպեսզի մարդկային այդ կծիկից պոկվեին երկու կամ երեք հոգի...» (ԳՍ, Թ, II, 7), «Լսվում էին տարօրինակ ձայներ...» (Շ, ԵԼԺ, IV, 117), «Թեհրանի երկնակամարում գորշ ամպեր էին կուտակվել» (ԳՍ, Թ, I, 5), «...ապա երեացին կառքեր, ավտոմեք, գրասանք, փողոցի կենտրոնով հպարտորեն քայլող ուղտեր...» (Ն. տ., 6):

Այսպիսով, տեսնում ենք, որ ժամանակակից հայերենում բառի քերականորեն որոշյալ կամ անորոշ լինելը խիստ կապված է բառիմաստի առարկայական վերաբերության յուրահատկությունների հետ. ընդ որում այլ է հոգառությունը, երբ բառը իր բառիմաստի առարկայական վերաբերության մեջ տարածվում է ամբողջ տեսակի վրա. մի անհատ առարկայի վրա, թե մեկից ավելի առարկաների վրա: Ժամանակակից հա-

լերենում հատուկ անուններն¹ ստանում են որոշիչ հոդ, անկախ հատուկ անվան փոխառյալ լինելուց կամ չլինելուց, ինչպես և անկախ այն բանից, թե այդ հատուկ անունը սովորական ձևով է, թե հոգնակի է դարձել առանձնահատուկ դեպքերում, ինչպես Ալիմյանները, Մարությանները, կամ՝ Ալպերը, Անդերը (լեռնաշղթաների անուններ) և այլն:

Մի քանի հասարակ անուններ և գրաբարածե հոգնակի ազգանուններ չեն ստանում որոշիչ հոդ՝ հավանաբար հին հայերենի էտապների վերապրուկներ լինելու պատճառով. օրինակ՝ մարդիկ, կանայք, Գրիգորենք և այլն:

2. Հոլովների հոդառությունը

Որոշիչ և հոդը կարող է գրվել գրաբարի բոլոր հոլովներում (եզակի և հոգնակի), հետևապես բառը իր հոլովական յուրաքանչյուր ձևում կարող է լինել որոշյալ կամ անորոշ: Հոգնակի հոլովածները գրաբարում որոշիչ հոդ ստանում են սահմանափակ դեպքերում, այսինքն՝ հոդառութունն ընդհանրացվել էր ղեռես եզակի թվի հոլովածներում:

Ուղղականում՝ «Արդ՝ իբրև ետես թագաւորն...» (ԱԳ), «Երկնէր և ծովն ծիրանի» (ԺԲ):

Սեռականում՝ «Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց» (ԺԲ):

Տրականում՝ «և արագագոյն ի ձեռն մտերմաց պատմէ երօրն զննգութիւնն» (ՄԽ, ԳԶ, 82). «Գալ հանդիպի Բօրն և արքային (հ. տ., 242). «Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին» (Եղիշե):

Հայցականում՝ «զիւր աշխատութիւնն ժողովեաց» (ՄԽ, ԳԶ, 10), «և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութունն» (Եղիշե):

«Ո տայր ինձ գծուի ծխանի

Եւ զառաւօտն նաւասարդի

Զվազելն եզանց և զվարգելն եղջերուաց» (ԺԲ):

¹ Ժամանակակից հայոց լեզուն հատուկ անունների հոդառությամբ խիստ տարբերվում է գրաբարից, հնգեվրոպական մի քանի այս կատեգորիան ունեցող լեզուներից (օր. անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն):

Բացառականում՝ «ի հարագատեն իւրմէ» (ՄԽ, ԳՀ, 17). «որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն (Եղիշե)»:

Գործիականում՝ «նոցա տեսութեամբն խրախճանեալ» (ՄԽ, ԳՀ, 10). «Մարաց թագաւորութեամբն» (Ն. տ.). «որք բամբռամբն երգէին» (Ն. տ., 75). «իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիգակեցօքն...» (Եղիշե):

7-րդ դարի հեղինակների մոտ էլ պահպանված է հոլովների համանման հոդառություն. «Եւ յետ հնգետասան ամի սպան թագաւորն զերկոսինն եղբարսն» (Զ, Գ, 36). «Եւ նոյն օրինակաւ ի գիշերի կազմեցաք զտեղի նշխարացն» (Ն. տ., 38). «Եւ մեծաւ յաղթութեամբ դարձալ ի պատերազմէն (ՅՄ, Գ, 14). «Եւ բորբոքեալ բոցն ճարպովն» (Ն. տ., 26) և այլն:

Միշին հայերենում բոլոր հոլովները, մասնակի բացառություններով, ստանում են որոշիչ հոդ. «հիւանդին սիրտն» (ԱԱ, ՕԲ, 19), «զլիսելքն» (Ն. տ., 31). «ի գետնէն (Ն. տ., 32). որ ի պահպան լինի աչացն» (Ն. տ., 37). «որ կարդացողին և ուսանողին հեշտ լինի» (Ն. տ., 39), «եբակնովն» (Ն. տ., 41). «վկայութեամբն» (Ն. տ., 71), «Գունովն» (Ն. տ.), «ով որ մարմնոյն իշխան լինի» (Ֆ, Բ, 19), «լալ ընկերացն երբ հասանիս» (Ն. տ., 36):

Արեւելահայ աշխարհագրի գրական վաղ արտահայտություններում նույնպես հոլովների հոդառությունը չէր սահմանափակվել. օրինակ՝ «խաներիցն» (Զ, Ը, 258), «թագաւորէն» (Ն. տ., 259). «Իրանու երկրումն» (Ն. տ.), «Եկող մարդին» (Ն. տ.):

Արեւմտահայ գրական լեզվում հոլովների հոդառությունը որոշ չափով սահմանափակվել է. այսպես, օրինակ, գործիական հոլովում որոշիչ հոդ բացառիկ դեպքերում է դրվում, հիմնականում այն դեպքում, երբ վերցվում է 3-րդ դեմքի հարաբերությամբ. «մանչը զանոնք ոտքովը քաշկոտեց...» (ԱԱ, ԸԵ, 257). «Իր մշտնջենական պարապությամբը» (ԳԶ, Ն.), «քաշկիմակովն» (Գ, ՄՄ, 17):

Ինչպես վկայում է Այտընյանը՝ վա(ն) և ան(յան) հոլո-

վումների եզակիներում միայն ուղղականն ու հայցականն են հոգ ստանում, ոչ թե օրւանը չորս ժամը, տերութեանը գանձը, այլ՝ օրւան չորս ժամը, տերութեան գանձը և այլն: Ան(յան) հոլովման բացառականը կարող է հոգ ստանալ և չստանալ. Տերութենէն կամ տերութենէ¹:

Ընդհանրապես եզակի ուղղականը և հայցականը սովորաբար հոգ են ստանում. սեռականը, տրականը և բացառականը երբեմն ստանում են, երբեմն՝ ոչ, իսկ բոլոր հոլովները հոգնակի թվում քիչ են որոշիչ հոգով լինում:

Բարբառներում, հատկապես «Ում» ճյուղի բարբառների հոլովներում՝ որոշյալի հոգն ունի տարածված գործածություն, սակայն չկա այս կամ այն ճյուղին հատուկ և բացառություններ չունեցող օրինակափություն. այսպես, օրինակ, միևնույն «Ում» ճյուղին պատկանող Արարատյան բարբառում սեռականը հոգ չի ստանում, իսկ Ղարաբաղի բարբառում ստանում է:

Արարատյան բարբառում հոգ ստանում են ուղղական (սարը, սարէրը), տրական (սարին, սարէրին), հայցական (սարը, սարէրը), բացառական (սարիցը, սարէրիցը), գործիական (սարովը, սարէրովը), ներգոյական (սարումը, սարէրումը) հոլովները, իսկ սեռականը, ինչպես առաջինք, չի ստանում:

Ղարաբաղի բարբառում հոգ ստանում են ուղղական (սարը, սարէրը), սեռական (սարէն, սըրէրէն), տրական (սարէն, սըրէրէն), հայցական (սարը, սարէրը), բացառական (սարան, սըրէրան)), գործիական (սարովը, սըրէրովը), ներգոյական (սարումը, սըրէրումը) հոլովները, այսինքն՝ Ղարաբաղի բարբառում բոլոր հոլովները (եզակի և հոգնակի) ստանում են որոշիչ հոգ:

Պոլսի բարբառում, չնչին բացառություններով, հոլովները հոգ ստանում են²:

«Ս» ճյուղի Հադրութի բարբառում հետևյալ պատկերն է՝

¹ Այտընեան, Քնն. քեր., էջ 23:

² Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 391:

ուղղական (սարը, սարէրը), սեռական (սարէն, սրբէրէն), տրական (սարէն, սրբէրէն), հայցական (սարը, սարէրը), բացառական (սարան, սրբէրան), գործիական (սարավը, սրբէրավը):

Ժամանակակից հայ գրական լեզուն իր կազմավորման շրջանում որոշիչ հոգի կատեգորիան դեռևս պահպանում էր բոլոր հոլովներում, սակայն հետագայում, երբ արդեն ավարտվել էր նրա կազմավորումը, այդ կատեգորիան աստիճանաբար դուրս է մղվում սեռական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներից և պահպանվում է ուղղական, տրական, հայցական հոլովներում, ուր և այժմ նա կենսունակ օրինաչափություն է: Այս երևույթը կապված է ժամանակակից հայերենի զարգացման ներքին օրինաչափությունների յուրահատուկ գրեկորումների հետ¹:

Հոգ չունեցող հոլովներում չի կարելի գնել որոշյալի քերականական նշանակություն հարց:

Եթե այդ այդպես է, ապա չի կարելի պնդել, թե սեղանի ոտը, աշակերտի գրիչը, սեղանից հեռացա, աշակերտից գոհ է, դեպքերում սեղանի, աշակերտի, սեղանից, աշակերտից քերականորեն որոշյալ են կամ անորոշ: Ընդհակառակը,

¹ Արույանի գործերում և Պոռյանի, Նալբանդյանի վաղ շրջանի գործերում մենք նկատում ենք որոշիչ հոգի ընդհանուր գործածություն՝ նաև բացառական, գործիական, ներգոյական հոլովներում: Պոռյանի և Նալբանդյանի ուշ շրջանի գործերում խիստ սահմանափակվում է այդ գործածությունը, մասնավոր հեղինակային խոսքերում: Այսպես, օրինակ՝ «քնի տեղիցը ու աղոթարանիցը» (ՔԱ, ԵԼԺ, III, 7), «մնումը» (Ն. տ.,), «ձինը փանջարեքովը ու երկաթովը ներս ածում» (Ն. տ., 9), «Երևանումն» (Ն. տ., 34), «Ժամիցը» (ՊՊ, ԵԺ, I, 20), «տանիցը» (Ն. տ., 27), «աթարիցն» (Ն. տ., 50), «աչքերիցը» (Ն. տ., 238), «էս բանովը» (Ն. տ., 34), «վրովը» (Ն. տ., 47), «գետնովն» (Ն. տ., 49), «դռնովն» (Ն. տ., 251), «անկաջումը» «Ն. տ., 31), «բուչեքումը» (Ն. տ., 463), «քնիցը» (Ն, ԵԼԺ, I, 29), «օթախումը» (Ն. տ., 238), «գյուղումը» (Ն. տ., 463), «շատիցը» (Ն. տ.), «օրինակներովը» (Ն. տ., 23), «անհոգութենովը» (Ն. տ., 5): Բայց «առաջին գլուխներից» (ՊՊ, ԵԼ, I, 505), «յուր մարդակեր ընկերներով» (Ն. տ.) «այդ ցուցակներից» (Ն, ԵԼԺ, I, 203), «այս թերթերի օգնությամբ» (Ն. տ.), «Հայաստանում» (Ն. տ., 207), «մեր քնակարաններում» (Ն. տ., 221):

եթե ուղղականում, տրականում, հայցականում բառը չունի որոշիչ հոդ, ապա քերականորեն անորոշ է: Կարող են բերել, ասենք, այսպիսի օրինակներ՝ հավի բույն, ծառի ճյուղ, երեխայի խելք, իշխանի պալատ, որսորդի շուն, և պնդել, թե այստեղ և նման կապակցություններում հավի, ծառի, երեխայի, իշխանի, որսորդի բառերը անորոշ են, իսկ՝ հարկվանի հավի բունը, մեր ծառի ճյուղը, քո երեխայի խելքը և այլ նման կապակցություններում հավի, ծառի, երեխայի սեռականները որոշյալ են: Իրականում սա այլ տիպի նըրբություն է, կապված այդ բառերի իմաստաբանական լուրահատուկ դրսևորումների հետ, և, որ խիստ կարևոր է, չի արտահայտվել ձևաբանորեն:

Հայերենում հոդը հոլովական ձևերի հետ գործածվում է որպես կցվող մասնիկ և ղունի հոլովակազմիչ նշանակություն¹: Այդ մասնիկը որպես քերականական ուրույն իմաստի արտահայտության միջոց է ծառայում. ընդ որում քերականական այդ իմաստի բացակայությունն անհնար է դարձնում հոդի առկայությունը:

Հնդեվրոպական լեզուներում նկատված չէ, որ որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիան կառուցվածքային բնույթի փոփոխություն առաջ բերելու չափ ազդի հոլովական սիստեմի վրա²: Այսպիսի երևույթ նկատվում է հայերենում: Ղարաբաղի բարբառի սեռական և տրական հոլովները կապված այն բանի հետ՝ բառը քերականորեն որոշյալ է, թե անորոշ, դրսևորվում են ուրույն հոլովական վերջավորություններով: Այս օրինաչափության հիմքում հավանաբար հնչյունափոխական մի մասնավոր դեպք է ընկած, որը որոշյալի և անորոշի քերականական իմաստների բազայի վրա ընդհանրացվել ու տարածվել է: Բառերի այդ հոլովագրվածությունը՝ կապված որոշյալի ու անորոշի քերականական կա-

¹ Որոշ հայագետներ (Տոմսոն, Ղարիբյան) այդպիսի ֆունկցիա են վերագրում և հոդին տրականում:

² Եթե հաշվի չառնենք սլավոնական որոշ լեզուներում պատահող ածականների, այսպես կոչված «որոշյալ հոլովման» երևույթը (տե՛ս А. Мейе, Общеславянский язык, Москва, 1951, էջ 306:

տեղորիակի հետ, էապես հանդիսանում է Ղարաբաղի բարձրագույն առանձնահատկություններից մեկը և արդյունք է նրա զարգացման ներքին օրինաչափությունների¹։ Գրական հայերենի ի, ու հոլովման բառերը ենթարկվում են այդ հոլովադարձությունը հետևյալ ձևով։

Եզակի		Հոգնակի	
որոշյալ	անորոշ	որոշյալ	անորոշ
Ուղ. քարը	քար	քարերը	քարեր
Սեռ. քարէն	քարու	քրրէրէն	քրրէրու
Տր. քարէն	քարու	քրրէրէն	քրրէրու

Եզակի		Հոգնակին լինում է
որոշյալ	անորոշ	ծիան և հոլովադարձության չի ենթարկվում:
Ուղ. ծին (= ձին)	ծի (= ձի)	
Սեռ. ծիին	ծիու	
Տր. ծիին	ծիու	

Ան հոլովման բառերը չեն ենթարկվում հոլովադարձության (ուղ. տօն-ը, սեռ. տանը, տան, տր. տանը, տան)։ ԿՆԵԳ՝ (կին) բառը, որ ենթարկվում է ան հոլովման, նույնպես չի փոխվում. (ուղ. կնեգ՝, սեռ. կնգանը, կնգան, տր. կնգանը, կնգան)։ Նը հանգն ունեցող բառերը, որոնք գրականում կորցրել են այդ հանգը և ենթարկվում են ան հոլովման, Ղարաբաղի բարբառում ունեն հետևյալ ձևերը.

Եզակի		Հոգնակի	
որոշյալ	անորոշ	որոշյալ	անորոշ
Ուղ. ծուկնը	ծուկն	ծուկնէրը	քիչ գործա-
Սեռ. ծուկնէն	ծուկնու	ծուկնէրէն	ծական են:
Տր. ծուկնէն	ծուկնու	ծուկնէրէն	

Այսպես նաև ըն հանգն ունեցող մնացած բառերը՝ մօկնը, կէմնը, եզնը և այլն։

¹ Այս երևույթը քննված է դոց. Ս. Գ. Աբրահամյանի կողմից (տե՛ս նրա «Դիադոլոգությունների զարգացման ներքին օրենքների վերաբերյալ» հոդվածը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1955, № 7)։ Մենք այդ երևույթը գրեթե նույն ժամանակում գիտել ենք անկախ այդ հոդվածից։

Ուն հանգույ (կամ լերջավորութեամբ) բառերը, որոնք գրականում ենթարկվում են աւ հոլովման, փոփոխվում են հոլովադարձութեան կանոնով (ուղ. լվթուն, լվթունը, սեռ. լվթունու, լվթունէն, տր. լվթունու, լվթունէն). այդպէս նաև մծթուն, տղթուն և նման բառերը: Նույն ձևով փոփոխվում են անուն, ծնունդ, սուն, ծուն և այլ մի քանի բառեր: Դրական լեզվի վա հոլովման բառերը Ղարաբաղի բարբառում ենթարկվում են հոլովադարձութեան (ուղ. օր, օրը, սեռ. օրու, օրէն, տր. օրու, օրէն):

Որ հոլովման բառերը հոլովադարձութեան չեն ենթարկվում. (ուղ. քէր, քէրը, սեռ. քըվոր, քըվորը, տր. քըվոր, քըվորը):

Դրական լեզվի ոչ հոլովման միակ ներկայացուցիչը՝ աւար (տեր) բառը չի ենթարկվում հոլովադարձութեան. ուղ. տար, տարը, սեռ. տէրուչ, տէրուչը, տր. տէրուչ, տէրուչը):

Հոլովադարձութեան կանոնը տարածվում է նաև փոխանունների վրա. օրինակ, կորածը, կուրածու, կուրածէն: Սակայն փոխանուններում հոլովադարձութունը տարածված երևույթ չէ, հալանաբար չի ընդհանրացել¹:

3. Որոշիչ հոգը փոխանվանական մի քանի օրինաչափություններում

Մոսքի մասերի փոխանցման սովորական դեպքերը, և ընդհանրապէս փոխանունութիւնը, կատարվում են որոշակի օրինաչափութեամբ, կապված լեզվի մեջ գործող օբյեկտիվ օրենքների, օրինաչափութիւնների հետ: Այսպէս՝ գոյականը կարող է փոխանցվել ածականի, ածականը՝ գոյականի և այլն: Գոյականն առարկայի անուն է, իսկ առարկան ունի շատ հատկանիշներ: Մոսքի մեջ հաճախ բառային անվանման միեւնոյն ձևում մթազնում են առարկայի բազմաթիվ հատկանիշներ, և բառը հանդես է գալիս առարկայի մի հիմնական հատկանիշի իմաստով: Օրինակ, պողպատ առարկան,

¹ Այս երևույթը լեզվաբանական խիստ հետաքրքրութիւն է ներկայացնում և արժանի է լուրջ հետազոտութեան:

բացի ամբողջան հատկանիշից (ամուր լինելուց), ունի այլ բազմաթիվ հատկանիշներ, սակայն պողպատ բառը կարող է գործածվել նկատի առնվելով հիմնականում պողպատ առարկայի մի հատկանիշը՝ ամուր լինելը: Այս սովորաբար կատարվում է փոխաբերական խոսքի մեջ:

Եվ իսկապես, բոլոր այն գոյականները, որոնք փոխանցվում են ածականի, մեծ մասամբ հանդես են գալիս փոխաբերական իմաստով առարկան բնութագրելու համար, այսինքն՝ երբ ցանկանում ենք որեէ առարկա, երևույթ բնութագրել մի այլ այնպիսի հատկանիշով, որը իրեն չի պատկանում, սակայն անհրաժեշտ է՝ թեկուզ հենց միայն խոսքին պատկերավորություն տալու համար: Առյուծ Մհեր, պողպատ կամք, խոզ բնավորություն արտահայտություններում առյուծ, պողպատ, խոզ բառերը չունեն իրենց բառային իմաստի համաչափ զրոհորումը. առաջին պլանի վրա է մղված նրանց այն հատկանիշների գիտակցումը, որոնք պետք են տվյալ խոսքի մեջ, այն է՝ առյուծի ուժեղ, ճարպիկ լինելու հատկանիշը, պողպատի ամբողջունը (ամուր լինելը), խոզի կոշտ, կռպտ վարքը:

Հնարավոր է ճիշտ հակառակ պրոցեսը. երբ հատկանիշի անունը տարածվի առարկայի վրա և գիտակցվի իբրև նրա անուն՝ աշխատավոր (մարդ), ցուրտ (ցուրտ եղանակ, ձմեռ), բայց՝ «մեր երկրի երջանիկ աշխատավորները», «Այսպիսի ցուրտ դեռ չի եղել» արտահայտությունների մեջ աշխատավորներ և ցուրտ գոյականի են վերածված:

Այսպիսի փոխանցումների դեպքում բառը կարող է դառնալ սոսկ հատկանիշի անուն, թեպետ առաջ առարկայի անուն է եղել, և, ընդհակառակը: Սա բառիմաստի զարգացման ընդհանուր պրոցեսի մասնավոր դեպքերից է: Բայց լինում են դեպքեր, երբ հատկանիշի անունները արտահայտում են առարկայական իմաստ, չզաղարկելով հանդերձ հատկանիշի անուն լինելուց: Եվ վերջապես լինում են դեպքեր, երբ բառանունը հանդես է գալիս իր իսկ հնչյունական անվանման փոխարեն, այսինքն՝ բառի հնչյունական անվանումը, բառը՝ ինքը դիտվում է իբրև առարկայական երևույթ (իր)՝

Քննենք այդ երևույթները, որոնք խիստ կապված են տրոշյալի քերականական իմաստի և նրա քերականական արտահայտության (ձևաբանական միջոցի)՝ և (ը) հոգի հետ:

Ածականներն արտահայտում են հատկանիշի հասկացություն: «Կարմիր գույն» կապակցության մեջ կարմիր հատկանիշի անուն է, իսկ «Կարմիրը արտահայտիչ գույն է» կապակցության մեջ կարմիրը չի արտահայտում սոսկ առարկայի որակական հատկանիշը (նա հանդես չի գալիս նաև որպես առարկայացված հատկանիշի հասկացություն), այլ՝ մի հատկանիշ, որ տրվում է առարկայական իմաստով հանդերձ: Այս տեսակետից կարմիր ածականը կարող է հանդես գալ իբրև կարմիր գույնի, իբրև առարկայի օբյեկտիվ հատկանիշի անուն, եթե նա ստանա ը (և) հոգը (Կարմիրը գույն է): Բայց կարմիր ածականը, որոշիչ հոգով, մեծ մասամբ իբրև անվանում տալիս ենք այն առարկային, որը ցանկանում ենք նույն այդ (կարմիր) հատկանիշով տարբերել նույնատեսակ այլ առարկաներից. օրինակ՝ Սեդանի վրա կան թափված մատիտներ, որոնցից մեկը կարմիր է. ասում եմ. «Տուր ինձ կարմիրը»: Այստեղ «կարմիրը» առարկայական իմաստի հետ տրված հատկանիշի անուն է: Կարմրությունը բառը նույն հատկանիշի անունն է, սակայն այստեղ հատկանիշն առարկայի հետ չի տրված, այլ նրանից անջատ և առարկայացված: Ուրեմն՝ կարմրությունը առարկայացված հատկանիշի անուն է, և որպես այդպիսին, վերացական գոյական: Կարմիր բառը, առանց որոշիչ հոգի, «կարմիր մատիտ» կապակցության մեջ կոնկրետ հատկանիշի անուն է, տրված առարկայի անվան հետ, և որպես արգելիսին ածական է:

Փոխանուն ածականները, թվականները և այլ փոխանուն խոսքի մասերը կարող են հոլովվել և հանդես գալ շարահյուսական տարբեր կիրառություններով: Պարզ է, որ առանց որոշիչ հոգի վերոհիշյալ խոսքի մասերը չեն կարող հոլովվել և նախադասության մեջ հանդես գալ ենթակայի, խնդրի, պարագայի պաշտոնով, մի խոսքով՝ նախադասության այն անդամի պաշտոնով, որպիսին լինելու համար բառը պիտի առարկայական իմաստ ունենա:

Մյուս կողմից, եթե վերանանք բառի իմաստային կողմից և նկատի ունենանք նրա անվանական կողմը (իսկ սա հնարավոր է այն բանի շնորհիվ, որ բառը առարկայի կամ հատկանիշի հնչյունական անվանումն է), ապա բառ-անվանումը կրիտիկ որպես առանձին օբյեկտ, որպես լեզվական օբյեկտիվ երևույթ, նյութական տարր: Այդ դեպքում բառը՝ ստանալով որոշիչ հոգ, մասնավորվում է նույն կարգի լեզվական այլ երևույթների (տարրի) հարաբերությունում: Այսպես՝ «Աշոտը գոյական է», «Կարմրախայտը ածական է», «Ուն շաղկապ է» և այլն: Իսկապես՝ մի՞թե «Կարմրախայտը ածական է» և «Կարմրախայտը տուր ինձ» արտահայտություններում նույն իմաստն ունի ընդգծված բառը, ավելի ճիշտ, իր առարկայական վերաբերությունում նույնն է: Այս նշանակում է, որ լուրաքանչյուր դեպքում որոշիչ հոգի ձևաբանական արժեքը կապված է տվյալ բառի իմաստաբանական առանձնահատուկ դրսևորումների հետ:

Վերոհիշյալ առանձնահատկություններից ելնելով՝ կարելի է նշել փոխանունություններից երեք մոմենտ:

ա) Որոշիչ հոգը դրվում է հատկանիշ արտահայտող այն բառի վրա, որը իր բառիմաստի առարկայական վերաբերության մեջ վերցվում է ամբողջ ծավալով («Կարմիրը արտահայտիչ է, քան կապույտը», «Նորը անհայթհարելի է»): Սրանք բուն փոխանուններ են:

բ) Երբ հատկանիշ արտահայտող բառը, ստանալով առարկայական նշանակություն, տարածվում է այն առարկայի (կամ առարկաների խմբի) վրա, որը բնութագրված է այդ հատկանիշով, ապա հատկանիշի անունը վերցվում է որոշիչ հոգով («Սեղանի վրա դրեցի երկու սև և երեք սպիտակ զընդակներ, սպիտակները գլորվեցին և ընկան»): Սրանք ևս բուն փոխանուններ են:

գ) Որոշիչ հոգը գործածվում է նաև այն դեպքում, երբ փոխանունը ունի սոսկ բառ-անվանական նշանակություն. որպես այդպիսին կարող է հանդես գալ լեզվական ամեն արտահայտություն (հնչյուն, բառ, նախադասություն), հետև-

վապես բոլոր խոսքի մասերը: Այս կարգի փոխանունները մենք տարբերում ենք բուն փոխանուններից:

Որոշիչ հոդը փոխանվանական օրինաչափություններում ունի հետաքրքիր դրսևորումներ, որոնք հայերենի զարգացման տարբեր էտապներում արտահայտվում են որոշ յուրահերպստություններ:

Գրաբարում որոշյալի քերականական իմաստը հիմնականում կապվում էր և մասնիկի հետ, ընդ որում այդ մասնիկը, բացի որոշիչ հոդի ֆունկցիա կատարելուց, հանդես էր գալիս նաև ստացական, ցուցական, դիմորոշ իմաստներով: Այս հանգամանքը հիմք է տալիս մեզ՝ գրաբարի և մասնիկի կիրառությունները փոխանվանական օրինաչափություններում դիտելու հիմնականում իբրև որոշիչ հոդի կիրառություններ:

Իհրենք որոշիչ հոդի դրսևորումները փոխանվանական օրինաչափություններում ցուցադրող մի քանի փաստեր.

Փոխանունն ածականներում՝ «Զի եթէ չար էր, չարին և եթ պարտ էր ասպնշական լինել. և եթէ բարի էր, բարւոյն» (Եզն., ԵԱ, 92), «Եւ եթէ ինքեանք դիւի զոհս մատուցանեն, որո՞վք երեսօք զդիվապաշտսն հալածիցեն» (Ն. տ., 97), «ոչ զշարժունս՝ այլ զշարժիչն պարտին փառաւորել» (Ն. տ., 9), «չետ սակաւ ամաց կատարէ զնրաշալիս ամրագունիւք պարսպօք» (ՄԽ, ԳԶ, 57):

Փոխանունն թվականներում՝ «Քանզի ի պատուիրանազանցութեան գտեալ առաջինն ի մարդկանէ... (Խոր., 17):

Փոխանունն դերանուններում՝ «զայն ընդէր ոչ ծանեալ թէ մինն բարի և միւսն չար» (Եզն., ԵԱ, 86). «բայց ինքն եթէ իցէ՝ եթէ չիցէ՝ զայն ոչ գիտէ, զի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց. նոյնպէս և այլքն յանշնչոցն արարածոց» (Ն. տ., 11). «Եթէ ըստ ախորժելոյ որպէս կամեցան իւրաքանչիւրքն փոփոխել զանուանսն» (Խոր., 24): Դերանուններից զի, զինչ, իմն, ինչ, ո, ով, ոմն, ոք, միմեանց, իրեքաց և մի քանի ուրիշները առանց որոշիչ հոդի են գործածվում¹:

¹ Գրաբարում և հոդը զրվում է նաև բայի դիմավոր ու անդեմ ձևերի վրա: Դերբայների հետ հոդը զրվում է փոխանվանական նշա-

Պատահում է, որ մակբալն էլ դիմավոր բալից կամ դեր-
բալից առաջ հոդ է ստանում. «Զոր յանդիմանն տեսի», «որ
մտադիւրն ժառայեաց», կանխաւն ասէի», «Յաճախն ընձեռ-
նել» (օրինակները տե՛ս Աւետիքեան, Քերակ., 188 և Բագ-
րատունի, Քերակ., 393):

Գրաբարում որոշիչ հոդով փոխանունությունը սահմա-
նափակված է այն չափով, որչափով անունները հոդ են ստա-
նում: Այսպես, օրինակ, հոգնակի թվում փոխանունը սակավ
դեպքերում է հոդ ստանում, իսկ հատուկ (և հասարակ) գո-
յականները փոխանուն սեռական կազմում են յուրահատուկ
հոդառությամբ. հաճախ հատուկ անվան վերադիրը իր վրա է
վերցնում հոդը՝ «իսկ մերոյն Յաբեթի ամենեկին ոչ» (Սոր.,

նակությամբ. «Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթէ ոչ,
յայլմէ առնուցու զիինելն» (Եզն., 91), «և հաւատարիմ թուեցաւ մեզ
ասացեալն» (Սոր., 22): «Զվագելն եղանց, զվարգելն եղջերուաց» (ԺԲ),
«Լաւ համարէր գծառայելն միայն Քրիստոսի» (Փ, ՊՀ, 18): Դիմավոր
ձևերի հոդառությունը յուրահատուկ փոխանունություն է, այն իմաս-
տով, որ փոխարինում է մեծ մասամբ գլխավոր նախադասության
դեղչված հարաբերյալին: Հայ քերականագիտության մեջ սովորաբար
այդ հոդառությունը բնութագրում են որպես հոդի յուրատեսակ դրսե-
վորում հարաբերականների (հատկապես ըր հարաբերականի) պահանջով:
Դիմավոր ձևերի հետ դործ են ածվում բոլոր հոդերը. բացի հրամա-
յականից մնացած բոլոր եղանակները հոդ կարող են ստանալ: Ընդ
որում երբ բայը բազազրված է օժանդակ բայով և դերբայով, հոդը
անցնում է սովորաբար դերբային: Բերենք օրինակներ այս դեպքերի
վերաբերյալ. «զի որ շարժին և փոփոխի՝ չէ էալան» (Եզն., 9), «եթէ,
որպես վկայենն» (Ն. տ., 10), «որպէս ասենն» (Ն. տ., 18): «Վասն զի
մանաւանդ որք մեռանն» (Փ, ՊՀ, 41), «զի զինչ հայցէրն յաստուծոյ» (Ն.
տ., 59), «զոր գործեցերն» (Ն. տ., 108), «յորում կոչեացն զնա» (Սոր.,
145), «զի իմասցին որք ընթեռնունն» (Ն. տ., 149), «որում ցանկայրն»
(Ն. տ., 180), «զոր թողեալն էր» (Փ, ՊՀ, 76), «ուր սոքա եղեալն էին
(Ն., տ., 57). բայց նաև՝ «ուր էրն զնա արգելեալ» (Ն. տ., 98):

Հաճախ դիմավոր բայի հոդը՝ այդ բայի ժխտական ձևերի դեպքում
անցնում է նախադաս, ժխտական մասնիկին, «իսկ որք ոչն կամիցին»
(Փ, ՊՀ, 20), ինչպես և՛ «որ ոչն ունիցի» և այլն: Երբեմն դիմավոր
բայի հոդն անցնում է բայի նախադաս շեշտակիր բառին, «զոր հեղձ
կոչեն» (Եզն., 8), «և արբին նա և որ ընդ նմայն էին» (Փ, ՊՀ, 35):

22): Որոշիչ հոդով փոխանուն հնարավոր է բոլոր հոլովներում¹:

Գրաբարին խորթ չէր որոշիչ հոդով հասարակ անունների փոխանուն սեռականը. «եդ կանոն չիշել զոսա առ սուրբ սեղանն աստուծոյ ի ժամ պատարագին. յորժամ զանունս սրբոյն կարգիցեն, և ապա զկնի նոցա զնոցայն» (Փ., ՊՀ, 43):

Միջին հայերենում և աշխարհաբարի վաղ արտահայտություններում որոշիչ հոդը նույն ֆունկցիայով կապվում է փոխանվանական օրինաչափությունների հետ:

Որոշիչ հոդով փոխանուն՝ ածականից.

«Բոմն է կանգներ դեղին հագնողն

Ինքն զկանաչն ու զծիրանին» (ՄՄ, ԸՀ, 52):

«Խնդրէր և որոնէր ըզիւր սիրելին» (ն. տ., 181). «Գարնանային եղանակն տաք է և գէճ է, և ամառնայինն տաք է և չոր. աշնանայինն հով է և գէճ» (ԱԱ, ՕԲ, 46), «Էլավն այն է» (ն. տ., 111):

Թվականից՝ «ասէ մին, թէ զդուռն փակ է» (ՄՄ, ԸՆ, 325), «եքիւրքն տաք է» (ԱԱ, ՕԲ, 21), դերանուններից՝ «զամենն կատարես» (ՄՄ, ԸՆ, 66), և այլն:

Դու դերանունը միջին հայերենում գերազանցապես օգտագործվել է դուռն ձևով:

Փոխանուններ կազմվել են նաև դերբայներից՝ «և ապա զանկելն և զսերմանելն... և զշինելն» (ՂՅ, ՀՆՌՎ, ՊՎ, 87), «Վճարեն զսերմանողն» (ՄՄ, ԸՆ, 27), «Բոմն է կանգներ դեղին հագնողն», «Ածէք խմէք կարմիր գինի, խմողն ուրախ լինի» (ն. տ., 52, 253):

Բայց դիմավոր ձևերի վրա հոգ դրվելու երևույթն ըսկըսվում է նվազել 7-րդ դարից, ապա գրեթե չքանում է

¹ Գրաբարի փոխանվանական օրինաչափություններում որոշիչ հոդի այս դրսևորումները իրենց հիմնական հատկություններով պահպանվել են նաև ուշ շրջանի գրաբարում: Հետագայում արդեն (միջին հայերենում և աշխարհաբարի վաղ արտահայտություններում) նկատվում են նաև այնպիսի երևույթներ, որոնք կապվում են հայերենի ներքին զարգացումը բնորոշող նոր օրենքների հետ:

միջին հայերենում. մասամբ դրա արտահայտութիւնները մնացել են որոշ բարբառներում (օր. Ուրմիայի բարբառում):

Փոխանուն սեռականը գործուն երևույթ է նաև միջին հայերենում. «զի այս բանս մարդուն բնութիւնն է, և այլ կենդանոցն չէ (ԱԱ, ՕԲ, 22), «Եւ մարդկանց երակն վատուծ է քան զկարմերուն» (Ն. տ., 69):

Արևմտահայ գրական լեզվում որոշիչ հոգով փոխանունութիւնը արտահայտվում է բոլոր հոլովներով, բացի գործիականից և որոշ չափով սահմանափակված է հոգնակի հոլովներում. «Իրենց համար տառապանաց մեծագոյնն էր» (ԱԱ, ԸԵ, 17), «Առաջնոյն աղջիկը և երկրորդին կինը» (Ն. տ., 33), «ուր երկու հարլուր զրուշ ամսական վարձքով կը բնակին երեքը» (ԳԶ, Ն, 6), «Վարը լրագրի մեջ իմ անունս տեսնողները...» (Պ, ՄՄ, 14), «կրկնեց ձայնը, որ տիրացու Մարտիրոսին տասնամյա աղջկանն էր» (Ն. տ., 25):

Դերանունների մի մասն ստանում է հոգ և հանդես է գալիս որպէս փոխանուն (մյուս—մյուսը, մեկալ—մեկալը, ամեն—ամենը, որ—որը, յուրաքանչյուր—յուրաքանչյուրը և այլն). իսկ մի մասը (օր. իրար, մեկգմեկ)՝ չեն ստանում: Որոշ դեպքերում դերանունների հետ դրված հոգը այլևս հոգ չի գիտակցվում (գուն, յաւրմեն և այլն): Դերանուններից մի քանիսի սեռականը կարող է գործածվել իբրև փոխանուն և հոլովվել՝ ուղղ. հայց.—մերը, մերինը, սեռ. տր.—մերինին, բաց.—մերինէն, գործ.—մերինով¹:

Որոշիչ հոգով փոխանվանական երևույթները տարածված են նաև հայերենի բարբառներում: Այս կարող ենք ցուցադրել Ղարաբաղի բարբառից բերված օրինակներով:

Որոշիչ հոգով փոխանուններ ածականներից՝ կամրմը (կարմիրը), քլօքը (չաղը), մրէծը, կոճռը (փոքրը), լնվը, թվականներից՝ հէնգը, հէնգիւնչինը (հինգերորդը), օխտը (յոթը), իրէքը (երեքը), չօրսան (չորսից), օխտավը (յոթով) — օրինակ՝ այսպիսի արտահայտութիւններում՝ «Զօրս

¹ Տե՛ս Զ ա պ ե լ չ. Ա ս ա տ ու ը, Գործնական քեր. արդի աշխարհաբարի, Կ. Պոլիս, 1922, էջ 43:

ըրախա օնէ, չօրսան էրկունը՝ ախճիգըն» (Չորս երեխա ունի, չօրսից երկուսը աղջիկ են), «Օխտավը յորա տառէն» (Յոթով վրա թափվեցին), դերանուններից՝ հըէնցը (ալնալիսին), էս-քանը (այսքանը), ամեն մինը, վըէչ մինը (ոչ մեկը), և ալլն, դերբայներից՝ ք՛նալը, կ՛ալը, կ՛րիլը, կ՛րածը, ասօղր և ալլն:

Սեռականը ստանալով որոշիչ հոգ՝ փոխարկվում է փոխանուն սեռականի, օրինակներ՝ Կո՛ւքի՛նը (Գրիգորինը), լալէնը (Բլրինը), ծծօրինը, քունը (քոնը), նրանը, իմը, մերունցը:

Ժամանակակից գրական հայերենում որոշիչ հոգով փոխանունությունը միանգամայն կենսական օրինաչափություն է ուղղական, տրական, հայցական հոլովներում. մնացած հոլովներում փոխանունությունն ալլ է, առանց որոշիչ հոգի:

Որակական ածականները որոշիչ հոգով վերածվում են փոխանունի: Հարաբերական ածականները նույնպես չնչին բացառություններով հանդերձ¹, փոխանուն են լինում՝ (մեծը, փոքրը, կանաչը, հարավայինը, տեղայինը, բարոյականը և ալլն):

Քանակական և դասական թվականները հեշտությամբ ենթարկվում են փոխանունության և ստանում որոշիչ հոգ, բացի ինն (ինը), տասն (տասը), և ինն կամ ինը վերջացող թվականներից, ուր ն-ն (ը-ն), ըստ երևույթին հոգ է գիտակցվում, թեև արմատահնչյունն է ն—ը փոփոխությամբ²:

Բաշխական թվականները որոշիչ հոգը ստանալով կարող են հանդես գալ՝

¹ Հատկապես խուսափում են յա(ե) ածանցով հարաբերական ածականները (փայտյա, երկաթյա, արծաթե և ալլն):

² Վերջնահանգի ն հնչյունի ը-ով փոխարինվելը հայերենում տարածված երևույթ է, այսպես և ինն—ինը, սառն—սառը, դառն—դառը, խառն—խառը և ալլն. բացի ձուկ, մուկ, եզ և նման մի շարք բառերից, ուր այն բոլորովին ընկել է: Վերջնահանգի այդ ն մասը (որը արտասանվում է րն) շարաբաղի բարբառում պահպանվել է րն > ըր շրջմամբ («ձուկն > ձուկնը, մուկն > մուկնը, եզն > եզնը»), ինն, տասն բառերում այդպիսի շրջում տեղի չի ունեցել:

ա) գուտ բառ-անվանական նշանակությամբ («Վեցականը թվական է», «Վեցականն ընդգծիր»):

բ) առարկայական նշանակությամբ, բաշխականության զգալի գիտակցումով («Երեքականը տվյալ դեպքում ամենահարմար բաշխումն է»):

Քանակական թվականներն էլ որոշիչ հոգով բազմաթիվ իմաստային նրբութուններ կարող են արտահայտել. «Հիսուն աշակերտներ խաղում էին բակում. մենք չէինք կարող մի-անգամից հիսուներե նայել»։ «Նա տարիքով հիսուներե մոտ էր»։ «Հաշվելով հասավ հիսուներե»։ «Հիսուներ թիվ է» և այլն:

Մեկ քանակական թվականը կարող է որոշիչ հոգ ստանալ և, իբրև փոխանուն, ունենալ զանազան կիրառություններ. օրինակ՝ մեկը (այսինքն, մեկ թվականը), մեկը—մեկ մարդ կամ իր, «Երկու գնդակ դրեցի սեղանին, մեկը գլուխից և ընկավ»:

Դերանունները իրենց խոսքի մասային առանձնահատկության պատճառով լուրահատուկ դիրք ունեն փոխանունության և հետևապես որոշիչ հոգի նկատմամբ: Բոլոր դերանունները (ինչպես ածականներն ու թվականները) բառ-անվանական իմաստով ստանում են որոշիչ հոգ՝ «Եսը դերանուն է», «Այնը ցուցական դերանուն է», «Երբը ջնջիր»:

Անձնական դերանունները բուն փոխանուն չեն լինում, բացի ես դերանունից, այն էլ՝ իմաստային առանձնահատկության պատճառով: Անձնական դերանունները խոսքի մասային իմաստով հարաբերակից են գոյականներին: Հասկանալի պատճառով գոյականը բուն փոխանուն չի կարող լինել, որովհետև ցույց է տալիս առարկա, ունի առարկայական իմաստ: Նույն իմաստն ունեն անձնական դերանունները, բայց չտարբերակված ձևով: Եթե ասենք. «Դուն դերանուն է», ապա և հոգն այստեղ ունի մասնավորող, տեսակի տակ գնող, հետևապես որոշող իմաստ: Բայց զուգ դերանունը այստեղ հանդես է գալիս գուտ բառ-անվանական փոխանվան իմաստով և տարբերվում է բուն փոխանուններից, որոնք հիմնականում կապված են առարկայական նշանակության

հետ, թեպետ բառ-անվանական փոխանվան դեպքում էլ կա առարկայական իմաստ, այսինքն՝ առարկայի հնչյունական անվանումը դիտված է իբրև առարկա, նյութական տարր, որպիսին է նա իրականում: Իսկ եթե ասենք. «Պուն աչքի ընկնող աշակերտ է», ապա այստեղ և հոգը փոխանվանական (կամ քերականական որևէ այլ) արժեք չի կարող ունենալ, տարբերակված կամ չտարբերակված առարկայական իմաստ չի հաղորդվում ղու դերանվանը, որովհետև վերջինիս մեջ արդեն կա առարկայական իմաստ, թեև չտարբերակված: Սա էլ իր հերթին հաստատում է, որ փոխանունությունը, որպես քերականական երևույթ, խիստ կերպով կապված է բառային իմաստի կոնկրետ դրսևորումների հետ:

Ցուցական դերանուններից գոյականներին հարաբերակից բառերը (սա, դա, նա, այս, այդ, այն, այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ) որոշիչ հոգ կարող են ստանալ միայն բառ-անվանական իմաստով, իսկ այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ ցուցականները ստանում են նաև բուն փոխանվան նշանակությամբ (այստեղս, այդտեղդ, այնտեղը, նույնտեղը, իմ այստեղը, նրա այնտեղը և այլն): Ածականներին հարաբերակից ցուցական դերանունները որոշիչ հոգ ստանում են նույն օրինաչափությամբ, ինչ ածականները, իսկ թվականներին հարաբերակիցները՝ թվականների նման: Մակբայներին հարաբերակից ցուցական դերանունները հասկանալի պատճառով որոշիչ հոգ ստանում են բառ-անվանական ֆունկցիայով: Այսպես են նաև փոխադարձ դերանունները:

Հարցական և հարաբերական դերանուններից գոյականներին հարաբերակից բառերը, ինչպես և մակբայներին հարաբերակիցները, որոշիչ հոգ բուն փոխանվան նշանակությամբ չեն ստանում, իսկ ածականներին ու թվականներին հարաբերակիցները ստանում են:

Որոշյալ դերանունները հոգ ստանում են փոխանունությունը հատուկ ընդհանուր օրինաչափությամբ: Իսկ անորոշ դերանուններից շատերը (ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, այլ, որևէ, ովևէ, երբևէ և այլն) բուն փոխանուն չեն լինում: Եվ այլև ձևում և հոգի կիրառությունը ավանդական է: Ուրիշ դերա-

նունը կարող է որոշյալի հոգով վերածվել բուն փոխանվան՝ «Ուրիշը (կամ մեկ ուրիշը) այդպես չէր վարվի», ինչպես և բառ-անվանական փոխանվան՝ «Ուրիշը դերանուն է»:

Պետք է տարբերել մի հոգը (ըստ որոշ լեզվաբանների՝ մի անորոշ դերանունը) մեկ (մի) թվականից ու նրա փոխանուն ձևերից: Երբ մեկ (մի) բառն արտահայտում է առարկայի քանակային հատկանիշը թվարկման իմաստով հանդերձ (այսինքն՝ երբ քանակային հատկանիշը տարբերակված է), ապա նա թվական է. սակայն, երբ նա արտահայտում է առարկայի քանակային հատկանիշը՝ առանց թվարկման իմաստի, այսինքն որպես այս կամ այն տեսակին պատկանող անհատի չտարբերակված (անորոշ) քանակային հատկանիշ, ապա նա անորոշ հոգ է:

Ժամանակակից հայերենում միևնույն քանակային հատկանիշը կապվում է երկու բառի հետ մի և մեկ. ընդ որում՝ մի-ն պատմականորեն, ըստ էության, ավելի հին է: Քանակային հատկանիշի յուրօրինակ թուլացում (ու իմաստային մթազնում) է ստացվել երկուսի մոտ էլ: Բառիմաստի յուրօրինակ այդ դրսևորումների հետ են կապված մեկը անորոշ դերանվան և մի անորոշ հոգի կազմավորումն ու գործածությունը:

«Այսօր մեկ աշխօր եմ վաստակել» արտահայտություն մեջ մեկ թվական է: «Մի մարդու արածը երբեմն երկու մարդ չեն կարող անել» արտահայտություն մեջ մի նույնպես թվական է: Մեկ թվականը որպես փոխանուն հանդես գալու ժամանակ կլինի մեկը («Երկու գնդակ դրեցի սեղանին, մեկը գլորվեց և ընկավ»)¹: Մի բառածևը քանակական թվականի նշանակությամբ ժամանակակից հայերենում ալլես կենսունակ չէ. առավել ևս կենսունակ չէ նրա բուն փոխանվանական ձևը՝ մինը («Մի՛ն թվական է», բայց՝ «Երկու գնդակ դրեցի սեղանին, մի՛նը գլորվեց և ընկավ»):

Այնուհետև՝ «Մեկը կկանգնի քո առաջ և կմերկացնի

¹ «Մեկը քանակական թվական է» արտահայտության մեջ մեկը ձևը բուն փոխանուն չէ, այն բառ-անվանական արժեք ունի:

քո այդ վատ արարքը», ինչպես և՛ «Երևի հիմնարկում մի մարդ կլինի և քեզ ցույց կտա, թե ում պետք է դիմել» արտահայտություններում մեկը և մի այլևս թվականներ չեն: Մեկը այստեղ փոխանուն թվական չէ, որովհետև ը-ն այստեղ որոշյալի քերականական (=հոդի) իմաստ չունի: Եթե փոխանուն թվական մեկը իր արտահայտած իմաստով կապվում է որևէ առանձին առարկայի հետ, որը ծանոթ է և՛ խոսողին, և՛ խոսակցին, ապա մեկը անորոշ դերանունը կորցրել է իր այդ նշանակությունը և արտահայտում է չտարբերակված քանակային հատկանիշ, անորոշ առարկայական իմաստով հանդերձ: Այս նշանակում է՝ մեկը անորոշ դերանունը մեկը փոխանուն թվականն է իմաստային հակադրության վերածված: Նույնը կատարվել է մի թվականի հետ, այն տարբերությունով, որ մի «անորոշ դերանվան» մեջ չկա առարկայական իմաստ, այն չի կապվում որևէ առարկայի հետ, այլ իր իմաստային արժեքով հանդես է գալիս սոսկ իբրև չտարբերակված քանակային հատկանիշի անուն, որը և նրան դարձնում է անորոշ հոդ¹: Բացի այդ՝ մեկը անորոշ դերանունը կարող է հանդես գալ որպես նախադասության ինքնուրույն անդամ, իսկ մի-ն² չի կարող:

Ոչ բոլոր դերբայներն են հանդես գալիս բուն փոխանվան նշանակությամբ: Այդ բացատրվում է դերբայների բառաիմաստային առանձնահատկությամբ:

Գործողությունը (որ առարկայի ատրիբուտն է) կարող է գիտակցվել (դիտվել կամ ընդունվել) իբրև ընդհանուր երեվույթ («երկարատև վազք», «հասարակական շարժում»), իբրև ընդհանուր պրոցես (շարժվել), իբրև փոփոխական՝ գիտակցված կայուն հատկանիշ (ստեղից շարժած իր», «աչքը շարժող մկան»): Նույնը կարելի է վերցնել որոշյալ առումով՝ վազքը, շարժումը, և փոխանվանական նշա-

¹ Սա թեպետ մի հոդի իմաստային հիմնական կողմը, մոմենտն է, բայց, իհարկե, նրա էությունը բնորոշող միակ առանձնահատկությունն է:

² Խոսքը, իհարկե, քանակական թվական մի-ի մասին չէ, այլ՝ մի հոդի մասին:

նակությամբ, նույնպես որոշյալի հոգով՝ շարժելը, շարժածը, շարժողը: Այս նշանակում է, որ գործողության անունների բառա-իմաստային յուրահատկությունները հաշվի առնելը միայն կոգնի դերբայների փոխանվանական օրինաչափությունները ճիշտ հասկանալուն:

Այն դերբայները, որոնք իրենց նշանակությամբ կարող են գիտակցվել իբրև կայուն հատկանիշի անուններ, ածականների, թվականների (և որոշ դերանունների) նման (իսկ սրանք գիտակցվում են իբրև առարկայի կայուն հատկանիշների անուններ)՝ կարող են որոշիչ հոդ ստանալ և փոխանուն լինել (գրելը, գրածը, գրողը), իսկ այն դերբայները, որոնք չեն կարող գիտակցվել որպես այդպիսին, որոշիչ հոդ կարող են ստանալ սոսկ բառ-անվանական ֆունկցիայով: Վերջիններն են՝ անկատարը, ապառնին, վաղակատարը և ժխտման դերբայը: Իհարկե, սրանց մեջ չենք կարող մտցնել, օրինակ, ապառնի դերբայի ձևով ածականները, որոնք կարող են որոշիչ հոդ ստանալ ու բուն փոխանուն լինել:

Անկասկած է, որ փոխանվանական օրինաչափություններում որոշյալի քերականական իմաստը (և համապատասխան հոդի կիրառությունը) կապված է բառի արտահայտած առարկայական իմաստի ալլազան դրսևորումների հետ¹: Այսպես՝ մակբայները չունեն առարկայական իմաստ, բայց նրանք առարկայի հատկանիշի անուն չեն, այլ հատկանիշի հատկանիշ են ցույց տալիս: Եվ նրանք որոշիչ հոդը ստանում են միայն բառ-անվանական նշանակությամբ:

Որոշիչ հոդը հանդես է գալիս փոխանունների ուղղական, տրական, հայցական հոլովներում, մնացած հոլովներում չի պահպանվում, ինչպես գոյական անունների հոլովման ժամանակ:

¹ Ձևա-իմաստային այդ կապի առավել ցայտուն արտահայտությունը կարելի է տեսնել, օրինակ, խոր ածականի մոտ: Սա իր ածականական ու մակբայական կիրառություններում կարող է հանդես գալ փոխանվանական արժեքով, որոշիչ հոդով, որոշ դեպքերում՝ ոճական նշանակությամբ՝ «խորը (խոր փոսը) օգտագործվեց սիլոսի համար», «նա խորն է թափանցել երեւոյթի էության մեջ», «նրա խորը համոզմունքները...» և այլն:

Ողդ. զեղինը զեղինները	հինգը հնգերը
Սեռ. զեղինի զեղինների	հնգի (քիչ գործածական)
Տր. զեղինին զեղիններին	հնգին »
Հայց. զեղինը զեղինները	հինգը »
(զեղինին) (զեղիններին) (հնգին)	»
Բաց. զեղինից զեղիններից	հնգից »
Գործ. զեղինով զեղիններով	հնգով »
Ներգ. զեղինում զեղիններում	հնգում »

Նույն ձևով էլ հոգ են առնում ու հոլովում փոխանունն զերանունները, փոխանուն զերբայները և բոլոր բառ-անվանական նշանակութամբ փոխանունները:

Իր յուրահատուկ դրսևորումներով որոշիչ հոգը հանդես է գալիս նաև փոխանվանական այլ օրինաչափություններում:

Քննենք որոշիչ հոգի կիրառությունները փոխանուն սեռականի մի քանի ձևերում:

Շատ բառեր կարող են հանդես գալ փոխանուն սեռականի գերում. սա վերաբերում է ինչպես գոյականներին, այնպես էլ գոյականաբար հանդես եկած բառերին (փոխանուններին): Ընդ որում դրանք անպայման հանդես են գալիս հոդով:

սիրտ—սրտի—սրտինը	լավը—լավի—լավինը
ջուր—ջրի—ջրինը	մեծը—մեծի—մեծինը
մարդ—մարդու—մարդունը	երկուսը—երկուսի—երկուսինը
երեքը—երեքի—երեքինը	դու—քո—քոնը
առաջինը—առաջինի—առաջինինը	սա—սրա—սրանը
երկրորդը—երկրորդի—երկրորդինը	քանիսը—քանիսի—քանիսինը
ես—իմ—իմը	եկողը—եկողի—եկողինը

Եթե փոխանուն սեռականով հանդես եկող բուր սեռականում վերջանում է ձայնավորով, ապա ստանում է նր հնչյունակապակցությունը, որոնցից որոշյալի քերականական իմաստը, փոխանվանական արժեքով հանդերձ, արտահայտում է վերջին բաղադրիչը ը(ն), իսկ առաջին բաղադրիչը (ն) կատարում է նաև ձևական (թերևս բառակազմական), բարե-

Ֆրնչյունական ֆունկցիա: Այդ աղբյուրն է ոչ միայն փոխանուն սեռականներում, այլև փոխանվանական ուրիշ դեպքերում:

Որ իսկապես նը (նն) կապակցության մեջ ն-ն, հոգի իմաստի հետ, ունի հիմնականում վերը նշված արժեքը, երևում է հետևյալից. ա) նրա ֆունկցիան որոշ դեպքերում կատարում է ոչ թե ն հոգը, այլ գրաբարյան հոգնակիի և վերջավորությունը. այն է՝ երկու թվականի փոխանունը կլինի երկուսը, որտեղ ա-ն գրաբարի երկուք թվականի հայցականի և վերջավորությունն է՝ (զ)երկուս, կամ, օրինակ, քանի դերանվան քանիսը փոխանունի ա-ն նույնպես գրաբարի նույն բառի հոգնակի հայցականի և վերջավորությունն է՝ (զ)քանիս: Բացի այդ՝ երբ դրանք հոլովվում են, ա-ն մնում է բոլոր հոլովներում¹, բ) ն հնչյուն-մասնիկը ավելանում է նաև այն դեպքում, երբ փոխանվան նշանակությամբ ոչ թե որոշիչ հոգն է հանդես գալիս, այլ և, դ ստացականները (ձեռքինս, ձեռքինըդ) կամ ցուցականները:

Սթե սեռականը վերջանում է բաղաձայնով, ապա նա որպես փոխանուն-սեռական հանդես գալ չի կարող, որովհետև ձևականորեն նույնանալով տվյալ բառի որոշյալ տրականին, կորցնում է փոխանվանական արժեքը: Սրանցից բացառություն կարող են կազմել այն բառերը, որոնց որոշյալ տրականը ձևականորեն տարբերվում է փոխանուն սեռականից, այսինքն՝ երբ սեռականը որոշիչ հոգն ստանալով ձևականորեն չի նույնանում նույն բառի որոշյալ տրականի հետ: Օրինակ, ես² դերանունը սեռականում լինում է իմ, տրակա-

¹ երկու և մի թվականները բառ-անվանական նշանակությամբ փոխանուն լինելիս ընդունում են ն (երկուն, մին), երբեմն նաև սը (սն,՝ երկուսը և նը (նն)՝ մինը:

² Նաև՝ ով դերանունը (ուս, ումը, «Այ ջան տղա, չորան տղա, ո՞ւմն ես դու»): Ոչ փոխանուն սեռականի նշանակությամբ ով դերանվան հոլովված ձևերի հոգ ստանալը բնորոշ չէ ժամանակակից գրական հայերենին, ուստի ումն (ումը) ձևի գործածությամբ ընդունելի չէ (Ն. Զարյանի «Հացավան» վեպում հանդիպում ենք՝ «Ո՞ւմը կարելի է բողոքել» — էջ 330, «Ես ո՞ւմն եմ խոսք ավել ու դավաճանել» — էջ 338 և նման ձևեր, որ ընդունելի չեն):

նում՝ ինձ: Իմ սեռականը, ստանալով որոշիչ հոդ, կարող է հանդես գալ որպես փոխանուն սեռական: Բայց, օրինակ, կնոջ, արյան, տան, շան, հաղթության սեռականները, ստանալով որոշիչ հոդ, դառնում են ոչ թե փոխանուն սեռականներ, այլ՝ նույն բառերի որոշյալ տրականները՝ կնոջը, արյանը, տանը, շանը, հաղթությանը, նույն ձևով էլ բաղաձայնով վերջացող մնացած սեռականները¹:

Ի միջև այլոց, փոխանուն սեռականի հոգնակիությունը կապված է ոչ թե «զեղչված» անդամ հանդիսացող անվան հոգնակիության հետ, այլ որոշիչ հոգը կրող սեռականի (հատկացուցչի) հոգնակիության հետ: Բերենք օրինակներ.

ա) Ուսուցչի տունը—ուսուցչիներ (եզակի սեռական-հատկացուցչիչը եզակի գոյական-հատկացյալի հետ):

բ) Ուսուցիչների տունը—ուսուցիչներիներ (հոգնակի սեռական-հատկացուցչիչը եզակի գոյական-հատկացյալով):

գ) Ուսուցչի գրքերը—ուսուցչիներ (եզակի սեռական-հատկացուցչիչը հոգնակի գոյական-հատկացյալով):

դ) Ուսուցիչների գրքերը—ուսուցիչներիներ (հոգնակի սեռական-հատկացուցչիչը հոգնակի գոյական-հատկացյալով)²:

Փոխանուն սեռականներից ոչ բոլորն են մինչև վերջ հոլովվում, եթե չհաշվենք 1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանունների փոխանուն սեռականները (եզակի և հոգնակի), որոնք հիմնականում ունեն բոլոր հոլովները, ընդ որում որոշիչ հոդը հանդես է գալիս ուղղական, տրական, հայցական հոլովներում (իմը, իմի, իմին և այլն):

Ձևական խոսքի մասերը (կապ, շաղկապ, ձայնարկություն) կարող են լինել բուն փոխանուն, եթե նրանց մեջ դրսևորվի առարկայական իմաստ: Ճիշտ է, նրանք բոլորն էլ կարող են բառ-անվանական նշանակությունից որոշիչ հոդը

¹ Դարբազի բարբառում նման դեպքերում սեռականը նորից հոլովվում է փոխանուն սեռական դառնալու համար: Կնեզ (կին)—կընգան(ը)—կնգանէն(ը), տուն (տուն)—տան(ը)—տանէնը և այլն, ուր կընգան(ը), տան(ը) ձևերը սեռականներ են, իսկ կնգանէնը, տանէնը ձևվերը փոխանուն սեռականներ:

² Այս ձևերը կարելի է անվանել փոխանուն հատկացյալներ:

ստանալ, բայց միայն անխսկական կապերը և կապական մի քանի բառեր կարող են բուն փոխանվանական նշանակութեամբ ստանալ որոշյալի հոգը:

Հետ, չափ, պես, դեմ, մոտ, վեր, տակ, վրա կապերը հաճախ գործածվում են ստացական կամ ցուցական հոգերի հետ և ցույց են տալիս 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերին մոտ լինելու գաղափար, կամ 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերի նկատմամբ եղած որևէ այլ հարաբերություն: Ա, դ հոգերը կարող են միայն կապվել 1-ին, 2-րդ դեմքի հետ: Բայց այդպես չէ ն(ը) հոգը. նա կարող է կապվել և 3-րդ դեմքի հետ, և նրա հետ կապված, նրա (3-րդ դեմքի) ու մի այլ առարկայի հարաբերության հետ: Եթե հետս նշանակում է «ինձ հետ», հետդ «քեզ հետ», ապա հետն (կամ հետը) չի նշանակում միայն «նրա հետ». այն կարող է նշանակել նաև 3-րդ դեմքի հետ կապված որևէ գործողության, երևույթի մոտ լինելու գաղափար: Ասենք, մեկը սանրում է մազերը և միաժամանակ երգում է.

«Մի օր մենակ օգում նստած,
Իր ճոխ մազերն արձակ թափած,
Ազատ, անփութ սանրում, հյուսում,
Հետն էլ ձենով երգ էր ասում»:
(Թում., Ընտ. երկ., 98):

Անխսկական կապերը (և կապական բառերը) կարող են խոսքի մասալին փոխանցման օրինաչափությամբ ստանալ առարկայական իմաստ և ինքնուրույն, անկախ գործածություն: Երբեմն առանց որոշիչ հոգի նրանք հարադիր կապակցությունների մեջ են մտնում:

Մոտ — մոտ լինել մի բանի, կամ՝ «Դու մոտ ես նրան»: Վերջին արտահայտության մեջ նրան կապի խնդիր չէ և ոչ էլ մոտ կապ է: Եթե մոտ կապ լիներ, ապա նրան կունենար իր սեռականի հոլովածներ՝ նրա (այսպես՝ «Ես նրա մոտ եմ եղել»): Հաճախ ասում ենք նաև՝ «Ես նրա հետ մոտ եմ»: Մինչդեռ այլ է, երբ ասում ենք. «Աշոտը կոմերիտական տոմսը միշտ մոտն է պահում» և այլն:

Նման — ինձ նման, քեզ նման, նրա նման, ջրի նման, քայց՝ «Նմանը չկա», «Նմանը ոչ մի տեղ չես գտնի» և այլն:

Փոխարեն — իմ փոխարեն, քո փոխարեն, բայց՝ «Փոխարենը ոչինչ չտվեց», կամ «Փոխարենը գիրք եմ բերել» և այլն:

Տեղ — «փոխարեն» իմաստով հիմնականում կապ է՝ «Իմ տեղ(ը) գնա» (իմ փոխարեն), բայց «Իմ տեղը բավականին հեռու է», ուր տեղը գոյական է. իսկ՝ «Նա գնաց, տեղը ուրիշ մարդ եկավ»՝ արդեն այն է, ինչ փոխարենը:

Հափառակ — «Նա գործում է որոշման հակառակ», բայց «Հափառակը բոլորովին այլ բան է» և այլն:

Պես — փոխանուն կարող է լինել հոգնակի թվով (մեծ մասամբ). օրինակ՝ քեզ պեսները (գուցե և քեզպեսները ձևով):

Այսպես նաև մի շարք այլ անխսկական կապեր ու կապական բառեր ստանում են որոշիչ հոդ, վերածվում փոխանունների:

Շաղկապները, բացի բառ-անվանական նշանակութամբ դեպքերից, որպես բուն փոխանուն հանդես չեն գալիս: Այս տեսակետից ձայնարկությունները հազվադեպ են կիրառվում «Ախն ու վիշը անցնում էր բերնից բերան»:

Վերոբերյալներով, իհարկե, չեն սպառվում որոշիչ հոդի բոլոր կիրառությունները փոխանվանական օրինաչափություններում. այն ունի համահարաբերակից դրսևորումներ փոխանվանական այլ ձևերում:

Գ. ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇՅԱԼԻ ՈՒ ԱՆՈՐՈՇԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենում որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիան տարածվում է ոչ բոլոր շարահյուսական երևույթների վրա: Հայերենում կոչականը չունի ինքնուրույն հոլովածի և խոսքի մեջ հանդես է գալիս ուրույն քերականական ֆունկցիայով, մի այնպիսի ֆունկցիա, որը դրսևորվում է անկախ որոշյալի ու անորոշի քերականական իմաստներից.

և իսկապես հայերենում կոչականը չի ստանում որոշիչ հոդ. «Քեզ ասեմ, ալի քաջ Արտաշէս» (ԺԲ), «Գիտես, ով թագավոր» (Փ, ՊՀ, 173). «Իսկ իշխանն Անգեղ տան ձայն տուհալ ասէր. իշխան Սիւնեաց» (Զ, Պ, 26), «Երջանիկ աւաքաբապետ, մի տրտմիր վասն նոցա» (ՅՄ, Պ, 20), «Եւ արդ, որդեակ, դիր զայս ի մօտի քում» (ն. տ., 21), «Եղբար, լըսէ դու հետ այսօր» (ՂԵ, ՀՆԹՎ, 63), «Վարդ բլբուլին տասց, թռչուն դովելի» (ՄՄ, ԸՆ, 61), «Ով եղբար, ես զինչ պարտ էի քեզ» (ն. տ., 325), «—Էհ, տիկին, ըսավ նավաստին» (ԱԱ, ԸԵ, 14):—Վե՛ր կաց, բաճաւտե՛ղծ, կանչում է այսպես...» (Թ, ԸԵ, 211):

Գրաբարում երբ որոշիչը հտադաս է, նրա լրացյալին է անցնում հոդը.

«Նազալ իջանէ ի դաշտն մեծ... ուր գետն մեծ ի ծովակէն հիւսիսոյ սկիզբն առեալ՝ իջանէ և խառնի ի մօրն մեծ» (ՄԽ, ՊՀ, 102), «զնիզակն իւր գրոյրորատէզ» (ն. տ., 112), «Բանալ նմա զդիւանն արքունի» (ն. տ., 32), «Երկնէր և ծովն ծիրանի» (ԺԲ), «զտեառնն զխաչական» (Փ, ՊՀ, 11):

Որոշիչը եթե նախադաս է, շատ քիչ դեպքերում է վերցնում իր լրացյալի հոդը.

«Եւ ինքն բովանդակ ունի լինքեան զամենագէտ գիտութիւնն» (Եզն., ԵԱ, 7), «զանպակաս իմաստութիւնն» (ն. տ.) «յամենահնար իմաստութեանն» (ն. տ.), «ի բարերար արարչէն» (ն. տ., 8), «Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն» (ԺԲ), «կնճթակերպ երեսօքն» (Ագ., ՊՀ, 372), «Մեծ արքեպիսկոպոսն» (Փ, ՊՀ, 112), «և արձակէր զնոսս յաներևութ կապանացն և յանհնարին կծկութենէն տանջանացն» (ն. տ., 14), բայց՝ «արդարն դատաւոր, լուսականն ձեռն, չորն ձաղկ դալարացեալ տերեւէր, զհինգն ևս փեղկ, զմեծն պարգև, զմտերիմն հատուցուք ծառայութիւն (օրինակները տե՛ս՝ ԱԲ, Բ, 381), «Զհոգեւորն պատարագ» (տե՛ս՝ Զ, Բ, 324), «և մեծն աստուածասէր պաշտօն ի հաճոյակատարն բարութիւն» (Փ, ՊՀ, 11), «Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ» (ԺԲ), «առ ի զխաւարն և զստուերն զերկուց մեծացն

անօթոց» (Եզն., ԵԱ, 11), «զօգտակարն իրատ» (Փ, ՊՀ, 63): Այնուամենայնիվ բնորոշն առաջինն է:

Եթե որոշիչը դասական թվական է, ապա նրա լրացյալը սովորաբար ստանում է որոշիչ հոդ. «Քանզի լեալ մարդն առաջին» (Եզն., ԵԱ, 31):

Երբ որոշիչի լրացյալը հատուկ անուն է, հոդն անցնում որոշիչին՝ նախադաս թե ետադաս, միեւնույն է, հազվադեպ է անցնում հատուկ անուն լրացյալին.

«Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս» (ԺԲ), «Իբրև զսէզն Տրդատ» (ԺԲ), «յԱզատն ի վեր ի Մասիս» (ԺԲ), «մեծին Ներսէսի» (Փ, ՊՀ, 187), «քաջն Վարդան» (Եղ., Պ, 108), «սուրբն Ներսէս» (Փ, ՊՀ, 245), «տեսեալ զպարկեշտագեղն Հռիփսիմէ» (Ագ., ՊՀ, 78), «իսկ երանելին պարկեշտասէրն Գալիանէ» (Ն. տ., 79):

Նաև՝ «անկաւ Բաբելոն մեծն. ուր էր Ղազար մեռեալն. Դավիթ մեծն. Զոր երգէր Դաւիթ հրաշալիքն» (օրինակները տես՝ ԱԲ, Բ, 382—3), «Գրիգորի մեծին» (Փ, ՊՀ, 105): Բայց նաև «Արայն գեղեցիկ» (Խ, ՊՀ, 66):

Երբ որոշիչը իր լրացյալից անջատված է նախադասության ալլ անդամներով կամ բառերով, ապա սովորաբար հոդով է, այս նույնն է, և հոդով որոշիչը կարող է «անջատվել» իր լրացյալից. միջնորդավորվել նախադասության ալլ անդամներով ու բառերով. «Յետ մահուանն Երուանդայ մըտեալ Սմբատայ զարքունականսն լուզէր զգանձան» (ՄԽ, ՊՀ, 170), «Յորոց մի էր և յապետութեանն Հայկ, անուանի և քաջ նախարարն, կորովածիգ և հաստաղեղն» (Ն. տ., 34):

Գրաբարում որպես որոշիչ հանդես եկող մի շարք դերանուններ (իմն, ինչ, ոմն և ալլն)¹ իրենց իմաստային բնույթի պատճառով բացառում են որոշյալի քերականական իմաստը. «որ չար իմն էութիւն հակառակ բարւոյ դնեն» (Եզն., ԵԱ, 8), «բայց ի նախարարէ ումմմէ» (ՄԽ, ՊՀ, 215), «ալլ ոմն» (Ն. տ., 219), «Եւ կանեփուկն թուփ ինչ է» (Եզն.):

¹ Այս դերանունները կարող են կատարել նաև նախադասության ալլ անդամի պաշտոն:

Գրաբարում ստացական, ցուցական դերանունների հետ բառը միշտ չէ, որ որոշիչ հոգ է ստանում. «զմոյն առաջնորդութիւնն նորոգեա մեզ» (Փ, ՊՀ, 108) և «նոյն այր ասէ» (ՄԽ, ՊՀ, 213), «զգեմն իւր» (Ն. տ., 218) և «կնաւ իւրով» (Ն. տ., 219), նուէնպես և՛ հատուկ անունների դեպքում. «եզայս Դրաստամատն ներքինի» (Փ, ՊՀ, 309), «ե այս Դրաստամատ էր յայնմ ճակատու» (Ն. տ.), «Այս, ասէ, Հայկ....» (ՄԽ, ՊՀ, 35):

Գրաբարում հաակացուցիչը, որ սովորաբար գրված է լինում սեռական հոլովով, որոշյալ լինելիս ստանում է ն հոգը. «Եւ առ ստորոտով մի գեղեցկանիստ լերինն...» (ՄԽ, ՊՀ, 349), նուէնպես հոգով են փոխանուն-հատկացուցիչները. «Իսկ աշակերտք երանելեացն ի կապանս կային» (Եղ., Պ, 164), «Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին» (Ն. տ., 179):

Հատկացուցիչը եթե հատուկ անուն է, ապա հատկացյալը միշտ որոշյալ է. «ի փեսայութեանն Արտաշիսի¹ (ԺԲ), «Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակա ամբարքն չեն» (ԺԲ), «բայց զԱփրդդիտայ զպատկերն» (ՄԽ, ՊՀ, 121): «Ի Ղուկայ աւետարանին» (Ն. տ., 137), «ի ձեռն Վարդանայ զօրաւարին Հայոց» (Եղ., Պ, 69), «Վասն զի ի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիթն» (Փ, ՊՀ, 189), «տրփանացն Տիրիթայ» (Ն. տ., 188), «Ի պարանոցն Արշակայ» (Ն. տ., 255), «Եւ յառաջագոյն ժանուցեալ զազնուականութիւնն Կիւրոսի պարսկի» (Եզն., ԵԱ, 115), «Թէ կայցէ արեգակն հանդէպ ձորոյն Գաբաւունի, և լուսին դէպ դաշտին Էլոնայ» (Ն.տ., 131)²:

¹ «Ի հարսնութեան Սաթինկանն» արտահայտության մեջ ն հոգը հավանաբար տաղաչափության պահանջով է անցել. հատուկ անուն հատկացուցչին բնորոշ է՝ «Ի հարսնութեանն Սաթինկան» ձևը:

² Բոլորովին այլ բնույթ ունեն հետևյալ արտահայտությունները. «էր նա կին Գարեգնի տեանն Ռշտունեաց գաւառին» (Փ, ՊՀ, 270), «որ էր յառջ կին Փերուրի եղբոր իւրոյ» (ՄԽ, ՊՀ, 138), «սակայն էր ընկեր Պետրոսի» (Ն. տ., 183): Այստեղ «կին» և «ընկեր» բառերը հատկացյալներ չեն: Այնուամենայնիվ կան հատուկ անվան հատկացյալներ առանց հոգի: «Քանզի մեռաւ հայր Սաթինկան» (ՄԽ, ՊՀ, 178):

Երբ հատուկ անվան հատկացյալը միաժամանակ մի այլ հատուկ անվան բացահայտիչ է, կարող է դրվել առանց հոդի. «քոյր Վարդանայ, Համազասպունի» (Փ, ՊՀ, 270), «Դաւթայ որդի Սողոմոն» (Եզն., ԵԱ, 111), «զՎաչէ որդի Արտաւազդայ» (Փ, ՊՀ, 15):

Երբ հատկացուցիչը ցեղի, ժողովրդի անուն է, կամ նախարարական տան, ինչպես և ընդհանրապես ցեղայնության պատկանելությունը նշող անուն է, ապա հատկացյալը որոշիչ հոդով է.

«Զայն իբրև լուան զօրքն Հայոց» (Եղ., Պ, 97), «սեպուն մի յազգէն Ամատունեաց» (ն. տ., 5), «որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց» (ԺԲ). «ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց» (ԺԲ), «ի տաճարին վիշապաց» (ԺԲ). «ի Տունաց գաւառէն» (ԺԲ), «Յազգէն Մամիկոնէից» (Եղ., Պ, 109), «ընդդէմ Հայոց զօրաւարին» (ն. տ., 106), «գիութայ երթալ հասանել լերկիրն հայոց» (ՄԽ, ՊՀ, 53), «ի գաւառին Սիւնեաց» (ն. տ., 114) «Եւ առաւել Յունաց իմաստունքն դարովին» (Եզն., ԵԱ, 141), «Այս ամենայն վասն Մարկիոնաց աղանդին ասացաւ» (ն. տ., 200). «Յայնմ ժամանակի եկեալ գտանէին ի քաղաքին Հոռմալեցուց» (Ագ, ՊՀ, 77): «Իշխանն Մանաւազեան տոհմին, և միւս ևս նահապետն Որդունուց տոհմին» (Փ, ՊՀ, 15): Բայց՝ «նախարարք Հայոց» (ՄԽ, ՊՀ, 213), «իմաստութիւն Յունաց» (Ագ., ՊՀ, 73):

Երբ հատկացյալն այնպիսի իրի կամ անձի անուն է, որը մտքով հասկացվում է իբրև 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերի անունների նկատմամբ պատկանելության հարաբերության մեջ գտնվող, ապա այդպիսի հատկացյալը գերազանցապես հոդով է, ընդ որում 3-րդ դեմքի հարաբերությամբ վերցնելիս որոշիչի և հոդն ունի զգալի ստացական երանգ (որոշ դեպքերում նաև՝ ցուցական կամ դիմորոշ երանգ). «քանզի թագաւորն գատեալ էր կերպարանօքն» (Ագ., ՊՀ, 372). «Եղև քահանայապետ յաթոռն հօրն...» (Փ, ՊՀ, 11). «Սա երթեալ կատարէր անդ, ըստ հանապազ սովորութեանն» (ն. տ.):

Հատկացական կապակցություններին բնորոշ է հետեւյալը. հատկացուցչի որոշյալ կամ անորոշ լինելը կախված է

հատկացյալի որոշյալ կամ անորոշ լինելուց և ընդհակառակը: Միայն որոշյալ հատկացյալը կարող է ունենալ, նայած պահանջին, որոշյալ կամ անորոշ հատկացուցիչ, իսկ անորոշ հատկացյալը չի կարող ունենալ որոշյալ հատկացուցիչ, ինչպես և որոշյալ հատկացուցիչը կարող է ունենալ միայն որոշյալ հատկացյալ: սա չի վերաբերում այն հատկացուցիչներին կամ հատկացյալներին, որոնք սովորաբար անորոշ են լինում, ինչպես և այն դեպքերին, երբ որոշյալ հատկացյալի հոգը կրում է նրա հատկացուցիչը, և կամ՝ հատկացյալը հոգ է ստացել որևէ հարաբերական բառի պահանջով: Այս են հաստատում հատկացական կապակցութիւնների մեր բերած բոլոր օրինակները:

Գրաբարում գոյական վերադիրը, երբ որոշյալ է, ստանում է և հոգը, մեծ մասամբ նախադաս լինելու դեպքում. «Բակ թագաւորն հայոց Տիգրան» (Խ. ՊՀ, 124), «արքայն Արտաշէս» (ԺԲ), «գիւր որդին Որմիզդ» (Եզն., ԵԱ, 89), «հայրն Զրուան» (Ն. տ.), «առ մեծան քահանայապետան Գրիգորիւ» (Փ, ՊՀ, 11), «արքային Տրդատայ» (Ն. տ., 9), «երէց որդին Գրիգորի Վրթանէս» (Ն. տ., 11) «Ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային հայոց» (Ն.տ. 24), «մեծի աշխարհին Հայաստան երկրին» (Ն. տ.):

Այս վերադիրները ետադաս լինելու դեպքում սովորաբար առանց որոշիչ հոգի են. «գժասաղ գետով», «Երուանդայ արքայի» «Սաթինիկ տիկին» (ԺԲ), «որպէս զՏիգրան որդի իւր» (Խ, 114), «որ էր լառաջ կին Փերուրի՝ եղբօր իւրով» (Ն. տ., 138), «Թագաւորէ ի վերայ Պարսից Արտաշէս որդի նորա» (Ն. տ., 139), «և սրբոյն Արիստակայ որդւոյ նորա» (Փ, ՊՀ, 10), «Ապա լետ այսորիկ թագաւորեաց Խոսրով Կոտակ, Թոռն Խոսրովու, որդի քաջի և առաքինւոյն Տրդատայ արքայի» (Ն. տ., 11), «Ի Վաղարշապատ քաղաքի» (Ն. տ., 26):

Հատուկ անվան այս վերադիրները հոգ ստանում են առանձնահատուկ դեպքերում. այն է՝ որևէ հարաբերականի պահանջով (մանավանդ երբ շեշտն ընկած է բացահայտյալի վրա), կամ այն դեպքում, երբ ունեն այնպիսի հատկացուցիչ, որը անպալման պահանջում է որոշյալ հատկացյալ, բացի

հատուկ անուն հատկացուցիչներից, ինչպես և այն դեպքերում, երբ հենց նոր են հիշատակված. կան նաև բացառություններ այս կանոնից.

«Եւ որ միանգամ ընդ Ազատ գետովն էին» (ՄԽ, Պ, 132), «Ընդդէմ նորա գայ Գաբիանոս սպարապետն հռովմայեցոց» (Ն. տ., 124). «Առաջնոյն Գրիգորի՝ հօրն գործուցն նմանեալ» (Փ, ՊՀ, 17). «Բայց լիտ ալսորիկ ոչ դադարէին պարսք ի տալ պատերազմ ընդ Սոսրովու արքային» (Ն. տ., 31). «Բայց վստահ լինէր ի ծերունին Վաչէ, ի բուն սպարապետն ի զօրաւարն հայոց մեծաց» (Ն. տ., 31—32):

Սակայն կան դեպքեր, որոնք չեն մտնում այս կանոնի տակ, և հանդես են գալիս որպէս ոչ օրինաչափ կիրառություններ. «զԳրիւսոս թագաւոր լիւդացոց» (ՄԽ, ՊՀ, 115), «Արտաւազդայ... քաջի որդւոյն Արտաշիսի» (ԺԲ), «Սանատրկոյ արքային» (Փ, ՊՀ, 9), «Ի ձեռն Գրիգորի՝ որդւոյն Անակայ» (Ն.տ. 10):

Մասնական բացահայտիչը առանց հոդի է. «Լուսաւորէր և առաջնորդէր նոցա սուրբն Վրթանէս իբրև զՀայր իբրև զԵղբայր իւր» (Փ, ՊՀ, 11), «և քարկոծ առնէին զնա քամաբք իբրև զայր, որ...» (Ն. տ., 31):

Գրաբարում նախադասութեան բազմակի անդամներից հաճախ միայն մեկն է ընդունում հոդը.

«Յրեզակն ժագելովն և վերանալով և ի մուտս դառնալով»: (Եզն., ԵԱ, 9). «պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք և բարձրակալ կատարման հաւատովքն՝ մերձաւորաց և հեռաւորաց զհոգևոր եռանդն ածէր» (Փ, Պ, 21—22): Բայց նաև՝ «շարժելովն և զադարելովն» (Եզն., ԵԱ, 9): Սովորաբար հոդ չի դրվում թվարկվող բնույթի կրկնություններում:

Երբեմն որոշիչ հոդը ավելադրութեամբ կրկնվում է.

«Ազգացն առաջնոցն. հաւատասցեն բանիցն ասացելոցն. զաւազանսն մեծամեծսն. որպէս և ուսոյց զմեզ մեծն Զրադաշտն» (օրինակները տե՛ս ԱԲ, Բ, 384—385), «զփրկութեանն զպատարազն» (Փ, ՊՀ, 11). «Եթէ ում պարտ իցէ զհայրապետութեանն զկաթողիկոսութիւնն ունել» (Ն. տ., 70):

Երբ առանձնապես շեշտվում են նախադասության բաղմակի անդամները, լուրաքանչյուր անգամ առանձին հոդ է ստանում «Եւ նա զնէր օրէնս, զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն, որ էին բիւրաւորքն և հազարաւորքն» (Փ. ՊՀ, 31), «Վաղվաղակի լունկն զօրաւարին պարսից հասանէին ի բերանոյ շորիկն շոգմոգն տիրանենկն և տիրազրուծն տիրասպանն տիրամատնիչն Փիսակալ» (Ն. տ., 80). «Սոյնպէս և զամենայն ազգսն զօրացն մեծամեծացն նահապետացն» (Ն. տ., 103):

7—12-րդ դարերում բնութագրող (որոշիչ-որոշյալ), հատկացական (հատկացուցիչ-հատկացյալ) և բացահայտչական (բացահայտիչ-բացահայտյալ) կապակցութիւններում հոդաւորութիւնը, ենթարկվելով որոշ փոփոխութիւն, պահպանում է իր հիմնական օրինաչափութիւնը: Եթե վաղ շրջանի գրաբարում հարաբերյալը սովորաբար չէր արտահայտվում և հարաբերականը հաշորդ բառի վրա հոդ զնեւու պահանջ էր առաջ բերում, ապա 7-րդ դ. սկսած մենք նկատում ենք այդ օրինաչափութիւն խախտում, որով կամաց-կամաց հարաբերականի պահանջած հոդաւորութիւնը վերանում է. արդեն իսկ արտահայտվող հարաբերյալը վերցվում է հոդակիր բառով, «այն զօրքն, որք...» (ՅՄ, Պ, 21) «այն զլուխն է, որ...» (Ն. տ., 26):

Այս երևույթը հետագայում լայն ծավալում է ստանում աշխարհաբարում:

Վաղ շրջանի (5-րդ դ.) գրաբարյան օրինաչափութիւններով է գրսեւորվում հոդաւորութիւնը հետևյալ կապակցութիւններում, որոշիչ-որոշյալ՝

«զերկրորդ պատերազմն» (Զ, Պ, 16), «չորրորդ ամին» (ՅՄ, Պ, 7) «երկոքեան¹ ամուլքն» (Զ, Պ, 7), «զերկոսին

¹ Երկոքին (երկոքեան) և ընդհանրապես անձներական թվականները դասականների նման գրաբարում պահանջում են որոշիչ հոդով լրացյալ:

տաճարսն» (ՅՄ, Գ, 26), «գլխավարապետն մեծ» (Ս, Գ, 33), «սրբոյն Գրիգորի» (Զ, Գ, 14):

Հատկացուցիչ-հատկացյալ.

«Եւ ի նոյն աւուրն վախճանեցաւ Երուսաղէմի հայրապետն» (Զ, Գ, 14), «մանկանն Գրիգորի» (ն. տ., 21), «Եւ ետ իշխանին Տարօնոյ» (ՅՄ, 12), «Եւ զօրացաւ արքայն Հայոց» (Զ, Գ, 20), «տանն Մամիկոնեանից» (ՅՄ, 43), «իսկ զօրքն Յունաց տրտմեցան սաստիկ», (ն. տ., 14). «յարքայէն Պարսից» (Ս, Գ, 27), «զգաւրն Պարսից» (ն. տ.), «Թագաւորին Հոռոմոց» (Զ, Գ, 3), «յազգէն Ռշտունեաց» (ն. տ., 7), «ի զօրացն Պարսից» (ԹԱ, Գ, 80), «սուրբ գունդն Հայոց» (ն. տ., 80), «զօրքն հոռոմոց» (ԱԼ, Գ, 13), «մտերիմքն նորա» (ՅՄ, Գ, 21). Նաե՛ւ «հաււր սորա» (Ս, Գ, 33), «որդի նորա» (Դ, Գ, 3):

Բացահայտչական բնույթի կապակցութիւնների համար բնորոշն այն է, որ եթե 5-րդ դարի գրաբարում ետադաս վերադիր գոյականը բացառիկ դեպքերում է հոդ ստանում, ապա 7-րդ դ. սկսած արդեն նկատվում է դրանց ազատ գործածութիւնը հոդով և առանց հոդի:

«Եւ կոչեցին ընդ նմա և զԱքիկոս սարկաւազն» (Զ, Գ, 14), «ի Պատմոս կղզոցն» (ն. տ., 23), «ի Մուշեղայ իշխանէն» (ՅՄ, Գ, 20), «Օձ քաղաքին» (ն. տ., 22), «զՏիգրան զօրապետն» (ն. տ., 43), նաե՛ւ «Ի Վաղարշապատ քաղաքէ» (Զ, Գ, 23):

Ինչպես վաղ շրջանի գրաբարում, այնպես էլ այստեղ՝ բնութագրական կապակցութիւնը եթե դրված է իբրեւ կոչական, ապա հատուկ անվան նախադաս գոյական վերադիրը հոդ չի ստանում՝ «որդեալ Վահան, դու գիտես...» (ՅՄ, Գ, 20):

Միջին հայերենում բնութագրող (որոշիչ-որոշյալ), հատկացական (հատկացուցիչ-հատկացյալ), բացահայտչական (բացահայտիչ-բացահայտյալ) կապակցութիւններում նկատվում են հոդի ինչպես գրաբարածէ գործածութեան դեպքեր, այնպես էլ այնպիսի դեպքեր, որոնք բնորոշ են միջին հայերենին և ստեղծվել են հետագայում: Օրինակ, գրաբարում 1-ին, 2-րդ դեմքի ստացական դերանունների հետ դրված

բառերը և հոգը չեն ստանում, բացի այն դեպքերից, երբ առարկան, որի անունը կրում է հոգը, ժամանակով և տարածությամբ հեռու է 1-ին, 2-րդ դեմքերից: Միջին հայերենում, եթե նույնիսկ հոգակիր բառի ցույց տված առարկան չի գտնվում ժամանակով և տարածությամբ հեռու՝ 1-ին, 2-րդ դեմքերից, բառը կարող է ստանալ և հոգը, սա ավելի հաճախակի է դառնում աշխարհաբարի վաղ արտահայտություններում և ծավալվում է ու օրինաչափ կիրառություն ստանում աշխարհաբարում: «Զքո զխրատն դու լսէ» (ՄՄ, ԸՆ, 67): «Զեր հրամանքն» (ն. տ., 322), «քոյ տղին... իմ տղին... քո կնոջն» (ն. տ., 323), «մեր ապրանքն», «մեր մարդն»:

Միջին հայերենում ևս անձնական, ցուցական դերանունների հետ բառը միշտ չէ որ հոգով է. այսինքն՝ կարող է լինել և՛ հոգով, և՛ առանց հոգի, ի տարբերություն աշխարհաբարի, ուր այդ դերանունների հետ սովորաբար բառը լինում է որոշիչ հոգով: «Եւ կախեաց զմայր նորա» (ՄՄ, ԸՆ, 321), «զձայն սորայ» (ն. տ., 322), բայց՝ «զնորախօսքն» (ԱԱ, ՕԲ, 18), «զիր ճորտերն», «զմեր սալահը», «զիր ապրանքն» (սրանք տես՝ Աճ, ՀԼՊ, II, 441):

Արևմտահայ գրական լեզվում որոշիչ հոգը բնութագրող (որոշիչ-որոշյալ), հատկացական (հատկացուցիչ-հատկացյալ), բացահայտչական կապակցություններում ունի լուրահատուկ դրսևորումներ:

Երբ լրացումը անձնական, ցուցական, ստացական դերանուն է, ապա լրացյալը (հատկացյալը կամ որոշյալը) գերազանցապես հոգով է.

«այս ժամանակամիջոցը» (ԱԱ, ԸԵ, 13), «այն երիտասարդն» (ն. տ., 18), «այն երիտասարդին հետ» (ԳԶ, Ն, 15), «նույն օրն» (Պ, ՄՄ, 3), «նույն գիշերը» (ն. տ., 66), «այն ցավերն» (ն. տ.), «աս մարգը» (ն. տ., 67), «իրենց երեսները» (ԱԱ, ԸԵ, 13), «իր հովանավորությունը» (ն. տ.), «լուր վախճանն» (ն. տ., 14), «անոնց ետեկն» (ն. տ., 16), «իրենց որդիքն» (ն. տ., 17), «իր Մեկքոնը» (ն. տ., 253), «իր ապիկարությունը» (ԳԶ, Ն, 15):

Կան նաև այլ ղերանուններ, ածականներ, թվականներ, որոնց հետ գոյականը միշտ հոգով է՝ բնութագրական (որոշ շիջ-որոշյալ) կապակցության մեջ:

«Մյուս եղբորը վրա» (ԱԱ, 18), «մյուս օրն» (ն. տ., 47), «մյուս պարողները», (ԳՁ, Ն, 15), «հետևյալ օրն» (Պ, ՄՄ, 66), «չորրորդ օրը» (ԱԱ, ԸԵ, 46):

Երբ հատուկ անունը հատկացուցիչ է, ապա նրա հատկացյալը սովորաբար հոգով է.

«Սաթենիկի երեսն» (ԱԱ, ԸԵ, 15), «Արամին աչքն» (ն. տ., 16), «Ֆեոեի վեպերը» (ն. տ., 18), «Սաթենիկի ծնողքը» (ն. տ., 17), «Բերայի ժխորին» (ն. տ., 18), «Զոպանյանի սենյակը» (Օտ., ԵԺ, 31), «Դավթի զինվորները» (ն. տ., 51), «տիրացու Մարտիրոսին աղջիկն» (Պ, ՄՄ, 25):

Երբ հատկացուցիչը հոգով է, ապա հատկացյալը կարող է միայն հոգով լինել, իսկ երբ հատկացուցիչը հոգ չի կրում՝ հատկացյալը կարող է լինել հոգով (որոշյալ) և առանց հոգի (անորոշ): Կարելի է ասել՝ «թռչունին բուլնը», «թռչունին բուլնը», «թռչունի բուլն», բայց ոչ՝ «թռչունին բուլն»:

Հատուկ անվան գոյական վերադիրը ունի հոգով լրացյալ, իսկ ընդհանրապես որոշյալ բացահայտյալը ունի որոշյալ բացահայտիչ:

«Ղուկաս աղան» (ԱԱ, ԸԵ, 292), «Վարդենի տուտուն» (ն. տ., 296), «Թորոս աղբարը» (ն. տ., 253), «Գասպար էֆենտին» (ն. տ., 255): «Գաբրիել հրեշտակապետը» (Պ, ՄՄ, 67), «Նախկին կինը, տիկին Սաթենիկը» (ԱԱ, ԸԵ, 33), «Իր վաճառականին, այդ պատվավոր մարդուն» (ԳՁ, Ն, 7), «և եղբորը նշանածը, Պերճուհին, չի բարեկեր զինքը» (ԳՁ, Ն, 19), «վարժապետին կնիկը, Զարուկը» (ն. տ., 47):

Արևմտահայ գրական լեզվի վերաբերյալ մեր նշած կանոնները ունեն բացառություններ, ինչպես և կան այլ մասնակի օրինաչափություններ, որոնք մի կողմ ենք թողնում:

Ժամանակակից հայերենում որոշիչ հոգը ունի յուրահատուկ արտահայտություններ բնութագրող (որոշիչ-որոշյալ), հատկացական (հատկացուցիչ-հատկացյալ), բացահայտ-

չական (բացահայտիչ-բացահայտյալ) կապակցութիւնների, ինչպես և ենթակաների, պարագաների, ինդիքների շարահյուսական բնույթով պայմանավորված: Ոչ բոլոր շարահյուսական կատեգորիաներն են առնչվում որոշյալի քերականական կատեգորիայի հետ:

Ստորև կանգ կառնենք մի քանի բնորոշ մոմենտների վրա: Որոշյալ բացահայտյալը հիմնականում լռենում է որոշյալ բացահայտիչ, թեպետ ընդհանրապես չի կարելի ասել, թե երբ բացահայտյալը որոշյալ է, բացահայտիչը ևս որոշյալ է, օրինակ՝ «Լամբարյանը՝ «Հացավանի» գլխավոր հերոսը, գեղարվեստական հաջող կերպար է»: Նույն ձևով՝ «Ով չէր ճանաչում կալվածատեր և հանքատեր Մարկոս Ալիմյանին — այդ վաթսուներեք տարեկան, կրորիկ մարմնով, ուռած թշերով, եռանդուն ու աշխույժ ծերունուն» (Շ, ԵԼԺ, 4, 7), բայց՝ «Ես անչափ սիրեցի «Բոուը», գիրք, որ չի կարելի կարդալ առանց խոր ապրումների»: «Մեծ հիշատակ է լծողել Ձերթինսկին, մարդ, որից սարսափում էին պրուետարական ռեյուցիայի թշնամիները»:

Քերականորեն անորոշ (առանց հոգի) է լինում մասնական բացահայտիչը¹:

Այս բացահայտիչը չպիտի շփոթել այն նախադասութեան համապատասխան անդամի հետ, որի ստորոգյալը գեղչված է և համեմատական իմաստով է ասված: Այսպես՝ «Ապտակն ալրում էր երեսը, որպես շիկացած երկաթի հպումը» (Շ, ԵԼԺ, 4, 190), որը նույնն է՝ Ապտակն ալրում էր երեսը, որպես ալրում է շիկացած երկաթի հպումը:

Որոշյալ բացահայտյալի հետ հազվադեպ է դրվում անորոշ բացահայտիչ, եթե վերջինս չի կոնկրետացված այլ միջոցներով, ասենք, թեկուզ մի անորոշով: Սակայն մի անորոշով բացահայտիչը² ևս շատ հազվադեպ երևույթ է:

¹ Եթե առկա չեն որոշիչ հոգ պահանջող հատուկ բառեր:

² Օրինակներ «...հրամայեց Շմավոնը՝ առյուծաբաշ ձիու նախկին հեծվորդ, միջահասակ, նիհար, շեկ, պեպենոտ երեսով մի մարդ» (Ն, 2, 3, 12), «Վաղորդ՝ կարճահասակ, դեղնադեմ մի ուսանող, շնչասպառ ու անկապ գեկուցեց» (ԳՍ, Թ, հ. 1, 8):

Մասնական առանց որոշիչ հոգի, բացահայտչի օրինակներ. «Մենք՝ որպես ազիաապոքներ, օգնում ենք մեր ունկընդիրներին քաղաքական ու տնտեսական հարցերը ճիշտ ըմբռնելու համար»: «Աշոտ Սահակյանը, որպես կոմերիտական լավագույն աշխատող, առաջ քաշվեց պատասխանատու աշխատանքի»:

Մասնակի դեպքերում դերանուներին հետ բացահայտիչն անորոշ է (մենք՝ երեք հոգի, դուք՝ չորս հոգի): Երբեմն թվարկվող բացահայտիչները ևս անորոշ են լինում. «Մնացածները՝ Գրիգորյան, Հարությունյան, Սարգսյան, պարզեվատրվեցին Լենինի հատորներով»:

Որոշիչը եթե քանակական թվական է, ապա նրա որոշյալը կարող է լինել հոգով և առանց հոգի. օրինակ՝ «Ես ինձ հետ բերել եմ երեք ուսանող, երեք ուսանողն էլ գերազանցիկներ են»: «Դիրեկտորը երկու անկարգապահ աշակերտներին էլ նկատողություն արեց», «Հիմնարկության երեք մեքենագրուհիներն էլ նոր են աշխատանքի անցել»:

Դասական թվական որոշիչի լրացյալը սովորաբար հոգով է (քերականորեն որոշյալ է)¹, իսկ բաշխականների լրացյալը՝ առանց հոգի (անորոշ): Օրինակներ՝ «Հենց որ ամուսնական կյանքի առաջին տարին անցավ...» (Շ, ԵԼԺ, 4, 61), «Չորրորդ օրը պատանուն գտան իր դասընկերներից մեկի տանը...» (Ն. տ., 204): «Առաջին օրն... երկրորդ օրն» (Ն. տ., 414), «Շրորդ դարկը» (Ն. տ., 416), «Այնքան պինդ կպավ, որ նրան թվաց, թե դա երրորդ զնգակն էր» (ԳՄԹ, 1, 103), «...Աղջիկների հետ բարձրացավ երկրորդ հարկը...» (Ն. տ., 104), «...Ո՞վ էր այն երրորդ անձը...» (ՎՓ, ԸԵ, 330):

Այս, այդ, այն, սույն, նույն, մյուս, միևնույն, քանի-երորդ, որերորդ, բոլոր, համայն դերանուներին լրացյալը սովորաբար հոգով է (քերականորեն որոշյալ). օրինակներ՝ «Լուրը նույն ժամին տարածվեց ամբողջ քաղաքում» (Շ, ԵԼԺ, 4, 7): «Մյուս օրը» (Ն. տ., 328), «այդ խորթությունը»

¹ Այլ է՝ առաջին կարգի, երկրորդ կարգի, առաջին անգամ, երկրորդ անգամ:

(*Ն. տ., 329*), «Այն օրը» (*Ն. տ., 333*), «նույն պահին» (*Ն. տ., 383*): «...Այն աստղերը, որպես սերը երազում, Երկնի ժաղկունք այն աստղերն են ես սիրում» (*Տ, ԵԺ, 426*): «Միևնույն աթոռին» (*Ս, Թ, 1, 120*): «Այժմ բոլոր արտիստները ճանաչում են նրան» (*Շ, ԵԼԺ, 4, 420*): «Այդ նկարին» (*Ս, Թ, 1, 71*):

Ինչ, քանի, որքան, ամեն, յուրաքանչյուր, ինչ-որ, ինչ-ինչ, ոչ մի, մի քանի, մի խումբ, մի շարք, որոշ, ուրիշ, այլ, որևէ և նման մի քանի այլ դերանուն որոշիչ-ների լրացյալ քերականորեն անորոշ է, առանց հոգի:

«Ինչ բախտ էր, նստել քեզ հետ միասնակ» (*Տ, ԵԺ, 238*), «— Ի՞նչ ամուսին, ի՞նչ տուն ու տեղ...» (*ԳՍ, Թ, 1, 115*): «Քանի գլուխ» (*Ն. տ., 105*), «Ամեն օր» (*Ն. տ., 189*): «Դեմ ու դեմ գտնվող տան առաջին հարկում բնակվում էր ինչ-որ օտարազգի ընտանիք» (*Շ, ԵԼԺ, 4, 123*):

Մըթնեց: Ծերունին լուռ չարչարանքով

Մի քանի կոնդեր դրեց կրակին...» (*ՀԹ, ԸԵ, 158*): «...Գյուղից սրլացան մի խումբ կրտսերներ...» (*Ն. տ., 202*): «Ճշմարտություն չկա ուրիշ» (*ԱԻ, ԵԺ, 1, 174*): «Այլևս մարդ ու կին իրարու մեջ ոչ մի գրավիչ հատկանիշ չէին գտնում» (*Շ, ԵԼԺ, 4, 123*):

Որոշյալի քերականական իմաստը բացառող դերանուն որոշիչները, եթե զբաղեցնում են որոշյալի քերականական իմաստը պահանջող հատկացուցիչների հետ, և երբ առանձնապես ընդգծված է դրանց լրացյալ բառը, ապա վերջինս հող է ստանում: Օրինակ. «Իմ որոշ գիտողություններ հաշվի չեն առնվել», քայց՝ «Բո յուրաքանչյուր գիտողություն էլ հաշվի է առնված». «...մինչդեռ շատ կցանկանար իմանալ, թե այդ հիվանդները զոկտոր Ազադիի ինչ բարեկամներն են...» (*ԳՍ, Թ, 1, 210*):

Երբ որոշիչը գերադրական աստիճանի ածական է, ապա

¹ Միշտ որոշյալ է զբաղեցնում նաև մի քանի այլ ածականների հետ. վերջին (*«Կյանքի վերջին շողը լուսավորեց Մարկոս Ալիմյանի հոգա-գույն դեմքը» Շիր.*), հետևյալ (*«Կոշմարն սկսվեց հեռույալ պահին», Մ, Թ, 1, 79*), «Հեռույալ հարցը» (*Ն. տ., 220*):

լրացյալը միշտ հոգով է. «Ամենագեղեցիկ հայացքը, որ ես տեսել եմ իմ կյանքում» (Թ, ԸԵ, 376), «Շատ թափառեցի, շատ աշխարհներ տեսա և գտա, որ գիտության լույսն է ամենապիտանի բանը...» (ԱԻ, ԵԺ, 3, 280). «Ո՞վ էր արդ մարդը, որ տանում էր ամենամեծ աշխատանքը...» (Վ, Փ, ԸԵ, 273): Նաև՝ ամենաբարձր ցուցանիշը, ամենահետաքրքրական նորությունը, ամենաուժեղ զգացմունքը և այլն:

Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այսչափ, որ, ամբողջ և այլ մի քանի գերանուն որոշիչների, ապա և ածական որոշիչների գերակշռող մասի հետ լրացյալ բառը կարող է լինել հոգով (քերականորեն որոշյալ) և առանց հոգի (քերականորեն անորոշ): «Միքայելի մտամոլոր դրությունը նրան պատճառեց անհուն ուրախություն» (Շ, ԵԼԺ, 4, 166), «Ամբողջ գարունը և ամառը պատանին այցելեց նավահանգստի պանդոկները» (Ն. տ., 453): «Այդ ինձ համար նոր և բավական հետաքրքրական շրջան էր (Ն. տ., 413): Նաև՝ այսպիսի աշխատանք, այդպիսի գնահատական, այնչափ լայնություն և՛ այսպիսի աշխատանքը, այդպիսի գնահատականը, այնչափ լայնությունը և այլն:

Եթե որոշիչների մեջ կան որոշյալի քերականական իմաստ բացառող որոշիչ և չբացառողներ, ապա սովորաբար դրանց լրացյալը քերականորեն անորոշ է վերցվում (առանց հոգի):

Հատկացական կապակցությունների վերաբերյալ կարելի է տեսլ հետևյալը. եթե հատկացուցիչը հատուկ անուն է, ապա հատկացյալը միշտ որոշյալ է¹:

«Սմբատի զգացումները շուտով սկսեցին բթանալ թրմրեցուցիչ գարեջրի ազդեցությամբ» (Շ, ԵԼԺ, 4, 256), «Զարգարյանի կոր մեջքն այսօր, կարծես, ուղղվել էր» (Ն. տ., 304). «Կյանքի վերջին շողը լուսավորեց Մարկոս Ալիմյանի հողագուլն դեմքը» (Ն. տ., 13): «... Խելահեղ Զալիսեն քիչ մնաց թոններ ու ցած գնար, ոչխարի պես ընկներ Հասոյի

¹ Եթե հատուկ անուն հատկացուցիչը մատնացուլյց է անում ավելի շուտ առարկայի որակային առանձնահատկությունը, ապա հատկացյալը առանց հոգի է («Մոսկվայի արտադրանք»):

ոսքերը» (Փ, ԸԵ, 225), «Մաշարը վերցրեց Ազադիի թևը, տարավ հյուրասենյակ» (ԳՍ, Թ, 2, 178): «Ռաշիդի դեմքն ալլազունեց (Ն. տ., 141):

Իմ, քո, նրա, մեր, ձեր, նրանց, իր, իրենց, սրա, դրա, սրանց, դրանց, դերանուն հատկացուցիչների հատկացյալը միշտ որոշյալ է¹: «Մի քանի ձայներ ընդհատել էին նրա քունը» (ՎՓ, ԸԵ, 257). «Վերջալուսին ամենքը տուն մտած, տեղավորում էին իրենց բերածը, ապա ճաշում» (Ն. տ., 362), «Հասարակության բոլոր խավերը գալիս էին իրենց վերջին ձարգանքը մատուցանելու հանգուցյալին» (Շ, ԵԼԺ, 4, 19), «Նա ունի իր հայացքները, ճաշակը, ինքնասիրությունը» (Ն. տ., 319):

«Ոսկեզղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտուտներին ոսկի արտում, ասում հմ հս մնաք
բարով»: (Տ, ԸԵ, 240):

«Ախ. երբ պիտի մին էլ տեսնենք՝

Մեր անեծքը երկինք հասնի...» (Թ, ԸԵ, 136):

«Իմ հայրը իմ դեմ մեղանչեց, սակայն չմեղանչեցի
հս ոչ ոքի դեմ» (Ա, Ի, 2, 64):

Եթե հատկացուցիչը փոխանուն է, հատկացյալը հոդով է (քերականորեն որոշյալ). օրինակ՝

«Որ ծանր է նստում գրկվածի ուսին (Իս., ԵԺ, 1, 186): «Բյուրավորների քամված արյունը...» (Իս., ԵԺ, 2, 71): Նաև՝ «Ցեխն ընկածի ոսքերը մաքուր չեն լինի», «Գրատախտակի մոտ կանգնածի ձեռքը դողում էր»:

Եթե վերոհիշյալ երեք տիպի հատկացուցիչների լրացյալը նույնպես հատկացուցիչ է, ապա վերջինիս հատկացյալը սովորաբար որոշյալ է, օրինակներ՝ «...Կարծես ցուլց տալու համար իր դիրքի բարձրությունը» (Շ, ԵԼԺ, 4, 37), «Դա նրա երեսի միակ մասն էր առատաբույս միրուքից ազատ» (Ն. տ., 38): «Բայց իսկույն նկատեց Շուշանիկի դեմքի փո-

¹ Տուն բառը, երբ ուղեորման հայցական է, նման դեպքերում մեծ մասամբ առանց հոդի է՝ Գնաք մեր տուն (իրենց տուն, ձեր տուն):

փոխութիւնը» (ն. տ., 244): «Միայն թե պարոն Մեհերն իր խոսքի տերը լինի» (Ս, Թ, 2, 330), «Ռաշտի տան խնջութիւնը» (ն. տ., 342), «Իր աշխատանքի թափը» (ն. տ., 415):

Փոխանունութիւնը որպէս ձևաբանական օրինաչափութիւն ունի նաև իր շարահյուսական նշանակութիւնը. փոխանվան կրած որոշիչ հոգի միջոցով հնարավոր է դառնում նախադասութեան մեջ բազմաթիւ կրկնութիւններէից խուսափել և կրկնվող անդամը կրճատել: Օրինակ, «Եւ հալըր եկել է, իսկ Սուրիկինը՝ ոչ»¹: Այստեղ հայրը ենթական չկրկնելու համար («Սուրիկի հալըր»), նրա ֆունկցիոն արտահայտվել է փոխանունութեան միջոցով (որոշյալի ք՝ հոգի շընորհիւ): Ը (ն) հոգի միջոցով, փոխանունութեամբ հնարավոր է նախադասութեան մեջ չբերել և նախապես հիշատակված և չհիշատակված, մտքով հասկացվող անդամները: Օրինակ, «Կարմիրը ավելի է աչքի զարնում, քան սպիտակը» (կարմիր գուլնը, սպիտակ գուլնը): Բայց կարող է տվյալ անդամը մեկ անգամ հիշատակված լինել տվյալ նախադասութեան մեջ. «Կարմիր գուլնը ավելի աչքի զարնող է, քան սպիտակը» (այսինքն՝ սպիտակ գուլնը): Փոխանունութեամբ չի արտահայտվում այն կրճատումը, երբ հատկանիշ արտահայտող բառը, որով արտահայտվում է փոխանունութիւնը, անմիջապես չի կապված տվյալ նախադասութեան մեջ իր առարկայական լրացյալի հետ, ուստի համապատասխան բառը որոշիչ հոգը չի կրում. օրինակ. «Դու գնիր ինձ համար զանազան գուլնի գնդակներ, և ոչ թե անպալման կարմիր կամ սպիտակ»² (կարմիր գուլնի կամ սպիտակ գուլնի):

Եթե կրճատվող անդամը անորոշ է, ապա կրճատումից հետո համապատասխան բառի վրա նույնպես հոգ է դրվում. «Եթե առնելու լինես կարմիր և սպիտակ գնդակներ, ապա ինձ համար նախընտրութիւն կտաս կարմիրին»:

¹ Մենք նկատի չունենք փոխանունութեամբ չարտահայտվող մնացած կրճատումները:

² Սա միաժամանակ կապված է այն բանի հետ, որ երբ զեղչված անդամի լրացյալը նախադասութեան վերջն է ընկնում, մնում է անփոփոխ, առանց հոգի:

Եթե որոշյալի և հատկացյալի քերականորեն որոշված կամ անորոշ լինելը մի շարք դեպքերում կապված է համապատասխանաբար որոշիչի և հատկացուցչի բառա-իմաստալին բնույթի հետ, ապա մի շարք դեպքերում խնդիրների ու պարագաների քերականորեն որոշյալ կամ անորոշ լինելը կապված է համապատասխան բայերի իմաստալին բնույթի հետ։ Օրինակ, եթե ուղիղ խնդիրը չունի միշտ որոշյալ պահանջող լրացումներ, ապա այն ներգործական բայերի մոտ, որոնք կապվում են իրենց իմաստով ներքին, հոգեկան երևույթների արտահայտման հետ, լինում են սովորաբար անորոշ, առանց որոշիչ հոգի։ Այսպես՝ «Դա այն երջանիկ դեմքերից էր, որոնք հենց առաջին հայացքով մարդու սրտում շարժում են համակրություն զգացում» (Շ, ԵԼԺ, 4, 415), «Կար այդ ձայնի մեջ սրտաշարժ շեշտ, որ արտահայտում էր հեղուկության հետ և թախիծ» (Ն. տ.)։ «Ձեր արտահայտել զվարթություն» (Ն. տ., 13), նույնն է՝ վիշտ պատճառել, սեր տալ, մրմուռ գգալ, կարեկցություն արտահայտել, ցավակցություն հալտնել, ուրախություն պատճառել. բայց՝ «Կես ժամ անցած Անտոնինա Իվանովնան իր սրտի դառնությունն արտահայտում էր եղբոր մոտ» (Շ, ԵԼԺ, 4, 281)։ «...Միջայելի ընկերները միմյանց հետևից հպան իրենց ցավակցությունը հալտնեն...» (Ն. տ., 193)։ Հոգը աշատեղ իր, իրենց ստացականների պահանջով է։

Ներգործական բայերի երկրորդ խնդիր-հայցականը միշտ անորոշ է, թեկուզ հատուկ անուն էլ լինի, բայց այն գեպքերից, երբ նա ունի միշտ որոշյալ պահանջող լրացումներ։ «Դուք նրան ընկեր համարեցիք», «Մենք Սուրենին նախագահ ենք ընտրելու», «Նորածնին Արամ անվանեցիք» և այլն։ Բայց՝ «Դուք նրան իմ ընկերը համարեցիք»։

Նախադասության մեջ 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերին վերաբերող ենթակաները, խնդիրներն ու պարագաները սովորաբար հոգով են, մեծ մասամբ ստացականության իմաստով։ «Դեմքի որոշ կնճիռները, ձայնի զորությունը, և աչքերի մեջ փալլող հակակրությունը դեպի նոր շրջանը — ա-

վելի զորացրին Սմբատին»¹ (Շ, ԵԼԺ, 4, 275): «Լուսիզան մոտեցավ նրան. բռնեց ձեռներից, երեսը դարձրեց լուր կողմը, ուղիղ նայեց աչքերին բարեկամական... սիրող քրոջ քնքուշ հայացքով» (Ն. տ., 418), «Զեռքին բռնած ուներ մի մեծ գունդգուն թաշկինակ՝ արծաթե դրամներով լի» (Ն. տ., 30—31): «Զրագը ձեռին մոտ եկավ մի մարդ» (Ս, Ի, ԵԺ, 3, 258): «Սանրը գլխին» (Թ, ԸԵ, 99), նույն ձևով՝ ժպիտը դեմքին, դանակը ձեռքին, պարկն ուսին և այլն:

Ժամանակ ցույց տվող մի շարք բառեր ժամանակի պարագայի ֆունկցիայով կարող են հանդես գալ նախադասութիւն մեջ հոգով, ցուցական կամ այլ դերանունով, կամ էլ հարադրութեամբ². օրինակ՝ «Ո՞ւր ես լինում գիշերները» (Ս, Թ, 1, 26), «Մեր պետն ուրբաթ օրերը սիրում է որսի գնալ» (Ն. տ., 30):

«Լուս պարտեզում սըրտատրոփ, սիրատենչ

Իմ նազելուն սպասում եմ այս գիշեր...»

(Իսահակյան):

«Ողջ գիշեր» (Փ, ԸԵ, 321), «Այս գիշեր»

(Տ, ԸԵ, 283):

Նաև՝ «Նա գիշեր-ցերեկ աշխատում է» և այլն:

Նման դեպքերում ժամանակի պարագան կամ լինում է միայն հոգով, կամ միայն ցուցական և այլ բառերի հետ, բայց ոչ երկուսը միասին:

Ժամանակ ցույց տվող որոշ բառեր որպէս ժամանակի պարագա հանդես են գալիս որոշյալ տրականով, օրինակ՝ կեսօրին, ժամը 5-ին և այլն:

Նույնպէս միշտ հոգով են ամիսների անունները ժամանակի պարագայի դերում՝ հունվարին, փետրվարին, հունիսին և այլն, մեծ մասամբ տրական հոլովով:

Այսպէս կոչված ուղեկորման հայցականը (տեղի պարա-

¹ Խոսքը Անտոնինա Իվանովնայի՝ Սմբատի կնոջ, դեմքի կնճիռների, ձայնի զորութեան, աչքերի մեջ փայլող հակահրէքային մասին է:

² Իրականում ժամանակի պարագայի՝ հոգով և առանց հոգի զոր-
ծածութեան բազմաթիւ ներութեաններ գոյութեան ունեն, որոնք ու-
շագրութեան արժանի են:

գա) եզակիում համարյա հավասարապես օգտագործում է և՛ որոշյալ, և՛ անորոշ ձևը, իսկ հոգնակիում՝ սովորաբար որոշյալ ձևը¹: Օրինակ. «Ղորանին զայլացած մտալ ուսումնական բաժինը» (Ս, Թ, II, 7), «Եկամ տուն» (Շ, ԵԼԺ, 4, 7). «Ամենքն շտապում էին մահամերձ միլիոնատիրոջ տունը...» (Ն. տ., էջ 70): «Առավոտը կանուխ Սմբատը մտալ եղբոր սենյակը» (Ն. տ., 191): «Տուն վերադարձավ գրգռված, շղայնացած և ճաշասենյակ մտնելով, խնդրեց...» (ԳՍ, Թ, II, 215):

Նույն ձևով՝ գնացեք լսարան, տուն, դաշտ, բայց ոչ՝ գնացեք լսարաններ, տներ, դաշտեր, այլ՝ լսարանները, տները, դաշտերը:

Այս երևույթը ցույց է տալիս, որ ուղևորման հայցական տեղի պարագայից որոշիչ հոգը դուրս է մղվում, և այդ պրոցեսը սկսվել է եզակի թվում, հավանաբար հատուկ անունների ազդեցությամբ և դեռ լիովին չի թափանցել հոգնակի թվի ուղևորման հայցականի մեջ: Այսպես, հատուկ անունների դեպքում ասում ենք. «Նա գնաց Բաքու, Մոսկվա, Երևան», «Նա թռավ Բաքու, Մոսկվա, Երևան», «Ես վաղուց եմ եկել Հայաստան» և այլն: Այս՝ առանց որոշիչ հոգի տեղի պարագաները ազդել են հասարակ անունների վրա (նույն ֆունկցիան կատարող) և մտածողության ընդհանրացման աշխատանքով աստիճանաբար եզակիում թուլացրել են որոշյալի քերականական կատեգորիայի կենսունակությունը և այժմ հավասարապես հնարավոր է և՛ հոգով, և՛ առանց հոգի. «Ես գնացի դաշտ, մտա լսարան» և «Ես գնացի դաշտը, մտա լսարանը»: Սկսված պրոցեսը եզակիում, ուրեմն, դեռ չի ավարտվել և մասամբ էլ արտահայտվում հոգնակիում:

Որոշյալի և անորոշի քերականական կատեգորիան լուրահատուկ զբոսնորում ունի ստորոգելիական գոյական վերադրի հետ:

Երբ որեւէ առարկա ղրվում է մի խումբ նույնանման առարկաների շարքը (կամ առարկաների մի դասի շարքը), ապա տեսակի (կամ առարկաների խմբի) անունը, որին հատ-

¹ Բացի միշտ անորոշ կապակցություններից:

կացվում է առանձին առարկայի անունը, երբ կոնկրետանում է խոսքի տվյալ մոմենտի հետ ունեցած հարաբերություն հատկանիշով, ստանում է հոդ:

«Նա շքանշանակիր օղակավարուհի է» և «Նա շքանշանակիր օղակավարուհին է»¹:

¹ Որոշյալի ու անորոշի քերականական կատեգորիան ունի հետաքրքրական դրսևորումներ՝ կապված հարադիր կապակցությունների բառային, դարձվածաբանական ու ձևաբանական առանձնահատկությունների հետ: Հարցի քննությունը որոշ նկատառումներով դուրս ենք թողնում:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՁԻ ՈՒ ԻՐԻ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ԱՆՁԻ ՈՒ ԻՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՀԱՅՅԵՐԵՆՈՒՄ

Մտածողության մեջ եղած կատեգորիաներն օբյեկտիվ իրականության արտացոլումն են, առարկաների, երևույթների ու նրանց հարաբերությունների (կապակցությունների) արտացոլումը: Մտածողության արտարահող աշխատանքը քերականության մեջ տալիս է կատեգորիաներ, որոնք ունեն որոշակի և լեզվի համար էական նշանակություն ունեցող քերականական իմաստներ, նրանց քերականական արտահայտության միջոցներով հանդերձ:

Քերականական կատեգորիաները մեկընդմիջտ տրված կատեգորիաներ չեն. նրանք առաջանում են պատմական անհրաժեշտությամբ, լեզվի զարգացման որոշակի էպոխայում, լեզվի մեջ գործող օբյեկտիվ օրենքների պահանջով, և անհետանում են նույնպես պատմական անհրաժեշտությամբ: Յուրաքանչյուր դեպքում քերականական կատեգորիան հանդես է գալիս որպես արդյունք տվյալ լեզվի կոնկրետ պատմական զարգացման: Ուրեմն տվյալ քերականական կատեգորիան ուսումնասիրելիս, ամենից առաջ, պետք է ընդգծել նրա պատմականությունը:

Իսկ քանի որ լեզուն ռեալ գիտակցություն է, ապա քերականական կատեգորիայի պատմական զարգացումը չի կարելի տալ գիտակցության զարգացումից անկախ, գիտակցության պատմությունից անկախ:

Վերցնենք քերականական սեռի կամ՝ որ նրա ավելի լայն արտահայտությունն է, անվանական դասերի կատեգորիան: Անցյալի որոշ լեզվաբաններ այս և այլ կատեգորիաները քննելիս անտեսում էին դրանց կոնկրետ պատմական զարգացումը, և, փոխանակ ընդգծելու գիտակցության դերը այդ պրոցեսում, նրանք քերականական կատեգորիաների ուսմունքը փորձում էին վերածել մի տեսակ քերականական միֆոլոգիայի: Մինչդեռ, օրինակ, քերականական սեռի, անվանական դասերի, շնչավորի ու անշունչի (անձի ու իրի) կատեգորիաներն ունեն իրենց ռեալ պատմությունը և դրսևորվում են այս կամ այն լեզվում, միշտ կապված տվյալ լեզվի զարգացման ներքին օրենքների հետ:

Բնության ու հասարակական երևույթների ճանաչողության նախնական էտապներում մարդու մոտեցումն իրերին ու երևույթներին սահմանափակված էր մտածողության բնապատմական զարգացման մակարդակով: Իսկ մտածողության մեջ այս կամ այն տրամաբանական կատեգորիայի համար բնորոշ առարկաների այս կամ այն հատկանիշի տարբերակված գիտակցումն է: Օրինակ, քերականական սեռի կատեգորիայի առաջացման համար շատ կարևոր է իրերի մեջ որոշ հատկանիշների տարբերակված գիտակցումը¹: Գիտակցության սահմանափակության պատճառով բնական սեռի հատկանիշը մարդը վերագրել է նույնիսկ անշունչ իրերին: Եվ գիտակցության զարգացման այդ մակարդակն իր կնիքն է թողել լեզվի մեջ քերականական կառուցվածքի վրա, առաջ բերելով քերականական սեռի, քերականական (անվանական) դասերի, շնչավորի ու անշունչի կատեգորիաները:

Սակայն մարդու ճանաչողությունը կանգ չի առնում, այն անընդհատ խորանում է բնության ու հասարակական երևույթների մեջ, բացահայտելով նրանց զարգացման նորանոր օրենքներ, օրինաչափություններ: Ծանաչողության զարգացման որոշակի մակարդակը սկսում է «հակասություն» մեջ

¹ Տե՛ս է. Ղ. Աղ ա յ ա ն, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952, էջ 325:

մտնել լեզվի համապատասխան քերականական կատեգորիայի հետ, լեզվի քերականական ձևերի համեմատաբար պահպանողական, ավանդապահ բնույթի շնորհիվ: Նույն օրինաչափություններ քերականական սեռի կատեգորիայի և բնական սեռի տրամաբանական կատեգորիայի միջև առաջանում է որոշակի անհամապատասխանություն:

Քերականական սեռի վեճակը հնդեվրոպական լեզուներում ցույց է տալիս, որ քերականական սեռի կատեգորիայի և բնական սեռի տրամաբանական կատեգորիայի միջև պատմականորեն առաջացած անհամապատասխանությունը ռեալ փաստ է արդեն¹:

Մի շարք լեզուներում քերականական սեռի փոխարեն խիստ տարածված է անվանական դասերի կատեգորիան, հատկապես ոչ-հնդեվրոպական՝ կովկասյան, աֆրիկյան և այլ լեզուներում: Անվանական դասերի կատեգորիայի կազմավորման հիմքում ևս ընկած է առարկաների համանման, կամ ալլալիսին դիտվող, հատկանիշների գիտակցումը, ըմբռնումը:

Առարկաների բնական դասերի տրամաբանական կատեգորիան էլ ունեցել է իր պատմական զարգացումը: Եթե քերականական սեռը հիմնականում ունի երեք խումբ, իսկ որոշ լեզուներում՝ երկու, ապա քերականական (անվանական) դասերի մեջ առարկաների խմբավորումները որոշ լեզուներում հասնում են երկուսից ութի, որոշ լեզուներում՝ ավելի քան երկու տասնյակի, այսպես օրինակ, բանտու լեզուներում դասերը հասնում են մինչև քսանի:

Յուրաքանչյուր դաս ունի իր դասային ցուցիչը: Որոշ լեզուներում այս հանդես է գալիս անվան մեջ, որոշ լեզուներում նաև անվան հետ շարահյուսորեն կապված այլ անդամների հետ (ստորոգյալ, որոշիչ, պարագա), ընդ որում ցուցիչները կարող են արտահայտվել նախածանցներով, միջածանցներով կամ վերջածանցներով: Անվանական դասերի կատեգորիան էլ մեծ մասամբ վեր է ածվել ձևական կատե-

¹ Այս մասին հետաքրքրական փաստեր է բերում Ռ. Ա. Բուզադովը, տե՛ս նրա Очерки по языкознанию, Москва, 1953, էջ 150:

գործիաների, ինչպես այդ տեսանք սեռի քերականական կատեգորիայի կապակցությամբ¹:

Կովկասյան և աֆրիկյան շատ լեզուներում անհետացել կամ անհետացման վիճակ են ապրում անվանական դասերը: Հաճախ լեզվական որոշ վերապրուկներից միայն ենթադրվում է այդ դասերի վաղեմի գոյությունը: Բայց երբեմն հանդիպում են դասերի լիառատ գործածության, օրինակ, Կովկասի Ծախուրյան լեզվում կա 4 դաս, որոնց ցուցիչները հանդիպում են գրեթե բոլոր խոսքի մասերում:

Բայց առարկաների խմբավորումները նրանց համանման հատկանիշների հիման վրա ոչ միայն իրենց արտահայտությունը գտել են քերականական սեռերի կամ անվանական դասերի մեջ, այլև առանձին ինքնուրույն այլ կատեգորիաների մեջ, շնչավորի ու անշունչի կամ անձի ու իրի քերականական կատեգորիաների մեջ:

Շնչավորի ու անշունչի քերականական կատեգորիան հատուկ է ոչ միայն հնդեվրոպական լեզուներին, այլև աշխարհի շատ այլ լեզուներին: Շնչավորի ու անշունչի կատեգորիան ունի զանազան զրսեորումներ կապված տվյալ լեզվի բառային ու քերականական առանձնահատկությունների հետ: Այն կարող է զրսեորվել ինչպես բառապաշարի մեջ, այնպես էլ քերականական կառուցվածքի մեջ, կարող է ընդհանուր ընդլիժ ունենալ, տարածվել լեզվի մեջ լայն ոլորտով, կարող է սահմանափակվել քերականական կառուցվածքի կամ բառապաշարի որևէ կողմում:

Քերականական սեռի, անվանական դասերի, շնչավորի ու անշունչի (անձի ու իրի) կատեգորիաների կազմավորման մեջ ընդհանուրն այն է, որ դրանց կազմավորման հիմքում ընկած է իրերի ու առարկաների համանման հատկանիշների տարբերակված ըմբռնման տրամաբանական կատեգորիան:

Իսկ եթե դա այդպես է, ապա առաջ են գալիս մի շարք հարցեր. ա) ինչո՞ւ սեռի, դասերի, շնչավորի ու անշունչի քերականական կատեգորիաներն աշխարհի լեզուներում ունեն

¹ Տե՛ս ԲՇՅ, երկր. հրատ., հ. 17, էջ 556:

տարբեր, երբեմն միանգամայն այլ բնույթի դրսևորումներ, մի թե իրերի ու առարկաների համանման հատկանիշների գիտակցումը (տրամաբանական կատեգորիա) միանգամայն տարբեր է առանձին լեզուներով խոսող ժողովուրդների մոտ, բ) ինչո՞ւ սեռերի, դասերի, շնչավորի ու անշունչի քերականական կատեգորիաները կազմավորվում և անհետանում են, վերանում են տարբեր էպոխաներում, այնպես որ երբեմնի գոյություն ունեցող սեռը հետագայում մի լեզվում կարող է վերանալ, իսկ մի ուրիշ, թեկուզ և ցեղակից լեզվում երկար դարեր պահպանվել: Մի թե քանիսն սեռի գիտակցումը մի լեզվում խոսող ժողովրդի մոտ հետագայում փոփոխության է ենթարկվում, փոխում է իր բնույթը, իսկ մյուսի մոտ՝ ոչ: Ինչո՞ւ քերականական սեռի կատեգորիան կարող է վաղ կամ ուշ անհետանալ կամ չանհետանալ, գ) ի՞նչ դեր ունեն տվյալ լեզվի բառային ու քերականական առանձնահատկությունները այս կամ այն քերականական կատեգորիայի կազմավորման պրոցեսում և այլն, և այլն:

Քերականական սեռի և ընդհանրապես շնչավորի ու անշունչի քերականական կատեգորիայի կազմավորման ու զարգացման պրոցեսի վերաբերյալ արված շատ դիտողություններ կրում են մեխանիստական-իդեալիստական բնույթ: Ոմանք թյուրիմացաբար կարծում են, թե «զուտ բանաստեղծական ձևով և երևակայության անսովոր ուժով» բոլոր գոյականները անց են կացվել նախապես գոյություն ունեցող իգական ու արական սեռերի տակ, դրանով իսկ «անկենդանր բարձրացվել է կենդանականի աստիճանին»¹:

Բողոքեն դե Կուրտենեն իր «Լեզվաբանական դիտողություններ» աշխատության մեջ, վերլուծելով քերականական սեռի և անվանական դասերի կատեգորիաները հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներում, հանգում է անհամոզիչ հետևությունների:

Բողոքեն դե Կուրտենեն իրավացիորեն նկատում է տար-

¹ О. Шредер, Сравнительное языковедение и первобытная история, пер. с немец., СПб, 1886, էջ 461:

քերություններ քերականական սեռի արտահայտությունների միջև հնդեվրոպական և քամյան-սեմական լեզուներում, որ սեռերի տարբերակման հիմքերը նույնը չեն այդ երկու լեզվաընտանիքներում, իսկ գոյականների դասալին խմբավորումները բոլորովին այլ հիմք ունեն հոտենտոտների լեզուներում¹, այնուամենայնիվ այդ կատեգորիաների կազմավորման պրոցեսում նա կարևոր տեղ չի հատկացնում տվյալ լեզուների քերականական կառուցվածքի առանձնահատկություններին:

Ոչ ոք չի կարող ժխտել, որ քերականական սեռերի, անվանական դասերի հիմքում ընկած տրամաբանական կատեգորիաները հնդեվրոպական, սեմական և աֆրիկյան լեզուներում չեն ծածկում իրար, նույնական չեն, սակայն այն հանգամանքը, որ աֆրիկյան (բանտու) լեզուներում առարկաների համանման հատկանիշների քերականական դրսևորումը այլ բնույթ ունի, քան սեմական և հնդեվրոպական լեզուներում, կամ, ավելի ճիշտ, քերականական սեռի կատեգորիան և անվանական դասերի կատեգորիան որակական տարբեր բնույթ ունեն, ապա այստեղ հիմնական գործոնը ոչ թե, ասենք, առարկայական աշխարհի կարծեցյալ համընդհանուր «սեկուլալիզացիան» է հնդեվրոպական ցեղերի կողմից, այլ, ամենից առաջ, քերականական-կառուցվածքային առանձնահատկությունները այն լեզուների, որոնցով խոսել են այդ ցեղերը: Թե ինչո՞ւ աֆրիկյան բանտու ցեղերի լեզուներում կա անվանական դասերի կատեգորիան, բայց չկա քերականական սեռի կատեգորիան, այդ բոլորովին չի կարելի բացատրել առարկայական աշխարհի ինչ-որ յուրահատուկ «սեկուլալիզացիայով»: Որ կան շնչավոր և անշունչ, բանական և ոչ բանական, արու և էգ, կլոր և տափակ, վերին (երկնային) և ներքևի (երկրային) և այլ կարգի առարկաներ, այդ գիտակցում են բոլոր մարդիկ որքան էլ սրանք խոսելիս լինեն տարբեր լեզուներով: Սակայն թե ինչու առարկաների այս

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Бодуэн де Куртене, Лингвистические заметки, էջ, 367—369:

մեկ կարգի տարբերակված գիտակցումն է ընկնում տվյալ լեզվի քերականական կատեգորիայի (սեռ, դաս) հիմքում, այդ արդեն կախված է տվյալ լեզվի քերականական կառուցվածքի առանձնահատկություններից:

Մի քանի հարյուրամյակ առաջ սկսվեցին կազմավորվել ուսուերենում շնչավորի ու անշունչի, իսկ հայերենում՝ անձի ու իրի քերականական կատեգորիաները: Արդյոք այդ հիմք տալիս է ենթադրելու, որ այդ շրջանում ուսը ուներ շնչավորի ու անշունչի, իսկ հայլը՝ անձի ու իրի տրամաբանական կատեգորիաները, իսկ գերմանացին կամ անգլիացին չունեն: Պարզ է, որ գիտակցության մեջ արտացոլվում են օբյեկտիվ աշխարհի իրերն ու առարկաները իրենց բազմաթիվ ու բազմազան հատկանիշներով ու հարաբերություններով: Գիտակցության մեջ այդ կարող է հաստատվել շնորհիվ լեզվի բառային հնարավորությունների կամ քերականական միջոցների: Կարեւորն այն է, որ այդ կատարվում է բոլոր լեզուներում, բոլոր մարդկանց մոտ: Սակայն այդ տարբերակված գիտակցումը կարող է վերածվել առանձին քերականական կարգերի, եթե տվյալ լեզուն իր քերականական կառուցվածքով տրամադրում է դրան: Հայերենի և ուսերենի քերականական կառուցվածքները տրամադրեցին և համապատասխանաբար կազմավորվեցին շնչավորի ու անշունչի, անձի ու իրի քերականական կատեգորիաները, իսկ գերմաներենի, անգլերենի, ֆրանսերենի քերականական կառուցվածքները չունեն համապատասխան քերականական պայմաններ այդպիսի կատեգորիաների կազմավորման համար, թեև այդ լեզուներով խոսողների մոտ կա առարկաների շնչավորի ու անշունչի, անձի ու իրի տարբերակված գիտակցումը:

Ուրեմն քերականական կատեգորիայի (սեռ, դաս և այլն) կազմավորման հիմքում ընկած է տրամաբանականի և քերականականի միասնությունը, ինչպես և այդ միասնությունն մեջ է տվյալ կատեգորիաների վերացման, անհետացման բանալին: Իսկ եթե այդ այդպես է, ապա այս կամ այն կատեգորիայի վաղ կամ ուշ անհետանալու, կամ պահպանելու հիմքը գտնվում է տվյալ լեզվի բառային ու քերականական-կառուց-

վածքային առանձնահատկությունների մեջ: Իսկ այդ, այսինքն՝ քերականական կատեգորիաների առաջացման, անհետացման կամ պահպանման պրոցեսը, որ յուրաքանչյուր լեզվի ռեալ կյանքի պրոցեսն է, միշտ կապված է գիտակցության պատմական զարգացման հետ, ենթարկվում է նրա արգելեցությունը:

Այսպես առաջանում և ապա անհետանում կամ պահպանվում են անվանական դասերը կոմպոսիան, աֆրիկյան և այլ մի շարք լեզուներում, այսպես առաջանում և ապա անհետանում կամ պահպանվում են քերականական սեռերը հնդեվրոպական ու սեմական լեզուներում:

Այս են հաստատում լեզուների կենդանի կյանքի դիալեկտիկան, լեզուների կոնկրետ պատմական զարգացումը:

Հայտնի է, որ սեռի քերականական իմաստները իրենց քերականական արտահայտության միջոցով իրար չեն ծածկում հնդեվրոպական լեզուներում, ավելին՝ հնդեվրոպական ուրոշ լեզուներում այդ կատեգորիան բացակայում (հայերենում)¹ կամ գրեթե բացակայում է (անգլերենում) և կամ սահմանափակվել է երկու՝ արական և իգական սեռերի մեջ (ֆրանսերենում): Մյուս կողմից՝ երբեմնի բնական սեռի վրա հիմնոված քերականական սեռը այժմ հիմնականում դարձել է ձևական կատեգորիա, և բնական սեռի ժամանակակից ըմբռնման պահանջով լեզուները գիմում են նոր միջոցների:

Մի կողմից բնական սեռի հասկացության պատմական էվոլյուցիան, մյուս կողմից լեզվի քերականությունը՝ իր կառուցվածքային առանձնահատկություններով, դիմել են բառային ու քերականական բազմաթիվ ու բազմազան միջոցների, սեռի կատեգորիան արտահայտելու համար²: Վերջապես պետք է ընդգծել, որ առարկաների համանման կամ այդպիսին գիտված հատկանիշների գիտակցման հիման վրա կազմավորված քերականական սեռի, անվանական դասերի կատե-

¹ Հայերենում, ինչպես ենթադրվում է, արդեն նախազգային ջրջանում հնչյունական օրինաչափությամբ վերացել է քերականական սեռի կատեգորիան:

² См. М. Я. Неме́ровский, Способы обозначения пола в языках мира, Ленинград, 1939, էջ 197—224:

գորիաները իրենց կազմավորման պատմութեամբ տանում են դեպի խոր հնադարը:

Սակայն մի քանի հնդեվրոպական լեզուների պատմութեանը վկայում է, որ առարկաների համանման կամ որպես այդպիսին դիտված հատկանիշների գիտակցման տրամաբանական հիմքի վրա առաջանում են քերականական կառեգորիաներ (կարգեր, դասեր), որոնք իրենց կազմավորմամբ ոչ այնքան հեռավոր անցյալի երևույթներ են և հնարավոր է ցուցադրել լեզվի գրավոր հիշատակարաններից բերված փաստերով: Դրանք են՝ շնչավորի ու անշունչի, անձի ու իրի քերականական կատեգորիաները: Այս կատեգորիաների հիմքում չի ընկած շնչավորի ու անշունչի (կամ անձի ու իրի) պրիմիտիվ այն ըմբռնումը, որի մասին մենք արդեն խոսել ենք¹: Մրանք հանդես են գալիս որպես տվյալ լեզուների (սլավոններեն, հայերեն, լատիշերեն, իսպաներեն և այլն) քերականական կառուցվածքի ուրույն պատմական զարգացման արդյունք, որպես այդ լեզուների զարգացման ներքին օրինաչափությունների արդյունք: Այդ կատեգորիաների կազմավորումը կարելի է բացատրել միայն նշված լեզուների քերականական կառուցվածքի առանձնահատկութեամբ:

Ի միջի այլոց այստեղ պետք է նկատի ունենալ նաև մի այլ կարևոր հանգամանք:

Դրեթե բոլոր լեզուներում շնչավոր ու անշունչ առարկաների (անձերի ու իրերի) լեզվական տարբերակման համար ստեղծված են բառային հնարավորություններ, ընդ որում ինչպես բառապաշարի մեջ, այնպես էլ քերականական

¹ Հնդեվրոպական հիմք-լեզվում եղած շնչավորի ու անշունչի կատեգորիան Մեյեն հետևյալ ձևով է բնութագրում. «Հասկանալու համար «շնչավորի» և «անշունչի» սեռերի նշանակությունը, պետք է նկատի ունենալ այնպիսի հասկացություններ, որոնք տարբեր են մեր ժամանակակից հասկացություններից: Հնդեվրոպականում այն ամենը, ինչ շարժվում է, այն ամենը, ինչ գործում է, ըստ այնմ էլ ընկնում է «շնչավոր» հասկացության տակ: Պատահում է, որ նույնիսկ տվյալ հասկացությանը կարող են համապատասխանել երկու անուններ. մեկը՝ «շնչավոր» սեռի, մյուսը՝ «անշունչ» (А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, էջ 345):

կառուցվածքում այս կատեգորիաները հաճախ չունեն ունիվերսալ բնույթ. սահմանափակված են բառապաշարի կամ քերականական կառուցվածքի որևէ կողմում, ինչպես այդ տեսնում ենք հնդեվրոպական լեզուներում:

Լեզուներում շնչավորի (անձի) ու անշունչի (իրի) բառալին տարբերակում ամենից շատ արտահայտվում է գերանուններում. այսպես՝ շնչավորի կամ անձի համար՝ ուսերենում՝ кто, հայերենում՝ ով, ադրբեջաներենում՝ kim, անգլերենում՝ who, գերմաներենում՝ wer և այլն, անշունչների (իրի) համար՝ ուսերենում՝ что, հայերենում՝ ինչ, ադրբեջաներենում՝ nə, անգլերենում՝ what, գերմաներենում՝ was և այլն:

Վերցնենք հետևյալ դեպքերը. «Կթվորուհին (ն՝վ) հորթի համար (իճչի՞ համար) կաթ (ի՞ճչ) չթողեց»: Ռուսերենում այս կլինի՝ „Доярка (кто?) не оставила молока (чего?) теленку (кому?)“.

Ինչպես տեսնում ենք, ն՝վ և ի՞ճչ հարցական գերանունները իրենց կիրառական արժեքով թեև իրար չեն ծածկում հայերենում և ուսերենում, այնուամենայնիվ, երկու դեպքում էլ նրանք յուրակերպ տարբերակումով արտահայտում են անձը, շնչավոր այլ էակը, իրը:

Գրեթե բոլոր լեզուներում էլ շնչավոր ու անշունչ առարկաների լեզվական տարբերակման համար ստեղծված են բառալին որոշ հնարավորություններ:

Ժամանակակից հայերենում ն՝վ և ի՞ճչ գերանունները ունեն յուրահատուկ դրսևորումներ, որոնք պայմանավորված են այդ բառերի քերականական-իմաստաբանական հատկանիշներով: Ո՞վ գերանունը չի կիրառվում մյուս շնչավոր էակաների նկատմամբ, ինչպես այդ տեղի ունի ուսերենում, այլ միայն անձերի նկատմամբ, այն էլ որոշ սահմանափակումով: Ի՞ճչ գերանունը, բացի այլ շնչավոր էակաների և անշունչ առարկաների, իրերի նկատմամբ կիրառվելուց՝ մասնակի դեպքերում կիրառվում է նաև անձերի վերաբերյալ, հատկապես այն դեպքում, երբ անձի անունը խոսքի մեջ ցույց չի տալիս որոշակի, կոնկրետ առարկա:

Գրաբարի հարցական n° , $n^{\circ}վ$, $n^{\circ}յք$, $զի^{\circ}$, $զի^{\circ}նչ$ և անորոշ՝
ոմն, ոք, իմն, ինչ, գերանուններում ևս կար բառային տար-
բերակում անձի ու իրի համար. ըստ որում՝ հարցականնե-
րից՝ n° , $n^{\circ}վ$, $n^{\circ}յք$, անձի համար, $զի^{\circ}$, $զի^{\circ}նչ$ ՝ իրի համար,
անորոշներից՝ ոմն, ոք, անձի համար, իմն, ինչ՝ իրի հա-
մար:

Մասնակի բառային տարբերակում կար նաև աա, դա,
նա և այս, այդ, այն ցուցականների գործածության մեջ,
առաջինները ավելի շատ անձի համար, երկրորդները՝ իրի
համար: Ժամանակակից հայերենում աա, դա, նա ցուցականնե-
րը գործածվում են նաև անձի համար, իսկ այս, այդ, այն
սովորաբար միայն իրի համար:

Բացի բառային տարբերակումից, արդի հայերենում կա
նաև մասնակի քերականական տարբերակում անձերի համար:
Այս մասնակի տարբերակումը երևան է գալիս ժամանակա-
կից հայերենում ներգոյական հոլովում, ուր անձի անուննե-
րի համար ներգոյական հոլովը ունի հիմնականում վերլուծա-
կան կազմություն՝ դաւարաւում, դաշտում, գետում, բայց՝
աշակերտի մեջ, ուսուցչի մեջ, կոլտնտեսականի մեջ և
այլն¹:

Բառային և քերականական վերոհիշյալ տարբերակում-
ները, իրենց սահմանափակ ընդգրկումով, մասնակի բնութ-
ւոնեն, չեն վերածվում ընդհանուր օրինաչափության, ուստի
չի կարելի խոսել, ասենք, «անձի ու իրի քերականական կա-
տեգորիայի» մասին ներգոյական հոլովում և այլն:

Դեռևս հնդեվրոպական հիմք-լեզվում կար շնչավորի ու
անշունչի կատեգորիան, որն իր ձևաբանական արտահայտու-
թյունների մեջ բավական յուրահատուկ էր: Շնչավոր առար-
կաների անունների մեջ ձևաբանորեն միավորվում էին արա-
կան և իգական քերականական սեռերը, անշունչերի մեջ՝ չեզոք
սեռը: Այդ յուրահատկությունը հոլովական սիստեմում արտա-

¹ Մենք կարծում ենք, անձի անունների համար ներգոյականի
վերլուծական կազմությունը աստիճանաբար ստեղծում է տեղեկաց
ընդ-
հանրապես վերլուծական ներգոյականի համար՝ աստիճանաբար ընդ-
գրկելով նաև իրի անունները:

հայտնում էր նրանում, որ շնչավորների ուղղականը և հայցականը խիստ տարբերվում էին, իսկ չեզոք սեռում ձևականորեն ուղղականը և հայցականը նույնն էին: Անձնական և մի քանի ցուցական դերանունների ուղղականը և հայցականը արական և իգական սեռերի դեպքում ունեին տարբեր արմատներ: Բացի այդ՝ բոլոր շնչավորների համար եղել են նույնական վերջավորութուններ՝ ուղղականում առանձին, հայցականում առանձին¹: «Ուղղական և հայցական հոլովների տարբերումը, — գրում է Մեյե, — էական է շնչավոր էականների անունների համար և բավական անտարբեր է իրերի անունների նկատմամբ, այն հանգիստ է, որ լեզուն տարբերի այս կամ այն միջոցով Պոդոսն և ծծոմ Պետրոսին, թե՞ Պետրոսն և ծծոմ Պետրոսին, բայց որ՝ Պոդոսը երազ է տեսել կամ դրեց լուծը, այս կարելի է հասկանալ իմաստից, այս վերջին դեպքում չկա երկիմաստություն, նույնիսկ եթե ուղիղ խնդիրը ոչ մի բանով չի արտահայտված»²:

Հոլովական սխտեմի, տվյալ դեպքում, ուղղական և հայցական հոլովների ձևաբանական վիճակը հնդեվրոպական հիմք-լեզվում միանգամայն համապատասխանել է խոսքի կառուցման պահանջներին: Սակայն հետագայում, ինչպիսի մնացած հոլովները, այնպես էլ ուղղական ու հայցական հոլովները ենթարկվել են պատմական փոփոխությունների: Այժմ, եթե հնդեվրոպական հիմք-լեզվում շնչավոր առարկաների անունների համար ուղղական և հայցական հոլովները ունեին խիստ որոշակի ձևեր, ապա հնդեվրոպական շատ լեզուներ հետագա զարգացման ու փոփոխման հետևանքով կորցրին կամ համարյա կորցրին ուղղական ու հայցական հո-

¹ Այս մասին տե՛ս А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, էջ, 301, 305, 346, К. Мюленбах, Об употреблении род. пад. вместо винит. в славянских яз.-ах. Известия отделения русского яз. и словесности АН, 1899, т. XIV, էջ 1216, А. Томсон, Происхождение форм им. и вин. п. и грамматического рода в индоевропейском праязыке, Известия Отделения русск. языка и словесности АН, 1913, т. XVIII, кн. 4-я, էջ 153—154).

² А. Мейе, Введение..., էջ 346.

լովածները տարբերող հատկանիշները, որով և առաջացավ ներգործող սուբյեկտի անվան և ներգործվող, կրող օբյեկտի անվան հոլովական ֆունկցիաները շփոթելու վտանգը: Կորցրած հոլովական վերջավորութիւնների փոխարեն լեզուները գիմեցին նոր միջոցների: Եվ քանի որ ներգործողի և կրողի հարաբերութիւնը քերականորեն արտահայտելու համար կան զանազան միջոցներ, ապա լուրաքանչլուր լեզու դիմում էր այս կամ այն միջոցին՝ իր քերականական կառուցվածքի առանձնահատկութիւններին համապատասխան:

Որոշ լեզուներում (ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն և այլն) սկսեց խիստ նշանակութիւն ստանալ բառերի կալուն դասավորութիւնը, որը կամաց-կամաց դառնալով օրինաչափ երեւոյթ, կանխեց վերոհիշյալ վտանգը: Ժամանակակից անգլերենում „The father loves the son“ և „The son loves the father“ պարզորոշ նշանակում են առաջին դեպքում՝ «Հայրը սիրում է որդուն», երկրորդ դեպքում՝ «Որդին սիրում է հորը», ուրեմն ներգործող սուբյեկտի անունը (քերականական ենթակա) նախորդում է ներգործվող, կրող օբյեկտի անվանը (քերականական ուղիղ խնդիր):

Որոշ լեզուներում սկսեցին հալցականի ձևական տարբերութիւն ֆունկցիա վերցնել նախդիրները կամ ետադիրները, հոգերը կամ այլ մասնիկները, մասամբ նաև բառերի կալուն դասավորութիւնը: Այս տեսակետից հոգերն առանձնապես կարևոր նշանակութիւն ստացան գերմաներենում, նախդիրը՝ գրաբարում, իսպաներենում, ռումիներենում, նախդիրը և ետադիրը՝ իրանական լեզուներում: Իսպաներենում ներգործվող, կրող օբյեկտի անունը (ուղիղ խնդիր) երբ ցույց է տալիս շնչավոր առարկա (անձ), ստանում է նախդիր, իսկ երբ ցույց է տալիս իր, գործածվում է առանց նախդրի¹:

Հատիշերենում իգական սեռի անունների հալցականը և ուղղականը ձևականորեն նույնացել են. հալցականը իգական

¹ Р. А. Будагов, Очерки по языкознанию, Москва, 1953, стр. 152; А. Мейе, Общеславянский язык, Москва, 1951, էջ 325; А. Томсон, К вопросу о возникновении род.-вин. п. в славянских языках... (Известия..., 1909, т. XIV, кн. 1-я, էջ 73—74).

սեռի՝ շնչավոր առարկաների անունների դեպքում վերցրել է սեռականի ձևը¹:

Օսեթերենում անշունչ առարկաների և վերացական հասկացությունների անունների (որոշյալ և անորոշ) հայցականը ձևով նման է ուղղականին, իսկ շնչավոր էականների անունների հայցականը եթե որոշյալ է, ընդունում է սեռականի ձևը, իսկ եթե անորոշ է՝ ձևով նման է ուղղականին²:

Հին սլավոներենի հոլովների պատմական զարգացման մի որոշակի էտապում արական սեռի եզակի թվի ուղղականը և հայցականը չեն տարբերվել չեզոք սեռի ուղղական և հայցական հոլովներից. դրանով իսկ հետագայում սլավոնական լեզուների համար բնորոշ առանձնահատկություն է դարձել արական և չեզոք սեռերի եզակի թվի ուղղական և հայցական հոլովների ձևականորեն համընկնելը:

Եվ ահա սլավոնական լեզուներում շնչավորների հայցականը աստիճանաբար դիմում է սեռական հոլովաձևին³:

Այսպիսով, ուղղական և հայցական հոլովների ձևական նույնացումից հետո այդ հոլովների ֆունկցիաները չզիջվելու համար լեզուները ելք են որոնում հիմնականում երկու ուղղություն՝ ա) փոխում են բառերի երբեմնի ազատ դասավորությունը կալուն դասավորություն⁴, կամ՝ բ) պահպանում են բառերի ազատ, ճկուն դասավորությունը, բայց հայ-

¹ К. Мюленб а х, Об употреблении родительного падежа вместо винительного в славянских языках (Известия..., 1899, т. XIV, էջ 1202).

² Sht' u A. Томсон, К вопросу о возникновении род.-вин. п. в славянских языках... (Известия..., т. XIV, էջ 66).

³ Այս մասին տե՛ս նաև А. Томсон, Род. вин. падеж..., (Известия... 1908, т. XIII, кн. 2-я. էջ 232—233, 248; А. Мейе, Общеславянский язык, էջ 305, 306; В. А. Богородицкий, Общий курс русской грамматики, Москва, 1935, էջ 301; П. Я. Черных, Историческая грамматика русского языка, Москва, 1952, էջ 149—150; А. А. Булаховский, Исторический комментарий к русскому литературному языку, Киев, 1939, էջ 105.

⁴ Լեզուն կարող է նախադասության ներգործական (ակտիվ) կառուցվածքը փոխել կրավորականի (պասիվի), ըստ Տոմսոնի սլավոններինը չգրիմեց այդ միջոցին, որովհետև ընդհանրապես այդ երկու կառուցվածքները իմաստարանական տեսակետից իրար չեն ծածկում:

ցականը զանազան միջոցներով (նախդիր, ետադիր, հոդ) տարբերում են ուղղականի ձևից, իսկ որոշ լեզուներում հայցականը վերցնում է այլ հոլովաձև:

Հայերենի ուղղական և հայցական հոլովները չպահպանեցին հնդեվրոպական հիմք-լեզվի հոլովական համապատասխան վերջավորությունները և հնչյունական ճանապարհով ձևական նույնացման ենթարկվեցին¹: Այդ նույնացումը տեղի ունեցավ ոչ թե սոսկ առանձին հիմքերի բառերում, ինչպես այդ պատահեց սլավոնական լեզուներում, այլ եզակի թվի բառերում ընդհանրապես, ընդ որում և՛ շնչավոր, և՛ անշունչ առարկաների ուղղականն ու հայցականը եզակի թվի բոլոր անուններում ձևական նույնացման ենթարկվեցին: Սրան նպաստել էր նաև այն հանգամանքը, որ հայերենը, ինչպես ենթադրվում է, կորցրել էր քերականական սեռի վերջավորությունները:

Արդյունքն այն եղավ, որ հայերենը կանգնեց ներգործվող, կրող օբյեկտի անունը ձևականորեն տարբերելու անհրաժեշտության առաջ: Հայերենի հայցականը դրա համար օգտագործեց «զ» նախդիրը:

Արդեն իսկ 5-րդ դարի գրականության մեջ մենք հանդիպում ենք «զ» նախդրի այդ նպատակով օրինաչափ կիրառությանը: Այսպես օրինակ, եզակի ուղղականում՝ տուն, շուն, որդի, եզակի հայցականում՝ (զ)տուն, (զ)շուն, (զ)որդի, հոգնակի ուղղականում՝ տունք, շունք, որդիք, հոգնակի հայցականում՝ (զ)տունս, (զ)շունս, (զ)որդիս: Ինչպես տեսնում ենք, հոգնակի հայցականը, բացի «զ» նախդրից, ուղղականից տարբերվելու այլ միջոց ևս ունի, այն է՝ -ս մասնիկը, որը հիմնականում հոգնակիի վերջավորությունն է հայցականում: Սակայն -ս մասնիկը արդեն զրաբարում բավական թու-

¹ Այսպես են գնահատում, օրինակ, Ա. Տոմսոնը իր „Историческая грамматика современного армянского языка г. Тифлиса“ (էջ 184) և „К вопросу о возникновении род.-вин. п. в славянских языках“ (Известия..., 1909, т. XIV, кн. 1-я, էջ 61—63) աշխատանքներում, Լ. Մսերյանցն իր „Этюды по армянской диалектологии“ (ч. I. вып. I Москва, 1901, стр. 74—75) գրքում:

լացել էր որպես հոլովակերտ մասնիկ: Այդ երևում է նախ՝ «զ» նախդրի օրինաչափ գործածությունից՝ հոգնակի հայցականում, և երկրորդ՝ որ -ս մասնիկը հետագայում հեշտությամբ զիջեց ք և եր (նեբ) հոգնակիներին նույնիսկ այն պայմաններում, երբ այդ փոխարինումը ենթադրում էր հոգնակիում ուղղական և հայցական հոլովների լիակատար նույնացում:

Բառերի ազատ դասավորությունը բնորոշ էր նաև գրաբարին: Այդ պատճառով ուղղական և հայցական հոլովների ֆունկցիաների ձևական տարբերակման համար միանգամայն հարմար միջոց էր զ- նախդրի գործածությունը, այդ երևում է, թեկուզ, հետևյալ օրինակներից. «Արամ ծնանի զԱրայն գեղեցիկ» (ՄԽ, Պհ, 21), «Եւ կոչեաց արքայ Շապուհ զարքայ Արշակ» (Փաւստոս), «յործամ դուստր զմայր անարգիցէ, և նու զկեսուր իւր, և կին զայր, և ծառայ զտէր, և եղբայր զեղբայր» (Եզն., ԵԱ, 42—43):

Բայց արդյո՞ք բոլոր դեպքերում անհրաժեշտ էր ձևական տարբերակման ենթարկել ներգործվող, կրող օբյեկտի անունը: Այսինքն, կա՞ր անհրաժեշտություն, որ բոլոր դեպքերում հայցականը ստանար զ- նախդիրը: Այդպիսի անհրաժեշտություն չկար, որովհետև ձևական տարբերակման կարիք ըզգում էր այն ուղիղ խնդիր հայցականը, որը խոսքի մեջ հանդես էր գալիս իբրև մտքի կոնկրետ առարկայի անուն: Երբ ուղիղ խնդիր հայցականը մտքի կոնկրետ առարկայի անուն չէ, ապա հազիվ թե նա գիտակցվի ներգործողի ֆունկցիայով, մանավանդ այն դեպքում, երբ բուն ներգործող սուբյեկտը հանդես է գալիս որպես մտքի կոնկրետ առարկա (իսկ քերականորեն՝ որոշյալ): Այսպես՝ «Առաքէ հրեշտակս առ Արայն Գեղեցիկ» (ՄԽ, Պհ, 59), «քաջընթացիկս առաջի իւր առաքէ» (ն. տ., 37), «Բանզի անրավ մարդիկ սկսաւ զհնել դիւաց» (ն. տ., 93), «Եւ արքային պարսից Շապուհ կատարեալ զհայցուածս նոցա՝ շնորհէր նոցա թագաւոր Խոսրով անուն յազգէն Արշակունեաց» (ՂՓ, Պհ, 8), «ցաւովք և տըրտմութեամբ որդիս ծնջիր» (Եզն., ԵԱ, 51): «Այլ կախարդք, ասեն, յղեն դևս և հանեն զդևս» (ն. տ., 60), «Զի ոչ երբէք տեսաք՝ թէ կովք էշս ծնան, և էշք եղինս, և ոչ գալլք մա-

քիս, և ոչ մաքիք աղուեսս, և ոչ առիւծք ձիս, և ոչ ձիք
օձս» (Եզն., ԵԱ, 85):

Եվ քանի որ զ-նախդրի գործածութիւնը կապված է
մտքի կոնկրետ օբյեկտի անվան հետ, իսկ որպէս մտքի կոն-
կրետ օբյեկտ կարող են հանդես գալ ոչ միայն անձը (շնչա-
վոր առարկան), այլև իրը (անշունչ առարկան), ապա
զ-նախդիրը հնարավորութիւն է ստանում հոլովական վերջա-
վորութեան ֆունկցիա վերցնել իր վրա բոլոր առարկաների
աճուկաների որոշյալ հայցականում (եզակի ու հոգնակի
թվում)¹:

Այսպէս, օրինակ, «Այլ կախարդք, ասեն, լղեն դէս և հա-
նեն զդէս» (Եզն., ԵԱ, 60), «Թէ՛ Ուրմիզդն զանասունս,
զչորքոտանիս և զթռչունս և զձկունս և զամենայն ինչ՝ որ
բարի և գեղեցիկ է՝ արար. և Արհմնն զգազանս չարս և
զթռչունս պիղծս և զսողունս և զօձս և զկարիսն և զամե-
նայն վնասակար ճնիս» (Ն. տ., 101). «Այլ և յայն ևս հայել
պարտիմք՝ թէ որչափ անասունս վասն մերոց պիտոյից ընդ
մեօք հնազանդեաց, զձիս և զուղտս և զփիղս և զառջառ և
զոչխար. և ի լերանց և ի դաշտաց զայծեմունս և զեղջե-
րուս և զառիսն և զվարագս» (Ն. տ., 103), «այլ նոցա որ-
պէս զմորթն զգենումք, և ոչ վնասէ. և զմիսն եթէ սիրտ ու-
րուք առնոյր և ուտէր՝ ոչ վնասէր» (Ն. տ., 47), «և եթէ ըզ-
ջուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք, սատակի» (Ն. տ.):

2- նախդիրը առանձնապէս ուժեղ ամբապնդվել էր հին
հայերենի դերանունների հայցականում:

Գրաբարի անձնական դերանունների ուղղականում՝ ես,
դու, նա, ինքն, հայցականում՝ զիս, զքեզ, զնա, զինքն,
նույնի հոգնակի ուղղականում՝ մեք, դուք. նոքա, ինքեանք,
իւրեանք, հայցականում՝ զմեզ, զձեզ, զնոսա, զինքեանս,
զիւրեանս: Յուցական դերանունների եզակի թվի ուղղակա-

¹ Այդ է պատճառը, որ չնայած հին հայերենում (դեռևս նախա-
գրային շրջանում) առաջացավ ուղղական և հայցական հոլովների
հնչյունական-ձևական նույնացում, չառաջացավ անձի (շնչավորի) ու
իրի (անշունչի) քերականական կատեգորիա: Այդ կատեգորիան չկար
նաև հետագա շրջանի գրաբարում:

նում՝ սա, դա, նա և այլն. հայցականում՝ զսա, զդա, զնա և այլն, նույնի հոգնակի ուղղականում՝ սոքա, դոքա, նոքա, հայցականում՝ զսոսա՝ զզոսա, զնոսա: Հարցական¹ և հարաբերական դերանունների եզակի ուղղականում՝ զո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ որ, հայցականում՝ զո՞, զո՞վ, զի՞, զի՞նչ, զոր: Նույնի հոգնակի, ուղղականում՝ ո՞յք, որք, հայցականում՝ զո՞յս, զորս և այլն:

Հայոց լեզուն իր հետագա պատմական զարգացման ընթացքում, ինչպես քերականական կառուցվածքի մեջ ընդհանրապես, այնպես էլ հոլովական սիստեմում առաջ բերեց լուրջ, որակական փոփոխություններ: Փոխվեց նաև հայցական հոլովի ձևաբանական վիճակը. վերացավ հոգնակի հայցականի -ս մասնիկը, պահպանվելով միայն մի քանի բառերում՝ բառակազմական նշանակությամբ, հետևապես այդ մասնիկը կորցրեց հոգնակիի իմաստի և հոլովական վերջավորություն նշանակությունները: Ուղղական հոլովի ք հոգնակին իր հոգնակի իմաստի նշանակությունը պահպանեց քիչ բառերում (ժամանակակից հայերենում՝ գլուղացիք, բայց՝ գլուղացիներ, կովկասցիք, բայց նաև՝ կովկասցիներ, Գրիգորենք և այլն), դարձավ բառակազմական մասնիկ՝ աչք, ոտք, միտք և այլ բառերում, իսկ հոգնակիի վերջավորությունները հիմնականում դարձան եր, ներ մասնիկները: Եղակի և հոգնակի թվի հայցականի զ- նախդիրը վերացավ այն ընդհանուր օրինաչափությամբ, որով ընդհանրապես վերացան հին հայերենի հոլովակերտ նախդիրները:

Արևելահայ աշխարհաբարում հայցականի զ- նախդիրը շատ ավելի վաղ է սկսել ընկնել, քան արևմտահայ աշխարհաբարում:

Արդեն 17—18-րդ դդ. նյութերում առանց զ- նախդրի հայցականը դառնում է սովորական երևույթ.

«...իշեցէք ի Քրիստոս տանուէր Վարդանէսն եւ կողակից Մարեան. Յիշեցէք ի Ք-ս Ծառուրն եւ կողակիցն իւր Մարեան» (ԿԿ, ՎՏ, 191), «ով ընթերցողք, յորժամ ըն-

¹ Հարցական դերանունները անձ ցույց տալու դեպքում ուղղականը և հայցականը տարբերվում են, իսկ այլ շնչավորների և իրի անունների դեպքում նույնն են:

թեոսուք, լիշեցէք. յաղաթս ձեր Անտոն անարժան քահանայն» (Ն. տ., 205): «Յովնաթան սիրով այրեցիր» (ՆՆ, Բ, 44), «որ պիտի մենք այս երկիրներս հայն ու ղզլպաշն փչացնեմք (Յ, Ը, 422), «մեր քահանայքն կոտորեցին» (Ն. տ., 428), «որ ուզում ին, թէ թագաւորն սպանին» (ԶԱԾ, 31), «Սալ ժ տարով յառաջ իւր եկապարտորդի Պետրոս Վարդապետն եպիսկոպոս էր արհնել» (Ն. տ., 63):

17-րդ դարում և 18-րդ դ. սկզբներին տեղի է ունենում զ-նախդիր համատարած կորուստ: Հայերենում նորից առաջանում է ներգործողի ու կրողի (ուղղականի և հայցականի) ֆունկցիաները շփոթելու վտանգը: Բայց ի տարբերութուն նախադրային հայերենի, այս նույնացումն արդեն ստացվեց նաև հոգնակի թվում, որովհետև վերացավ նաև -ս մասնիկը հոգնակի հայցականում: Հոգնակի ուղղականի և հայցականի համար սովորական դարձավ եր, ներ մասնիկների կիրառութունը: Ուրեմն եզակի և հոգնակի հայցականները թե՛ որոշյալ, թե՛ անորոշ, թե՛ անձի (շնչավորի), թե՛ իրի (անշունչ առարկայի) անունների դեպքում ձևով համընկան ուղղականի հետ, չունենին ուղղականից տարբերվելու որոշակի ձևաբանական միջոց: Ֆունկցիաները շփոթելու վտանգը ակնհայտ էր: Եվ ահա հայերենը նորից ելք որոնեց շնչավոր էականների (առանձնապես անձերի) անունների հայցականը ձևով ուղղականից տարբերելու համար:

Զկար այնպիսի նախդիր, որը իր վրա վերցնեք այդ ֆունկցիան, իսկ հոլովակերտ նախդիրները վերացել էին: Հոգերը չէին կարող այդ ֆունկցիան վերցնել իրենց վրա, որովհետև հոգերի ձևաբանական արժեքը հայերենում չէր նպաստում դրան:

Արեւմտահայ աշխարհաբարը, ինչպես վերը նշել ենք, համեմատաբար ավելի ուշ կորցրեց հայցականի զ-նախդիրը: Ամենից ուշ զ-նախդիրը ընկավ անձի (շնչավոր էականների) անունների հայցականում¹, այսինքն այն դեպքերում, երբ

¹ Այսինքն դրում է. «Եզակի ու յոքնակի հայցականին սկիզբը կ'եւեցցուի զ գիրը (որ նախդիր կ'ըսուի), մասնաւանդ ուր որ ուղղականի հետ շփոթելու վախ ըլլայ. — (ասիկա սովորաբար յատուկ անունաց ու գերանունաց հայցական է): Զորօրինակ. Մեր բանակն զբշնամին ցրուեց» (Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Քերականութիւն, էջ 11):

Ֆունկցիաները շփոթելու վտանգը ավելի ուժեղ էր, իսկ արեւմտահայ գրականում դերանունները հաճախ են զ- նախդիր ընդունում, մանավանդ անձնական դերանունների հայցականը, օրինակ՝ զիս, զնա, զինքն և այլն:

Լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների պահանջով արեւմտահայ գրական լեզուն և մի քանի արեւմտահայ («Կը» ճյուղ) բարբառներ դիմեցին բառերի կալուն դասավորութեանը: Բառերի կալուն դասավորութեան նախադրյալներն արդեն գրաբարում կային:

Ինչպես որ անգլերենում, ֆրանսերենում և այլ հնդեվրոպական լեզուներում, այնպես էլ արեւմտահայ գրական լեզվում ներգործող սուբյեկտի անունը (քերականական ենթակա) նախորդում է ներգործվող, կրող օբյեկտի անվանը (քերականական ուղիղ խնդիր): Օրինակ, «Սաթենիկ եղբայրը գտավ» (ԱԱ, ԸԵ, 16), «Տարակույս չկար, թե Քերովբե էֆենտին չուր համակրանաց արժանի գտած էր Սաթենիկը» (Ն. տ., 19) դեպքերում Սաթենիկ, Քերովբե էֆենդին ենթականեր են, իսկ եղբայրը, Սաթենիկը՝ ուղիղ խնդիրներ:

Այլ օրինաչափություն սկսվեց արեւելահայ աշխարհաբարում: Գրավոր հիշատակարանները վիայում են, որ 17-րդ դարում և 18-րդ դ. սկզբին արեւելահայ աշխարհաբարում անձի (շնչավորէակաների) անունների հայցականը ձեռք դեռեւ նման էր ուղղականին: Օրինակներ. «Ախր վերջն սուլթան Իբրահիմ թագաւորն խեխդեցին» (ՉԱՕ, 31), «Իւր մեծ որդին թախտ նըստուցին» (Ն. տ.). «Եղիազար վարդապետն բերին Էջմիածին» (Ն. տ., 79), «Մարգիկն զրկի Մեղրի» (Ն. տ., 154), «Յակոբ կաթողիկոսն Օնոֆրիոս վարդապետն Էջմիածնում բռնեց» (Ն. տ., 128), «Խանն կոխեցին բէրթն» (Ն. տ., 136), «այսպէս հաւն կոտորեցին» (Ն. տ., 131), «Շատ մարդ հաւն մորթեր, ձգեր դուս» (Ն. տ.), «Մամատ անուն խանն... բռնել են» (Զ, Ը, 958), «Իվան Կարապետն ուղարկեցինք» (Ն. տ., 357), «Ես Իվան Կարապետս էլ իմ տղէն ուղարկեցի սրանց հետ» (Ն. տ.), «Իմ եղբայր Թաքիսան ուզքաշին, պ. Գրիգորն, պ. Մելքոն, պ. Ներսէսն զրկեցինք քոյ հրամանոցդ ղուլուղն» (Ն. տ., 432), «Թէ հաճոյ է քո հրամանացդ կարգ ի կարգոյ ասա

ինչպէս դուք երեխայքն կուկրտէք» (Sch, ThLA, 328), «Այ տղայ Ղազար, գնա մին մեր Մատուրն կանչէ գա» (ն. տ., 347), «Երկու աղջիկս պսակել եմ» (ն. տ., 363), «Աստուած զօրացնէ թռռներդ» (ն. տ., 364), «որ ամենքն սանիթի ես տվել (ն. տ.), «Նաղաշն թողել ես ծարավ ու բէուշ» (ՆՀ, Բ, 5):

«Ոսպար չեմ թէ ինչպէս գովեմ՝
Վրաստանայ արմաղաններն,
Վրաստանայ արմաղաններն,
Շէն Թիֆլիզու թաւաղներն» (ն. տ., 14):

«Վատ մարդն դուք մէջ միք բերել» (ն. տ., 164): (Կատուն)
«Մկներն կանէ արիւնշաղախ» (ն. տ., 97):

«Նոր ուղարկիր խնամխոսք» (ՀԱ, 6), «Ետնէս ուղարկես Վախտանգ խանըն» (ՄՄ, ԸՆ, 243), «Դու էր ես Նաղաշըն անարգում» (ն. տ., 250):

Վերևում մենք արդեն նշել ենք, որ բառերի ազատ ճշկուն դասավորութեան պայմաններում, երբ ուղղական և հայցական հոլովների ձևական համընկնման պատճառով, ներգործողի և կրողի անունները զրկվում են ինքնուրույն հոլովաձևերից, շնչավոր էակների անունների դեպքում հայցականը ալ կերպ է ձևավորվում (հոլովաձևի օգնությամբ):

Բնականաբար հարց է առաջանում, իսկ ինչո՞ւ հատկապես անձի և ապա շնչավոր առարկաների անունների դեպքում է առաջ գալիս շփոթութիւն ուղղական և հայցական հոլովների ֆունկցիաների միջև: Ինչո՞ւ այն ժամանակ, հնդեվրոպական էպոխայում, երբ չեզոք սեռի (անշունչ առարկաների անունների) դեպքում ուղղականը և հայցականը ձևով նույնն էին, չառաջացավ ուղղական և հայցական հոլովների ֆունկցիաների շփոթում:

Այս բացատրվում է նրանով, որ չեզոք սեռի (անշունչ առարկաների) անունների դեպքում առանց շփոթութեան, պարզ կերպով հասկացվում է, թե որն է ներգործող սուբյեկտի, որը ներգործվող, կրող օբյեկտի ֆունկցիայով: Շատ քիչ դեպքերում է, որ ներգործողի և կրողի հարաբերութեան մեջ

Ներգործողը իր է, իսկ կրողը՝ անձ (շնչավոր): Ընդ որում այս հարաբերությունը կարող է ունենալ հետևյալ դեպքերը՝

ա) ներգործողը անձ (շնչավոր) է, կրողը՝ իր.

բ) ներգործողը իր է, կրողը՝ իր.

գ) ներգործողը անձ (շնչավոր) է, կրողը՝ շնչավոր (անձ).

դ) ներգործողը իր է, կրողը շնչավոր (անձ)¹:

Առաջինը, որպես ներգործողի և կրողի հարաբերության ամենից տարածված, սովորական դեպքը, իր քերականական արտահայտության մեջ կարիք չի գգում կրողի անվան համար առանձին հոլովածի, քանի որ մտքով հեշտ հասկացվում է այն:

Երկրորդ դեպքում ներգործողի և կրողի հարաբերության քնույթը այնպիսին է, որ, երբ անցողական բաղի հետ հանդես են գալիս իրերի անուններ, սովորաբար երկու իրերից միայն մեկը կարող է սովյալ գործողության մեջ ներգործող լինել, իսկ մյուսը՝ սովորաբար ներգործվող. կրող: Այս արդեն հասկացվում է առանց դժվարության: «Քամին քշում է ամպը», կամ «Կուտակված ամպերը քշեցին տարան հյուսիսից փչող ուժեղ քամիները», դեպքերից պարզ երևում է, որ քշել (և տանել) կարող են քամիները (քամին), իսկ քշվել (և տարվել)՝ ամպերը (ամպը), հետևապես ներգործող սուբյեկտը (քերականական ենթական) կլինի քամին (քամիները), իսկ

¹ Ա. Ֆոմսոնը այս երևույթը սլավոններենում քննելիս, բերում է որոշ հաշվումներ ուսուներենից, ըստ այդ հաշվումների անցողական բայերի մոտ համարյա $\frac{3}{4}$ -ը լինում է անձ սուբյեկտ. այն բայերը, որոնք բացարձակապես ունեն անձ սուբյեկտ, կազմում են 14% : Կենդանիների անունները սուբյեկտի դերում լինում են բոլոր անցողական բայերի $\frac{1}{4}$ -ի մոտ, իսկ օբյեկտ՝ 37% -ի մոտ: Իրի անունները օբյեկտի (ուղղ. խնդրի) ֆունկցիայով լինում են բոլոր անց. բայերի $\frac{3}{4}$ -ի մոտ, իսկ բոլոր անց. բայերի 45% -ը միայն իր օբյեկտ (ուղ. խնդիր) է ընդունում: Այս և նման բազմաթիվ հաշվումներ անելուց հետո Տոմսոնը եզրակացնում է, որ սուբյեկտի ֆունկցիայով ամենից շատ լինում են անձի անունները, օբյեկտի ֆունկցիայով՝ իրի անունները: Կենդանիների անունները բռնում են միջին տեղը: (Տե՛ս А. Томсон, Родительный-винительный падеж при названиях живых существ в славянских языках, Известия отд. русского языка и словесности АН, т. XIII, кн. 2-я, էջ 254—260):

կրող օբյեկտը (ուղիղ խնդիրը)՝ ամպը (ամպերը), անկախ
այն բանից, թե դա ընկած է անցողական բալից առաջ, թե
հետո, ենթակա է նախադասված, թե՞ ուղիղ խնդիրը, մի
խոսքով, անկախ բառերի դասավորությունից:

Այս մոմենտը ավելի ակնհայտ է այն գեպքում, երբ ներ-
գործողը անձի (շնչավոր էակի) անուն է, իսկ կրողը՝ իրի
(ա դեպքը): «Սուրիկը գիրքը դրեց սեղանին», «Աշոտը բա-
ժակի ջուրը թափեց գետնին», «Մենք այնտեղ տեսանք գե-
ղեցիկ շատ վայրեր» օրինակներից պարզ երևում է, որ խո-
սողը երբեք նման կապակցություններում ներգործողի (քե-
րականական ենթակայի) ֆունկցիա չի վերագրի գիրքը,
ջուրը, վայրեր բառերին, հետևապես սրանք որևէ այլ միջո-
ցի (հոլովածևի) կարիք այնքան էլ չեն զգում կրողի ֆունկ-
ցիան արտահայտելու համար:

Այլ է վիճակը, երբ երկուսն էլ անձի (շնչավոր էակի)
անուն են: «Հայրը սիրում է որդուն», «Մայրը գրկեց աղջը-
կան», «Շունը տեսնում է տիրոջը» արտահայտություններում,
եթե չլինեի ընդգծված անունների ձևական տարբերությունը
համապատասխան ուղղական ձևերից (հայրը, մայրը, շունը),
ապա, որովհետև հայերենում բառերի դասավորությունը ա-
զատ է, հավասարապես կենթադրվելու ուղիղ հակառակը, այ-
սինքն, որ որդին է սիրում հորը, աղջիկն է գրկել մորը,
տերն է տեսնում շանը:

Այսպիսով՝ ներգործող սուբյեկտի և կրող (ներգործվող)
օբյեկտի առարկայական հարաբերությունը ցույց տվող քերա-
կանական արտահայտության մեջ՝ հայցականը, երբ անձի
(շնչավոր էակի) անուն է, անկախ այն բանից, թե ուղղա-
կանն անձի (շնչավոր էակի), թե՞ իրի անուն է, ուղղական
և հայցական հոլովների ձևական նույնության և բառերի
ազատ դասավորության պայմաններում, — կարող է դիտվել
իրրև ներգործող սուբյեկտի ֆունկցիա ունեցող, զրանով իսկ
առաջ բերել ուղղական և հայցական հոլովների ֆունկցիանե-
րի շփոթության վտանգ: Այսպիսի դեպքերում հայցականը
անպայման պետք է ձևավորվել այլ կերպ (հոլովածևի օգ-
նությունը):

Այժմ կարող է հարց առաջանալ. իսկ ինչո՞ւ հատկապես հայցական հոլովով դրված անձի (շնչավոր էակի) անունը պետք է նոր հոլովածեի կամ այլ միջոցի դիմելու: Եթե ուղղականը և հայցականը ձևով նույնացել են, ապա միթե ուղղականը պահանջ չէր գրում նոր հոլովածե, նոր միջոցներ որոնելու, իր հիմնական հոլովական ֆունկցիան արտահայտելու և հայցականից տարբեր ձևավորվելու համար:

Այս թերևս բացատրվում է նրանով, որ նախ՝ ներգործողի և կրողի առարկայական հարաբերությունների քերականական արտահայտություն մեջ անձի (շնչավոր էակների) անունները ավելի շատ են լինում ներգործողի ֆունկցիայով (ուղղական հոլովով) և ավելի քիչ կրողի ֆունկցիայով (հայցական հոլովով), մյուս կողմից՝ ուղղական հոլովը անձի (շնչավոր էակների) անունների դեպքում (ինչպես և այլ դեպքերում) հանդես չի գալիս սոսկ որպես ներգործող սուբյեկտի հոլով, այլ ավելին՝ որպես գործողության սուբյեկտի հոլով. հետևապես ուղղական հոլովով հանդես են գալիս ոչ միայն անցողական բայերի ենթակաները, այլև չեզոք ու կրավորական բայերի ենթակաները: Բայց հայցականը անձի (շնչավոր էակների) անունների դեպքում միայն կրող (ներգործվող) օբյեկտի հոլով է:

Այսպիսով, անձի (շնչավոր էակների) անունների ծավալուն գործածությունը ուղղականում ամրապնդում է հոլովական ֆունկցիայի և հոլովական ձևի միասնությունը, իսկ նույն անունների սահմանափակ գործածությունը հայցականում՝ վերջինիս, ուղղական հոլովի հետ ունեցած «մրցության» պայմաններում, թուլացնում է հայցականի ձևի ու ֆունկցիայի միասնությունը: Այդ է պատճառը, որ ձևական նույնության պայմաններում՝ հայցականի ֆունկցիան շնչավոր էակների անունների դեպքում ավելի հեշտ է «բաժանվում» իր ձևից և «որոնում» այլ ձև, քան ուղղական հոլովի ֆունկցիան:

Որ իսկապես անձերի (շնչավոր էակների) անունների հայցականի նոր ձև որոնելու շարժառիթները կապված են ուղղական-հայցական ձևական նույնացման հետ, այդ հաստատվում է սլավոնական լեզուների օրինակով:

Շնչավորի ու անշունչի քերականական կատեգորիան սլավոնական լեզուներում չի տարածվել իգական սեռի անունների վրա: Իսկ այդ այն պարզ պատճառով, որ իգական սեռի անունների եզակի թվում ուղղականը և հայցականը խիստ տարբերվում են, ունեն բոլորովին տարբեր հոլովածակեր (սուսերենում՝ им. школа, корова, девушка, вино. школы, корову, девушку): Այս հանգամանքը հնարավորություն չի տվել տվյալ կատեգորիայի ծավալմանը և տարածմանը բոլոր շնչավորների վրա, այլ, ընդհակառակը, սահմանափակել է որոշակի սահմաններում, արական սեռի եզակի թվի անուններում: Սլավոնական լեզուներում եզակի և ապա հոգնակի թվի ոչ բոլոր հիմքերի անուններում է ձևական նույնացում առաջացել ուղղականի և հայցականի միջև: Սա նպաստել է այն բանին, որ եզակի թվի միայն արական սեռի շնչավոր անունների հայցականն է սեռականի ձևը ընդունել: Հոգնակի թվում իգական անունները ևս անալոգիալով նմանվել են արական սեռի անուններին և ընդունել են հայցականում սեռականի ձևը. օրինակ՝ արակ. սեռ՝ Писатель любит своего положительного героя. Писатель любит своих положительных героев, իգական սեռ. Тракторист любит эту девушку, բայց՝ Трактористы любят этих девушек.

Նախորդ մեր շարադրանքը հնարավորություն կտա մեզ ճիշտ հասկանալու, թե հայերենի շնչավոր էականների, առանձնապես անձի անունների հայցականը ինքնատիպ ձևավորվելու ի՞նչ տենդենցներ ունեն այն շրջանում, երբ արդեն երկրորդ անգամ առաջացել էր ուղղական և հայցական հոլովների ձևական համընկնում, մի համընկնում, որ ռեալ փաստ էր ոչ միայն եզակի, այլև հոգնակի թվում:

18-րդ դ. 1-ին կեսերից, նախ մասնակի արտահայտությունների ձևով և ապա դարի կեսերից որոշակի օրինաչափությամբ սկսվում է ծավալվել տրականաձև հայցականը՝ անձի (շնչավոր առարկաների) որոշյալ անունների համար.

«Դոցայ հայերին ամենայն ջախտան և ամենայն կերպով ներդաշնանց ազատ կը պախի» (Զ, С, 406, 1724 թ.),

«Երբ տեսա սիրունույս, քանց ձյուն հալեցա» (ՆՀ, Բ, 193),
«Եթե իմ սիրելույս վերջը ինձ չտան» (Ն. տ.):

«Հալը որդուն կորցրեց, քույրը՝ եղբորը,
Կինը՝ իրա մարդին, աղջիկը՝ հորը,
Մանուկը լալիս է կորցրած մորը...» (ՀԱ, 10):

«Զորն անգորին կերել է» (Ն. տ., 19), «Իմացել եմ,
ուրիշներուն սիրում ես» (Ն. տ., 24), «Արալի-Սարգիսին
պախիր քանց դուրի» (Ն. տ., 29), «Շատին զարթուն կու լու-
սացնիս, շատին կու քրնեցնիս բանգով» (ՄՆ, ՀԽԼԺ, 9), «Տես-
նողին կու շինիս մաս-մաս» (Ն. տ., 32), «Ես որ իմ յարին
տեսա բաղչի մեջըն ման գալով» (ՄՄ, ԸՆ, 295), Սայաթ-
Նովին մի ջգրեցնի (Ն. տ.), «Շուրըն տանե Սայաթ-Նովին»
(Ն. տ., 308), «Ածողիդ երկու կու շինիս» (Ն. տ., 283).
«Դոստիրըս դուժման շինեցիր, յագեբուն ինչպես դոստ ա-
նիմ» (ՄՆ, ՀԽԼԺ, 15), «Ետ էստունցէ թագաւորն ուր ախթօրն
կանչեց» (ԱՃ, ՀԼՊ, 2, էջ 455, 1755):

«Գարունքվան վախտըն լըցվիլ է»,—երանի ձիգ
ծաղկած վարիր,
Թո՞ւ րլբուլին բաղն դըրգեցիք, մանիշակով լիքըն
սարիր,
Բաս ինչի՞ ձենըն չե գալիս, սալբու չինար, ետ
ի՞նչ արիր,
Ճուխկըդ բլբուլին սըպանից՝ կարմիր վարթըն
խարին մընաց» (ՄՆ, ՀԽԼԺ, 30):

Հայերենում անձի (շնչավորի) և իրի (անշունչի) քերա-
կանական կատեգորիայի կազմավորման պրոցեսի հարցում
կարևոր մոմենտներ են հետևյալները. նախ՝ ռն է հայցական-
տրական ձևական անցման ելակետը և եթե այդ ելակետը անձ-
նական, ցուցական կամ հարցական դերանունների մեջ է, ապա
ի՞նչ օրինաչափություններ է այդ անցել գոյականներին. մյուսը՝
ինչո՞ւ հայցականը ընդունեց տրականի ձևը և ոչ թե այլ հոլո-
ված, և վերջապես՝ ինչո՞ւ այդ անցումը սկսվեց որոշյալ անուն-
ներից:

Նախքան այս հարցերը հայերենում քննության առնելը, տեսնենք, թե համանման երևույթը՝ հայցական-սեռական անցումը սլավոներենում (և այլ հնդեվրոպական լեզուներում) ինչպես է գնահատված լեզվաբանական գրականության մեջ:

Հայցական-սեռական ձևական անցումը սլավոներենում Մեյեն, ապա և Մյուլենբախը և ուրիշները քննարկելիս, ելակետ են համարում դերանունները:

Մյուլենբախը վերլուծելով անձնական դերանունների զանազան դրսևորումները հնդեվրոպական հիմք-լեզվում և հին սլավոներենում, գտնում է, որ հայցական-սեռական ձևական անցման հիմքում ընկած են *mene, tebe, sebe* դերանունները, իսկ դրանց անալոգիայով *кто, того, сего, кого* դերանունները¹:

Վոնդրակը (*Altkirchenslavische Grammatik*, 1900, 282) առաջարկում է ելակետ ընդունել հարցական *кто* դերանունը, որի հայցականը միշտ *кого* է: Ըստ նրա հարցական դերանունից պրոցեսը տարածվել է անձնական, ապացուցական դերանունների վրա, դերանուններից՝ որոշյալ ածականներին, որից էլ գոյականներին²:

Սակայն հարցը դերանուններով չի վերջանում, և լեզվաբանները իրավացիորեն վկայակոչում են այլ գործոններ: Այստեղ ահա առաջ է գալիս հայցական-սեռական հոլովների ձևաբանական այլ ընդհանրությունների հարցը:

Կրող խնդիրը հին սլավոներենում, ումանք (Բեռնեկերը և ուրիշները) գտնում են, որ նույնիսկ բալթիկ-սլավոնական լեզվում, ժխտական նախադասության մեջ դրվում էր սեռական հոլովով: Այդ ալոպես է նաև ժամանակակից ռուսերենում „Я вижу сестру“, բայց՝ „Я не вижу сестры“; „Я не взял карандаша“ և այլն:

Ներգործական (ակտիվ) կառուցվածքի ժխտական նախադասություններում կրող խնդիրը սեռականով դնելը վճռա-

¹ К. Мю л е н б а х, Об употреблении род. подлежа..., Известия..., 1899, т. XIV, էջ 1202—1207:

² Տես այս մասին մանրամասն՝ А. Томсон, род.-вин. падеж..., Известия..., т. XIII, кн. 2-я, էջ 234:

կան գործոն է եղել սլավոնական լեզուներում հայցական և սեռական հոլովների ձևաբանական ընդհանրությունն ամրապլնդելու նաև ոչ ժխտական, հաստատական բնույթի նախադասություններում՝ շնչավոր էականների անունների համար: Հավանաբար լուրջ դեր են խաղացել նաև մի քանի ներգործական բայերի ինդրառություն տառանումները հայցակա-նում և սեռականում:

Կ. Մյուլենբախը լատիշերենում, իսկ Ա. Տոմսոնը օսեթերենում հայցական-սեռական ձևական անցման երակետ համարում են դերանունները¹:

Իր մի աշխատություն մեջ Տոմսոնը, անդրադառնալով հայերենի անձի ու իրի քերականական կատեգորիային, գրում է. «Տրականաձև հայցականի առաջացումը ես վերագրում եմ առանձին բարբառների ինքնուրույն կյանքի շրջանին: Դժբախտաբար՝ ինձ մոտ չկան բոլոր տվյալները, որպեսզի թեկուզ մոտավորապես բացահայտեմ այդ հետաքրքիր երևույթի պատմությունը, որ մեզ արդեն հայտնի է ուսերենից, յսիրեն, հայցականի փոխարինումը ուղղ. և սեռ. հոլովներով»²:

Իր մի ուրիշ հոդվածում (К вопросу о возникновении род.-вин. п. в славянских языках. Сходное явление в других языках, Известия..., 1909, т. XIV, кн. I-я, стр. 61—62) Տոմսոնը նորից անդրադառնալով այս հարցին, գտնում է, որ հայերենում տրականաձև հայցականի կազմավորման պրոցեսի և ուսերենում՝ սեռականի ձևով հայցականի կազմավորման պրոցեսի միջև կան նմանություն, թե այդ նմանությունը չի կարելի հանգեցնել այդ լեզուների փոխա-

¹ S^h u K. Мюленбах, Об употреблении род. падежа..., Известия..., т. XIV, стр. 1202—1207; А. Томсон, К вопросу в возникновении род.-вин. падежа..., 1909, т. XIV, кн. I-я, стр. 69—70.

² А. Томсон, Историческая грамматика современного армянского языка г. Тифлиса, СПб, 1890, էջ 184: Տոմսոնը և Մսերյանցը գործածում են անուականի ձևով հայցական առտահայտությունը, որը ճիշտ չէ. հայերենում հայցականը վերցրել է ոչ թե սեռական ձևը, այլ՝ տրականի ձևը:

դարձ ազդեցությանը. «Հայցական հոլովի նման նորակազմությունը երկու լեզուներում բացատրվում է նմանութամբ այն պայմանների, որոնք ի միջի այլոց մասամբ նրանց մեջ տարբեր են: Այդ պատճառով սեռ. հայց. առաջադրման ուղին էլ նրանց մեջ ոչ լիովին է նույնական»¹:

Սակայն հայցական-տրական ձևական անցման ելակետը հայերենում քննելիս Տոմսոնը կարևոր տեղ չի հատկացնում դերանուններին, ավելին՝ ժխտում է նրանց ունեցած դերը (ն. տ., էջ 64): Նա իրավացիորեն ուշադրություն է հրավիրում բայերի «սեռական-տրականով» և հայցականով խնդրառություններին:

Քննարկելով հայցական-տրական անցման հարցը հայերենում, Մ. Աբեղյանը իրավացիորեն այդ անցման ելակետ համարում է դերանունները, ընդգծելով նաև մի շարք անցողական բայերի (հաղթել, վնասել, երացել, ձայնել, ողջունել, ապառկել) տրականով կրող խնդրի առնչելու թողած ազդեցությունը: Ընդ որում նշում է, որ նախապես տրականի ձևով հայցականը գործածվել է անձնական, ապա ցուցական դերանուններում, իսկ դրանից հետո՝ որոշյալ գոյականներում²: «Բայց այս գործածությունն—գրում է Աբեղյանը,—ընդհանրացել է ավելի այն պատճառով, որ տրականը ստացել է նաև հանգման հոլովի, այսինքն հայցականի նշանակություն»³:

Աբեղյանի այս վերջին մտքի հետ չի կարելի համաձայնել, որովհետև տրականաձև հայցականն ունի իր կրող խնդրի նշանակությունը (ֆունկցիան), իսկ բուն տրականը այդպիսի հիմնական ֆունկցիա չունի:

Հայցական-տրական-ձևական անցման ելակետը դերանունների մեջ որոնելն արդարացվում է նրանով, որ դեռևս 17-րդ դարում և 18-րդ դ. սկզբին, այսինքն այն շրջանում, երբ մենք գրեթե չենք հանդիպում տրականաձև հայցականի,

¹ А. Томсон, К вопросу о возникновении род.-вин. падежа..., նույն տեղում, էջ 64:

² Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 98—99 և Հայոց լեզվի տեսություն, 1931, էջ 98—99:

³ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, էջ 99:

գերանունների մեջ որոշ բացառութիւններով, արդեն դա սովորական երևույթ էր. «որ մեզ ազատէ...» (Յ, Ը, 319), «որ մեզ այս կողմն էլզուն ումուտովն ուղղարկեց» (Ն. տ., 304), «ալ էվէլի դոքալ լիվով ձեզ կուպահեն» (Ն. տ., 394), «Քանի որ կարելիալ շուտով դոցայ ճանապարհ գծես և դոլ էլ ետուրանէնցն գոս» (Ն. տ., 406) «սոցա փուլացունենք» (Ն. տ., 417), «որ ինձ տարելոյ իւր տուն» (Ն. տ., 425), «ի՞նձ փրջացրեր» (ՆՆ, Բ, 7), «ի՞նձ հանեցիր իմ գործ ու բանէն» (Ն. տ., 8), «Քեզ հնց մոռանամ» (Ն. տ., 9), «կամքդ են ալ ինձ ըսպանես» (Ն. տ., 18), «Յանկարծ քեզ տեսալ» (Ն. տ., 49): Մի քիչ ավելի ուշ շրջանում՝ «Ուսուցիչն նոցա նստուցանում է ի վերալ ծնկանց» (ԿԱ, ԲԳ, 459), «Աստուած քիզ ու նրան պագէ» (ՍՆ, ՀԽԼԺ, 42), բայց նաև՝ «Սայ դրին թագաւոր» (ՁԱՍ, 32), «այս առի կին» (Ն. տ., 93). «այլ (Մուստաֆալուլի բէկն) տարան Ղում քաղաք» (Ն. տ., 140), «առաջ Շահաբաս սայ (Շահնուաստ իւանն) տարալ Ըսպհան» (Ն. տ.), «ապալ էջմիածնալ սեալզլուխն սայ ընդրեցին էջմիածնալ աթոռակալ» (Ն. տ., 148):

Եթե գրաբարի հայցականում անձնական, ցուցական հարցական գերանունները ներկայացնում են՝ զիս-զմեզ, զքեզ-զձեզ, զսա-զսոսա, զդա-զդոսա, զնա-զնոսա, զո՞, զի՞նչ ձևերը, ապա 17—18-րդ դարերում զ-ի կորուստով և տրականի ձևի անալոգիական ազդեցությամբ ունենք մոտավորապես այս ձևերը՝ ինձ-մեզ, քեզ-ձեզ, նրան-նրանց (նոցա), սրան-սրանց (սոցա), դրան-դրանց (դոցա), ո՞ւմ:

Որ այդ այդպես է, հաստատվում է նաև հետևյալով: Սկրոդերը, երբ իր հայտնի գրքում վերլուծում է արևելյան աշխարհագրարի հոլովական ձևերը, անձնական, ցուցական գերանունների հայցականը բերում է զ-ով և առանց զ-ի. զքեզ և քեզ, զիս և ինձ, զնա և նա, իսկ գոյականների ուղղականը և հայցականը շնչավոր էականների անունների դեպքում ևս դնում է մի ձևի տակ:

Գրաբարի անձնական գերանունների քննութիւնը ցույց

¹ J. J. Schröder, Thesaurus linguae armenicae, 307—311.

է տալիս, որ 2-րդ դեմքի եզակի ու հոգնակի թվերում հայցական հոլովը ձևով տրականից տարբերվում է միայն զ- նախդրի առկայությամբ (եզ. տր. քեզ, հայց. գքեզ, հոգն. տր. ձեզ, հայց. զձեզ): 1-ին դեմքի անձնական դերանվան հոգնակի թվում նույն պատկերն է, ինչ որ երկրորդ դեմքի եզակի ու հոգնակի թվում, այն է՝ հոգն. տր. մեզ, հայց. ըզմեզ: Եվ ահա՝ հայոց լեզվի զարգացման հետագա շրջանում անձնական դերանունների 2-րդ դեմքի եզակի ու հոգնակի թվերի ու 1-ին դեմքի հոգնակի թվի անալոգիայով 1-ին դեմքի եզակի թվի հայցականը (զիս) ձևով նմանվում է տրականին (իմն), և առաջանում է իմն ձևը հայցականում:

Այս պրոցեսին, իհարկե, մեծապես նպաստել է զ- նախդրի ընկնելը հայցականում: Անալոգիական նորակազմությունը ընթացել է զ- նախդրի անկման պրոցեսին զուգահեռ:

Մի քիչ այլ ձևով է կատարվել 3-րդ դեմքի անձնական դերանվան տրական-հայցական ձևական նույնացումը:

Գրաբարում անձնական դերանվան 3-րդ դեմքի եզակի թվի տրականում եղել է նմա ձևը (հոգնակիում՝ նոցա), սեռականում՝ նորա, հայցականում՝ զնա:

Պետք է ենթադրել, որ հնչյունական համընկնում է առաջացել նախ սեռական և տրական հոլովներում: Որ այս կարող է այսպես կատարված լինել, կարող ենք հաստատել ուրիշ դերանունների օրինակով:

Սկրոդերը իր «Հայոց լեզվի գանձ» (1711 թ. Ամստերդամ, էջ 312) աշխատության մեջ բերելով հարցական դերանունների հոլովական ձևերը (արևելյան աշխարհագրին վերաբերող հատվածում), սեռականում և տրականում դնում է ո՞ւմ ձևը, հայցականում՝ ո՞վ, իսկ, հայտնի է, գրաբարում միայն տրականն է ո՞ւմ եղել, սեռականը՝ ո՞յր (ո՞ւր), հայցականը՝ զո՞, զո՞վ: Նշանակում է՝ Սկրոդերի ժամանակ հայերենում արդեն սեռական և տրական հոլովների համար կար նման ո՞ւմ ձևը, իսկ հայցականը դեռևս չէր նմանվել տրականին, ինչպես ունենք ժամանակակից հայերենում (սեռ. տր. հայց. ո՞ւմ):

Անալոգիական անցում է կատարվել նաև նորա ձևից ներա(ն)-ին:

Այս բոլորի արդյունքը լինում է այն, որ անձնական դերանունների բոլոր դեմքերի ու թվերի հայցականը ձևով համընկնում է տրականին: Ցուցական դերանունները եզակի ու հոգնակի թվերում անձնական դերանունների անալոգիայով հայցականը կազմել են տրականի ձևով: Թերևս այս պրոցեսին նպաստել է նաև այն, որ նա անձնական և նա ցուցական դերանունների արմատները նույնն են: Եվ վերջապես, ինչպես նշեցինք, ձևական նույնացում է առաջացել նաև հարցական դերանվան մեջ:

Քննելով դերանունների (անձնական, ցուցական, հայցական) ունեցած դերի հարցը հայցական-տրական ձևական անցման պրոցեսում, մենք միաժամանակ նշում ենք, որ այնուամենայնիվ, կրկնենք միակողմանիություն մեջ, եթե հայցը սահմանափակենք դերանունների շուրջը:

Հայցական և տրական հոլովների ձևաբանական ընդհանրությունների հարցը քննելիս, մեծ ուշադրություն պետք է դարձնել մի երևույթի վրա ևս, որ մի շարք ներգործական բայեր հայերենում դեռևս շատ վաղուց կրող խնդիր են վերցնում տրական հոլովով, իսկ մի շարք ներգործականներ էլ տատանումներ են ունենում տրական և հայցական հոլովների միջև: Այսօրնյանը գրում է. «Մեր ռամիկը սովորած է ուղղ. և հայց. հոլովներուն նոյնաձայնությունէն ծագած հոմութեան դարման՝ հայցականի տեղ տրականը դործածել, (որն որ Տրականէ-հայցական կը կոչենք ընթացքին մէջ), որ մինչեւ նաեւ դերանուանց վրայ տարածուած է, եւ հիմալ միւս գաղառականներուն մէջ աւելի յաճախութեամբ կը տեսնուի: Այս անկանոն խնդրառությունն այնչափ հին է նախնեաց ռամկօրէնին մէջ, որ ԺԱ դարուն կէսէն արձանագրութեան մը վրայ կը կարդացուի. «Որ ոք այսմ վնռի հաւաւաւնս խափանել ջանա... Թէ ոք այս գրոյս խափանել ջանա, այնպիսին նզովս չարաչարս ընկալցի ի սրբո լուսաւորչէն Գրիգորո» (Շ, 1051) նույնպէս ավելի ետքերը՝ «Որ այս հաստատ պայմանիս եւ անքակ վնռիս խափանել ջա-

նալ» (ԶԻԳ, 1274): Գրքերու մէջէն, Այս երրորդիս Բարակ անուանեն. եւ այլն... Անտարակոյս ասոր սկզբնաւորութիւն մըն էր Է դարէն՝ Պահնա գդա՝ որ իջանեմք եւ գնդի խաղամք... Տես վարը՝ արեւելեան գւ. Ձնաթօփի խաղալ... Այսպէս ալ ստորին դարուց գրաբարին մէջ ըսուած է՝ «Փունջ ծաղկանց ծափի հարկանեն» փխկ. ծափս կամ ծափ զծափի: Իրաւամբ կասկածելի եղած է՝ ԺԱ դարու մէջ յառաջ բերուած հին հեթանոսական հայերէն երգի մը վերջին տողը. «Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք.» ...որուն հարուլ բալէն գատ... Թմբկի հարկանել խնդրառութիւնն ալ կատարեալ միջնադարեան է կամ ուսկական» (Քնն. Քեր., Նախաշաւիղ, էջ 155):

Այս հարցի կապակցութեամբ ահա թե ինչ է գրում Ս. Պալասանյանը. «Մասնավոր ուշադրութեան արժանի է շնչավոր առարկաների հայցականը, որ որոշյալ հոգով հոլովվելիս՝ տրականի հետ նույնանում է... Այս տրականաձև հայցականը նոր երևույթ չէ մեր լեզվի մեջ... Արդեն Դ և Ե դարերի գրվածներում անվանական բայերը հայցականի տեղ տրական խնդիր են առնում. Ասեն այնմիկ աղբիւր Յակոբայ: Որում տեղոյ Աշտիշատն կարդացեալ: Որում հացեացն գրախտ կոչեն: Հաջորդ դարերի ընտանեկան գրվածներում այս տրականաձև հայցականը ավելի հաճախ երևում է իբրև խնդիր ամեն տեսակ բայերի մոտ: Այսպես Է դարուց կա ասած, պահեա գդա, որ իջանեմք և գնդի խաղամք. (որ շատ նմանութիւն ունի Երևանցոց ձնաթօփի խաղալ դարձուածքի հետ): Այսպես և Մագիստրոսի (ԺԱ դարումը) ազգային երգերից առաջ բերած հասուկտորի մեջ. Մեք փող հարուաք և Թմբկի հարկանէաք, թեպետ ոմանք այս տողի հարազատութեան վրա կասկածում են»¹:

Այսպիսով, հայերենում անձի (շնչավոր էակների) անունների դեպքում հայցական-տրական ձևական անցումը կատարվել է հայցական ու տրական հոլովների ձևաբանական-իմաստաբանական ընդհանրությունների բազայի վրա, այն է՝

¹ Ս. Պալասանյան, Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 41:

ա) անձնական, ցուցական, հարցական դերանուններում հայցական ու տրական հոլովների համար համընկնող ձևերի առաջացում:

բ) հայերենին հատուկ է մի քանի անցողական բայերի տրականով կրող խնդիր առնելը: «Յաղթեցուք ամենախն քաղաքացն նորա» (ՀՀ և ՆԿ, 1051), «Յաղթեցին նոցա» (Ն. տ.), «որք լաղթեցին գազանին» (Ն. տ., 1052), «Յաղթեաց բազում ամբոխի» (ՆԲՀԼ, II, 516). «Առվետական Բանակը հաղթեց Հիտիերի հորդանքին», «Նա հաղթեց իր մրցակցին» և այլն: «Կալեալ հարին ոչ զքարի, այլ զբերանոյ սրոյ» (ՆԲՀԼ, II 64), «Առնուլ զոտից մանկանց նորին, և հարկանել զկարծր վիմին» (Ն. տ.), «Տիրեացէ ազգաց բազմաց» (ՀՀ և ՆԿ, 1450), «տիրեցէք երկրին» (Ն. տ.) «տիրեացէ նմա» (Ն. տ.).

գ) դեռևս գրաբարում մի քանի անցողական բայերի (մանավանդ պատճառականների) խնդրառության տատանումները տրական-հայցականում և ընդհանրապես հայերենին հատուկ՝ որոշ անցողական բայերի խնդրառության տատանումները կապված բայիմաստի բնութի ալս կամ ախ երանգավորման հետ. «Զգեցոյց նմա պատմուճան բեհեզ» (ՀՀ և ՆԿ, 616): «Զամենախ զմեքիսն զգեցուցին» (Ն. տ.), «Զգեցուցի զքեզ պէսպէսս» (Ն. տ.), «Զգեցուցին նմա զիւր հանդերձ» (Ն. տ.), «Որ զգեցուցանէր ձեզ (կամ զձեզ) կարմիրս» (ՆԲՀԼ, I, 727), «Ուսուցանել զձեզ առնել ախպէս» (ՀՀ և ՆԿ, 1220), «Ուսուցանէին զՅուդա» (Ն. տ.), «որ ուսուցանէին ժողովրդեանն» (Ն. տ.), «Ուսուցէք զիս» (ՆԲՀԼ, II, 556), «լուան զձայն», բայց՝ «լուարուք ձայնի իմում» (ՀՀ և ՆԿ, 658), «Հարցանել նմա», բայց՝ «Եթէ հարցանիցէ զքեզ որդին քո», «Զմեզ զի՛նչ հարցանելոց էք» (Ն. տ., 866—67):

Այս և նման մի քանի այլ քերականական-իմաստաբանական ընդհանրությունների բազայի վրա սկսում է աստիճանական անցում անձի (շնչավոր էակների) անունների ուղղ. ձևով հայցականից՝ տրականի ձևով հայցականի:

Այնուհետև՝ հայցական-տրական ձևական անցումը պետք է դիտել որպես անալոգիական նորակազմություն: Անալո-

գիան (համաքանութիւն, նմանակութիւն) լեզվի մեջ կարեւոր նշանակութիւն ունեցող օրինաչափութիւն է:

Ո՞րն է բնորոշը անալոգիական նորակազմութեան համար: Ինչպէս են կատարվում, ասենք, քերականական կառուցվածքի մեջ ալոպիսի նորակազմութիւնները:

Ամենից առաջ անհրաժեշտ է, որ քերականական կառուցվածքի այս կամ այն բնագավառում հին ձևերի սիստեմին փոխարինող նոր ձև հանդես գա: Որպեսզի այս նոր, ղեռն չծալալված և ինքնուրույն սիստեմի չգերածված ձևը փոխարինի հին ձևերի սիստեմը, անհրաժեշտ են որոշակի բարեմալաւտ պայմաններ: Այդ պայմաններն էլ պետք է հին ձևերի սիստեմը փոխարինելու հնարավորութիւնը դարձնեն իրականութիւն: Ամենաանհրաժեշտ պայմանն այն է, որ խաթիւվեն հին ձևերի սիստեմի հիմքերը, այսինքն հին ձևերի սիստեմը այլևս չբավարարի քերականական կառուցվածքի նոր պահանջները: Այս պայմանի դեպքում նոր ձևը կենսունակ է, և զարգացման ծավալման տեղեկեցւոյն է ձեռք բերում: Քերականական կառուցվածքի տվյալ մասում կամաց կամաց մահանում են հին որակի տարրերը և ծավալվում են նոր որակի տարրերը:

Այսպիսով, քերականական կառուցվածքի նոր պահանջների և հին ձևերի միջև առաջացած «կոնֆլիկտը» լուծվում է նրանով, որ նոր պահանջները չբավարարող հին ձևերի փոխարեն ստեղծվում են նոր ձևեր: Հնից նորին անցնելը, տվյալ դեպքում, կատարվում է մասնակի՝ բայց կենսունակ ձևի ընդհանրացման ու ծավալման միջոցով:

Այս տեսանկյունով մոտենալով անձի ու իրի քերականական կատեգորիային հայերենում, տեսնում ենք, որ հնչյունական տեսակետից հայցական և ուղղական հոլովների ձևական համընկման պատճառով, հայցականի այդ ձևը շնչափոր առարկաների, ամենից առաջ, անձի անունների դեպքում, այլևս չէր կարողանում արտահայտել ներգործվողի, Կրողի (ուղիղ խնդրի) քերականական ֆունկցիան: Հայցականի ձևը այլևս չէր համապատասխանում քերականական կառուցվածքի նոր պահանջներին: Հարկավոր էր նոր ձև անձի,

շնչավոր առարկաների անունների համար: Այդ նոր ձևը տրական հոլովի ձևն էր, քանի որ ներգործողի, կրողի ֆունկցիայով հայցականը ավելի սերտ ձևաբանական ընդհանրության մեջ էր տրական հոլովի հետ: Սկսվում է աստիճանական անցում շնչավոր առարկաների, ամենից առաջ, անձի անունների հայցականի հին ձևից՝ տրականի ձևին, տրականի ձևը, այս անգամ արդեն, որպես ներգործողի, կրողի (ուղիղ խնդրի) քերականական ֆունկցիայի ձև, իսկապես նոր ձև է:

Ինչպես ցույց են տալիս տրականաձև հայցականի նախնական արտահայտությունները, հայցական-տրական ձևական անցումը նախապես կատարվել է անձերի (շնչավոր էակների) որոշյալ անուններում: Ոմանք (Տոմսոն, Մյուլենբախ) հաստատում են, որ սլավոներենում ևս հայցական-սեռական ձևական անցումը նախապես կատարվել է որոշյալ անուններում¹:

Մեյեն սա բացատրում է ցուցական դերանունների՝ ազդեցությունը: Տոմսոնը՝ քննադատելով այն լեզվաբաններին, որոնք սլավոներենի հայցական-սեռական ձևական անցման հիմքում դնում են ձևաբանական սնալոգիան (Մեյե, Մյուլենբախ) կամ շարահյուսական սնալոգիան (Վոնդրակ, Բեռնեկեր), ընդունում է լեզվի իմաստաբանական կողմը, որպես վճռական խթան: Ըստ նրա, երբ օբյեկտի մտապատկերը խոսակցի մոտ աչնպես է արթնանում, որ ձգտում է գրավել սուբյեկտի տեղը, ապա անհրաժեշտ է լինում այն արտահայտել հատուկ ձևով. հոգեբանական սուբյեկտը միշտ ունի որոշյալ նշանակություն... քանի որ միայն լսողին ծանոթ, նախապես նրա մեջ արթնացած մտապատկերը կարող է ձգտել դառնալ ելակետ նրա մոտ... ապա սեռ.-հայց. հանդես է եկել առաջինը և կարողացել է այնուհետև վերջնականապես հաստատվել ամենից առաջ որոշյալ նշանակությամբ գոյականներում²: Միաժամանակ Տոմսոնը ընդգծում է, որ միշտ

¹ Այս մասին տե՛ս նաև А. Меѣе, Старославянский язык, էջ 326:

² А. Томсон. Родительный падеж при названиях живых существ в слав. языках. Известия..., 1908, т. XIII, кн. 2-я, էջ 253:
152

որոշյալի իմաստ ունեն հատուկ գոյականները, ցուցական ու անձնական դերանունները, որոնք և ավելի վաղ են ստացել սեռական ձևը:

Եթե ելակետի հարցում լեզվաբանները որոշ տարակարծությունների մեջ են ընկնում, ապա ոչ ոք չի վիճարկում այն, որ սլավոնական լեզուներում սեռական-հայցականը կազմավորել է անձի՝ արական սեռի անունների եզակի թվում¹, որից հետո սկսվել է ծավալել զանազան ուղղութիւններով², այն է՝

1. Անձի անուններից անցել է շնչավորների անուններին առհասարակ, 2. շնչավորների եզակի թվից անցել է հոգնակի թվին, 3. շնչավորների հոգնակի թվի արական սեռի անուններից՝ իգական սեռի անուններին: Այս պրոցեսը լիովին չի դրսևորվել բոլոր սլավոնական լեզուներում: Ռուսերենը այս տեսակետից ամենից լրիվ ու ամբողջական է ներկայացնում շնչավորի ու անշունչի քերականական կատեգորիան: Ուկրաիներենում, լեհերենում վերին ու ներքին լուծիկերենում միայն անձի անունների եզակին ու հոգնակին են փոխարինում հայցականը սեռականով, իսկ այլ շնչավոր-

¹ Կ. Մյուլենբախը կարծում է, թե սեռականը հայցականի փոխարեն օգտագործվել է նախապես եզակի թվում այն պատճառով, որ ա) միայն եզակի թվի արական սեռի հայցականն է ձևով համընկել ուղղականին, բ) միայն եզակի թվում վերոբերյալ դերանունները ծառայել են սեռական և հայցական: Հոգնակի թվում ուղղականը և հայցականը տարբերվել են: Իսկ սկզբում անձի հատուկ անուններն են փոխարինել հայցականը սեռականով, որովհետև անձի հատուկ անունները գտնվում են ամենից ավելի մոտիկ հարաբերության մեջ անձնական դերանունների հետ, տե՛ս նրա՝ Об употреблении род. падежа... нулю и т.д., էջ 1210:

² Ռուսերենում շնչավորի ու անշունչի կատեգորիայի քերականական առանձնահատկութիւնների մասին տե՛ս М. В. Ломоносов, Пол. собр. соч., т. 7, 1952, М.—Л., էջ 460, 697, 643, Буслаев, Историческая грамматика русского языка, ч. II, Москва, 1763, էջ 183—189, А. А. Шахматов, Синтаксис русского языка, вып. II, Ленинград, 1927, էջ 26—28, В. В. Виноградов, Русский язык, М.—Л., 1947, էջ 89—90; Грамматика русского языка, т. I, изд. АН СССР, Москва, 1952, 104—107:

Ների՝ կենդանիների անունների դեպքում միայն եզակի թվի հայցականն է սեռականի ձևով:

Շնչավորի և անշունչի կատեգորիայի տարածումը հոգնակի թվում եղել է ուշ շրջանում այն պատճառով, որ ողղականը և հայցականը հոգնակիում բավական ուշ են ձևով համընկել (ռուսերենում մոտ 13-րդ դարում):

Եթե շնչավորի ու անշունչի քերականական կատեգորիան ընդունել է այդպիսի արտահայտություն սրավոճական լեզուներում, ապա անձի ու իրի քերականական կատեգորիան հայերենում ունի իր առանձնահատուկ դրսևորումները, կապված հայոց լեզվի առանձնահատկությունների հետ: 19-րդ դ. գրական հայերենում անձի որոշյալ անունների տրականաձև հայցականը կամաց-կամաց դարձավ օրինաչափ քերականական երևույթ: Ըիշտ է, երկար ժամանակ նման դեպքերում հայցականը գործածվում էր ոչ տրականի ձևով էլ, սակայն վերջնականապես, մասնակի բացառություններով, այդ ձևը հաստատվում է գրական հայերենում:

Այսպես, օրինակ, Արովյանի, Նալբանդյանի, Պոռչյանի, Մուրացյանի գործերում հաճախ ենք պատահում անձի որոշյալ անվան հայցականի, բայց ոչ տրականի ձևով, հետագա շրջանի հեղինակների մոտ սակավ է պատահում.

«Նա մեր ազգի ողորմելի ջիվան որդիքն էր արյան ծովումը խեղդում» (Աբ., III, 110), «Որն էլ իր տեքը էնքան էր գլխի վրա քաշ տվել» (Ն. տ., 103), «Հերը որդին ուրանում էր» (Ն. տ., 125), «ուզում ես մերդ ու քիրդ էս տեղ բերել տամ» (Աբ., II, 316), «որդիդ ինձ տուր», «չունքի նրա տանքցիքը լավ կճանաչեմ» (Աբովյան): «Աստված քու երեխեքը քեզ բաշխի» (Պ, I, 28), «ինչպես մի մարդ, որ իր մինուճար որդին կորցրած ըլնի» (Ն. տ., 46), «ձեր հարսը հո ձեռներիցդ չեմ կարող խլիլ» (Ն. տ., 89), «Ես իմ աղջիկը նրան պտի տամ» (Ն. տ., 125): «Որդին էլ որ ծախի, պրծնում չկա» (Ն. տ., 304), «Այժմ արդեն պտրում եմ նախկին մարդն» (Մ, ԵԺ, 2, 89): «Իսկույն հիշեցի տեր-Հովսեփի կույս-Աննան, (Ն. տ., 33): «...Ինչպես թանկագին հարազատը կորցրած մի մարդ» (Ն. տ., 152), «Աղջիկդ տվիր

նրան» (Մ, ԵԺ, 1, 108), «և ինձանից են պահանջում իրենց դուստրը (ն. տ., 116.), «Ամուսնացողներն իրենք են ընտրում իրենց ընկերները» (ն. տ., 244), «Նա պատժում էր, նզովում էր, հրապարակավ մարդերը» (Ն, ԸԵ, 15), «նա սկսեց որոնել ձայն տվողը» (ն. տ., 61), «Խելացի մարդը հարգում է ուրիշները» (ն. տ., 79), «կոչիր շուտով Գրիգորը» (ն. տ., 131), «Հասան բեգը վերջապես հաճում է այլևս... մեր գեղեցիկները չառևանգել» (ՎՓ, ԸԵ, 4), «Երբ տանը կլինես, գամ կինդ ու որդիներդ տեսնեմ» (ն. տ., 30), «պահում էր տանտիկիներն ծծի մացուկները» (ն. տ., 54): «Աստված պահի քո որդին» (ՀԹ, ԸԵ, 67): «Զայրացավ հոգին քաջ զորավարի... առավ ընկերներն հին կռիվների» (ԱԻ, 2, 135),

Երբ անձի անունը անորոշ է, ապա դժվար է գիտակցում ներգործողի ֆունկցիայով, մանավանդ այն դեպքում, երբ բուն ներգործողի անունը քերականորեն կամ որոշյալ է, կամ կոնկրետացված է որևէ այլ միջոցով. այդ պատճառով քերականորեն անորոշ անունները նախապես չեն ենթարկվել այն օրինաչափությանը, որին ենթարկվել է անձի որոշյալ անունների հայցականը, այսինքն չեն ընդունել տրականի ձևը: Այսպես, օրինակ՝ վերոհիշյալ հեղինակների մոտ մենք գերազանցապես հանդիպում ենք անձի անորոշ անունների ոչ տրականաձև հայցականի. «յա մեկ հազար մարդ էլ ա սպանի» (ԽԱ, ԵԼԺ, III, 126), «ծնող, ազգական, դեռ չեմ տեսել» (ն. տ., 187), «Վերջապես մեկ աղջիկ ա սիրում» (ԽԱ, ԵԼԺ, II, 289), «սիրուհիներ պահելը» (Շ, ԵԼԺ, 4, 163):

«Ես չըգտա ոչ մեկին

Երազներից իմ շըքեղ,

Եվ ոչ մի մարդ, ոչ մի կից՝

Հերոսներից իմ շըքեղ» (ՀԹ, ԸԵ, 55):

«Ու զորկեց արքան ուրախ դեսպաններ» (ն. տ., 101), «մինչև որ մենակ մի մարդ կըզրտնեն» (ն. տ., 152), «Մոռացավ ընկեր, աղաթ ու աշխարք» (ն. տ., 194), «Ահա թե ինչպես կըփախցնեն աղջիկ» (ն. տ., 198), «Օտար երկնքի կամարների տակ Երազիս տեսա մի չքնաղ աղջիկ» (ՎՏ, ԵԺ,

38) «Տեսա փղի պես հաղթանդամ մի մարդ» (ԱԻ, ԵԺ, 3, 39), «Ինքն էլ ամուսնացել և որդիներ հասցրել» (Ն. տ., 45): «Զես կարող մի մարդ ուղարկես քաղաք» (Ն. տ., 129), «և արքան ուղարկեց մուկեաիկներ շատ տեղեր հայտնելու, որ իր դուստրը պիտի իրեն փեսա ընտրի» (Ն. տ., 155), «Բազմաթիվ վարպետ ու բանվոր է վարձում ձեռնարկի համար» (Ն. տ., 283):

Թեև անձի անորոշ անունները հայցականում նախապես չեն ընդունել տրականի ձևը, բայց հայոց լեզվի զարգացման հետագա շրջանում անալոգիական օրինաչափությամբ աստիճանաբար սկսել են ընդունել. և իսկապես անցյալ դարի հեղինակների մոտ համեմատաբար քիչ ենք հանդիպում անձի անորոշ անունների տրականաձև հայցականի, իսկ ուշ շրջանի հեղինակների մոտ՝ ավելի հաճախ. «տեղն ընկած վախտը մարդի սաղ սաղ ուտում են» (Աբ., III, 130), «տասներհինգ թուրքի մենակ էն չորս քրդերն էին սպանել» (Ն. տ., 167), «Մեկ անգամ մեկ մարդի ուզում էր տեսնի» (Աբ.), «Մեկ ինչլիզի դեներալ շատ աֆիցների ղոնաղ արեց» (Աբ., IV, 72), «Թե շատակերությունն ինչպես ա մարդի ջանից քցում» (Ն. տ., 153), «Մարդ մարդի դժար էր ճանաչում» (Պ, I, 46) «մարդի թե կնկա՝ կողքին չոքացնում ա» (Ն. տ., 68), «...ամբողջ հայհոյելով քարշ էր տալիս մի թշվառ մարդի» (Ն. տ., 641): «Հարձակվեցին, ծեծեցին ոեսին ու մի քանի հարուստների» (ԱԻ, 3, 65), «Անհայտ չարագործները... մի ծեր մարդու սպանեցին» (Ն. տ., 105), «Ինչպես ծերացնում է մարդու» (ՎՓ, ԸԵ, 30), «տեր-Պորենն էլ մի ուրիշ տան մեջ մահվան մոտ եղող մի ծերունու հաղորդում էր» (Ն. տ., 59), «Ճանաչեց նաև մի մաշված աղջկա» (Ն. տ., 435):

Եթե անձի որոշյալ անունների վերաբերմամբ տրականաձև հայցականը բացահայտ գերակշռություն ունի, իսկ անձի անորոշ անուններում ձեռք է բերել ընդհանրանալու, օրինաչափ ձևերի՝ վերածվելու տենդենցներ¹, ապա այդ բանը

¹ Որոշ գրողների մոտ (Բաֆֆի, Շիրվանզադե) նկատելի է՝ իր նշանակելու դեպքում ևս գերանունների տրականաձև գործածություն հայցականում, որ այժմ անընդունելի է:

տեղի չի ունեցել այլ շնչավորների՝ ինչպես որոշյալ, այնպես էլ անորոշ անուանների նկատմամբ:

Կենդանիների որոշյալ անունները գրական լեզվում շատ ավելի գործածված են հայցականում ոչ տրականի ձևով. «աավարը մեկ կողմից քշեցին», «մալն ու ոչխարը ձորը դուրս քշեն», «ձանճը սպանել ի՞նչ տղամարդություն ա» (Աբովյան), «մերը կորցրած հորթի պես» (Պ, 1, 92), «ճագը կորցրած սարեկի պես» (Ն. տ., 25), «շներն այս ու այն կողմը ցրելով» (Մ, II, 13), «Աղաչեց մարիկ կկուն ու երկրորդ ճագն էլ ձգեց ներքև» (Թ, ԸԵ, 117):

«Մի օր սա եկավ, թե չորան Չատին

Ոչխարը թաքուն իմ հանդն է քաշել» (Ն. տ., 162):

«Կտրիճ տղան արձակեց ձին սրարշավ» (ԱԻ, 2, 36), «Այա ոչխարները հանձնելով տերերին» (ԱԻ, 3, 73), «Աթոն խոստացավ՝ շեկ երինջը մորթել հոգու հացին» (Ն. տ., 131), «Կովերն ու ոչխարները հարեաններն էին կթում» (Ն. տ., 149), «Պատանին վճիտ հայացք ձգեց շուրջը և խթանեց նմուլզը» (Ն. տ., 167), «Հետ սուր ինձ աղավնին» (Ն. տ., 184), «Ամեղը ուղտերը քաշեց աղբյուրի գուռների վրա» (Ն. տ., 281), «մինչև ուշ երեկո որոնում էին կորած աքլորը» (Ն. տ., 282):

Կենդանիների որոշյալ անունները, կապված այդ անունների ցուլց տված առարկաների անձնավորման հետ (հատկապես փոխաբերական խոսքում և առակներում), ինչպես և կապված համապատասխան անցողական բայերի բառային-իմաստաբանական բնույթի հետ, կրող օբյեկտի ֆունկցիան արտահայտելիս գրական լեզվում հաճախ դործածվում էին տրականաձև հայցականով. «Վրա ընկավ, էն էր պատռտորում էր էդ գառին» (Պ, 1, 282): «Անքուն գամփռները, որոնք սովոր են... պատռտել... գայլերին» (Ն. տ., 297): «Թե չէ՞ն տեսել մեկն ու մեկին, էն լիրբ ձային կամ Զըղջիկին» (Թ, ԸԵ, 94), «Սագիկներին, վառեկներին կերակրել ու խնամել»: «Արշակը նախանձով դիտում էր շանը» (ԱԻ, 3, 95): «Երեկոյան մոտ թռավ ճահիճը

փնտրելու վայր-արագիլին» (ն. տ., 169), «տեսավ իմաստուն փղեբրին» (ն. տ., 181), «Սակայն Ուլինարան պատասպարել էր արդեն մահապուրծ աղավնուն» (ն. տ., 184), «Եթե արքան ստրուկներս՝ կարողանա զտնել հրեղեն, թեպետր նմույզին» (Իս., 3, 204):

Գնդանիներին անունները անորոշ հայցականում տրականի ձև հազվադեպ են ընդունում. «մի անտեր գել էլ մի ոչխարի բռնել է» (ՀԹ, ԼԵ, 387), «Սակայն նա անգոր է մի նմույզի սանձահարել» (ԱԻ, 3, 209):

Բացի վերոհիշյալ օրինաչափ դեպքերից, հայ գրական լեզվում նկատում ենք սակավ դեպքեր, երբ իրի անունները ես՝ կամ էլ, եթե բառիմաստն ունի փոխաբերական նշանակություն, կրող խնդրի հայցականը կազմում է տրականի ձևով.

«Երկինքն անձրեն ա փայ տալիս երկրին,

Երկիրն ծովերիցն բարձրացնում ամպին» (Աբովյան):

«Սիրով էրված սրտին ո՞ր ջուրը կարա հովացնիլ» (Պռ., 1, 79):

Մեր բերած փաստերը հիմնականում վերաբերում էին արդի հայ գրական լեզվի զարգացման համեմատաբար ավելի վաղ շրջանին. այժմ տեսնենք, ի՞նչ վիճակ է ներկայացնում անձի ու իրի քերականական կատեգորիան ներկայումս:

Անձի հատուկ անունները, որպես կանոն, կրող խնդիր լինելու դեպքում հայցականը կազմում են տրականի ձևով. «Պիոներները շրջապատեցին ջոկատավար Արամին». «Բոլորը միաբերան գովում են ստախանովական Անուշին»:

Անձի հատուկ անունը կրող խնդիր լինելու դեպքում հայցականը չի կազմում տրականի ձևով, երբ ցույց է տալիս իր. «Երեկոյան ռադիոյով լսեցենք «Անուշը» (օպերա), «Ես մի քանի անգամ դիտել եմ «Չապաևը» (կինոնկար), «Դուք այսօր է՞լ պիտի Թումանյան(ը) կարդաք» (Թումանյանի ստեղծագործությունները): «Սուրիկը տեսել է Կալինինը» (քաղաք):

Անձի հատուկ անունը հայցականը տրականի ձևով է կազմում, երբ արտահայտում է տվյալ անձի կյանքը, գործունեու-

թյունը, աշխարհայացքը և ստեղծագործությունները միասին վերցրած, այսինքն՝ երբ նկատի չեն առնվում սոսկ նրա ստեղծագործությունները. «Նա բոլորից լավ գիտի Նալբանդյանին»։ «Հիշեցեք, սիրեցեք, ուսումնասիրեցեք Իլիչին» (Ստալին), «Ամբողջ աշխարհի պրոլետարիատը ավելի ու ավելի խորն է ուսումնասիրում Մարքսին՝ գիտական կոմունիզմի հիմնադրին»։

Անձի հասարակ անունները, երբ որոշյալ են, շատ քիչ դեպքերում է, որ հայցականը չեն կազմում տրականի ձևով. «Արուսի ծնողները սարսափահար մերժեին իրենց աղջիկը տալ Լևոնին» (ՆԶ, Հ, 155)¹։ «Ամեն գերդաստան իր մարդը առաջ քշի» (Դ, ԸՊ, 281)։

Անձի հասարակ անունները երբ կրող խնդիր են ունենալ ներգործական բայի, հայցականը չեն կազմում տրականի ձևով²։ «Երբ նա իր ընտրածն ունի» (ԳՍ, Թ, I, 47)։

Երբ անձի հասարակ որոշյալ անունը ցույց է տալիս իր (փոխաբերական նշանակությամբ), պահպանում է հայցականի նախկին (ուղղականին նման) ձևը հայցականը կազմում է իրի անունների նման.

«Ո՞վ է ծնել

Շողշողուն այս պատանին» (ԳՍ, Հ, 23) (= Սովետական Հայաստանը)³։

¹ «Աղջիկը տալ» ձևի բազմաթիվ գործածությունները ժամանակակից հայ զրական լեզվում ցույց են տալիս, որ այդ ձևը հորոշ ոճական նշանակություն է ձեռք բերել և ամրապնդվել է հայցականի նախկին ձևի մեջ։

² Ունենալ բայը զրական լեզվում միշտ գործածվում է ոչ տրականաձև հայցական խնդրով. «Ամեն գյուղում միկիտան Սաքոն ուներ յուր լուեխները» (Պռ., I, 464), «Նա իր հետ ուներ միայն մի երկու ծառա և իր պատանյակ որդին» (ԱԻ, 3, 58), «Քեզ պես մարդը չունենամ էլ՝ կլինի» (Ն. տ., 261)։

³ Անձի որոշյալ անունների դեպքում հայցականը պահպանում է իր նախկին ձևը նաև առածներում, ասացվածքներում, դարձվածքներում և այլն։ «Շունը տերը չի ճանաչում» (ԱՂ, ՀԱ, 11), «Տավարը կապով կը կապեն, մարդը՝ լեզվով» (Ն. տ., 18), «պա ե՛՛հ հերն անիծած», «աստվածը մոռացավ» այլ նման արտահայտություններում։

Երբ անձի որոշյալ անունը ցույց է տալիս կենդանի (այլ շնչավոր էակ) փոխաբերական նշանակությամբ, կարող է հայցականը կազմել տրականի ձևով. «Ավագյանն իր անշընչացած ուռիսին (կատվին) դետին շարտեց» (ՆՁ, Հ, 19):

Անձի հասարակ անորոշ անունները կրող խնդրի հայցականը կազմում են կամ տրականի ձևով, կամ պահպանում են հայցականի նախկին ձևը: Այնպես որ այստեղ անալոգիական նորակազմությունը, այսինքն՝ տրականաձև հայցականի կիրառությունը դեռևս չի ավարտել իր պրոցեսը, գտնվում է, ինչպես ասվում է, լինելիություն մեջ: Բերենք օրինակներ.

«Ուրն ընծայեց հալ ժողովրդին ուսական կրթությունը և արվեստով զինված շատ մտավոր մշակներ, ընտիր ուսուցիչներ» (ԱԻ, ԵԺ, 4, 225), «Աճեցնելով նոր, երիտասարդ աշխատունակ կադրեր» (Ն. տ., 214), «այլասերված Վիլհելմ Զ-րդ կայզերը ցինկիաբար հայտարարեց, որ հայերից պիտի թողնել միմիայն մի մարդ» (Ն. տ., 193). «Նա մի ժեբ հայր էր խնամում» (ԳՍ, Հ, 228), «էլ ինչո՞ւ են դրսից մարդ ուղարկում» (ՆՁ, Հ, 26), «Ռալֆումը քեզ նոր ընկեր ուղարկեց» (Ն. տ., 33), «Լամբարյանի մեջ նրանք տեսնում էին այդպիսի մի ղեկավար» (Ն. տ., 64), «Իրենց տներում բանդիտներ էլ են պահում» (Ն. տ., 83), «Հո չի՞ կարելի միայն կասկածանքի հիման վրա շարքից հանել այդքան խելոք ու փորձված մի աշխատավոր» (Ն. տ., 304), «որի նպատակն է վարկաբեկել ու ոչնչացնել մի ազնիվ կոմունիստ» (Ն. տ., 418): «Ես էլ կարծում եմ մարդ են սպանել» (ԳՍ, Թ, I, 14), «Ես իսկույն պրոպագանդիստներ կողարկեմ» (Ն. տ., 125), «կալանավոր ենք բերել» (Ն. տ., 138) «Զվարթը մարդ է տեսնում այդ գծերում» (Ն. տ., 186), «Ես չէի տեսել և ոչ մի թագավոր» (Ն. տ., 209), «Նրանք որդեգրեցին պատերազմի զոհերի որբ երեխաներ» (Ն. տ., 236), «Թե քանի շներից աղջիկներ են փախցրել ֆառաշները» (ՀՔ, Բ, 232), «Ես զավաճան որդիներ չեմ ծնել» (Ն. տ., 247), «որ շատ ես տեսել բռնակալներ ու բարբարոսներ» (Ն. տ., 355), «Դու փորձում ես շարքից հանել մի տաղանդավոր գիտնական» (ՍԴ, ՊԺ, 210), «Ես երեխա եմ մեծացնում, ես դաստիարակում եմ

սովետական քաղաքացի (Ն. տ., 267): «Պետք է գնամ, ուսիկամ տանեմ» (ԳՍ, Թ, I, 8), «Նա նոր ու նոր բարեկամներ էր գտնում» (Ն. տ., 132), «Թե մոտերքում տասնյակ երեխաներ են մորթում» (ԳՍ, Թ, II, 256):

Անձի անորոշ անունների տրականաձև հայցական՝

«Թուրքիան կոտորեց... մեկ միլիոն հայերի» (ԱԻ, ԵԺ, 4, 227): «Եվ որոնում են այլ վաճառվող արկածախնդիրներ» (Ն. տ., 223), «Այնքան մարդու վերցրի գերի» (ԳՍ, Հ, 21), «տեսա՛վ տղան ճամփամիջին մի անծանոթ աղջկա» (Ն. տ., 183): «Ես մի մենառնանսի համոզում էի» (ՆԶ, Հ, 50), «չէր փառաբանի մեկ ուրիշ աղամարդու» (Ն. տ., 116), «Կոլխոզի նախագահը հեռացրել է աշխատանքից մի ծուլ, անբարեխիղճ գոմապահի և մի գող պահակի» (Ն. տ., 139), «նկարիչները նկարում են գեղեցիկ կանանց ու աղջիկների» (ԳՍ, Թ, I, 40), «Թե ինչու էր էսֆիանդարին ցանկանում սպանել ահա այսպիսի մի մարդու» (Ն. տ., 61), «որպեսզի ծաղրի ենթարկեն մի խեղճ պառավի» (ՀՔ, Բ, 135), «որ բնագրի պես ուժեղ, կաշկանդող ձեռքով քաշում է սամն գյուղացու» (Դ, ԸՊ, 273), «Ռուսաստանում մի բուլձևիկի է խաբեությամբ սպանել» (ՀՔ, Բ, 269), «հանեցին երկու երեխայի» (Ն. տ., 345), «Ամերիկայում ես գտա հայրենակիցների» (Ն. տ., 474), «Բայց ուզում էր կործանել մի ուրիշ մարդու, շատ արժեքավոր մարդու» (ՍԴ, ՊԺ, 331):

Այլ շնչավորների (կենդանիների) անունները հաճախ պահպանում են կրող խնդրի հայցականի նախկին (ուղղականին նմանվող) ձևը. «Գնա կովերը դաշտ քշի» (ՆԶ, Հ, 3), «Կովը մորթեցին» (Ն. տ., 4), «Բոլոր կովերը համարակալեցի» (Ն. տ., 7), «Մեր անասունները մեր ձեռքով մորթեցինք» (Ն. տ., 81), «Վաճանը ծախել էր երկու եզները» (Ն. տ., 160), «և սկսեց արձակել Մարալ եզը» (Ն. տ., 170), «ուր ես տանում այդ ոչխարը» (Ն. տ., 386), «գրա ջորին վերցրին, գնացին» (ԳՍ, Թ, II, 139), «նա խթանեց արարական նժույզը» (Ն. տ., 263):

Կենդանիների որոշյալ անունները կրող խնդրի հայցականը կազմում են տրականի ձևով մի շարք դեպքերում: Կենդանու անունը կարող է, բառիմաստի փոխաբերական

նշանակութեամբ, ցույց տալ անձ, նման զեպքերում կենդանու անունը հայցականը կազմում է տրականի ձևով. «Կարմիր դրոշը» հիտլերյան ցուլերին գրգռող, խենթացնող տորեադորի կարմիր կերպասն է» (ԱԻ, 4, 183), «Որովհետև նրանք են սրում մեր զենքերը՝ բնության ուժերը ծառայեցնելու, և գետին տապալելու գիշատիչ անասունին, որ ոռնում է մեր մեջ» (Ն. տ., 175). «Ի՞նչ միջոցի դիմի այդ աղունիկին (Մադինին) ձեռքից բաց չթողնելու համար» (ԳՍ, Թ, I, 90), «Աղվեսին (Կրիպսին) է խաբել» (Ն. տ., 234):

Կենդանիների որոշյալ անունները հայցականը տրականի ձևով են կազմում հաճախ կապված համապատասխան անցողական բայի բառային-իմաստաբանական բնույթի հետ, այսինքն կան աֆալիսի անցողական բայեր, որոնց խնդիրը՝ կենդանու որոշյալ անուն-հայցականը միշտ, կամ համարյա միշտ, կազմվում է որոշյալ տրականի ձևով. «Սկսեց էլի ծեծել եզներին (ՆԶ, Հ, 79), «որ լծկաններին լավ կշառացնեն» (Ն. տ., 74), «շարունակում էր անխնա ծեծել ձիերին» (Ն. տ., 166), «սկսեց անխղճաբար ծեծել եզներին» (Ն. տ., 168), «սկսեց նրանով քնքշութեամբ քորել բոլոր հորթերին» (Ն. տ., 461), «լիզում էր ձագերին» (Դ, ԸՊ, 60), «Գրաստին քիմարում» (ՀՔ, Բ, 220), «խեղդում է գառներին» (Ն. տ., 430), «կացառարել աղավուն» (ԳՍ, Թ, II, 197), «մյուսները ևս շուրջկալեցին կենդանուն (ԳՍ, Թ, I 227), «որոնցից նա զսպում էր տակավին թպրտացող կենդանուն» (Ն. տ.), «որովհետև այծյամներին կվախեցնենք» (Ն. տ., 230), «վագրին կերակրում էին ձեռքից» (Ն. տ., 264):

Երբ անցողական բայը գործածված է բառիմաստի «փոխաբերական» նշանակութեամբ, այսինքն ցույց է տալիս աֆալիսի գործողություն, որը կարող է ունենալ միայն կրող անձ օբյեկտ, բայց տվյալ զեպքում ունի կենդանի (այլ շնչավոր) օբյեկտ, ապա կենդանու որոշյալ անվան զեպքում հայցականը սովորաբար կազմվում է տրականի ձևով. «Երգը հմայում է նուխիսկ գազաններին»: Հմայվելը մարդկային զգացմունք է, և հմայվել կարող են մարդիկ, բայց տվյալ զեպքում գործածված է այլ շնչավորի (գազանի) վերաբերյալ:

Այսպես նաև՝ քաջալերել ձիերին, շներին, ոգեվորել կովոդ ցուլերին և այլն:

Կան շատ անցողական բայեր, որոնց՝ կենդանու որոշյալ անուն կրող խնդիրը վերջնականապես չի ամրապնդվել տրականաձև հայցականում, թեև հաճախ ընդունում է այդ ձևը: Այսպես, օրինակ, «Նա եկել էր կայարան՝ «Ավագյանի կնոջ հավերք ծախելու ուղևորներին» (ՆՁ, Հ, 56), «բայց «Մերկեն շատ էր գնացել քաղաք իր հավերից մի երկուսին ծախելու» (Դ, ԸՊ, 104), «Գնա կովերը դաշտ քշի» (ՆՁ, Հ, 3), բայց՝ «Ձվարթն սկսեց քշել եզներին» (Դ, ԸՊ, 185), «Փորձում եմ որսալ Ավագյանի աղավճիները» (ՆՁ, Հ, 19), բայց՝ «Հյուրընկալ տանտերը աղավճիներին որսում է գիշերով» (Ն. տ., 18):

Այսպես նաև՝ մորթել կովը (կովին), տեսնել շուներ (շանը), տանել ոչխարը (ոչխարին), ուտել գառը (գառանը) և այլն:

Փոխաբերական խոսքի մեջ, երբ շնչավորվում է իրը, կամ՝ երբ իրի անունը ցույց է տալիս կոնկրետ անձնավորություն, հայցականը կազմվում է տրականի ձևով. «Հասոն քարերին էր դողացնում... զեփյուռին ողբացնում» (ՎՓ, ԸԵ, 223), «Ես քեզ սիրում եմ, ալնքան եմ սիրում, որքան չի սիրում թիթեռը մրազին, սոխակը վարդին, աշխարհն արևին և բույսը հողին (Ն. տ., 226), «Լավ, Դորանիի այդ փտած բողկին (Ագահիին) ռւր է բերում» (ԳՄ, Թ, 1, 239): Այսպես նաև՝ «Իմպերիալիզմի գիշատիչները երբեք չեն կարող խաբել Մոսկվային», ուր Մոսկվա բառը անձի հավաքական անվան նշանակությունում է գործածված:

Անձի վերացական, հավաքական անունները, պետությունների անունները և նման կարգի այլ անուններ (եզակի և հոգնակի թվում) կրող խնդրի հայցականը կարող են կազմել տրականի ձևով, թեև այս երևույթը ունի սահմանափակ արտահայտություն. «Պախարակում է պետությամբ, տիրող օրենքները» (ԱԻ, ԵԺ, 3, 111), «Նա չի մոռանա իր ժողովրդին» (ԱԻ, ԵԺ, 4, 138), «Բուրժուազիան ծնել է պրոլետարիատին» (Ն. տ., 116), «Հահագործում էին ամբոխներին» (Ն. տ., 135), «ձգտում է հումանիստական կուլտու-

րան ոչնչացնել և ժողովուրդներին քաշել զուլարի լծի տակ» (ԱԻ, ԵԺ, 4, 231), «լծի տակ քաշելու աշխատավոր մասսաներին, նորից մխրճել ազատագրված մարդկությանը միջնադարյան ստրկական, խավար կարգերի մեջ» (Ն. տ., 191), «Եվ Հիտլերն անօրինակ ոճիրներով սկսեց «ուղղել», «դաստիարակել» մարդկությանը» (Ն. տ., 184), «Թուրքերը քշում էին հայ բազմություններին դեպի մահ» (ՀՔ, Բ, 496), «Թե իմպերիալիստներն ինչ ձևերով են դադուլթացնում Արևելքի ժողովուրդներին» (ԳՍ, Թ, II, 148), «Եթե Ռզա շահը մեր պարտիայի ղեկավարությանը բանտ չնետեր» (ԳՍ, Թ, I, 243), «Ֆաշիզմին ջախջախելուց հետո» (ԱԻ, ԵԺ, 4, 228), «Նոր, ահեղ պատերազմի հրձիգները զինում են սոցիալիստական երկրի դեմ՝ վաճառված Հունաստանին, զինում բարբարոս Թուրքիային» (Ն. տ., 223), «Ոմանք կարծում են, որ Հիտլերին կհաջողվի Սովետական Միությանն ախպես ջախջախել, ինչպես ջախջախեց Ֆրանսիային» (ԳՍ, Թ, II, 460), «Երևի կարծում է, թե Ճապոնիային ու Թուրքիային էլ կհաջողվի հանել Սովետական Միության դեմ» (ԳՍ, Թ, I, 421):

Փոխանունները սովորաբար անձի անունների դեպքում, այսինքն երբ ցույց են տալիս կոնկրետ անձ, հաճախ նաև՝ երբ ցույց են տալիս այլ շնչավոր էակ (կենդանի), կրող խնդրի հայցականը կազմում է տրականի ձևով.

«Նա երկու տղա ունի. մեծին անցյալ տարի ուղարկել է Մոսկվա, փոքրին թողել է Երևանում՝ իր մոտ»: «Մեր դասարանում երեք գերազանցիկ աշակերտներ կան: Դիրեկցիան որոշել է երեքին էլ պարգևատրել»: «Այսօր մեղ մոտ է գալու պրոֆ. Դավթյանը, որին զու փափագում էիր տեսնել»: «Կոլտնտեսության մեջ լավ աշխատողներին միշտ խրախուսում են»: «Մերկեն շատ էր դնացել քաղաք իր հավերից մի երկուսին ծախելու» (Դ, ԸՊ, 104), «Էգին (արագիլ) օձը խայթել էր որսի ժամանակ» (ՀՔ, Բ, 492), «Աղջի, բաց թող այդ ցավ կերածին (շանը)» ԳՍ, Թ, II, 238:

Խրախուսելի չէ կրող խնդրի հայցական փոխանունը առանց հողի գործածել, ավելին՝ ճիշտ չէ. «Ալդպիսի սիրով

ամեն մարդ մեկի է սիրում» (ՀՔ, Բ, 58), «Միթե ուրիշի սիրելու դեպքում ես կգալի քեզ մոտ» (Ն. տ., 133):

Համանման օրինաչափություններ կարելի է գտնել նաև «Ում», «Ս» ճյուղերի բարբառներում¹ և «Կը» ճյուղի մի քանի բարբառներում (Համշենի, Կարնո և այլն):

Քննարկելով անձի (շնչավորի) և իրի (անշունչի) քերականական կատեգորիայի քերականական հիմնական առանձնահատկությունները ժամանակակից գրական հայերենում և նշելով նրա օրինաչափ դրսևորումները, միաժամանակ նշում ենք, որ կան նաև բազմաթիվ դեռևս օրինաչափություն չդարձած մասնակի կիրառություններ:

Այս կապակցությամբ մեծավաստակ գիտնական Մ. Աբեղյանը գրում է. «Ահա թե ինչ վիճակի մեջ է մեր սեռի խնդրի հայցականը եւ: Դրա ձևը, ուղղական թե տրական, հաճախ կախված է բայից, դարձվածից, խոսքի շրջումից, խոսելու եղանակից, բարբառների ազդեցությունից, և նույնիսկ երբեմն սեռի խնդրի եղող բառից: Մի օտարազգի մարդ մեր բոլոր հոլովների բոլոր կիրառություններն էլ հեշտությամբ կսովորի, բայց սեռի խնդրի հայցականը նրան ամենամեծ դժվարությունը կպատճառի, որովհետեւ մի ընդհանուր և հաստատուն կանոն առել անհնարին է, գոնե ես չեմ գտնում այդ կանոնը: Ասում ենք՝ նա ոչխարը մորթեց, էջը քշեց, ձին քշեց, բայց՝ նա էշին, շանը ծեծեց, նա ձիուն

¹ Այս կատեգորիան համեմատաբար ավելի պարզ ու հաստատուն ընդլթ է ստացել Մեղրու բարբառում: Պրոֆ. Էդ. Աղայանը գրում է, «Հակառակ աշխարհաբարի, ուր գոյականների անձի և իրի առումները դեռևս շփոթ վիճակում են գտնվում, հաճախ էլ կամայական ընդլթ են կրում, Մեղրու բարբառում այդ առումները բավականին պարզ ու հաստատուն ընդլթ ունեն. թե՛ հատուկ, և թե՛ հասարակ անձնանունները, ինչպես և ենթակայական դերբայը (nomen agentis) գործածվում են անձի առումով և հայցական հոլովում նման են տրականին՝ անկախ որոշյալ կամ անորոշ լինելու հանգամանքից. մնացած գոյականները թե՛ անշունչ, թե՛ շնչավոր և թե՛ որոշյալ, թե՛ անորոշ կիրառությամբ գործածվում են իրի առումով և հայցական հոլովում նման են լինում ուղղականին» (Էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 121—122):

մտրակեց: Ամեն թեմ ունի իր առաջնորդը, բայց ես այս թեմի առաջնորդին չտեսա...: Նույնիսկ քերականութիւնն էլ, որքան և ընդարձակ լինի, չի կարող իր մեջ ամփոփել այս բոլոր կիրառութիւնները. դա իսկապէս մի ընդարձակ բառարանի գործ է¹:

Մեր պրպտութիւնները ցույց են տալիս, որ Աբեղյանի նըշած այս անկանոնութիւնները կարելի է ներկայացնել որոշակի կանոնների տակ, և որ անձի ու իրի քերականական կատեգորիան հալ գրական լեզվում վաղուց զարգանում է ուրույն տեղեկանքներով*:

¹ Մ. Աբեղյան, Հայցական հոլովը..., 1909, էջ 35:

* Մ ան ո թ.—Պրոֆ. Սեակը բնութագրելով անձի ու իրի քերականական կատեգորիայի արդի վիճակը, գտնում է, որ հայցականում միևնույն անունը հանդես է գալիս մերթ իբրև իր դիտված, մերթ իբրև անձ դիտված, անկախ նրանից իր է, թե անձ է տվյալ առարկան: Ընդ որում հայցականը, սեփական ձևական վերջավորութիւնն չունենալով, «օգտըվում է ուղղական և տրական հոլովի ձևերից՝ իր իմաստային երանգավորումներից մեկը (իրի առումը) դրսևորելով ուղղականի (և միշտ ուղղականի) ձևով, իսկ մյուսը (անձի առումը)՝ դրսևորելով տրականի (և միշտ տրականի) ձևով» (Ք. Սեակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 263): Անձի ու իրի քերականական կատեգորիայի բնույթի հետ կապված՝ խոսողի վերաբերմունքի ունեցած դերն ընդգրծվել է դեռևս Աբեղյանի կողմից (տե՛ս նրա՝ «Աշխարհաբարի շարահյուսութիւն», էջ 100): Այդ հանգամանքը նշել է նաև պրոֆ. Էդ. Աղայանը իր «Լեզվաբանության ներածութիւն» աշխատության մեջ (էջ 324): Իհարկէ այս կատեգորիայի կապակցութեամբ խոսողի ունեցած վերաբերմունքի դերը վճռական չէ, ունի զգալի սահմանափակում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԱ, ԸԵ—Աբ. Աբփիարյան, Ընտիր երկեր, Երևան, 1951:
- ԱԱ, ՕԲ—Ա. Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940:
- ԱԲ—Արարատյան բարբառ:
- ԱԲ, Ք—Ա. Բաղրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:
- Ագ, ՊՀ—Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:
- ԱԻ, ԵԺ (I, II, III, IV)—Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. I, II, III, IV, Երևան, 1951—1952:
- ԱԼ, Պ.—Ա. Լաստիվերտցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912:
- ԱՂ, Բ, Ն—Արարատ Ղարիբջան, Հայ բարբառագիտութիւն (նմուշներ), Երևան, 1953:
- ԱՂ, ՀԱ—Արամ Ղանալանյան, Հայկական առածանի, Երևան, 1951:
- ԱՃ, ՀԼՊ, II—Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, մ. II, Երևան, 1951:
- ԱՍՇ—Ապտուածաշունչ..., Վենետիկ, 1805:
- ԳԱ, ԹՄ—Գ. Աղեքսանդրեան, Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, մ. Ա, Թիֆլիս, 1885:
- ԳԶ, Ն—Գ. Զոհրաբ, Նովելներ, Երևան, 1941:
- ԳՍ, ԵԼԺ, III—Գ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1953:
- ԳՍ, Թ (I, II)—Գ. Սևունց, Թեհրան, գ. I, II, Երևան, 1952:
- ԳՍ, Հ—Գ. Սարգսյան, Հատընտիր, Երևան, 1951:
- Դ, ԸՊ—Դ. Դեմիրճյան, Ընտիր պատմութիւններ, Երևան, 1950:
- Եզն, ԵԱ—Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914:
- Եդ. Պ—Եդիշէ, Պատմութիւն Վարդանանց, Մոսկովա, 1892:
- Զ, Պ—Զենոբ Գլադ, Պատմութիւն Տաբոնոյ, Վինետիկ, 1832:
- ԶԱՕ—Զաքարիա Ազուլեցոյ օրագրութիւնը, Երևան, 1938:
- Յ, Շ—Գ. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1811.
- Թ, ԸԵ,—Հ. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1953:
- ԹԱ, Պ—Թովմա Արծրունի, Պատմութիւն, Պետերբուրգ, 1887:
- ԹԲ—Թբիլիսիի բարբառ:
- ԺԲ—Ժողովրդական բանահյուսութիւն (Նկատի են առնված հայ հին ժողովրդական բանահյուսութիւնն այն պատճառիկները, որ կան խորհեացոյ և այլ պատմիչներէ մօտ):

- ՅԱ**, **ԵԼԺ** (I, II, III, IV)—**Յ**. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, II, III, IV, Երևան, 1947—1948:
- ԿԿ**, **ՎՏ**—**Կ**. Կոստանեանց, Վիժական տարեգիր, Պետերբուրգ, 1913:
- ԿՍ**, **ԲԳ**—Կղէօպատրայ Սարափեան, Գիրք որ կոչի բանալի գիտութեան, Պետերբուրգ, 1788:
- ՀԱ**—Հայ աշուղներ, Անտիպ երգերի ժողովածու, Երևան, 1937:
- ՀՀ** **և** **ՆԿ**—Համալսարան հին և նոր կտակարանաց, Երուսաղէմ, 1895:
- ՀՔ**, **Բ**—**Հ**. Քոչար, Բարեկամություն, Երևան, 1950:
- Ղ**, **Պ**—Ղևոնդ, Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:
- ՂԵ**, **ՀՆՌՎ**—**Ղ**. Յովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Վիեննա, 1897:
- ՂԲԲ**.—Ղարաբաղի բարբառ:
- ՂՓ**, **Պ**—Ղադար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:
- Մ**, **ԵԺ**, **I**, **II**—Մուրացան, Երկերի ժողովածու, (հ. I, II), Երևան, 1951:
- ՄՅ**, **ՊՀ**—Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, 1913:
- ՄՄ**, **ԸՆ**—Մ. Մկրյան, 13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականություն, Ընտիր նմուշներ, Երևան, 1938:
- ՅՄ**, **Պ**—Յով. Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Վենէտիկ, 1832:
- Ն**, **ԵԼԺ**—Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, II, Երևան, 1945:
- ՆԵՀԼ**, **I**, **II**—Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1836 (հ. I, II):
- ՆԶ**, **Հ**—**Ն**. Ջալյան, Հացավան, Երևան, 1949:
- ՆՀ**, **Բ**—Նաղ. Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1952:
- Շ**, **ԵԼԺ**, **IV**—Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, Երևան, 1950:
- Չ**, **Բ**—**Վ**. Չալըխեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885:
- Պ**, **ՄՄ**—**Հ**. Պարոնյան, Մեծապատիւ մուրացիկներ, Երևան, 1934:
- ՊՊ**, **ԵԺ**, **I**—**Պ**. Պոռյան, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1953:
- Sch ThLA**—j. j. Schröder, Thesaurus linguae armenicae, Ամստերդամ, 1711:
- ՍՆ**, **ՀՅԼԺ**—Սյաթ-Նովա, Հայերէն խաղերի լիակատար ժողովածու, Երևան, 1935:
- Ս**, **Պ**—Սերէոս, Պատմութիւն, Երևան, 1939:
- Սունդ**.—Սունդուկյան:
- ՎՓ**, **ԸԵ**—Վթափան Փափազյան, Ընտիր երկեր, Երևան, 1951:
- Տ**, **ԵԺ**—**Վ**. Տերյան, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1950:
- Փ**, **ՊՀ**—Փաւստոս Բիւզանդացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:
- Օտ.**, **ԵԺ**—**Ն**. Օտյան, Երկերի ժողովածու, Երևան, 1941.
- Ֆ**. **Բ**—Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ւ Ն

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

Գոյականների որոշյալ ու անորոշ առումները կամ որոշյալի ու անորոշի բերականական կառուցումից հայերեանում

Գլուխ առաջին

Ա. Հայ քերականագիտութիւնը որոշյալի ու անորոշի քերականական կառուցումի մասին	5
Բ. Որոշյալի ու անորոշի քերականական կառուցումի տեսութեան մի քանի հարցեր	19

Գլուխ երկրորդ

Հայերենի որոշյալի ու անորոշի քերականական կառուցումի առանձնահատկութիւնները

Ա. Որոշյալի ու անորոշի քերականական կառուցումի ձևաբանական միջոցները հայերեանում	35
Բ. Որոշյալի ու անորոշի քերականական կառուցումի ձևաբանական առանձնահատկութիւնները	60
1. Հատուկ և հասարակ անունների հոգառութիւնը	62
2. Հոլովների հոգառութիւնը	72
3. Որոշիչ հոգը փոխանմանական մի քանի օրինակաբանութիւններում	78
Գ. Որոշյալի ու անորոշի քերականական կառուցումի շարահյուսական առանձնահատկութիւնները	96

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ երրորդ

Անձի ու իրի առումները կամ անձի ու իրի բերականական կառուցումից հայերեանում 117

Հ ա մ առ ո տ ա գ ռ ու թ յ ու ն ն ե ր 167

**Պետրոսյան Հրանտ Զինավորի
Գոյականի առումները հայերեցնում**

Գատ. իմբազիւ՝ Ս. Գ. ԱՐԱՀԱՄԵԱՆ
Նկարչական ձեւավորումը՝ Ռ. ՆԱՎԱՍԱՐԴԵՂԵՐ
Տեխ. իմբազիւ՝ Գ. Ս. ՍԱՐԳՍԵԱՆ
Սրբազրիւ՝ Ս. Ա. ԳԵՎՈՐԳԵԱՆ

ՎՖ 08142	Գատվեր 460	Հրատ. 1815	ԽՀԽ 571	Տիրած 1000
Հանձնված է արտադրութայն 2/IX 1959 թ., Ստորագրված է տպագրութայն 8/IV 1960 թ., Տպագրական 10.75 մամուլ, Կրատ. 7,33 մամուլ, Թուղթ $64 \times 106^{1/32}$, Գինը կազմով 0 ռ.,				
Հայկական ՍՍՌ Գիտութայններէ ազգեմիտայի Հրատարակչութայն տպարան, Երեւան, Արեւմտայն, 1960				

ЦЕНА

11

13808